

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՌՈՒԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ



ԹԱՏԵՐԱՐԿԵՍՏԻ
ԵՐԱԽՏԱԿՈՐԸ

ՌՈՒԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

Հատոր յոթերորդ

ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏԻ

ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Հարցազրույց՝ միջանկյալ դրվագներով

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն
Ստեփանակերտ-2018

ՀՏԴ 792
ԳՄԴ 85.33
Ե 583

ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԿԵԼ Է ԼՂՀ ՊԵՏՊԱՏՎԵՐՈՎ

*Շապիկին և գրքում օգտագործված են Առնոլդ Մելիքսեթյանի
ստեղծագործությունները*

Եսայան Ռոբերտ
Ե 583 Երկեր: Թատերարվեստի երախտավորը. հարցազրույց՝
միջանկյալ դրվագներով/ Ռ. Եսայան.- Ստ.: «Վաչագան
Բարեպաշտ» հրատ., 2018. Հ. 7.- 208 էջ+32 էջ ներդիր:

Հատորում ընդգրկվել են հեղինակի 2016-17թթ. ունեցած հարցազրույցները ԼՂՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Լեոնիդ Հարությունյանի հետ, ով թատերարվեստի բնագավառում ունեցած նշանակալի վաստակի համար պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե» և ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով: Նա ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան մրցանակի դափնեկիր է:

Գիրքը տպագրվել է անվանի և տաղանդավոր ռեժիսոր Լեոնիդ Հարությունյանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ:

ՀՏԴ 792
ԳՄԴ 85.33

ISBN 978-9939-1-0746-2

□ Ռոբերտ Եսայան, 2018



ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

*Մղվում եմ առաջ՝ ծանաչելու և որսալու
նոր իրադրությունը, բացահայտելու Ոգու նոր գյուտը:*

Լեոնիդ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌԵԺԻՍՈՐԸ ՁԳՏՈՒՄ Է ԲԱՅԱՅԱՅՏՏԵԼ ՈԳՈՒ ՆՈՐ ԳՅՈՒՏԸ

**Վ.Շեքսպիրի «Մակբեթ»-ից մինչև Ա.Պապայանի
«Գնա մեռիր, արի սիրեմ...»**

(Կյանքը, թերևս, կասեցրման է փառքի ու ծանաչման):

Ռ.Եսայան

ԼՂՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Լեոնիդ Չարությունյանն իր ստեղծագործական աշխատանքի ընթացքում բեմադրել է 100-ից ավելի ներկայացումներ, որոնք արժանացել են հանդիսատեսի ջերմ հավանությանը Երևանում, Գյումրիում, Գորիսում, Ստեփանակերտում, Շուշիում:

Ճանաչված ռեժիսորն ունի իր աշխատանքային ոճը, նյութին ստեղծագործաբար մոտենալու հմտությունը: Նրա կարծիքով՝ նյութը թույլ է տալիս ազատ մանրնելու և ստեղծելու նոր և ազդեցիկ միզանսցեններ, որոնք բովանդակային նոր շնչառություն են հաղորդում թատերական իրավիճակներին՝ ամբողջացնելով գործողության դրամատիզմը: «Նյութը պիտի բացահայտել խորքից, - ասում է նա, - յուրաքանչյուր ներկայացում յուրօրինակ քննություն է թե՛ ռեժիսորի և թե՛ դերասանների համար: Կարևոր է նաև ներկայացման նկարչական ձևավորումը, որը, օրիգինալ լինելուց բացի, շնչավորում է նաև ենթատեքստային ասելիքի կոլորիտային ոգին»:

Լ.Չարությունյանը կատարելագործման փուլն անցել է Պետերբուրգում՝ մեծն Գեորգի Տովստոնոգովի ղեկավարությամբ: Այդ շփումն, իհարկե, երիտասարդ ռեժիսորին հարստացրեց նոր գի-



Գեորգի Տովստոնոգով

տելիքներով՝ մղելով ստեղծագործական որոնման լայն դաշտ, ուր և տարեցտարի բացահայտվեցին թատերարվեստի նվիրյալի բացառիկ կարողություններն ու համառ աշխատառժը: Առաջին հաջողությունը, որ նա ունեցավ թատերական կյանքում, Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգության բեմադրությունն էր Երևանի թատերական ինստիտուտի դահլիճում, որը և գնահատվեց որպես

դիպլոմային աշխատանք: Ստեղծագործական կյանքի խոստումնալից սկիզբը նախանշեց շնորհալի ռեժիսորի դժվարին և միաժամանակ ձեռքբերումներով հարուստ ծանապարհը:

1977թ. Լ. Չարությունյանը մասնակցեց Անդրկովկասի հանրապետությունների ռեժիսորների մրցույթ-փառատոնին և արժանացավ 3-րդ կարգի մրցանակի՝ Չ.Դիկենսի «Դավիթ Կոպերֆիլդ» պիեսի բեմադրության համար:

Արցախի 20-րդ դարի լավագույն մանկավարժ Միքայել Բայլանը խոսելով արվեստագետի անցած ծանապարհի մասին, նշել է. «Լեոնիդ Չարությունյանը մեր այն արվեստագետներից է, ով հայ թատրոնի պատմության մեջ գրել է ուշագրավ էջ, որն իրավամբ, պատիվ է բերում ոչ միայն իրեն, այլև մեզ բոլորիս: Թատրոնից դուրս նրա համար հետաքրքիր ու հրապուրիչ ոչինչ չկա: Մեծ աշխարհը նա մեծ ու փոքր բեմերի վրա է տեսնում, կյանքի իմաստը, գեղեցկությունը՝ հանդիսատեսին հուզմունք պատճառող ներկայացման մեջ: Ու կարելի է ասել, որ նա հոգեպես հանգիստ է առ-

նում, մի տեսակ խաղաղվում, ոգևորվում, ազգային մշակույթին կարելի է չափով օգտակար լինելու զգացումից»։ Արվեստի աշխարհում նրան առաջնորդել և այսօր էլ շարունակում են ուղղորդել որոնման ոգին, ձգտումը դեպի կատարելության լույսը։

Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը ստեղծագործական այն ծաղկուն օջախն էր, որտեղ և բացահայտվեց Լ. Չարությունյանի տաղանդի և ունակությունների ողջ էությունը։ Անհանգիստ և պրպտող արվեստագետը կարողացավ հաստատել իր ինքնությունը։ Վ.Ռոզովի «Երջանկություն որոնելիս» պիեսի բեմադրությունը նրա համար դարձավ մի յուրօրինակ քննություն, ինքնահաստատման լավագույն հնարավորություն։

Պրպտումները տարեցտարի ստեղծագործական նոր հնարավորություններ բացահայտեցին եռանդով լցված ռեժիսորի մեջ, և նա մղվեց դեպի արվեստի մեծ ասպարեզ։ Հաջողությամբ բեմադրեց մի շարք պիեսներ՝ Մ.Գորկու «Քաղքենիներ», Ա. Պապայանի «Գնա մեռի՛ր, արի սիրեմ...», Ա. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում», Ա. Օստրովսկու «Եկամտավոր պաշտոն», «Անմեղ մեղավորներ», Ն. Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն», Վ.Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը», Ա.Շիրվանզադեի «Չար ոգին», Հ.Շիրազի «Սիամանթո և Խջեզարե» և այլ ներկայացումներ։

Ռեժիսորը հիացմունքով և կարոտով է հիշում հայրենական թատրոնի երևելի դեմքերին՝ իր վաստակաշատ գործընկերներին՝ Սուրեն Համզոյանին, Բոգդան Բաբայանին, Մարգո Բալասանյանին, Շուշանիկ Գրիգորյանին, Բենիկ Օվչյանին, Թամարա Մելքունյանին, Մամիկոն Միքայելյանին, Նվարդ Ասատրյանին, Ժաննա Գալստյանին, Միքայել Հարությունյանին, Սամվել Վիրաբյանին...

Թատերագետ Կարինե Ալավերդյանը 2000թ. հրատարակեց

«Լեոնիդ Չարությունյան» գիրքը, որի մեջ հեղինակը հետաքրքիր դիտարկումներ է անում. «Թատրոնի պատմության նշանակալից էջերից մեկը դարձավ Ա.Օստրովսկու «Եկամտավոր պաշտոն» կատակերգության բեմադրությունը: Դասական երկի նորովի ընթերցում էր սա, ընդ որում պիեսը ոչ թե վերապատմվել էր բեմում, որ հաճախ է պատահում թատերարվեստում, այլ ռեժիսորական հարստացման էր ենթարկել այնպես, որ դարձել էր մերը, յուրօրինակը, որը չես շփոթի այլ թատրոնի բեմադրության հետ: Երևի հենց այդ առանձնահատկությունն էլ կոչվում է ռեժիսորական ձեռագիր»:

1995թ. Լ.Չարությունյանը Վ.Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում հիմնել է «Աստղիկ» թատերական ստուդիան, որը կարևորագույն օջախ էր՝ երիտասարդ դերասանների ուսումնառության և թատերարվեստում հմտանալու գործում:

2007թ. Լ.Չարությունյանը նշանակվում է Շուշիի «Աստղիկ» մանկապատանեկան թատրոնի հիմնադիր տնօրեն և գեղարվեստական ղեկավար: 2009թ.-ից «Աստղիկ»-ը համալրվելով նոր աշխատողներով, վերանվանվում է Շուշիի Մկրտիչ Խանդամիրյանի անվան պետական թատրոն:

«Արցախի թատերաշխարհում հնարավոր է ևս մի վերածնունդ: Ինչպիսի՞ ծրագրեր են պետք իրագործել՝ հանրապետության թատերական կյանքում նոր վերելք սկզբնավորելու համար: Ես այն կարծիքին եմ, որ ժամանակակից հանդիսատեսը այսօր էլ սեր ու ծարավ ունի թատրոնի նկատմամբ: Պարզապես պետք է բեմական նոր կյանքով սնուցել նրա՝ սպասումներով լի հոգին: Կարծում եմ՝ ժամանակն այսօր պահանջում է նոր մոտեցում թատրոնի նկատմամբ: Արվեստը մեր հոգու պահուստն է, որից ժողովուրդն օգտվելով՝ դառնում է հոգով ամրապինդ ու աննկուն,- գտնում է Լեոնիդ Չարությունյանը՝ նվիրյալ արվեստագետը, և հավելում: -

Թատերական ակտիվ կյանքն է ի զորու հայտնաբերել նոր հանդիսատեսին: Այսօր թատրոնը կարող է մեծ դերակատարություն ունենալ երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Ժամանակն է, որ Արցախում իր գործունեությունը սկսի «Թատերական գործիչների միություն» հասարակական կազմակերպությունը, ինչը, իմ խորին համոզմամբ, կնպաստի ստեղծագործական ուժերի համախմբմանը և նպատակների իրագործմանը»:

ԼՂՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Լեոնիդ Չարությունյանն այն նվիրյալ արվեստագետներից է, ում կյանքի իմաստն ու բովանդակությունը թատրոնն է: Նամակներից մեկում խոստովանել է. «Գերմանիայի մայրաքաղաքում հազար թատրոն կա գործող... Չասարակության կյանքի մակարդակի չափանիշը սա է...»:

Շիրվանզադեի վկայությամբ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Չայրիկը թատրոնը համարել է երկրորդ եկեղեցի՝ հավանաբար նկատի ունենալով թատրոնի՝ մարդկային հոգին մաքրագործելու և գեղեցկացնելու հատկությունը:

«Երկու հազարամյա մեր թատրոնի պատմության մեջ արդեն նշմարելի է Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի նպաստը», - 2000թ. օգոստոսին թատերարվեստի տարեգրության մեջ արձանագրեց բանաստեղծ, գրականագետ Սուկրատ Խանյանը:

Թատերարվեստի մեծ երախտավոր և հանճարեղ դերասան Վահրամ Փափազյանն իր «Լիր արքա» գրքում ունի ազդեցիկ և ուղղորդող այսպիսի տողեր. «Ասում են՝ Սիցիլիայի ծովահենները հաճախ բաց ծովում գերի էին բռնում աթենացիներին՝ իրենց նավերով, և փոխարեն փրկանքի այդ կիսավայրենի ավազակները պահանջում էին գերիներից Էսքիլոսի գործերից կարդալ: Իմացողներին բաց էին թողնում, իսկ չիմացողներին կապում իրենց

նավերի կայմերից՝ որպես պակասավոր, հետևաբար և վտանգավոր մարդիկ: Նույն միջոցառումը որոշ փոփոխությամբ չէր կարելի արդյոք կիրառել և մեր օրերում, գոնե հետևողական լինելու համար՝ առանց գործը կախաղանի հասցնելու, իհարկե, համոզող պարտադրությամբ մեր երիտասարդությանը սովորեցնել սիրել Շեքսպիրը առհասարակ և մասնավորապես՝ նրա «Լիրը»: Այդ ձեռնարկը կբարելավեր մեր երիտասարդների բարքերը, գեղագիտական ճաշակը կիրահրեր նրանց մոտ: Դա կլիներ մի յուրատեսակ բարոյական բաղնիս, որովհետև հասուն մարդիկ դժբախտաբար այնպես են կեղտոտվում կյանքի առօրյայում, որ հազիվ թե նման բաղնիսը կարենա նրանց վերադարձնել իրենց նախկին մաքրությունը»:

Թատրոնը այն ստեղծագործական օջախն է, որտեղ հանդիսատեսը հաղորդակցվում է հայոց ոսկեղենիկ լեզվի հարստություններին, գրական արժեքներով սրբագործում և գեղեցկացնում իր հոգեաշխարհը:

«Եթե երեխան ներկայացում չի դիտում, ուրեմն կողոպտված են նրա ներկան և ապագան», - զգուշացնում է ռեժիսոր Լեոնիդ Չարությունյանը: - Թատրոնը մեծ դերակատարություն ունի սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, - հավելում է վաստակաշատ արվեստագետը: - Սկսած Արտավազդ թագավորի օրերից մինչև Արցախյան գոյապայքարով սրբագործված ու փառավորված մեր ժամանակային ծիրը՝ թատերական ստեղծագործությունը թափանցել է հայ մարտիկի հոգեաշխարհը, բացահայտել նորանոր ելքեր՝ ազգանպաստ սխրագործությունների համար: Թատրոնը ռազմահայրենասիրական դաստիարակության լավագույն միջոց է, որով հղկվում, գեղեցկանում և արիանում է հայրենյաց պաշտպանի ոգին»:

Մոտիկից առնչվելով թատերական կյանքին և տեսնելով Լեո-

նիդ Չարությունյանի ռեժիսորական ինքնատիպ աշխատանքը՝ ես սկզբում զարմացել եմ, հետո՝ հիացել, և իմ մեջ ծնվել է արտակարգ մի պատկեր: Արտակարգ եմ ասում, որովհետև թատրոնը՝ որպես թեմա, առաջին անգամ է իմ մեջ ոգեղենացել... Ես մտածում էի, Աստված իմ, ինչքան բաներ կան կյանքում, որոնց մարդիկ երբևէ չեն առնչվում: Ապրում են իրենց կյանքը և մի օր հեռանում՝ չտեսնելով և չճանաչելով Ամբողջը: Ահա մի հատված այդ բանաստեղծությունից.

Թևող հրեշտակը նոր արան է
հուշում,
և դու պտտում ես սկավառակը
Ոգու՝ առնչվելով Անհայտի ձեռքի
պտտահողմին:

Այսօր էլ Լեոնիդ Չարությունյան ռեժիսորն ու գեղարվեստական ղեկավարը լեցուն է ստեղծագործական եռանդով և ավյունով, ապրում է նորանոր մտահղացումներն ու ծրագրերը իրականություն դարձնելու երազանքով: Իսկ արհեստավարժ ռեժիսորի համար ստեղծագործելու լավագույն վայրը Արցախն է՝ Առյուծների երկիրը:

*

Սկիզբը
իմ բառն է, իմ խաղի ոգին:
Ռ. Եսայան

- Լեոնիդ Ավետիքի, 24 տարեկան էիք, երբ համարձակվեցիք բեմադրել Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգությունը և ներկայացնել այն՝ որպես նախադիպլոմային աշխատանք: Նույն տարում Լենինականի պետական տիկնիկային թատրոնում բեմադրեցիք Վ.Վարդանյանի «Լուսերեսն ու Վարդերեսը»

հեքիաթը՝ որպես դիպլոմային աշխատանք: Սա ձեր ստեղծագործական եռուն կյանքի սկիզբն էր, որը նախանշեց դժվարին և միաժամանակ ձեռքբերումներով հարուստ ճանապարհ:

- Սիրելի Ռոբերտ, ձեր հենց առաջին հարցն իմ մեջ հիշողության անսպասելի և թանկ էջեր է բացում: Այդ էջերը կապված են (ուսանողական բառ ու բանով արտահայտվեմ) համարձակ և խենթ, կարծես տրամաբանության չենթարկվող քայլերի հետ: Եվ հենց դա է երիտասարդության անհաշվենկատ շռայլված տարիների արդյունքը՝ հուշերի ոսկե պահուստը, իսկ երիտասարդության արժեքն այն ժամանակ ենք ըմբռնում, երբ այն անդարձորեն կորցնում ենք: Փանք Աստծո, որ տարիների խորքից ոչ թե հիասթափությունը, այլ մեր կատարած գործերն են խոսում:

Եվ այսպես՝ Շեքսպիրի «Մակբեթ»... Ասեմ, սակայն, որ դեռ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական 2-րդ կուրսի ուսանող էի, երբ բեմադրեցի Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետա» ողբերգության մի ամբողջական հատված՝ Տիբալտի և Մերկուցիոյի մենամարտի տեսարանը, որտեղ ես և՛ ռեժիսոր էի, և՛ Մերկուցիոյի դերակատարը: Շեքսպիրագետ, իմ շատ սիրելի ուսուցիչ, դոկտոր-պրոֆեսոր Լուիզա Սամվելյանի խորհրդով և աջակցությամբ ընկերներով լրացուցիչ աշխատանք էինք կատարում՝ թատերարվեստում արագ հմտանալու նպատակով: Յետո ես գրեցի և բեմադրեցի մի չափածո պիես՝ «Եվ կյանք, և սեր, և երազանք»: Այդ հաջողություններն էին պատճառը, որ ռեժիսորական ամբիոնի ղեկավարի՝ պրոֆեսոր Արտաշես Յովսեփյանի առաջարկով ես տեղափոխվեցի ռեժիսորական կուրս: Իմ ուսուցիչները... ռեժիսորներ Գրիգոր Մկրտչյանը և Ռուլանդա Խարազյանը... Չգնահատված և տաղանդավոր Գ. Մկրտչյանի և հոգեխույզ դասախոս Ռ. Խարազյանի ուշադիր և ջերմ հայացքները մշ-

տապես հառած են իմ կատարած աշխատանքին, ես նրանց ոգու լույսով եմ որսում բեմական պատկերը, շնչավորում դեկորներն ու գույները՝ հաստատելով և ամրապնդելով իմ ինքնությունը: 17 ուսանողներից միայն երկուսը՝ ես և Սամվել Գայամյանը, համարձակվեցինք, որպես նախադիպլոմային աշխատանք ներկայացնել ամբողջական և ավարտուն բեմադրություններ՝ Ե.Շվարցի «Վիշապը» և Շեքսպիրի «Մակբեթը»: «Վիշապը» ներկայացման մեջ ես վիշապի դերակատարն էի: Պատմեմ մի դրվագ, հիշողության մի անջնջելի պատառիկ, որ պեծկլտում է անընդհատ, երբ ես ինքնաբերաբար մտաբերում եմ... Սովորաբար «Մակբեթ»-ի բեմադրության փորձերը կատարում էինք, հետո լրիվ հավաքում բեմը՝ տարածքն ազատելով «Վիշապի» համար: Բեմը, որ վեր ու վար՝ բարձրացող և իջնող աստիճանների մի բարդ ու հետաքրքիր կառույց էր, մեզ՝ ուսանողներիս մղում էր գտնելու բեմական նոր հնարանքներ: Երաժշտական ձևավորման հեղինակը Ռուբեն Յախվերդյանն էր: Դա մի կոմպոզիցիա էր, որ ինքնատիպ ու հուզիչ նվագով հարստացնում էր բեմական մթնոլորտը, նոր լուծումներով ընթացքավորում դրամատիկ գործողությունը: Փորձի ամենառունժամն էր, և ես սպասում էի իմ բեմամուտի պահին, որ անընդհատ հետաձգվում էր, քանի որ մեր դասախոսը՝ Յամլետ Յովհաննիսյանը, կրկնել էր տալիս խաղացված դրվագը: Աստիճաններով բարձրանում եմ վերև և արդեն վերևից դիտում բեմում կատարվող գործողությունը: Տեսարանը վերջանում էր: Իսկ ես վերևում եմ և պիտի բեմ մտնեմ չժրագրված մի վայրից՝ առաստաղին հասնող բարձրությունից: Ենթագիտակցաբար բռնում եմ երկաթե ձողը և վարագույրի հետ ցած եմ գահավիժում... Պահը սարսափելի էր, վտանգով լի: Յասնում եմ հատակին և ծանրածոլ բարձրացնող մարզիկի պես կարծես անծանոթ զանգված եմ հրում վեր՝ դժվարությամբ ուղղելով մեջքս...

Ծափահարությունների ներքո ըմբռնում եմ, որ իմ կատարածը ոչ միայն համարձակ քայլ էր, այլև՝ թատերական գյուտ: Գտել ենք բեմադրության բանալին: Դա դարձավ ելակետ: Այլևս հարկ չկար ութ մետր բարձրությունից ցատկելու: Նկարիչ ընկերս՝ Յուրա Գալստյանը, վարագույրի վրա նկարեց վիշապի հսկայական մարմին, որից ես դուրս էի գալիս լողազգեստով և մտնում բեմ:

Իհարկե, «Մակբեթ»-ի բեմադրությունը ռիսկային էր ու չափազանց պատասխանատու, նախ՝ այն առումով, որ ստեղծագործության հեղինակը Շեքսպիրն է, հետո՝ կար այն իրողությունը, որ Ռաֆայել Ջրբաշյանի ղեկավարած կուրսի բոլոր ուսանողները աշխատում էին շեքսպիրյան պիեսների բեմադրության վրա: Այսինքն՝ Շեքսպիրն ուսանողներին «լայն սպառման» նյութ էր տալիս: Մթնոլորտը գրգռիչ էր, տաք ու առեղծվածով լի: Ուսանողների միջև ընթանում էր մի չհայտարարված մրցակցություն: Եվ այս հոգեբանական կռիվը կարող էր շարքից հանել ուզածդ մրցակցի և ի չիք դարձնել ամենալավ մտահղացումն անգամ, մանավանդ, երբ այն ինչ-որ մեկի փոխանցմամբ՝ կարող էր հայտնվել «հակառակորդի» ներկայացման մեջ, և դու չես էլ կարող ապացուցել, որ այն հենց քո մտքի արգասիքն է և ոչ թե՛ ուրիշից թռցրած միտք:

«Մակբեթ»-ի բեմական ձևավորումը ստացվել էր շատ յուրօրինակ: Այն աստիճանների ցանցով ու ճոպաններով ազուցված նկուղ էր հիշեցնում, որը թաղված էր գույնզգույն սարդոստայնների մեջ: Տեսարանը լրացնում էին գինու հսկայական տակառները, որոնցից մատռվակները (իմ բեմադրության մեջ՝ վիուկները) խնջույքի սրահ էին տանում գինին: Արբեցնում էին և իրենք էլ՝ արբում... Վիուկները Մակբեթի հոգու և ներքին ծայնի արտահայտությունն են: Յերուսի մեջ ընթացող պայքարը մի երկրնտրանք է, որի մեջ գիտակցության մթազնում է կատարվում: Սպանել, թե՛ չսպանել, տիրանալ գահին, թե... Գայթակղությունը դրական հերոսին

մղում է մարդասպանության: Նրա խղճի ծայնը մեռնում է, և սկսվում է մարդ-հերոսի գահավեժ անկումը մինչև դժոխքի խորխորատները:

«Դաշույնի» պատկերը տպավորիչ էր և անսպասելի: Դաշույնը և կար, և չկար... Ընթանում էր Մակբեթի մենախոսությունը: Երբեմն նրա աչքին դաշույն էր երևում, երբեմն՝ անհետանում: Այս տեսարանի մասին կարդացել էի, քրքրել ձեռքիս տակ եղած նյութերը, գիտեի, թե շեքսպիրյան ողբերգակ դերասաններից ով ինչպե՞ս է լուծել դաշույնի տեսիլքը, որպեսզի այն և բնական լինի, և ազդեցիկ: Կարդացել էի Ռուբեն Զարյանի խոսքը Վահրամ Փափազյան-Մակբեթի մենախոսության տեսարանի մասին: Ինձ ծանոթ էին նաև անգլիացի և լեհ ողբերգակ դերասանների՝ Ջոն Գիլգուդի, Ադամ Խանուշկևիչի կիրառած բեմական միջոցները: Դրանք խոսքային բառաշերտի վրա հիմնված ստատիկ, անշարժ, առանց միզանսցեն լուծումներ էին: Մեկի մոտ դաշույնի տպավորությունը ստեղծվում էր լույսի շողի երևումով և անհետացումով, իսկ մյուսի մոտ՝ մի կետի վրա շեղբի անշարժ կենտրոնացումով: Ես որոշեցի դաշույնը դարձնել իրական, որպեսզի այն նաև հանդիսատեսը տեսնի: Բայց այն պահին, երբ Մակբեթը ձեռքով կփորձի բռնել դաշույնը, կանհետանա... Վիուկները, որ Մակբեթի մտքերն են, հանգցնում են նրա ձեռքի վառվող ջահը գինու տակառում: Դա նշանակում է, որ այստեղ տիրում է խավարի իշխանությունը: Խեղդվում է լույսը, և գլուխ են բարձրացնում դիվային ու խոլ մտքերը:

- Ուզում եմ մեջբերել «Մակբեթի մենախոսությունից» մի հատված.

Դաշույն է առջևս, այս որ տեսնում եմ,

Կոթը դեպի ձեռքս:- Եկ, թող բռնեմ քեզ:

Դու չես ձեռք գալիս, բայց տեսնում եմ քեզ:

**Չե՞ն դու զգալի, չարաբաստ տեսիլ,
Շոշափելիքի ինչպես տեսության.
Թե մտացածի՞ն մի դաշույն ես լուկ, մի սուտ ստեղծվածք,
Մի ջերմաչարչար ուղեղից ելած:
Տեսնում եմ քեզ դեռ, ձևով նույնպես պարզ և շոշափելի,
Ինչպես այս մեկը, որ դուրս եմ քաշում:
Դու ինձ ուղղում ես դեպի այն ծամփան, ուր գնում էի,
Եվ հենց այդպիսի մի գործիք էի գործի դնելու:
Աչքերս իմ մյուս զգայարանքից մոլորեցված են,
Կամ, իրենք մենակ բոլորին արժեն:
- Տեսնում եմ քեզ դեռ,
Տեսնում եմ շեղբիդ և կորթիդ վրա արյան կաթիլներ,
Որոնք մինչև այժմ չկային այնտեղ:
Ո՛չ, այդպիսի բան գոյություն չունի:
Արյունոտ գործն է, որ այսպես աչքիս ձև է ստանում:
(Թարգմանությունը` Յովհաննես Մասեփյանի)**

- Անընդհատ տարբեր կողմերում հայտնվում էր դաշույնը` արյունոտ շեղբով: Մինչև մենախոսության ավարտը Մակբեթը խելագարի պես վազվզում է այս ու այն կողմ, որպեսզի ձեռքն առնի երևացող դաշույնը: Ուղեկցող վիուկները նրա հետ միասին մագլցում էին աստիճաններով: Իսկ երբ ավարտվում է մենախոսությունը, այս ու այն կողմերում երևացած դաշույնները միանգամից շարտվում են ու ցցվում բեմի տախտակամածին: Մակբեթը, ձեռքն առնելով դաշույնները, մագլցում է աստիճաններով դեպի Դունկանի սենյակը: Նրան հետևում է վիուկների խումբը: Եվ ձգվում է ժամը` որպես արյան ու ոճրի դժոխային մի հանգուցալուծում:

- Ենթադրում եմ, որ ձեր բեմադրած «Մակբեթ»-ը հանդիսատեսի կողմից այդպես էլ չմոռացվեց: Ձեր հուշատետրից

տեղեկացա նաև, որ դուք մերժեցիք առաջարկությունը՝ «Մակբեթ»-ը այդ թատերախմբով երևանյան հայտնի թատրոնների բեմերում ևս ներկայացնելու առնչությամբ:

- Մերժեցի: Չգիտեմ՝ ինչու: Ինչ-որ մի ուժ, անբացատրելի մի զգացում խանգարում էր... Ավելին: 2001թ. ռեժիսորներ Յուրայա Աշուրյանը, Արմեն Խանդիկյանը, Արմեն Էլբակյանը և ես հրավիրվել էինք՝ մասնակցելու Մոսկվայում անցկացվող Համաշխարհային թատերական օլիմպիադային: Հիշում եմ՝ Արմեն Էլբակյանի հետ զրուցելիս, ասաց. «Լսիր, Ստեփանակերտում բեմադրիր «Մակբեթ»-ը, ինձ էլ հրավիրիր՝ խաղամ...»: Ես ժպտացի. «Արմեն ջան, դժվար թե հնարավոր լինի նույն ջուրը երկու անգամ մտնել...»: Մինչ այդ մի անգամ էլ էր նույն ցանկությունը հայտնել ինձ: Ես մերժեցի: Մակբեթի դերակատարը՝ Լևոն Գևորգյանը, Արմեն Էլբակյանի համակուրսեցի մտերիմ ընկերն էր, ով, ինստիտուտն ավարտելուց հետո, աշխատանքի հրավեր ստացավ Սուևոլկայանի և Երիտասարդական (այժմ՝ Հ.Ղափլանյանի անվան) թատրոններից, բայց մերժեց: Ավելին՝ նա երբեք թատրոնում չաշխատեց: Տարիներ հետո, երբ հյուրընկալվեցի նրա տանը, և հայտնեցի իմ տարակուսանքը, նա շատ հանգիստ ասաց. «Ես քո բեմադրությամբ արդեն խաղացի դերասանի համար ամենաբաղձալի՝ շեքսպիրյան դերերից մեկը: Դա ինձ համար բարձրակետ էր»:

*Եվ ճանապարհի
ոգի է առնում՝ ընդարձակելով
շնչառությունը երկնային բերքի...
Ռ. Եսայան*

- 1976թ.-ին դուք հրավիրվեցիք աշխատանքի Ստեփանակերտի Մաքսիմ Գորկու անվան թատրոնում, որպես դերա-

ասան-ռեժիսոր: Ինչպիսի հիշողություններ են արթնանում ձեր մեջ, երբ մտաբերում եք ձակատագրով ձեզ ընձեռված այդ առաքելությունը:

- Իմ աշխատանքային գործունեությունը սկսեցի Լենինականի թատրոնում: Մի օր Երևանի թատերական ինստիտուտի ամբիոնի վարիչ, ռեժիսոր Արտաշես Յովսեփյանն ինձ զանգեց և հրավիրեց Երևան: Երբ մտա նրա աշխատասենյակը, ասաց. «Ծանոթացիր Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի տնօրեն, բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանի հետ,- հետո հավելեց,- Գուրգեն ջան, իմ լավագույն ուսանողներից է Լեոնիդը, ես վստահում եմ նրան և հավատում նրա կարողություններին, թատրոնի համար պիտանի կլինի»:

Անծանոթ, բարի և ժայռեղեն կազմվածքով բանաստեղծին և թատրոնի տնօրենին ես հայտնեցի, որ աշխատում եմ Լենինականի թատրոնում և չթաքցրեցի՝ նոյեմբերին զորակոչվելու եմ բանակի շարքերը: Նա բարեհամբույր ժպտաց և ասաց. «Ես հատուկ նամակով եմ եկել, հուսով եմ, որ ձեզ կազատեն բանակային ծառայությունից և դուք կաշխատեք Ստեփանակերտի թատրոնում, որպես ռեժիսոր»: Սակայն բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանի խնդրանքն ու առաջարկությունը մերժվեցին իշխանությունների կողմից: Ղարաբաղն ինձ համար դարձավ հեռավոր ու անհասանելի: Ղարաբաղի աստղն իմ ձակատագրի երկնքում մի պահ փայլատակեց, ես հասկացա, որ նրանից ազատում չունեմ: Անկախ քո ծրագրերից՝ նախախնամությունն իր գործն է անում: Բանակային ծառայությունն ավարտելուց հետո որոշեցի գնալ Ղարաբաղ: Երբ Իջևանից ավտոբուսն հատեց Յայաստանի սահմանը և մտավ ադրբեջանական կոչվող տարածքը, ինձ պաշարեցին մի անսահման թախիծ և որբության զգացում: Ճանապարհային փոշին, ձանձրույթի շերտը, ոչխարի հոտն ու թիթեղային տհաճ ձայները

ճնշում էին... Ասկերանում ոգևորությունն իմ մեջ ալիքվեց և շարունակվեց ճանաչողության հաճելի հունով:

Ներքին ձայնս ինձ հուշում էր. «Գնա՛ Առյուծների երկիրը՝ Արցախ, Սասուն... Դե, քանի որ Սասուն գնալն առայժմ անհնար է, եկա Արցախ...»

- Լեոնիդ ջան, հավատում եմ, որ մի օր ես ու դու պիտի քայլենք Սասունի՝ օտար քայլերից տանջահար և միաժամանակ մեր նախնյաց ոգով առասպելապատ փողոցներում: Եվ մեզ կդիմավորի Առյուծ Միերը: Ես այնտեղ պիտի մի օր գտնեմ իմ Ոգու նոր «Չենակետերը», իսկ դու կբեմադրես «Սասնա ծռեր» ներկայացումը: Չավատա՛, Աստված է հուշել Նոստրադամուսին այս միտքը. «2020թ. շեկ ազգերի բանակները Չայաստանի վրայով կմտնեն և կգրավեն Ստամբուլ քաղաքը»: Այս խոսքն ընթերցել եմ 1989թ. տպագրված «Գարունի» էջում: Չետո խորհել եմ. մի՞թե համաշխարհային իրադարձությունների զարգացումը մի օր կհանգեցնի հենց դրան: Այն ժամանակ, իրոք, չէր երևում իրադարձությունների զարգացման ծիրը: Իսկ հիմա, ինչպես ափիդ մեջ, տեսնում ես դեպքերի զարգացման նման հնարավորություն: «Չե՛յ, ջան-Ազերբայջան», - Ազատ Վշտունու այս հանգերն անգամ չկարողացան ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը: Դու եկար Արցախ այն ժամանակ, երբ ադրբեջանական իշխանությունը համառորեն փորձում էր երկրամասից վտարել դիմադրության ոգին: Առյուծի և արծվի արձանները հավաքվել մարզկենտրոնի փողոցներից և պահվում էին նկուղներում: «Մենք ենք, մեր սարերը» գլուխգործոցային հուշակոթողը ըմբոստության միակ ճիճն էր:

- Չասա Ստեփանակերտ: - Շարունակեց իր խոսքը Լեոնիդ Չարությունյանը: - Չրանտ Մաթնոսյանի դիպուկ բնորոշմամբ՝ սոցի-

ալիզմը միայն թուրքերի համար է եկել: Ղարաբաղում ազերիներին կոչում էին նաև մի այլ անվամբ՝ ծանին: Որպեսզի ծանին չվախենա, հեշտությամբ նվաճի Ղարաբաղը, Ստեփանակերտի մուտքից վերցրին Առյուծի արձանը: Այդ տեղամասը հենց այդպես էլ կոչվում էր՝ «Առյուծի վերելք»: Թվում էր, թե վերելքն ազանտ է... Իսկ ըմբոստության ուժը անընդհատ կուտակվում էր ու կուտակվում...

- Ժան Անդրյանը երբ մշակույթի մարզային վարչության պետն էր, մարզային մի ակտիվում ելույթ ունեցավ, նշելով, որ հայկական հուշարձանները դիտավորյալ ոչնչացվում են: Ժողովին ներկա էր նաև Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի գաղափարական աշխատանքների գծով քարտուղարը, որը, ընդհատելով Անդրյանի ելույթը, հարցրեց. «Իսկ քո ասած այդ հուշարձանները ինչ նպատակի համար պետք է վերանորոգեն»: Ժան Անդրյանը տվեց շիտակ պատասխան. «Իսկ Շուշի քաղաքի մեջիդները ինչ նպատակով են վերանորոգում: Ի՞նչ է, այնտեղ մարքսիզմ-լենինիզմ պիտի քարոզեք»:

- Անշուշտ,- շարունակեց իր խոսքը Լեոնիդ Չարությունյանը,- ես ըմբռնում էի, թե որտեղ պիտի աշխատեմ...

Նստած էինք թատրոնի սրճարանում, երբ ներս մտավ Գուրգեն Գաբրիելյանը: Նա անմիջապես կատակեց. «Լեոնիդ, պարզվում է՝ դու վաղուց աշխատում ես մեր թատրոնում, ես տեղյակ չեմ...»:

1976թ. հունվարի 5-ին ընտանիքով տեղափոխվեցի Ղարաբաղ: Իմ ընտանիքին հատկացրին մեկ սենյականոց բնակարան Էնգելսի անվան փողոցում: Գնում էինք թատրոն, դիտում ներկայացումներ: Դեռ առաջին այցիս ժամանակ դիտեցի Պսաֆասի «Պահանջվում է ստախոս»-ը: 12 օր շարունակ լեփ-լեցուն էր թատրոնի դահլիճը: Դերասան Կարպ Խաչվանքյանի մասնակցությունը ոգևորիչ էր: Նշեմ, որ Խաչվանքյանին արժանավոր խաղընկերներ էին Ֆերեքիսի դերակատար՝ Մամիկոն Միքայելյանը, Ջեննի դե-

րակատար՝ Մարգո Բալասանյանը: Հիշում եմ վերջինիս խոշոր ու արտահայտիչ աչքերը, խոսուն թարթիչները... Կոմիկական անկրկնելի կերպար էր Սուրեն Համզոյանի Վռասիդասը: Նրա՝ նույնիսկ անխոս հայտնվելը բեմում, անզուսպ ծիծաղի ալիք էր բարձրացնում դահլիճում: Նրա կոմիկական բնատուր արտաքինը, խոսքի թեթև ու անձիգ արտաբերումը զուգորդվում էին անչափ հակիրճ ու ձկուն բեմական պլաստիկայի՝ շարժման հետ: Աչքերը մշտապես փայլում էին չարածձի, մանկական ժպիտով: Այդ բանն ինձ վրա մոզական տպավորություն էր գործում: Իսկ երբ ծանոթացա նրա կենսագրության որոշ անցքերին, բնական համարեցի դա. չէ որ նա մահվանն այնքան մոտ էր եղել... Որոշ ժամանակ եղել է մահապարտների խցում, հետո արդարացվել է ու ազատվել: Ինձ թվում է, նրա կենսունակությունն ու հումորը պայմանավորված էին հենց մի անգամ մահվանն այդքան մոտ գտնվելու հանգամանքով:

Հիշողությանս մեջ ապրում է նաև Շուշանիկ Գրիգորյանի ինքնատիպ կատարումը: Անծանոթ կնոջ դրվագային դերում անկրկնելի էր... Քիչ խոսքով. լռության ու հոգոցների միջոցով ավելի խոսուն էր դարձնում իրեն համակած վիշտը: Շուշանիկ Գրիգորյանը տարբերվում էր բեմական խոսքի իր յուրահատուկ մատուցմամբ: Նրա խոսքը հնչում էր դահլիճի ամենահեռավոր անկյուններում պարզ ու հասկանալի, գրավում էր իր խաղացած կերպարի՝ ապրումի բոլոր գույների փոխանցումով, բեմական կուլտուրայի ներդաշնակ համադրությամբ:

- Առաջին ստեղծագործությունը, որ բեմադրեցիք Ստեփանակերտում, Վ.Ռոզովի «Երջանկություն որոնելիս» պիեսն էր: Կարո՞ղ եք մի առանձնահատուկ դրվագ ներկայացնել այդ պիեսի բեմադրության պատմությունից:

- Վ.Ռոզովի «Երջանկություն որոնելիս» պիեսի բեմադրությունը ինձ համար դարձավ մի յուրօրինակ քննություն: Էջմիածնի ակում-

բագրադարանային տեխնիկումի ռեժիսորական բաժնից մի խումբ երիտասարդ տղաներ և աղջիկներ էին եկել թատրոն, որոնց և պիտի ընդգրկեի ներկայացման մեջ: Անծանոթ դերասանների հետ աշխատանքը և՛ դժվար էր, և՛ «անակնկալներով» լի: Ներկայացմանը պիտի մասնակցեին նաև երկու փորձառու դերասաններ՝ Մարգո Բալասանյանն ու Բենիկ Օվչյանը: Նրանք իմ առաջարկությունը մերժեցին, ասելով. «Ճիշտ կլիներ, եթե օգտագործեիք պարապ դերասանների ուժերը»: Այդ պատասխանը ես ընդունեցի որպես մարտահրավեր: Դա ինձ ավելի պարտավորեցրեց: Լցվեցի առավելագույն արդյունքի հասնելու վճռականությամբ: Երկու օր անց՝ ինձ մոտեցավ դերասանուհի Շուշանիկ Գրիգորյանը և գորովալից տոնով ասաց. «Դուք ինձ տվեք մոր՝ Կլավդիա Վասիլենայի դերը, ես կարդարացնեմ ձեր վստահությունը»: Յանձին նրա՝ ես տեսա ինձ աջակցող գորովալից մոր, ով ապրում է հաղթական արդյունք ապահովելու ազնիվ ձգտումով: Տատյանայի դերակատարն էր Ժաննա Գալստյանը: Այնուհետև ներկայացման մեջ խաղալու ցանկություն հայտնեցին դերասաններ Վահան Առուշանյանը, Բոգդան Բաբայանը, Արմիդա Գաբրիելյանը: Պիտի ասեմ, որ նրանք միշտ մասսայական և դրվագային դերեր խաղացած դերասաններ էին և նրանց համար առիթ էր ներկայացել՝ կաղապարված և ծանոթ շրջանակը կոտրելու և իրենց նորովի դրսևորելու:

Աշխատում էի իմ ողջ իմացության և կարողության չափով:

Ես նուրբ պահանջկոտությամբ և ուշադիր վերաբերմունքով կարողանում էի թելադրել խաղի իմ կանոնները: Փորձերն անում էի երկար, ընդմիջումները՝ կարճ: Նպատակս այն էր, որ դերասանները հնարավորինս քիչ շփվեին «դրսի» աշխատակիցների հետ, քանի որ ներքին խոհանոցը վերլուծելով՝ կենտրոնացած աշխատանքը կկորցնեի իր արդյունավետությունը: Երեկոյան փորձերն ավելի արդյունավետ էին: Կողմնակի ոչ-ոք չկար: Աշխատան-

քային կենտրոնացումը գերազանց էր, փորձերը ձգվում էին մինչև կեսգիշեր:

Արվեստի վաստակավոր գործիչ Գրիգոր Ծատուրյանը թատրոնի գլխավոր նկարիչն էր և այս ներկայացման նկարչական ձևավորման հեղինակը: Նա շատ էր ոգևորված իմ թատերական թարմ մտահղացումներով և իր գովեստի խոսքով ականայից շարժում էր «ենթադրություններով» ապրող շատ դերասանների հետաքրքրասիրությունը: Մի առիթով դերասան Ժորա Մովսիսյանն ինձ ասաց. «Կարծում ես, թե միշտ քեզ կհաջողվի՞ այդքան երկար փորձեր անել: Նրանք խամ երիտասարդներ են, ձայն չեն հանում: Վաստակավոր դերասանները չեն հանդուրժի այդքան երկարատև փորձերը...»: Ժորա Մովսիսյանը, ցավոք, ճշմարտությունն էր ասում: Յետագայում ես դրանում համոզվեցի. ստեղծագործական ամենաեռուն փորձերի ժամանակ անպայման գտնվում էր «վաստակավոր» մեկը, ով ընդհատելով փորձը, հայտնում էր աշխատաժամի ավարտի մասին: Սա աշխատանքային ընթացքի ամենամեծ կասեցումն էր: Ինչպես ժողովուրդն է ասում՝ «գլխիդ սառը ջուր էին լցնում»:

Դերասան Վահան Առուշանյանը դերասանական խմբի վարիչն էր, ով պատասխանատու էր նաև դերասանների աշխատանքային կարգապահության համար: Չափազանց խստապահանջ, գործին միշտ պատրաստ և ոչ մի շեղում չհանդուրժող անձնավորություն էր: Լուրջ ու սառը դեմքով առնչվում էր աշխատակիցներին՝ միաժամանակ վարակելով նրանց ջերմ հումորով: Նրա կատակները բերնեբերան էին անցնում՝ հաճախ ստանալով նոր երանգ, ընթացք և շարունակություն: Ներկայացման մեջ նա պիտի խաղար Իվան Նիկիտիչ Լապչինի դերը, բայց դերաբաշխումից հետո մոտեցավ ինձ ու խնդրեց, որ իրեն հատկացնեմ մի այլ՝ քեռի Վասյայի դերը: Յետագայում պարզվեց, որ նա այդ քայլն արել էր իր գոր-

ծընկերոջ՝ դերասան Բոգդան Բաբայանի խնդրանքով: Վերջինս փափագում էր իրեն տեսնել Իվան Լապշինի դերում: Ես նրանց առաջարկեցի՝ երկու դերերում էլ իրար փոխարինել: Այդպես նրանք երկու դերերն էլ խաղացին՝ իրար փոխարինելով, համերաշխ ու զիջողաբար, ինչը մեզանում եզակի երևույթ էր, եթե չասեմ՝ բացառիկ: Իրավ, Վահան Առուշանյանի Լապշինը պահանջկոտ, հաշվենկատ և բռնակալ հայր էր, Բոգդան Բաբայանի կերտած կերպարը՝ կյանքի փոքրիկ հաճույքներին գերի անձնավորություն էր, որը հարմար առիթը բաց չէր թողնում՝ ուրիշի տանը խնջույք և տոնախմբություն սարքելու: Իհարկե, ներկայացման առաջատարը Շուշանիկ Գրիգորյանի Կլավդիա Վասիլևնան էր՝ իր փորձառու և հմուտ դերասանական վարպետությամբ:

Ամենացուն ու ամենաբարդ տեսարանը առաջին գործողության ավարտն էր, երբ Օլեգը անզգուշորեն թանաք էր թափում Լենոչկայի արտասահմանյան սեղանին, իսկ քաղքենիական մոլուցքով բռնկված հարսը ցասման պոռթկումով դուրս է չալսում Օլեգի՝ ձկներով ակվարիումը, ինչն էլ մղում է պատանուն ծայրահեղ քայլի: Օլեգը պատից իջեցնելով պատերազմում զոհված հոր թուրը, կատաղորեն սկսում է ջարդուփշուր անել կահույքը: Սա մի տեսարան է, որտեղ բախվում են պատանեկան զուլալ զգացմունքներն ու անհագուրդ կրքով բռնկված քաղքենու հոգու կուրությունը: Սա մի կուլմինացիա է, որտեղ ներկա են համարյա բոլոր դերակատարները: Այստեղից սկսվում են մարդկային թաքնված կրքերի նորովի բացահայտումն ու նյարդաբաց դրսևորումների տաք ալիքը: Միզանսցենն առանձնահատուկ է, բարդ և դժվար հաղթահարելի: Օլեգը, թուրը ձեռքում, վազում է այս ու այն կողմ՝ ջարդոտելով կահույքը, իսկ դերակատարները վազում են նրա հետևից, աշխատում բռնել նրան և ձեռքից խլել թուրը:

Որպեսզի տեսարանը չդառնա անկառավարելի, որոշում եմ բե-

մադրել խառնաշփոթ շարժման այս դրվագը՝ ամեն դերակատարի հատկացնելով որոշակի պարտականություն: Դա դառնում է բեմական հետաքրքիր գյուտ, չափազանց ներագրող և հիշվող մի իրողություն:

«Երջանկություն որոնելիս» ներկայացման հանձնումը երևույթ էր մեր թատրոնի համար:

- Ուշագրավ են այդ ներկայացման մասին մամուլում տպագրված հոդվածները: Առաջին արձագանքը՝ բանաստեղծ Վարդան Չակոբյանի «Ստեղծագործական որոնումները «Երջանկության որոնումներում» հոդվածն էր, որը տպագրվեց «Սովետական Ղարաբաղ» թերթի 1976թ. հունիսի 15-ի համարում: «Երիտասարդ ռեժիսորը ըմբռնել է պիեսի ոգին, փնտրել ու հիմնականում գտել է բեմականացնելու մի շարք նրբություններ, որոնք և բավականին նպաստել են կերպարների ճիշտ բացահայտմանը», - նշել է Վ. Չակոբյանը:

Չանրապետության վաստակավոր արտիստ Սուրեն Չամզոյանը «Թատրոնի երիտասարդ ուժերը» հոդվածում («Կոմունիստ», 1977թ. ապրիլի 16) գրում է. «Իր աշխատասիրությամբ աչքի է ընկնում երիտասարդ ռեժիսոր Լ. Չարությունյանը, որը Վ. Ռոզովի «Երջանկություն որոնելիս» պիեսի հետաքրքիր բեմադրությունից հետո այժմ բեմադրության է պատրաստում Չ.Դիկենսի «Դավիթ Կոպերֆիլդ» պիեսը»:

- «Երջանկություն որոնելիս» ներկայացումը մի յուրօրինակ քննություն էր նաև երիտասարդ դերասանների համար, որոնք կարողացել էին ինքնահաստատվել, վստահություն ձեռք բերելով թե՛ թատրոնի դերասանների և թե՛ հանդիսատեսի աչքում: Գեղարվեստական խորհուրդը բարձր գնահատեց երիտասարդների ստեղծագործական ջանքերը, իսկ բազմաշնորհ բանաստեղծ Վարդան Չակոբյանի հոդվածը ոգևորության նոր ալիք արթնացրեց արվեստ-

տասեր և հուսավառ երիտասարդների սրտերում:

- Լեոնիդ Ավետիքի, թատրոնը լինելով ձեր կյանքի իմաստն ու բովանդակությունը, միշտ ուղղորդել է ձեզ որոնումների դաշտում, մղել ստեղծագործական խիզախումների: Երբևէ դուք գոհացել եք ձեր կատարած աշխատանքից, թե՛, այնուամենայնիվ, մի բան մնալով անսպառելի, միշտ մղել է նոր որոնումների:

- Հաջողություն կերտողը մարդն է, այն անհատականությունը, որը ստեղծում է ստեղծագործական մթնոլորտ, աուրա: Արված աշխատանքը դառնում է ստեղծագործական ուղի, որը և լցնում է թատերական կյանքի էջերը նոր մտահղացումների լույսով: Անընդհատ որոնումների մեջ եմ. սա է իմ ուժը: Գտնելով՝ գոհանում եմ միայն մասնակի չափով: Մղվում եմ առաջ՝ ձանաչելու և որսալու նոր իրադրությունը, բացահայտելու Ոգու նոր գյուտը:

Շատ կարևոր է նաև, թե ո՞վ է գործընկերդ: Ուզում եմ հիշել մի մարդու, որի դրական ազդեցությունը շատ կողմերով պայմանավորել է իմ ներկայացումների (հատկապես՝ սկզբնական շրջանի) հաջողությունը: Խոսքը թատրոնի շատ կարևոր օղակի՝ գրական մասի վարիչ Իսահակ Ալավերդյանի մասին է: Նա ուշադիր հետևողականությամբ գիտեր վերլուծել դերասանի կարող և թույլ կողմերը և բեմադրելու համար առաջարկել պիես, որը և համապատասխանում էր թե՛ դերասանական ուժերին և թե՛ հանդիսատեսի պահանջին: Այդպես նա իր առանձնասենյակում խոսելով իմ առաջին հաջող բեմադրության մասին, առաջարկեց բեմադրել Արամաշոտ Պապայանի «Գնա մեռի, արի սիրեմ» պիեսը:


- Ինչպե՞ս ընդունեցիք այդ առաջարկությունը: Ամեն մի նոր գործ նոր փորձություն է, հաղթահարում, թե... հաճո՞յք:

- Ձեռք բերվեց պիեսը, և սկսվեցին քննարկումները ներկայացման շուրջ: Օդում կախվեց ուռուցիկ մի կարծիք, որը կարող էր

խանգարել բեմադրության սկզբնական աշխատանքին: Դա այն սնամեջ միտքն էր, թե «Գնա մեռիր, արի սիրեմ...»-ը այնքան շատ է բեմադրվել բարձրակարգ թատերական խմբերի կողմից, որ մենք դժվար թե կարողանանք գերազանցել... Ինչի մասին է խոսքը, տիկնայք և պարոնայք, բայց չէ որ թատերական ստեղծագործությունը պիտի նվաճել հենց խորքից և ներկայացնել բոլորովին նորովի... Ոչ-ոք չի կարող թևաթափ անել ստեղծագործական խմբին՝ զրկելով նրան բեմադրությունը սկսելու մտքից: Նույնիսկ վաստակաշատ դերասան Բենիկ Օվչյանի հաղորդած այն տեղեկությունը, թե վերոհիշյալ պիեսը բեմադրվել է Երևանի և Կիրովականի թատրոններում և խաղացվել առնվազն 70 անգամ, մեզ չի կարող զրկել սեփական քիմքով արվեստն ընկալելու և այն նորովի բեմականացնելու հնարավորությունից:

Սկսեցի աշխատանքը: Իմ պատկերացրած ներկայացումը պահանջում էր նոր մոտեցում, տեքստային հավելումներ, անգամ նոր կերպարների ներմուծում, որոնց մասին պիեսում խոսվում է, բայց... չկային: Աշխատանքը հետաքրքիր էր և ոգևորիչ, կարևոր էր և այն, որ պիեսի նյութը մեզ թույլ էր տալիս ազատ մանրնելու՝ ստեղծելով նոր և ազդեցիկ միզանսցեններ, որոնք բովանդակային նոր շնչառություն պիտի հաղորդեին թատերական իրավիճակներին, ավելի ու ավելի ընդգծելով հեղինակի առաջադրած գաղափարային նպատակն ու գործողության դրամատիզմը: Ուշադրությունս մի պահ գրավեց նաև թթենին, որպես խորհրդանշային կերպար: Ներքին ձայնս հուշում էր, որ այդ ավանդական ծառի մոտ անհրաժեշտ է ծավալել «Յերոսուհու մենախոսությունը»:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՓՆՏՐԵԼ ԵԼՔԸ



Ստեղծագործելիս Նշանակո՞ւմ է
Փնտրել Ելքը

Արցախում թթե-
նին պաշտամունքա-
յին նշանակություն
ունի: Պատերազմի
տարիներին թթենին
պահել ու կերակրել
է բակի բնակիչնե-
րին՝ միավորելով
նրանց գրույցով, եր-
գով և հոգեաշխար-
հով: Առաջարկեցի
գրել այդ մենախոս-
ությունը և մտցնել
ներկայացման մեջ:
Առաջարկությունս
ոգևորեց առաջին
հերթին Սոֆոյի դե-
ր ա կ ա տ ա թ ի ն՝
Նվարդ Ասատրյա-
նին, ում միջոցով էլ
պիտի կերպավոր-
վեր այդ մենախոսու-
թյունը: Հաջորդ
փորձի ժամանակ
կարդացինք մենա-
խոսության վար-

իանտները: Բոլորի կողմից հավանության արժանացավ իմ գրած մենախոսության տեքստը: Ահա այն ամբողջությամբ.

«Է՛, թթի ծառ... Մի փոքրիկ ճյուղ էիր, երբ Տարոնը բերեց քեզ ու տնկեց: Խնամեց, փայփայեց, մինչև որ ամրացար, հասակ առար, ինչէր ասես չտեսար: Դարձար մեր բոլորի ուրախ ու տխուր օրերի վկան: Պատերազմի տարիներին էլ մեզ ու մեր երեխեքի համար համ հաց էիր, համ գաթա: Նզովյալ լինես, պատերազմ: Մեր բակից քանիսը գնացին ու ետ չեկան: Միայն Տարոնը եկավ, էն էլ՝ վիրավորված: Եկավ ու զոհվածների երեխոց հեր դարձավ, պահեց: Չեմ մոռանա, ինչպես թույլ թափ կտար ու որպես պայոկ բոլորիս հավասար կբաժաներ: Ոնց որ մի ընտանիք՝ միասին մրսել ենք, միասին ջերմացել: Մեր բակը մի մեծ բովանդակ աշխարհ էր: Թթի ծառ, Տարոնն էլ կքոչի, հետո էլ՝ մենք, կմնաս որբ ու մենավոր: Մի օր էլ տեսար, եկան ու քեզ քոքահան արին: Եվ վերջ: Կար և չկա այլևս մեր ուրախ, եռուզեռով լեցուն բակը»:

Մենք փոքր ու ջերմ խնջույքով նշեցինք այս մենախոսության ծնունդը և վայելեցինք տիկին Նվարդ Ասատրյանի պատրաստած կարկանդակները: Սա է այն մենախոսությունը, որ դերասանուհի Նվարդ Ասատրյանը կատարում էր մեծ ոգևորությամբ, իսկ հանդիսատեսն էլ արժանիորեն փոխհատուցում էր նրան իր շնորհակալական ծափողջույններով: Հուզիչ էր նաև Տարոնի կեղծ մահվան տեսարանը: Ինքը՝ Տարոնը կողքից հետևում էր իր թաղման արարողակարգի ընթացքին: Որդիները, որոնք մինչ այդ հրաժարվում էին տիրություն անել հիվանդ հորը, հիմա նրա փառավոր թաղման համար մրցակցում և իրարից խլում էին առաջնության դափնին: Նրանք, բռնկվելով փառասիրության, ինչպես նաև հափշտակելու մոլուցքով, փորձում էին տիրանալ նաև հոր կայքին և տանը: Խոսուն և ազդեցիկ տեսարանը զուգակցվում էր հոգով վիրավորված և խոցված հոր հոգեվիճակի դրամատիկ սևեռումներին: Ներկայացման ընթացքը հուշեց ինձ գրելու ևս մի տեսարան,

որը և դարձավ թատերական ստեղծագործության վերջաբանը: Ահա այն.

Պրոֆեսոր- Ահա և հրաշքը տեղի ունեցավ: Չտեսնված, չլսված հիվանդ: Մարդկության համար ուսումնասիրության ենթակա: Ախ, իսկ ես կարծեցի թույն ես ընդունել:

Տարոն - Թույնը թույլերի համար է: Ես մեռա վշտից: Մեռա, որ ականատես լինեմ իմ վերջաբանին:

Պրոֆեսոր- Վերջդ վատ չէ: Այնպիսի թաղում են քեզ համար կազմակերպել:

Տարոն - Գիտեմ՝ 3 նվագախումբ, մահարձան: Տեղ գերեզմանատան կենտրոնական մասում: Մխիթարվեմ նրանով, որ հիմա գոնե տեր կանգնեցին: Ծնողներ կան, որ մեռնելուց հետո էլ մնում են անտեր:

Ալիկ- Հայրիկ, այդ դու ես...

Տարոն- Ես... Ես երկար կանչեցի, սպասեցի՝ դուք չեկաք: Կարոտով գնացի: Հիմա դուք կանչեցիք՝ եկել եմ: Եկել եմ վերջին անգամ նայեմ ձեզ ու հրաժեշտ տամ: (Իր նկարին): Քանի ողջ էիր, ոչոք չցանկացավ քեզ իր հարկի տակ մի անկյուն տալ, թեկուզ մի քանի օրով: Մեռար՝ նոր փակ դռները բացվեցին: Հիմա մրցում են, վիճում, պատճառաբանում, միմյանց վիրավորում, աղաչում, թե ում մոտ պիտի հյուրընկալվես: Մեռա՛ր... խնդրեմ՝ և պատիվ, և հարգանք: Հիմա կճառեն, կմեծարեն: Գնա մեռիր, որ քեզ սիրեն: Այս հարգ ու պատվի մեկ հարյուրերորդականը տվեք մարդուն, երբ նա դեռ ողջ է: Մի բառով անգամ կարելի է և սպանել, և կյանք տալ: Քանի մարդը կա՝ նրան չեք նկատում, չեք ափսոսում: Ինքներդ սպանում եք, հետո էլ նստում հոգեհացի սեղանի շուրջ ու զարմացած հարցնում իրար, թե ինչո՞ւ մարդը կար ու հանկարծ չկա: Գնում եմ և հետս տանում ցավ, վիշտ, վիրավորանք: Դառնացած եմ գնում:

Ալիկ- Ո՛ւր, հայրիկ...

Տարոն- Այնտեղ, որտեղ համենայնդեպս մենանկ չեմ լինի:

Լիլիկ- Պապուսիա, հիմա դու մեռած ես, թե կենդանի:

Ռոբերտ- Չայրիկ, դու կենդանի ես:

Տարոն- Միայն ոչ ձեզ համար: Երբ աշխարհ եկաք, իմացա թե տանս կտուրին արևներ ծագեցին, ուզեցի ջերմանալ ձեզանով... Ափսո՛ս, նոր տեսա, որ սառած շողքեր եք... Ողորմի՛ ձեզ...

Սոֆիկ-

Դավիթ-

Վարդուշ-

Պրոֆեսոր- Ողորմի՛:

Տարոն- Բարով մնաք, արև մնաք...

- «Գնա մեռիր, արի սիրեմ...» կատակերգությունը հետաքրքիր է կառուցվածքով,- գրել է Իսահակ Ալավերդյանը, հույժ արդիական թեմայով, գործող անձերի երգիծական բնութագրություններով: Չեղինակը հոգեխոյզի նրբանկատությամբ կատարում է խորապես մարդկային ապրումների, զգացմունքների ու կյանքի թելադրած վիճակների առերեսում, հոգու դիտարկում:

Լ. Չարությունյանը ճիշտ է որոշել ներկայացման ասելիքը և այն հաղորդել դերակատարներին: Սուր կատակերգական գույներով էին օժտված երգիծվող դերապատկերումները, որոնցից շատերը թարմ էին, տիպիկ ու տպավորիչ, Մ. Միքայելյանի Տարոնը, Ն. Ասատրյանի Սոֆոն, Ի. Չովհաննսիյանի պրոֆեսորը, Մ. Ալոյանի Դավիթը»:

- Այո՛, ներկայացումն ընդունվեց մեծ ոգևորությամբ և բուռն ծափողջույններով: Ոգևորիչ էր նաև այն փաստը, որ մեկ տարվա ընթացքում իրականացավ «Գնա մեռիր, արի սիրեմ» ներկայացման 100-րդ խաղարկումը: Մինչդեռ ասում էին՝ «Արժե՛ բեմադրել մի ներկայացում, որը հեղինակավոր ռեժիսոր Ա. Գամջյանն է մարմնավորել բարձրակարգ թատերախմբի բացառիկ ուժերով»:

- Պարզվում է՝ արժե՛: Նոր մոտեցումն ու նյութի ծանաչումը խորքից, նորովի բացահայտում էր թատերական կյանքում: Եվ ամենակարևորը՝ Արամաշոտ Պապայանի «Գնա մեռիր, արի սիրեմ...» պիեսի այդ բեմադրությունը յուրօրինակ էր, որովհետև Ստեփանակերտի թատերախումբը ձեր նախաձեռնությամբ աշխատել էր բոլորովին նոր սցենարով: Եվ այսօր այդ սցենարը, որ պահվում է ձեր արխիվում, եզակի երևույթ է և բացառիկ արժեք:

- Հենց այդպիսի գտածոների հավաքագրումով էլ կարող ենք սկիզբ դնել «Թատերական թանգարանի» ստեղծման աշխատանքին:

- «Թատերական թանգարան» ունենալը՝ նախ և առաջ նշանակում է բանուկ և կենդանի պահել թատերարվեստի ծանապարհը Արցախում: Ամեն դերասան, աշխատակից յուրօրինակ նշխարներով կարող է հարստացնել այդ թանգարանը՝ ստեղծագործական ոգու պահուստը, գիտակցելով, որ իր ստեղծածը նոր սերնդի համար ինքնաձանաչման դուռ է, կատարելության հասնելու հնարավորություն:

- Ամեն ներկայացում ունի իր առանձնահատուկ պատմությունը: «Գնա մեռիր, արի սիրեմ...»-ը 13 տարի անընդմեջ ոգևորում և ապրեցնում էր հանդիսատեսին, բեմական կյանքը դարձնելով ներշնչանքի և հաղորդակցության լավագույն միջոց:

Կյանքում երբեմն լինում է թատերաշխարհի նվիրյալների այնպիսի հանդիպում, որը թատերախմբի համար դառնում է յուրօրինակ քննություն, ինքնաձանաչման ասպարեզ, սեփական ուժերն ու կարողությունները ստուգելու հնարավորություն: 1977-ի ամռանը Լենինականի թատրոնը եկավ Արցախ հյուրախաղերի: «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի մոտ դիմավորեցինք վաստակաշատ ռեժիսոր Գրիգոր Մկրտչյանին, թատերարվեստի նվիրյալներ՝ Արզո Արզումանյանին, Սերգեյ Չոլախյանին, Վազգեն Հա-

կորյանին, ժաննա Թովմասյանին, Արտո Փաշայանին, Արուս Ազնավուրյանին, որոնք ինձ հիշում էին՝ որպես իրենց ստուգիայի սանի, որն հիմա ռեժիսոր էր Ստեփանակերտի թատրոնում, իսկ երիտասարդ դերասաններն էլ իմ ուսանողական ընկերներն էին: Յուզիչ էր այդ հանդիպումը և ցնցող: Լենինականցիները բերել էին մի քանի ներկայացում, բայց ես առանձնապես սպասում էի «Գնա մեռիր, արի սիրեմ...»-ի ցուցադրությանը: Ասեմ, որ միայն ես չէի, այդ ներկայացման ցուցադրությանը սրտատրոփ սպասում էր նաև Ստեփանակերտի ողջ թատերախումբը: Չէ՞ որ մենք արդեն հաջողությամբ խաղում էինք այդ բեմադրությունը: Հիմա եկել էր՝ չհայտարարված, բայց չափազանց լարված «մրցակցության» պահը: Տարոնի դերակատարն էր ՅՅ ժողովրդական արտիստ Արզո Արզումանյանը, իսկ Սոֆոն՝ ՅՅ ժողովրդական արտիստ Արուս Ազնավուրյանն էր: Գիտեի Ստեփանակերտի դերասանների կարծիքը նրանց դերասանական վարպետության մասին, ծանոթ էր ինձ մանավանդ Մամիկոն Միքայելյանի՝ Արզո Արզումանյանի նկատմամբ տածած մեծ հարգանքն ու ակնածանքը: Մի խոսքով՝ հեղինակության և ճանաչման տեսակետից լենինականցիներն ունեին առավելություն: Յետաքրքիրն այն էր, որ ստվերում գտնվող դրվագային դերասաններն աշխուժացել էին, կարծելով, թե հյուրերի ներկայացումն այնքան ցնցող և ազդեցիկ կլինի, որ մենք ստիպված պիտի հանենք խաղացանկից մեր «թույլ» բեմադրությունը:

Բարեբախտաբար, կատարվեց հակառակ իրողությունը: Ներկայացումից հետո մարեցին չարախինդ ժպիտները, իսկ առողջ բանականության տեր արվեստագետներն ու դերասանները հաղթանակողի ցնծությունն էին ապրում: Իսահակ Ալավերդյանն ինձ գրկեց ու համբուրեց ճակատս, ծիծաղի միջից արցունքոտ աչքերով հրձվում էր, ասելով. «Ապրես, քո բեմադրությունն առանձնահատուկ է»: Իսկ արձակագիր, թատրոնի գեղարվեստական խորհրդի ամենապահանջկոտ և չմահավան անդամ Մաքսիմ Յով-

հաննիսյանը սեղմեց ձեռքս, ասելով՝ «Շնորհավորում եմ...»: «Մաքսիմ Երվանդի,- ասացի,- սա Լենինականի թատրոնի ներկայացումն է, ինչո՞ւ եք ինձ...»: «Ես քեզ շնորհավորում եմ մեր թատրոնի ներկայացման համար, ապրեն...»: Դա ինձ համար բարձր գնահատական էր:

«Գնա մեռիր, արի սիրեմ...» ներկայացումն հաջողությամբ ցուցադրվեց նաև Բաքվի հանդիսատեսի համար: Բաքվեցի մեր հայրենակիցների համար ներկայացումը տուն կանչող մոր ձայն էր, կարոտի կանչ: Ես դրա ականատեսն էի: Բաքվեցիների տներում հյուրընկալվելիս, զգացի նրանց՝ դրամատիզմով լի կարոտը մայրենի լեզվի և Ղարաբաղի հանդեպ: Դա բառերով չարտահայտվող զգացողությունն էր: Կարոտի հեղեղ: Բողոքի ձիջ: Դա ճակատագրի ճիրաններում տառապող հայ ոգու ըմբոստությունն էր:

Թատրոնը իմ կյանքի իմաստն է և բովանդակությունը, Բարձրյալի կողմից ինձ տրված այն շնորհն է, որ ես նվիրաբերում եմ հայ հանդիսատեսին: Ստեղծագործել, այսինքն բեմադրել՝ նշանակում է անվերջանալի լաբիրինթոսում փնտրել ելքը, որն ամեն շրջադարձային ոլորանում նորանում է, կլանում և ներքաշում իր անվերջանալի ու անծիր տարածքում: Քանի կենդանի ես, շարժվում ես և պայքարում, իսկ շարժումը կյանք է:

ԲԱՑՎՈՂ ՅՈՐԻՉՈՆԻ ԼՈՒՅԱԸ

- Արցախի հողը ներշնչեց ձեզ նորանոր մտահղացումներ և ստեղծագործական ծրագրեր: Լինելով գյումրեցի, դուք հոգու թելերով ամուր կապվեցիք Արցախին և ձեր ավյունն ու ուժը անմնացորդ նվիրաբերեցիք արցախցի հանդիսատեսին: Այսօր ինչպիսի՞ հայացքով և զգացումով եք նայում ձեր անցած ճանապարհին:

- Ներշնչանքը, ստեղծագործական կարողությունը հողի, միջավայրի, եթե կուզեք՝ նախնիների հավաքական որակների կուտակումն է, որը սպասում է իր ժայթքման պահին: Ինձ սնուցել և ոգի է տվել Շիրակ աշխարհը, և ես իմ արմատներն եմ խորացրել Արցախի ոգեշունչ ու պարարտ հողում, գիտակցելով, որ կատարյալ արվեստի ձգտումն է միավորում արվեստագետներին, մղում դեպի գազաթը վեհության, ինքնաձանաչման լուսավոր աստղը:

Ես կյանքում ընդհանրապես որևէ դիրք չեմ լքել... Միշտ պայքարել եմ հանուն մարդու և արվեստի կատարելության, հանուն ոգեղեն արժեքների պահպանության: Երբեմն ինձ զրկել են Արցախում բեմադրելու հնարավորությունից: Ինձ զրկողն՝ ինքն է զրկվել ստեղծագործական ուժից և ռեսուրսներից: Ես վերադարձել եմ և նոր շնչառություն հաղորդել կիսատ մնացած գործին: Արցախցի հանդիսատեսը պահանջկոտ է, կիրթ և իմաստուն. նրա ճաշակը արվեստով հագեցնելը դժվար է, բայց անհնարին չէ: Հազարամյա գեներից եկող ոգի ունի արցախցին: Զբաղված լինելով առօրյա հոգսերով և խնդիրներով, հոգևոր թռիչքի և բարձր ճախրանքի կարիքն ունի: Արցախցին արժանապատվորեն շարունակում է իր ճանապարհը՝ բացահայտելով մեր ազգային էպոսի կողերը իրականության բաց ակոսներում:

- Հայտնի է, որ 1977թ.-ին դուք մասնակցել եք անդրկով-

կասյան հանրապետությունների ռեժիսորների մրցույթ-փառատոնին և արժանացել 3-րդ կարգի մրցանակի և դրամական պարգևի՝ Չ. Դիկենսի «Դավիթ Կոպերֆիլդ» պիեսի բեմադրության համար: Դերասանական ինչպիսի՞ անձնակազմով և ներուժով եք հասել այդ բաղձալի արդյունքին:

- «Դավիթ Կոպերֆիլդ»-ի բեմադրության ժամանակ ինձ սատարեցին դերասաններ ժաննա Գալստյանը, Արեգա Պետրոսյանը, Ջինավոր Գևորգյանը, Բագրատ Գևորգյանը, Սամվել Վիրաբյանը, Արֆենյա Գրիգորյանը, Սամվել Եվրիյանը, որոնց ի սրտե հայտնում եմ իմ խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը, իսկ հանգուցյալ դերասանների շիրիմներին իմ խոնարհումն եմ բերում, որպես երախտիքի և հարգանքի նշան:

Ներկայացման նկարչական ձևավորման հեղինակը իմ ուսանողական ընկեր Միհրան Քեչոզյանն էր, որը հայտնի էր, որպես «Ծիծեռնակ» ամսագրի գլխավոր նկարիչ, իսկ որպես դերասան՝ նկարահանվել է հայկական տասնյակ ֆիլմերում, որոնց մեջ նշանավորը՝ «Երկունք» ֆիլմում խաղացած Պողոս Մակինցյանի կերպարն էր: Ուշագրավ է այն, որ այդ ֆիլմում Ալեքսանդր Մյասնիկյանի դերակատարը ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Խորեն Աբրահամյանն էր:

Ես աշխատում էի ուժերի մեծ լարումով: Նկարչական էսքիզները պատրաստ էին և հաճելի տպավորություն էին գործում: Սակայն թատրոնի տնօրինությունը պահանջեց, որ կարճ ժամանակաընթացքում հանձնենք ներկայացումը: Ստիպված էինք բեմը ձևավորել նոր և հին դեկորների համադրությամբ: Նկարիչ Մ. Քեչոզյանն իր ձեռքով պատրաստեց դեկորները՝ թարմ մտահղացումներով հարստացնելով բեմական կոլորիտը:

- Կարինե Ալավերդյանի հավաստմամբ՝ «Յամարձակությունն ու ինքնավստահությունը (նույնիսկ՝ ավելցուկով) միշտ էլ հերիքել են Լ. Յարությունյանին, ուստի ձեռք զարկեց դասական դժվար գործերի՝ Չ. Դիկենսի «Դավիթ Կոպեր-

Ֆիլդ» և Մ. Գորկու «Քաղքենիներ» պիեսներին, որոնք հնարավորություն տվին նրան և երիտասարդ դերասաններին չափել իրենց կարողությունները, գերլարվել, ձգվել»:

- Ներկայացման հաջողությունը Արեգա Պետրոսյանի Դավիթն էր՝ իր պոետիկ, հմայիչ, մանկական նուրբ դիմագծերով և շատ հավաստի, մշակված խաղով: Պարոն Մյուրտցոնի դերակատարը Բագրատ Գևորգյանն էր: Նուրբ և քնարական արտաքինով տիկին Մյուրտցոնի դերակատարն էր Ժաննա Գալստյանը, որն իր մայրական սիրով և տառապանքով կարողացավ հուզել և գերել հանդիսատեսին: Առանձնահատուկ էր նաև Սամվել Վիրաբյանի Բրուքսը: Իսկ ժողովրդական արտիստ Ջինավոր Գևորգյանը չէր զիջում երիտասարդներին իր եռանդով և պատասխանատվությամբ: Նա երբեմն օգնում էր ինձ՝ փորձված դերասանի իր խորհուրդներով: Ջինավոր Գևորգյանի կերտած Յուրա-Յեպը մի առանձնահատուկ կերպար էր, որն աչքի էր ընկնում իր ձկունությամբ, վտանգավոր և խայթող վարքով: Չարածձի, հնարամիտ, ըմբոստ և նվիրյալ ընկեր էր Սամվել Եվրիյանի Տոպին: Մի խոսքով... «Դավիթ Կոպերֆիլդ» ներկայացումն արժանի էր բարձր և անաչառ գնահատականի,- այսօր էլ ես դրանում համոզված եմ:

- 1980թ.-ին ընդունվում եք Մոսկվայի կատարելագործման ինստիտուտը և երկու տարում ռեժիսորական բարձրագույն կուրսերն ավարտում Լենինգրադի դրամատիկական Մեծ թատրոնում ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Գեորգի Տոլստոնոգովի ղեկավարությամբ: Ի՞նչ տվեց ձեզ թատերական աշխարհի այդ բացառիկ անհատականության հետ հանդիպումը:

- Ես բազմիցս համոզվել եմ, որ մեծ երազանքը անկատար չի կարող մնալ: Երբ ռեժիսոր Ալֆրեդ Յակոբյանն ընդունվեց Մոսկվայի կատարելագործման ինստիտուտը և ռեժիսորական բարձրագույն կուրսերն անցկացնում էր Եվգենի Վախթանգովի անվան թատրոնում, մեծագույն ռեժիսոր Եվգենի Սիմոնովի ղեկավարու-

թյամբ, ես չէի համարձակվում անգամ երազել նման բախտի և հաջողության մասին: Իմ և Ալֆրեդի գրույցի թեման մոսկովյան թատրոններն էին, բեմադրություններն ու ստեղծագործական կյանքը: Ինձ միշտ ձգել և գրավել են Գ. Տովստոնոգովի ռեժիսորական աշխատանքի գաղտնիքները, աշխատառժը, մարդկային բնույթն ու ոգու ուժը: Մեծ մտածողի «Ռեժիսորի մասնագիտության մասին» աշխատությունը իմ սեղանի գիրքն է:

Եվ մի օր Բախտի փեղկը բացվեց իմ առջև, և ես տեսա բացվող հորիզոնի լույսը: Դեռևս ուսանողական տարիներին (1973թ.) ռեժիսորական ամբիոնի վարիչ Արտաշես Յովսեփյանը համոզեց մեզ՝ գործնական պարապմունքներն անցկացնել ոչ թե Մոսկվայում, այլ՝ Լենինգրադում: Եվ մեր առաջ բացվեց երազային Պետերբուրգն՝ իր ուրույն ճարտարապետությամբ, Էրմիտաժով, Պետրոսյան պալատներով, Պուշկինոյով և թատերական յուրահատուկ կյանքով: Մեր գործնական պարապմունքներն անցնում էին Կոմիսարժևսկու թատրոնի գլխավոր ռեժիսոր Ռուբեն Սերգեյի Աղամիրջյանի ղեկավարությամբ: Նա այդ ժամանակ բեմադրում էր Գ. Գորինի «Մոռանալ Յերոստրատին» դրաման: Մշտապես ներկա էինք լինում հայազգի նշանավոր ռեժիսորի փորձերին, մասնակցում ռեժիսորական դասընթացներին: Մի քանի անգամ էլ ես փոխարինել եմ բացակա դերասանին՝ բանտապահի դերում: Դա ռեժիսորի պահանջն էր: Մի անգամ Ռ. Աղամիրջյանին խնդրեցի միջնորդել՝ Գ. Տովստոնոգովի մոտ ներկայացումներ դիտելու կապակցությամբ: Նա իմ խնդրանքը սիրով կատարեց: Պարզվեց, որ Աղամիրջյանն ու Տովստոնոգովը հին թիֆլիսցիներ են և իրար հետ խոսում են վրացերեն: Ռ. Աղամիրջյանը Տովստոնոգովին համարում էր իր ուսուցիչը: Նրանք միասին բեմադրել էին Ա. Վիշնևսկու «Օպտիմիստական ողբերգություն»-ը և արժանացել ՍՍՀՄ պետական մրցանակի: Ռ. Աղամիրջյանի՝ Տովստոնոգովին հղած նամակը, մեզ համար ճանապարհ բացեց դեպի դրամատիկական Մեծ թատրոն: Դիտում էինք Տովստոնոգովի հրաշք ներ-

կայացումները, երազելով մի անգամ ներկա գտնվել նրա ռեժիսորական փորձերին: Ես մի անգամ նույնիսկ հանդգնեցի մոտենալ մեծ վարպետին և խնդրել ամենաբաղձալին՝ թույլատրել ինձ ներկա գտնվելու նրա փորձերին: Տոկստոնոգովն ինձ կտրուկ մերժեց, ասելով. «Ես ձեզ թույլատրեցի դիտել իմ ներկայացումները, քանի որ ինձ նամակով դիմել էր Ռուբեն Աղամիրջյանը: Իսկ իմ փորձերին ներկա գտնվելու անհրաժեշտություն չկա»: Ես շվարել էի... Մինչ այդ ինձ հաջողվել էր ներկա լինել Անատոլի Էֆրոսի, Մարկ Զախարովի ռեժիսորական փորձերին...

Ճակատագրի սլաքը կարծես հետևում էր կյանքիս ընթացքին և ուղղություն տալիս դեպի թատերաշխարհի մեծ նպատակը: Զարմանքս այնքան մեծ էր, երբ 1979թ.-ին ինձ համար հնարավորություն բացվեց՝ սովորելու Մոսկվայի կատարելագործման ինստիտուտում: Այդ հարցում ինձ աջակցեց ԼՂԻՄ մշակույթի վարչության պետ Զավեն Դավիդյանը: Երախտապարտ եմ և շնորհակալ: Մոսկվայում ռեժիսորական դասընթացներն ավարտելուց հետո, մեկնեցի Լենինգրադ: Դա իմ կյանքի ամենակարևոր և նշանակից էջն էր, որը, իրավամբ, կրեց հետևյալ խորագիրը. «Ուսումնառության դասընթացներ մեծահամբավ ռեժիսոր Գ. Տոկստոնոգովի ստեղծագործական արվեստանոցում»:

Գ. Տոկստոնոգովի հետ հանդիպման հատուկ ժամեր կային, երբ ես ներկայացնում էի իմ մտահղացումները՝ ապագա բեմադրության առնչությամբ, և նրա հանձնարարությամբ ու հսկողությամբ աշխատում որևէ թեմայի վրա: Ինձ համար զարմանալի և հաճելի էր, երբ մեծ վարպետը հետաքրքրվում և ուզում էր հասկանալ, թե ինչն է հայկական մարզը (ԼՂԻՄ) հանկարծ հայտնվել Ադրբեջանի կազմում, երբ կա Հայաստանի ՍՍՀ-ն: Նրա աշխատասենյակի պատից կախված էր. «Հ.Թ.Ը.» էմբլեման, որը նշանակում է՝ «Հայաստանի թատերական ընկերություն»: ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ղափլանյանի նվերն էր: Մի օր Տոկստոնոգովը հետաքրքրվեց ռեժիսոր Վարդան Աժեմյանի գոր-

ծունեությամբ: Երբ իմացավ, որ մահացել է, շատ տխրեց: Ես, հիացմունքով խոսելով Տովստոնոգովի «Ռևիզոր» ներկայացման բեմադրության մասին, նշեցի նաև, որ Վարդան Աճեմյանն էլ է Երևանում ավարտական կուրսի ուսանողների ուժերով բեմադրել Գոգոլի հայտնի ստեղծագործությունը: Գ. Տովստոնոգովի համար աննշան և անկարևոր լուրեր չկային. նա հետաքրքրվեց այդ բեմադրության մանրամասնություններով: Վարպետի եզրակացությունը կարճ էր և ազդեցիկ. «Այո, հանձարեղ է, ինչպես ինքը՝ ռեժիսորը»:

Գ. Տովստոնոգովի խորհրդով՝ բեմադրելու համար ընտրեցի Ա. Օստրովսկու «Եկամտավոր պաշտոն» պիեսը: Թեման ակտուալ էր և հուզիչ: Յուրաքանչյուր կերպար մարմնավորելու համար՝ դերասանական վարպետություն էր պահանջվում: Պիեսն ընթերցելու և վերլուծելու այն խորաթափանց եղանակը, որ ես սովորել էի մեծն Տովստոնոգովից, թատերարվեստի այդ յուրօրինակ դասերի շղթան, ինձ համար դարձավ ուղեկցող հանրագիտարան: Այդ դասերի շնորհիվ՝ ես կարողացա յուրաքանչյուր հեղինակի գործ տարբերակել և ժանրային առումով զատորոշել այնպես, որ բեմադրության տեսակը թելադրվի նյութից և կերպարային փոխհարաբերություններից: Անհրաժեշտ է մարմնավորել գործողության կառույցն այնպես, որ հեղինակային միտքը չաղարտելով՝ հասնես թարմ և նորովի արտահայտչաձևերի: Երբեք չպետք է բավարարվել, ներկայացումն հանձնելուց հետո էլ պետք է հարստացնել նոր դետալներով: Բեմադրության մի քանի տարբերակներից պետք է ընտրել միակը՝ ճիշտը: Չպետք է դեն նետել ոչ մի ինքնուրույն մտահղացում, այլ՝ օգտագործել ստեղծագործաբար և զարգացնել: «Քանզի յուրաքանչյուր ենթագիտակցական պոռթկում լավա է, որի մեջ բացի խարամից կան նաև թանկ մետաղներ, դրանք հարկավոր է խնամքով հավաքել», - ուսուցանում է թատերարվեստի մեծ վարպետը՝ Գեորգի Տովստոնոգովը:

Ներկայացման բեմադրությունը հաջողությամբ պսակվեց: Թատերախումբն աշխատում էր մեծ ոգևորությամբ, լենինգրադյան օդն ինձ և թատերախմբին նոր մտքեր ու եռանդ էր հաղորդել:

- «Եկամտավոր պաշտոն» կատակերգության բեմադրությունը երևույթ էր Ստեփանակերտի թատրոնի համար: Այդ է վկայում Կարինե Ալավերդյանի գնահատականը. «Բենիկ Օվչյանի հոգեբանական ճշմարտացի խաղագույներով կերտած Վիշնևսկին, Ժաննա Գալստյանի դրամատիզմով անձնավորած Աննա Պավլովնան, Մարգո Բալասանյանի մոնումենտալ Կուկուշկինան, Ջ. Ստեփանյանի անկեղծ Յուլյան, Սամվել Բաղինյանի անմիջական Ժադովը, Քաջիկ Չարությունյանի յուրատիպ Բելոգուբովը ստեղծեցին մի հազվագյուտ համահնչեղություն, որտեղ խաղընկերներն արձագանքում էին միմյանց ոչ միայն տեխնիկապես, այլև ապրումներով, որտեղ դասական երկի ամեն մի կերպար գտել է իր արժանի դերակատարին, իսկ ռեժիսորը նրանց միջոցով ստեղծել էր հեղինակի և իր երևակայականի մանրակրկիտ բեմաքանդակներն ու կյանք տվել նրանց»:

- Երկրորդ ստեղծագործությունը, որ ես բեմադրեցի Գ. Տովստոնոգովի ղեկավարությամբ, Ն. Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն» պիեսն էր: Կարելի է ասել, որ այդ երկու բեմադրությունները («Եկամտավոր պաշտոն», «Մեղադրական եզրակացություն») ստեղծագործական հնարավորությունների նոր բացահայտումներ են, ինքնահաստատման վկայություն:


Առանձնահատուկ էր Բենիկ Օվչյանի կերտած Սալարիձեի կերպարը. հոգեկան տառապանքն այնքան մեծ դրամատիզմով էր վերապրում դերասանը, որ հանդիսատեսը ցնցվում էր հերոսի ինքնասպանությունից, չէր ուզում հաշտվել նման ավարտի հետ: Չանդիսատեսներից մեկն էլ խնդրել էր դերասանին՝ Բ. Օվչյանին, մի այլ լուծում գտնել իր հերոսի համար: Այս դիպվածը դերասանը պատմում էր նուրբ հումորով, հավելելով. «Այդպես էլ չկարողացա

մարդուն հասկացնել, որ այդ կերպարի ապրելն ու չապրելը են չեն որոշում բեմում»:

Արժանի խաղընկեր և միանգամայն հակոտնյա կերպար էր Սամիկոն Միքայելյանի կերտած Շոշիա Գոգոլածեն, որը բանտային մռայլ միջավայրին կյանք հաղորդող, դրսի կյանքը բանտային վանդակաճաղերից ներս բերող՝ աշխույժ ու անմիջական կերպար էր:

Բանտային հեղինակություն և արդար դատավոր էր Սամվել Վիրաբյանի Լիմոնը, որը բանտախցի ներսում բուժքույր Նինոյի (դերասանուհի Արմելա Առաքելյան) հայտնվելը ընդունում էր, որպես պոետիկ ու հաճելի նիրվանա: Դաժանության քողից ազատվում է և ծունկի գալով աղջկա առջև՝ արտասանում Սայաթ-Նովայի բանաստեղծությունները:

«Մեղադրական եզրակացություն» ներկայացման ժամանակ կատարվեց մի արտառոց դեպք: Բեմադրության այն տեսարանն էր, երբ բանտի վերակացուն՝ դերասան Արմեն Չարությունյանը, առավոտյան հաշվառում էր անցկացնում խցում և վերակացուին հատուկ եղանակով «կարգի» էր հրավիրում բանտարկյալներին: Չանկարծ բեմ բարձրացավ մի անծանոթ հանդիսատես (հավանաբար՝ բանտից նոր ազատված) և սկսեց միջամտել թատերական այս դրվագին: Սկզբում ինձ թվաց, թե ելքի դուռն է շփոթել և հայտնվել բեմում, բայց՝ ո՛չ... Սա ներկայացման տապալում էր, անհանգստացա ես: Վերակացու Չարությունյանը մոտեցավ անծանոթին և, դերից դուրս չգալով, ասաց. «Դուրս գնա...»: Սակայն հանդիսատեսը համառեց՝ չպատրաստվելով բնավ լքել բեմը: Այդ պահին նորահայտ «դերասանին» մոտեցավ Լիմոնի դերակատարը՝ Սամվել Վիրաբյանը, և ասաց. «Ընկեր ջան, խնդրում եմ՝ դուրս եկեք էս խցից, այստեղ «նայողը» են եմ...»: Եվ կատարվեց հրաձգք... Մարդը դուրս եկավ բեմից, ասելով. «Լավ, Լիմոն ախպեր, բայց էդ վերակացուին խելքի բեր...»:



**ԲԱՑՎՈՂ ԱՌԱԳԱՍՏՆԵՐ
ՓՈԹՈՐԿՎԱԾ ԾՈՎՈՒՄ**

*Իմ աշխատանքային գլխավոր սկզբունքն է. ստեղծել,
նվիրել և չբավարարվել... Երբեմն կարող ես ունենալ
թույլ, բայց ո՛չ անգրագետ բեմադրություն: Սա՛ է մեծերից
սովորած իմ կարևորագույն դասը:*

Լեոնիդ ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹԱՏՐՈՆ, ՈՐ ԿՅԱՆՔ Է ԻՆՁ ՀԱՄԱՐ

*Բառերը կամուրջներ են,
որ մղում են մարդկային երթը
դեպի մի այլ հուն:
Ռ. Եսայան*

- Կարինե Ալավերդյանը 2000թ. հրատարակել է մի գիրք՝ «Լեոնիդ Չարությունյան» խորագրով, որը ջերմորեն ընդունվեց ընթերցողի կողմից: «Մի կարևոր էջ մեր թատրոնի պատմությունից» հոդվածում բանաստեղծ, գրականագետ Սոկրատ Խանյանը գրել է. «Մենք միանում ենք գրքի հեղինակին և շնորհակալությամբ վկայում, որ գրքի հերոսի նվիրումը եղել է տաղանդավոր ու անշահախնդիր արվեստագետի ժողովրդանվեր առաքելություն, որ այսօր էլ նա շարունակում է իր դժվարին ու պատվաբեր գործը: Ուստի նրա մասին ստեղծված այս գիրքը համարում ենք տեղին և ժամանակին, գնահատում որպես թատրոնի պատմության մի հրաշալի էջ»:

- Գիրքն այդ, ինչ խոսք, ինձ համար եղել և մնում է նշածող, որն ինձ մղում է արդյունավետ աշխատանքով արդարացնել այն բոլոր գնահատումները, որ հեղինակն արձանագրել է պարզ և անկեղծ էջերում, հետաքրքիր, տպավորիչ ոճով պատկերել թատերախմբի կատարած ստեղծագործական աշխատանքի էությունը:

- Կարելի է ասել նաև, որ յուրաքանչյուր հանդիսատես յուրօրինակ մեկնաբան է, քննադատ, որն ունի իր յուրօրինակ ճաշակը, հայացքը և մոտեցումը:

- Այո, յուրաքանչյուր հանդիսատես, անկախ նրա սոցիալական պատկանելությունից և կրթական մակարդակից, քննադատ է, որն երբեմն այնպիսի կարծիք է հայտնում, որ թե՛ զարմանում ես և թե՛ հիանում: Այդպիսի կարծիքներն ինձ օգնում են բացահայտելու

թատերական կյանքի որոշ նրբերանգներ, լրացնելու և ամբողջացնելու դրամատիկական պատկերը:

- Իսկ քննադատը կամ գրախոսը կարո՞ղ է իր խոսքով ոգևորել, խթանել...

- Բեմն ինքնին ոգևորող հատկություն ունի: Թե ռեժիսորը և թե դերասանը դիտում են իրենց և շտկում մի առանձնահատուկ հայելու մեջ, որը հանդիսատեսի հայացքն է: Թատերախոսությունն ավելի լուրջ մի տեսադաշտ է, որտեղ ընդգծվում են բեմադրության ոչ միայն առավելություններն ու թերությունները, այլև կարևորվում են յուրաքանչյուր դերասանի ստեղծագործական ձեռքբերումները, նշվում նաև «պասիվ» խաղը:

- Ե՞րբ է դերասանը հասնում նպատակին: Եվ դա ռեժիսորի նպատակն է նաև, թե լինում են դեպքեր, երբ դերասանը, ազատվելով ռեժիսորական «կապանքներից», կերտում է նոր հոգեվիճակ և տիպական նոր երանգներ:

- Թատրոնի աշխատանքը բարդ է, ներշնչանքն ու ինտուիցիան այստեղ կարևոր դերակատարություն ունեն: Ռեժիսորը տեսնում է անտեսանելին, ըմբռնում երևակայականը՝ դերասանի խաղով նաև: Դերասանն իր տարերքի մեջ էլ՝ զսպված է, կանոնակարգված, կանխատեսելի: Նրա գործողությունները նախապես իմաստավորված են հեղինակի և ռեժիսորի կողմից: Դերասանը կարող է իր կերտած հերոսի բնավորության երանգներն ավելի ընդգծել և խորացնել, բայց ո՛չ փոփոխել...

- Ձեր աշխատանքային գլխավոր սկզբունքը...

- Աշխատանքում ծուլացումը հավասար է մահվան: Սա չափազանցություն չէ, քանզի հոգևոր մահն ավելի սարսափելի է: Թատրոնն այսրոպեական արվեստ է, որ հանդիսատեսի հոգում թողնում է անմարելի և կենսունակ հետքեր: Թատրոնը ժամանակաշրջանի մտածողությունն է, ոգու նկարագրի: Իրականության ամբողջական դրվագ, կյանք, որ խտացված է դրամատիկ վայրկյաններում: Ով ներկա է այդ արարման ժամին, ապրում է բեմական բաբախյուններում, նա ըմբռնում է, որ դրվագն այդ անկրկնելի է...

Ստեղծագործելը գերագույն նպատակ է, անմնացորդ նվիրում: Թատրոնի նվիրյալը պիտի անդուլ արարի, ապրի կյանքը ամբողջ հոգով, ստեղծի՝ երբեք չհոգնելով: Դու չես կարող այսօրվա չարածը լրացնել վաղը: Վաղն իր հոգան ունի և նպատակը: Պետք է հասցնել...

Իմ աշխատանքային գլխավոր սկզբունքն է. ստեղծել, նվիրել և չբավարարվել... Երբեմն կարող ես ունենալ թույլ, բայց ո՛չ անգրագետ բեմադրություն: Սա է մեծերից սովորած իմ կարևորագույն դասը:

- Արվեստագետը և նախանձը հաճու են ապրում...

- Տարիների ընթացքում ես ձգտել եմ թոթափել նախանձի զգացումը, քանի որ նա ավերում է հոգեաշխարհը, նվազեցնում որոնման ուժը... Խաթարված հոգով չես կարող ստեղծել մեծ արվեստ: Մրցակցությունը շարժում է և կյանք: Պետք է որոնել և գտնել նոր պատկերը, այն, որ միայն քոնն է: Այն, որ զորեղ է և անկրկնելի կյանքի պես: Թա՛րմ և յուրահատուկ:

Վստահ եմ, որ մեր գործը գնահատվում է ճշմարիտ խոսքով: Գովեստն ու բաժակածառը հետք չեն թողնում իմ հոգեաշխարհում: Լուռ և հայացքով արտահայտված գնահատականներ կան, որոնք ավելի պերճախոս են:

Ես միշտ որոնման մեջ եմ: Ռեժիսորը նաև գյուտարար է: Թարմ և ազդեցիկ, առաջին հայացքից նույնիսկ անսովոր թվացող պատկերն է միայն մնում հիշողության մեջ:

Հոգևոր սնունդը պետք է դառնա կյանք, նպատակ և ելք:

- Թատերական ստեղծագործությունը կարող է վերափոխել մարդուն:

- Ոչ միայն կարող է վերափոխել մարդու հոգեաշխարհը, այլև ավշավորել նրա երևակայության նուրբ թելերը: Այդ մասին պատկերավոր խոսք ունի հանձարեղ դերասան Վահրամ Փափագյանը. «Բացարձակ անձնագոհություն-ահա այն ձևը, որով հնարավոր է ապրել այս կերպարը, այլև ապրեցնել ու բարձրացնել նրա հետ հանդիսատեսին, որը պետք է ներկայացումից հետո տուն վերա-

դառնա վեհացած ու հարուստ հոգով, առանց հասկանալու և առանց իրեն հաշիվ տալու, թե ով բարձրացրեց, ով հարստացրեց իրեն (Վահրամ Փափազյան, «Լիր արքա»)»:

- Բեմադրությունը ռեժիսորի համար փորձություն է, տառապանք, թե... հաճույք:

- Բեմադրությունը ստեղծագործական բարդ գործընթաց է, որը իրականացվում է թատերախմբի ուժերով: Շատ կարևոր է դերասանների ստեղծագործական համերաշխ աշխատանքը: Ռեժիսորը ոչ միայն միավորող ոգի է, ուղղություն տվող հայացք, ուղղորդող ձեռք, այլև նորանոր բացահայտումներին կյանք տվող մի արվեստագետ, ով հավատարիմ է հեղինակի ստեղծագործական ոգուն, և ինքն իրեն:

Կան դերասաններ, որոնք ներկայացման մեջ առաջնորդող են և իրենց ետևից տանում են թատերախմբին, կարգավորում դրամատիկական գործողության ընթացքը: Բեմում, ինչպես ռազմադաշտում, պետք է ձիշտ տեղաբաշխել ուժերը, ինչ-որ ձևով նաև սքոդելով «թույլ և խոցելի» տեղը: Սա ստեղծագործական «ռազմավարություն» է: Դեռ ավելին: Վահրամ Փափազյանի հավաստմամբ՝ «կան բաներ թատրոնում, որոնց ենթադրությունը ավելի ուժեղ է, քան բացահայտ խոսքը նրանց մասին»:

Բեմադրության թեմատիկ բազմազանությունը կարևոր տեղ ու նշանակություն ունի իմ աշխատանքային գործընթացում: Անհրաժեշտ է նաև ստեղծագործության մեջ արծարծված խնդիրները մարմնավորել թարմ ու ազդեցիկ դրվագներում, և ամենակարևորը՝ պետք է ասելիքը «լուսաբանել» ժամանակակից հնչողությամբ:

Դերասանը պետք է անընդհատ աշխատի ինքն իր վրա, մարզի, ընդլայնի և հարստացնի իր երևակայությունը, մանրակրկիտ աշխատի դերի հնարավորությունն անմնացորդ օգտագործելու, հմտորեն արտահայտչամիջոցները կիրառելու ուղղությամբ:

- 1982թ.-ին վերադառնալով Ստեփանակերտի դրամատիկական թատրոն, թարմ ուժերով և նոր մտահղացումների

ավյունով շարունակել եք աշխատել, և պատահական չէ, որ հենց նույն տարում արժանացել եք «Արվեստի վաստակավոր գործչի» պատվավոր կոչման:

- Այո, Լենինգրադից ես վերադարձա՝ տոգորված նոր ոգով և ստեղծագործական ավյունով, ունեի հարուստ և բազմազան ծրագրեր: Գործելու և աշխատելու դաշտ էր պետք: Լենինգրադի մշակութային հզոր միջավայրն ազդեցիկ էր: Կույր պիտի լինեիր ու հոգեպես ամուլ, որ այն չանդրադառնար քո ներաշխարհի և ընդունակությունների վրա: Ես տոգորված էի նոր ծրագրեր իրագործելու եռանդով: Բայց ամեն տեղ էլ գոյություն ունեն մարդիկ, որոնք մշտապես պատրաստ են հակազդելու արվեստի նոր ընթացքին, խանգարելու ստեղծագործական ծրագրերի իրագործմանը: Պետք էր նախ և առաջ ստեղծել համերաշխ թատերախումբ, որն ի վիճակի լիներ ոչ միայն իրագործելու ստեղծագործական բարդ ծրագրեր, այլև պայքարելու՝ ի շահ արվեստային նորանոր ձեռքբերումների:

- Կարծում եմ, թատերաշխարհում ազատ գործելու և ծրագրեր իրագործելու համար պետք է ունենալ ոչ միայն տաղանդ, այլև համառություն, կամք և նպատակասլացություն: Չմոռանանք նաև, որ այդ տարիներին գոյություն ունեին աշխատանքային ևս մի խոչընդոտ, որը թատրոնի կյանքն արմատապես վերափոխելու և շեղելու միտում ուներ: Դա Ադրբեջանի իշխանությունների կողմից տարվող այն քաղաքականությունն էր, որի արդյունքում նրանք համառորեն ադրբեջանական պիեսներ էին մտցնում հայկական թատրոնի խաղացանկի մեջ:

- Այո՛, դուք իրավացի եք, դա ծանր իրավիճակ էր ստեղծում՝ կաշկանդելով թատերախմբի ստեղծագործական առաջընթացը: Բաքվի իշխանություններին նամակ էր հղվել, որում նշվում էր, որ ռեժիսոր Լեոնիդ Չարությունյանը հրաժարվում է բեմադրել ադրբեջանական պիեսներ: Մոսկվայից և Բաքվից ժամանած հանձնաժողովի ներկայացուցիչները «Դավիթ Կոպերֆիլդ» ներկայա-

ցումը դիտելուց հետո, հավաքվում են տնօրենի՝ Ջինավոր Գևորգյանի առանձնասենյակում՝ քննարկելու «իմ հարցը»: Լարված լռությունը, հյուրընկալ տանտիրոջ իրավունքով, խախտում է ԼՂԻՄ մշակույթի վարչության պետ Ջավեն Դավիդյանը: Լեոնիդ Պավլովիչը (այդպես էին կոչում Մոսկվայի ներկայացուցչին) մի քանի շոյոդ խոսք ասաց ներկայացման վերաբերյալ: Ջ. Դավիդյանը անմիջապես արձագանքեց նրան, հավելելով, որ Լեոնիդ Յարությունյանը տաղանդավոր ռեժիսոր է, ուսումնառության փուլն անցել է Լենինգրադում՝ մեծն Տովստոնոգովի արվեստանոցում: Նշեց նաև, որ թատրոնի կոլեկտիվը մեծ հույսեր է կապում երիտասարդ ռեժիսորի հետ: Այդ պահին Բաքվի ներկայացուցիչը՝ Վազիֆ «մուալիմը», կտրուկ ու թունոտ տոնով խոսքն ուղղեց ինձ. «Դու ինչ թարախ մարդ ես, ինչո՞ւ ես հրաժարվում բեմադրել ադրբեջանական պիեսներ: Մենք քեզ ռեժիսորական հաստիք ենք տվել, դու ապերախտ մարդ ես...»: Այդ պահին Ջավեն Դավիդյանն անսպասելիորեն ընդհատում է «մուալիմի» խոսքը՝ կտրուկ ու խիստ տոնով ասելով. «Լսիր, դու ղ՛վ ես, այդ ինչպիսի՞ տոնով ես խոսում մեր ռեժիսորի հետ: Նա ի՞նչ է քեզ համար՝ հանցագործ... Դու մեզ մոտ հյո՛ր ես և քեզ հյուրի՛ նման պահիր...»: Վեժին միջամտեց Լեոնիդ Պավլովիչը, ասելով. «Մի՛ մոռացեք. որ մենք այստեղ ենք՝ ընդամենը հարցը քննարկելու համար... Իսկ գրավոր հրաման կամ փաստաթուղթ կա՞մ, որ այս երիտասարդը հրաժարվել է ադրբեջանական պիեսից... Չկա՛: Տեսնո՞ւմ եք, գրավոր փաստ էլ չկա, իսկ նամակը գրվել է անստորագիր, ուրեմն՝ ընդամենը գրպարտություն է... Եկեք, հնարավորություն տանք երիտասարդ ռեժիսորին, որ նա առաջիկայում ադրբեջանական պիես բեմադրի, իսկ մենք էլ՝ կգանք և միասին կդիտենք...»: Կնձռոտ հարցն այդպես արագորեն հարթվեց: Բայց ես միշտ կհիշեմ յուրային կոչված օտարի մատնագիրը, բարի և մարդասեր Լեոնիդ Պավլովիչին, ինչպես նաև Ջավեն Դավիդյան հայի, մարդու և քաղաքացու առյուծային ծառս լինելը...

- 1982թ.-ին նշվեց Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայ-

կական պետական թատրոնի 50-ամյակը: Տոնակատարության ժամանակ ձեզ շնորհվեց «Արվեստի վաստակավոր գործչի» պատվավոր կոչում: Ընդհանրապես, կոչումները ձեր ստեղծագործական կյանքում ինչպիսի դեր ու նշանակություն ունեն:

- Երբ երիտասարդ էինք, մեզ՝ ուսանողներիս համար շատ ցավալի էր, որ Լենինականի թատրոնի դերասան Խաչիկ Ասատրյանը՝ մեր բոլորիս ուսուցիչը, կոչում չունեի, և այդպես էլ կյանքից հեռացավ... Այնինչ նրա կատարած աշխատանքի նշանակությունը շատ մեծ էր: Նա կրթել և դաստիարակել էր բազմաթիվ դերասանների և ռեժիսորների, ստեղծել թատերական բազմաթիվ խմբեր, որոնք հետագայում իրենց նշանակալից գործունեությունն են ծավալել Զայաստանի տարբեր շրջանների թատերական օջախներում՝ արժանանալով գովասանքների և կոչումների:

Կոչում ունեցողներից շատերն ասում են, որ իրենց համար կոչումը նշանակություն չունի: Սա կեղծ պահվածք է, որովհետև մինչ այդ ձգտել և պայքարել են՝ այդ կոչմանը արժանանալու համար:

Հաճախ արժանիներին կոչումից զրկելով՝ նրանց հոգեպես փորձում են կոտրել, նվաստացնել, կամ քաղաքական խոսքով ասած՝ «պատժում են», որպեսզի վերջիններս հրաժարվեն իրենց սկզբունքներից:

Ստեփանակերտի թատրոնի տաղանդավոր և վաստակաշատ դերասան Գուրգեն Գրիգորյանը կյանքից հեռացավ՝ այդպես էլ չգնահատված... Սուրեն Համզոյանը անկրկնելի դերասան էր: «Վաստակավորը» քիչ էր նրա վաստակն ու վարպետությունը արժևորելու և գնահատելու համար: Իմ կարծիքով, նա արժանի էր «Հանրապետության ժողովրդական արտիստի» կոչման:

Ինձ համար կոչումը ոգևորող և խրախուսող հանգամանք է: Դերասանին կամ ռեժիսորին կոչումը մղում է նոր եռանդով աշխատելու, իրագործելու ստեղծագործական նոր ծրագրեր:

Երբ ինձ ուզում էին ներկայացնել «Արվեստի վաստակավոր

գործչի» կոչման, ես անակնկալի եկա. «Ինչո՞վ եմ ես արժանացել այդպիսի մեծ պատվի»: Չավեն Դավիդյանը խաղաղ ու հանգիստ տոնով ինձ ասաց. «Դա արվում է նրա համար, որ դու գնալու մասին չմտածես, ավելի ու ավելի նվիրված աշխատես»:

- Այդ տարիներին Ստեփանակերտի թատրոնում աշխատում էր տաղանդավոր դերասանների մի աստղաբույլ՝ Բենիկ Օվչյան, Մարգո Բալասանյան, Մամիկոն Միքայելյան, Ժաննա Գալստյան, Նվարդ Ասատրյան, Միքայել Չարությունյան, Սամվել Վիրաբյան... Դժվար չէր, արդյո՞ք, աշխատելը այդքան բազմաշնորհ և հեղինակավոր դերասանների հետ, թե՛... ավելի հետաքրքիր ու խորհրդավոր է անհատականությունների ինքնադրսևորման դաշտը:

- Երբ տաղանդավոր դերասանները տարեցտարի հեռանում են բեմից, մեծ ցավ եմ ապրում: Նրանց տեղը դատարկ է մնում: Թատրոնի սյուները՝ Միքայել Կորգանյանը, Գուրգեն Չարությունյանը, Ռաֆայել Չարությունյանը... (որոնց հետ բախտ չեմ ունեցել աշխատելու) ցավի և ավստոսանքի անդրադարձներ են, որոնք միշտ խոսուն և ազդեցիկ իրողություն են, բեմական կյանքի փառավոր անցյալ...

Դերասանական ավագ սերնդի դերասանները (որոնց անունազգանունները վերևում նշեցիք) առինքնող էին և ազդեցիկ, սիրտս եռում էր նրանց հետ աշխատելու անզուսպ ցանկությամբ: Նրանք իմ մեջ վստահություն էին փնտրում և... գտան: Ես հավատացրի նրանց և նրանք համոզվեցին, որ ես ի զորու եմ նորովի բացահայտելու նրանց կարողությունն ու հմտությունը: Եվ դրա վառ վկայությունն էին բազում ներկայացումներ (Ա. Պապայանի «Գնա մեռիր, արի սիրեմ...», Ն. Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն», Ա. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում...», Ա. Օստրովսկու «Եկամտավոր պաշտոն», «Անմեղ մեղավորներ», Վ. Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը», Ա. Շիրվանզադեի «Չար ոգին», Յ. Շիրազի «Սիամանթո և Խջեզարե», Ս. Խալաթյանի «Քառասուն օր՝ համբառնումից առաջ» և այլ գործեր), որոնք հան-

դիսատեսի կողմից ընդունվեցին մեծ ոգևորությամբ և ծափողջուններով:

- «Մերոպ Մաշտոց» համալսարանի դասախոս Էռնեստ Եսայանը «Թատրոնը և ժամանակը» հոդվածում նշել է. «Անժխտելի է, որ թատերական մշակույթի մակարդակով է բնորոշվում ազգի մշակութային զարգացման աստիճանը, և եթե թատրոն ենք գնում, ուրեմն՝ նաև եկեղեցի մտնել դա որակենք, եթե բեմադրություն դիտելու ենք գնում, պետք է զգանք դպրոց մտնելը, որովհետև այն, ինչ դպրոցը չի հասցնում անել, անում է թատրոնը, ինչ մամուլն ու հեռուստատեսությունը ի վիճակի չեն տալ, տալիս է թատրոնը: Յետևապես, թատրոնն արժանի է լուրջ ուշադրության և՛ եկեղեցու, և՛ դպրոցի, և՛ մամուլի ու հեռուստատեսության կողմից, և՛ հասարակության կողմից ընդհանրապես»:

- Դա խորիմաստ ընդհանրացում է, և ակամայից հիշում եմ մեծ բանաստեղծ և դրամատուրգ Լորկայի այն խորհուրդը, թե առանց թատրոնի ազգերը միայն տեղում կդոփեն, և առանց թատրոն գնալու՝ գերադասելի է գազանային միջավայրը:

- Է. Եսայանը այդ հոդվածում ընդգծում է նաև մի այլ կարևոր իրողություն. «Թատրոնը կյանքի ծանրաչափն է: Եվ եթե թատրոնի գեղարվեստական խորհուրդը և գլխավոր ռեժիսորը ճիշտ են ընտրում խաղացանկը բեմադրվող երկերի, նշանակում է՝ թատրոնը իր ետևից կարող է տանել հասարակությանը»:

- Անշուշտ, թատրոնը ազդեցության մեծ տեսադաշտ ունի, թատերական ձեռքբերումներով տեսանելի է դառնում նաև ազգի և հասարակության հոգևոր զարգացման մակարդակը, բացահայտվում չլուծված խնդիրները, որոնք հասարակությունը նախ և առաջ հաղթահարում է՝ հոգեբանորեն:

ԱՆՎԱՐԱԳՈՒՅՐ ԲԵՄ

Բեմը՝
 հիշողության ավազան,
 որից ելնող դեմքերը
 գործողության բանալին են
 գտնում
 իդեալի սեղմ գրպանում:

Ռ. Եսայան

- Ալեխանդրո Կաստնայի «Ծառերը կանգնած են մահանում» տրագիկոմեդիան Ստեփանակերտի թատրոնում սկզբնավորեց թատերական նոր կյանք, նոր թափ ու շնչառություն: Ներկայացման բեմադրությունը ձեզ համար «ինքնուրույն մտածողության հայտ էր»:

- Իրոք, նոր վերելք էր: Դա նման էր վաղ առավոտյան այն ժամին, երբ մութն ու լույսը պայքարի մեջ են. մեկը չի ուզում հեռանալ, իսկ մյուսը անկասելի առաջանում է... Մի վերջին ուժերի գումարումով խավարը թանձրանում է, իսկ լույսը ճեղքում է այդ սև թանձրույթը իր ճառագայթով, որի ամենագոր և անդիմադրելի սայրը մխրձվում է, փշրում խավարը, և Աստծո աչքն է բացվում ամենքի վրա:

- Պատկերավոր խոսքով արտահայտեցիք այն երկունքի պահը, երբ պատրաստվում էիք բեմադրել «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացումը:

- Այդ ներկայացումը նշանավորելու էր նաև տաղանդաշատ դերասանուհի Մարգո Բալասանյանի դերասանական ճակատագրի նոր փուլը... Եկել էր մի ժամանակաշրջան, երբ Մ. Բալասանյանի համար այլևս հնարավոր չէր մարմնավորել երիտասարդ հերոսու-

հիների, պետք էր շրջադարձ անել դեպի նրա՝ տարիքին համապատասխան բնութագրական կերպարները:

- Իսահակ Ալավերդյանի հավաստմամբ՝ «ներկայացումը շատ ազնիվ խոհեր ու զգացումներ էր պարզևուճ դիտողներին, որոնք տուն գնալով տանում էին իրենց հետ Մ. Բալասանյան՝ Տատիկի կյանքի խորհուրդը, որպես լուսավոր մարդկայնության, արդարամտության սրտառուչ պատգամ, որպես կոչ՝ բարու, ազնիվի, գեղեցիկի բարձր ըմբռնումների»:

Ստեղծագործական ինչ պրպտումներ են ուղեկցել ձեզ և օգնել այդ ներկայացման բեմադրության ժամանակ:

- Նախ՝ հետևողականորեն ուսումնասիրել եմ նյութերը՝ հետամուտ լինելով բեմադրական գերխնդրին, բեմական հնարքների որոնմանը: Միշտ խուսափել եմ կրկնությունից՝ որոնելով թարմ և անակնկալ արտահայտչաձևեր: Պիեսը բաղկացած է երեք գործողությունից: Առաջին գործողության մեջ նկարագրվում է մի բարեգործական հիմնարկի մասին, որը անհուսալի վիճակում գտնվող մարդկանց օգնում է դուրս գալու հոգեկան ծանր կացությունից: Յիմնարկի աշխատակիցները այդպիսի մարդկանց համար ստեղծում են բարենպաստ պայմաններ, օգնելով նրանց՝ հաղթահարելու դժվարությունները:

Առաջին գործողությունը ես փոխարինեցի մի տեսարանով, որտեղ հերոսուհին՝ Մարթան, փորձում է ինքնասպան լինել, իսկ հիմնարկի դիրեկտորը փրկում է նրան: Յետագայում նրանք որոշում են ծանր կացությունից փրկել ներկայացման գլխավոր հերոսուհուն՝ Տատիկին, ներկայանալով նրան, որպես նրա՝ վաղուց տնից հեռացած թոռն ու վերջինիս դեռատի կինը:

- Այդ մասին պատկերավոր է նկարագրել իր գրքում Իսահակ Ալավերդյանը. «Տատիկը ուրախությունից հազիվ է ոտի վրա կանգնում, բայց փայլում են աչքերը երանությամբ, և

կարծես ուր որ է նրա կրծքից դուրս կթռչի երջանկավառ սիրտը: Քսան տարվա երազանքն իրականացել է: Նա գրկել է թռռան գլուխը, շոյում է նրա մազերը, ստուգում է իրեն շատ ծանոթ ժպիտը, դիմագծերը, որոնք պետք է, որ փոխված լինեն, բայց և պետք է հիշեցնեն Տատիկին նրա մանկությունը: Եվ Տատիկը փնտրում է այդ հուշը: Յետո քննախույզ նայում է նրան և հարցաքննում: Կարծես թե ուզում է պարզել թռռան բարոյական դեմքը, որին լավատեղյակ է այն նամակներից, որոնք թռռան անունից գրել է Տատիկի սիրելի ամուսինը՝ նրան հանգստացնելու համար: Եվ հանդիսատեսը խորապես զգում է թե ինչպիսի անհուն սեր է տածում, ինչպիսի մայրական ջերմություն է պահել թռռան համար այս ձերմակահեր, բայց գեղեցիկ և ուրախությունից ջահելացած Տատիկը» (Իսահակ Ալավերդյան «Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոն», 1983թ.):

- Ստեղծագործական աշխատանքն, իհարկե, չափազանց հաճելի ու հետաքրքիր էր, և պիեսի յուրահատկությունը դերասանից պահանջում էր նոր մոտեցում, հոգեբանական բազմերանգ և ձկուն դրսևորումներ: Թատրոնում կար մի ավանդույթ, որը դեռևս հաղթահարված չէր: Ամբողջ ուշադրությունը կենտրոնացվում էր գլխավոր դերակատարների խաղի վրա, իսկ դրվագային դերասանների խաղը պասիվանում էր: Արդյունքում՝ խախտվում էր համանվագայնությունը:

- Պարզվում է, ռեժիսորը պիեսի նաև հոգեբան լինի:

- Եվ ոչ միայն... Ռեժիսորը պարտավոր է իր շնչառությամբ և սրտի հրով տաքացնել այն մթնոլորտը, որտեղ պիեսի ծնունդ առնի նոր ներկայացումը: Անհրաժեշտ է ստեղծել նաև ստեղծագործական առողջ միջավայր, որտեղ պետք է տիրի միայն փոխադարձ վստահություն, առանց ներքին լարման աշխատելու ցանկություն ու սեր:

- Ձեր հուշատետրից տեղեկացա նաև, որ այս ներկայացումը համառ աշխատանքի ծնունդ է: Հետևողական պրպտումներով կարողացաք հասնել ստեղծագործական այն չափանիշին, որն ընդունելի է և արժանի գնահատության:

- Ոչ մի դերասան չպետք է դուրս մնա բեմադրող ռեժիսորի ուշադրությունից,- սա է իմ աշխատանքային սկզբունքներից մեկը: Աշխատանքի ընթացքում հանդիպեցի մի դժվարության, որն հաղթահարելու համար պահանջվեց մեծ համբերություն: Մարգո Բալասանյանի մեջ համառ պայքար էր ընթանում` այս նոր դերում ինքնահաստատվելու առնչությամբ: Ես նրանից սպասում էի շրջադարձային նոր վերափոխություն: Չէի ցանկանում բացահայտ դիտողություններով «հղկել» նրա մարմնավորելիք կերպարը: Դրանից նա կարող էր վիրավորվել: Ընտրեցի մի այլ ճանապարհ` նպատակիս հասնելու համար: Մ. Բալասանյանին «հանգիստ» թողնելով, սկսեցի զբաղվել նրա երիտասարդ խաղընկերներին` դերերում ակտիվացնելու կարևորագույն գործով: Տիկին Մարգոն, զգալով իրեն անտեսված, սկսեց ավելի ակտիվանալ, նույնիսկ փորձեց թելադրել իր նախաձեռնությունները... Ես սիրով ընդունեցի նրա առաջարկությունները, փորձելով ամրապնդել դրանք բեմական դրվագներում, և կրկին ուշադրությունս սևեռեցի Սամվել Եվրիյան-Մաուրիսիոյի խաղի վրա... Այդ պահին կատարվեց անսպասելին: «Ինչո՞ւ եք իմ խաղն անտեսում...», - ասաց տիկին Մարգոն և հանկարծակի հուզվեց ու լաց եղավ... Ես գրկեցի նրան, իսկ նա... արցունքների միջից ժպտում էր... Այդպես թխպոտ երկինքն է անձրևում, փայլատակում է արևը և ծիածանը կամար է կապում: Իմ գրկում տիկին Մարգոն նվաղել է, որպես աղջնակ: Ես իմ ժպիտով խաղաղեցնում և ոգևորում էի նրան... Մարգո Բալասանյանն արդեն գտել էր նոր դերում ինքնահաստատվելու բանալին...

- Ալեխանդրո Կաստնայի «Ծառերը կանգնած են մահանում» տրագիկոմեդիան 23 տարի շարունակ բավականու-

թյուն և ոգևորություն պատճառեց հանդիսատեսին:

- Այո՛, այդ ներկայացումն հանդիսատեսի կողմից ընդունվեց ոգևորությամբ: Ստեփանակերտի թատերախումբն այդ ներկայացմամբ հանդես եկավ ոչ միայն Ստեփանակերտում, այլև՝ Երևանում, Թբիլիսիում, Գյումրիում և Վանաձորում, ոգևորության անմոռաց պահեր պարզևելով հանդիսատեսին: Թատերագետ Վարսիկ Գրիգորյանը մի ընդարձակ և բովանդակալից հոդված տպագրեց «Հայրենիքի ձայն» թերթում, որում մասնավորապես ասվում է. «Բեմադրիչի մտահղացմամբ տրագիկոմիկական պլանով լուծված ներկայացումը ամբողջության մեջ ցողված լինելով քնարական, թեթև տրամաբանությամբ, երբեմն պրկվում է՝ հասնելով մինչև ողբերգության մատուցները: Գտնված է զվարճալիի ու վշտալիի, խոհի ու թախիծի ոչ միայն հերթագայություն, այլև միմյանց մեջ տարրալուծելու գաղտնիքը, և դա է հմայք ու լիցք տալիս ներկայացմանը» («Հայրենիքի ձայն», 23 նոյեմբերի, 1988, N50):

- Վարսիկ Գրիգորյանի «Ստեփանակերտի թատրոնը Երևանում» հոդվածում կա նաև այսպիսի մի հետաքրքիր դիտարկում. «Ծառերը կանգնած են մահանում» պիեսը ինը տարի առաջ է բեմադրվել և եղել է նորավարտ բեմադրիչ Լ. Հարությունյանի անդրանիկ աշխատանքը թատրոնում՝ միանգամից երևակելով նրա գեղարվեստական պատրաստությունը, դերասանների հետ աշխատելու կարողությունն ու ճաշակը: Մանրակրկիտ մշակված տեսարանները, կերպարների փոխհարաբերությունների նրբին շերտերը, համարձակ միզանսցենները, հագեցած ու պատճառաբանված բեմական դադարները և, ի վերջո, երաժշտական ձևավորումը, դերասանական աշխատանքի հետ գունեղ խճանկար լինելով, միաժամանակ միաձուլլ ամբողջականություն են կազմում: Ներկայացումը մինչև վերջ ընթանում է լարված, և ոչ մի

պահ չի նվազում հանդիսատեսի և բեմի կապը: Մի ամբողջ խրախճանք է ստեղծել բեմադրիչը սեղանի շուրջ, տորթի և շնորհավորանքի տեսարանում, պարով, հումորով և դրամատիկ կանխազգացումների «ստորգետնյա հոսանքով»: Մի ամբողջ ներկայացում, երբ Բալասանյան-Տատիկը, «վիվատ» է գոչում և ինքնամոռաց պարում»:

- Նորից եմ կրկնում. այս ներկայացումը նշանավորեց նաև տաղանդաշատ դերասանուհի Մարգո Բալասանյանի դերասանական ճակատագրի նոր փուլը... Այր: Նույնիսկ կյանքի վերջին տարիներին, երբ տիկին Մարգոն՝ մեր բեմի տիրուհին, հիշողության խնդիրներ ուներ և ես որևէ առիթով առաջարկում էի կատարել «Տատիկի մենախոսությունը», նրա աչքերը փայլատակում էին պայծառ լույսով, և ինչպես ներկայացման առաջնախաղի ժամանակ (օ, ինչպիսի պարզև), հնչում էր նրա արծաթ ձայնը ինքնավստահ, տարիների ընթացքում բյուրեղացած ելևէջումներով և հիանալի նրբերանգներով: Մաուրիսիոյի դերում նա իր խաղընկերն էր համարում միայն Սամվել Եվրիյանին: Անփոխարինելի խաղընկերը:

- Ահա Ստեփանակերտի թատրոնի դիմագիծն ընդգծող ևս մի կարծիք. «Ձեր թատրոնի բեմը, թանկագին փափագյանցիներ, անցած բոլոր տարիներին ու բոլոր ժամանակներում հրաբորբ ռազմի դաշտի է նմանվել, ուր ահեղ ճակատամարտեր են տեղի ունեցել ազգային արժանապատվության պահպանման և հայոց ոսկեբառիկ լեզվի հաղթանակի համար» (ԵԹԿՊԻ տնօրինություն):

- Ճշմարիտ է ասված: Բեմը, իրոք, ռազմադաշտ է, և եղել են նաև ռազմադաշտը լքողներ... «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացման առաջնախաղին դիտավորյալ բացակայել է դերասաններից մեկը, փորձելով տապալել թատերախմբի կատարած ողջ աշխատանքը: Սա արդեն նենգություն էր և հարված՝ թիկունքից: Երկու շաբաթվա ընթացքում պատրաստեցի փոխարինող դե-

րասանի խաղը, որը և միավորեց համերաշխության կտրված շղթան:

- Ակամայից հիշեցի Գուրգեն Գաբրիելյանի «Թատրոն աշխարհը» բանաստեղծության գրավիչ տողերը.

*Օրը բացվում է դանդաղ ու հանգիստ,
Ինչպես թատրոնում բացվող տեսարան...
Արևը, որպես բեմադրիչ մի խիստ,
Չրամայում է հանդեսի վրա:-*

*Վանում է մուգը հսկա դահլիճի,
Որ մարդկանց խաղը երևա մաքուր...
Չէ որ «աշխարհը բեմ է» մի անծիր,
«Կյանքը տեսիլ է», մուգը՝ «վարագույր»...*



Լուսինա Սամվելյան

- Ես միշտ ձգտել եմ լինել ինքնուրույն, նույնիսկ իմ կատարած սխալներն էլ յուրօրինակ են: Սեփական մտածողության հայտ կամ հետևանք: Իսահակ Ալավերդյանի կարծիքն իմ կատարած աշխատանքի վերաբերյալ ուղեցույցային էր: Գոհ եմ, որ կարողացա ստեղծել համապատասխան իրավիճակներ՝ Մարգո Բալասանյանի տաղանդը նորովի բացահայտելու համար: Նրա հետագա ուղին կանխորոշող քայլ էր բացվող ամեն օրը... Թատրոնի համար խթանիչ նորույթ էր շեքսպիրագետ, դոկտոր-պրոֆեսոր Լուսինա Սամվելյանի այցը Ստեփանակերտ: Նա շեքսպիրյան թեմաներով դասախոսություններով հանդես եկավ Ստեփանակերտի բուհում: Լ. Սամվելյանը դիտեց


նաև «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացումը, արտահայտելով իր ծանրակշիռ խոսքը. «Բարձր եմ գնահատում ներկայացումը՝ իմ տաղանդավոր սանի՝ Լեոնիդ Չարոյությունյանի յուրօրինակ բեմադրությամբ: Ներկայացումը կուռ անսամբլայնություն ունի և անգամ դրվագային կերպարները լիարյուն են ներկայացված: Յուրօրինակ է և Մարգո Բալասանյան-Տատիկի խաղը՝ հագեցած դրամատիկ երանգներով, չափազանց գրավիչ է, երբ նա ընտանեկան տոնախմբության ժամանակ պարում է իսպանական կրակոտ պար, որը վարակիչ դրամատիզմ է հաղորդում ներկայացման ֆինալին: Այս կերպարը կարծես խորհրդանշում է նաև Մ. Բալասանյան դերասանուհու կարապի երգը»:

- Ներկայացումն, ինչ խոսք, հեղինակի և ռեժիսորի ստեղծագործական մտահղացումն է, որը իրագործվում է տաղանդավոր և շնորհալի դերասանների ջանքերի և նվիրվածության շնորհիվ: Թատրոնի գրական բաժնի վարիչ Ի. Ալավերդյանն այն կարծիքն է հայտնել, որ «ներկայացումը ընդհանուր կուլտուրայով, ճաշակով, ռեժիսորական մտածելակերպով, դերասանական կատարումներով հետաքրքիր էր, թարմ, արված թատերարվեստի ժամանակակից լեզվով...»:

- Թատերագետ Լուիզա Սամվելյանը՝ իմ ուսուցիչը, առաջարկեց իր մասնակցությամբ նորովի վերափոխել և հարստացնել «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացումը՝ ձգտելով հաղորդել նրան երկրորդ շնչառություն:

Այդ ծրագիրն, իհարկե, չիրականացավ:

- Ինչ խոսք, շեքսպիրագետ Լուիզա Սամվելյանը լինելով Արցախում, կապվել է հողին հոգով և ավյունով: Նրա մեջ խոսում էր մեր նախնյաց արյունը: Յետաքրքիր էր նաև այն հնարանքը, որ նա բանեցրեց՝ Արցախում շեքսպիրյան թեմաներով դասախոսություններ կարդալու համար: Պարզ էր, որ դրան դեմ պիտի լինեին Ադրբեջանի իշխանությունները: Եվ



Վահրամ Փափազյան

նա գտավ ելքը: Նախօրոք դիմեց ՍՍՀՄ թատերական գործիչների միությանը, որպեսզի իրեն թույլատրեն շեքսպիրյան թեմաներով դասախոսություններ կարդալ Ադրբեջանի բուհերում: Այդպես նա հայտնվեց Ստեփանակերտում:

- Տիկին Լուիզա Սամվելյանը նպատակ ուներ նաև իր խորհուրդներով օգնել մեր թատրոնին, նրա աջակցությունն, իհարկե, մի նոր շունչ ու որակ կհաղորդեր մեր ստեղծագործական աշխատանքին:

- Աշխարհահռչակ դերասան

Վահրամ Փափազյանը բարձր է գնահատել Ստեփանակերտի թատրոնի ստեղծագործական ներուժը, ջերմ խոսքով բնութագրել դերասանական աշխատանքի արդյունավետ աուրան. «Այսպիսի ուժերով հարուստ մի թատրոն, սիրված ու շոյված մարզի պետական դեմքերից, որոնք, ինչպես համոզվեցի, մասնավոր խնամքով գուրգուրում էին իրենց թատրոնը, մարզի հանդիսատեսի համար սոսկ մի ժամանցի վայր չէր, այլ հանդիսատեսի հոգեկան պահանջ բավարարող մի հիմնարկ:

Այս ճշմարտությանը ես հավատացի ներկայացումների ընթացքին, ոչ միայն մասնակցությամբ, այլև առանց ինձ, տեսնելով այն ներամփոփ, խոհուն ու լուրջ վերաբերմունքը սրահին, ուր անհատը, շաղվելով ընդհանուրի մեջ, ստեղծում էր հազարավոր սրտերից կազմված միմիայն մի սիրտ....» («Սո-

վետական արվեստ», 1958թ.):

- Վահրամ Փափազյանի նման մեծությունը աշխարհ է գալիս հազար տարին մեկ անգամ: Նա այսպես է բնութագրում մարդուն. «Օ Մարդն ինքն իրեն համար ամբողջ տիեզերքն է, և տիեզերքը ոչ միայն ցլանում է մարդու մեջ, այլև բացատրվում է նրանով, և վերջին հաշվով ում և ինչի պետք կլիներ այդ տիեզերքը, եթե մարդը չլիներ» (Վահրամ Փափազյան, «Թանձրացումներ»): Նա ոչ միայն հանձարեղ դերասան էր, այլև իմաստուն այր, գրող և փիլիսոփա...



Մարգո Բալասանյան

- «Թանձրացումներ» գիրքը փիլիսոփայական մտքերի, հոգեբանական գննումների և գյուտերի հանրագիտարան է: Գրքի առաջաբանում Գևորգ Աբաջյանը նշել է. «Վ. Փափազյանը արվեստն ընկալեց իբրև մարդկային բանականության բարձրագույն դրսևորումներից մեկը, դերասանական արվեստը՝ մարդագիտություն»:

- «Թանձրացումներն» իմ սեղանի գիրքն է: Գ. Աբաջյանի հավաստմամբ՝ «Այս մտքերի ընդհանրական ուժը, բառաձևման եղանակները, ոճական ինքնատիպությունը հարկադրում են ընթերցողին կրկին և դարձյալ անդրադառնալ միևնույն մտքին, ոչ այն պատճառով, որ հասանելի չեն, այլ դրանց խորունկ իմաստն ու ձևակերպման գեղեցկությունը ըմբռնելու ներքին պահանջից մղված»:

- Վահրամ Փափազյան-Օթելլոն Ստեփանակերտի թատե-

րական կյանքում իրադարձություն էր, որ այդպես էլ մնաց անմոռաց, անկրկնելի և ոգեշնչող մի նորույթ, կատարելության հասնելու մի առինքնող ճանապարհ:

- Թատերական այդ իրադարձությունը ոգեղեն ներկայության պես տարիներ ի վեր շարունակեց ոգևորության բաղձալի լիցքեր հաղորդել թատերաշխարհի նվիրյալներին: Դա այդպես է: Եվ այլ կերպ չի էլ կարող լինել:

- Ասում են՝ ԶԶ և ԼՂԶ ժողովրդական արտիստուհի Մարգո Բալասանյանը սուրբ մասունքի պես էր պահում իր խաղացած Դեզդեմոնայի ողբերգական թաշկինակը:


- Մարգո Բալասանյան - Դեզդեմոնան հրաշքի պես ապրեց տաղանդավոր դերասանուհու հոգեաշխարհի նուրբ թելերում: Եվ, ընդհանրապես, Մ. Բալասանյանի համար մեծն Փափագյանի հետ հանդիպումը անմոռաց և անկրկնելի իրադարձություն էր, որը ոգեղեն կրակի պես ապրեց դերասանուհու հոգում՝ անընդհատ փոթորկելով նրա լուսատենչ արյունը:

- Յագոյի դերակատարն էր Միքայել Կորգանյանը:

- Միքայել Կորգանյանը անձնավորել է նաև Խաչատուր Աբովյանի կերպարը: «Թվում է, թե մենք լուր մենք,- գրել է Ի. Ալավերդյանը,- կենդանի Աբովյանի ձայնը, նրա կրակոտ խոսքը, ականատես լինում նրա վշտալից ապրումներին: Դերասանի թե դիմանկարը, թե ձայնը և թե շարժումները միանգամայն համապատասխանում են Աբովյանի մասին մեր պատկերացումներին»:

«Խաչատուր Աբովյան» ներկայացումը 1951թ. բեմադրել է Ստեփանակերտի թատրոնի հիմնադիր Կարո Ալվարյանը:

- Հայկական սովետական հանրագիտարանի առաջին հատորում (տպ. 1974թ.) Կարո Ալվարյանը ներկայացված է հետևյալ տեքստով. «Ալվարյան Կարո Սողոմոնի (1895-1963), հայ սովետ. ռեժիսոր և դերասան: Ադրբ. ՍՍՀ արվեստի վաստ. գործիչ (1954): Ծնվել է ապրիլի 24 (մայիսի 6)-ին, Ախալցխայում:



Կարո Ալվարյան

1925-ին ավարտել է Մոսկվայի Չայկական դրամատիկական ստուդիան և որպես դերասան աշխատել Թբիլիսի (1925-27), Լենինականի (1928-30), Բաքվի (1930-32, 1937-47) հայկական թատրոններում: 1932-ին կազմակերպել է Ստեփանակերտի (1932-35, 1947-63-ին գլխ. ռեժիսոր), 1935-ին՝ Կիրովաբադի (1935-36-ին գլխ. ռեժիսոր) հայկական թատրոնները: Բեմադրել է Վաղարշյանի «Օղակում» (1932), Ջաբարլիի «Սևիլ» (1933), Կիրշոնի «Յրաշալի ձուլվածք»

(1935), Շիրվանզադեի «Մորգանի խնամին» (1948), Ն. Ջարյանի «Աղբյուրի մոտ» (1950), «Փորձադաշտ» (1953), Պարոնյանի «Պաղտասար աղբար» (1952), Սունդուկյանի «Խաթաբալա» (1957) ևն, որպես դերասան մասնակցել է ներկայացումներին: Մահացել է հոկտեմբերի 19-ին, Ստեփանակերտում»:

- Իհարկե, ես դա համարում եմ պատվաբեր իրողություն, արժանավոր գնահատություն և անմահության ծանապարհ: Բոլորովին այլ տպավորություն ենք ստանում, երբ գրող Իսահակ Ալվերդյանն է բնութագրում արժանավոր ռեժիսորի դերակատարությունը. «Ալվարյանը կարողացավ գայթակղել և Ստեփանակերտ հրավիրել պրոֆեսիոնալ դերասաններ Միքայել Կորգանյանին (Քարհանյան), Իվան Յովհաննիսյանին, Արմեն Միրզոյանին, Յմայակ Դանիելյանին, Յայկ Գևորգյանին, Գուրգեն Ջանոյանին,

հուշարար Եփրեմ Մուսայեյանին: Ներկայացումներին համատեղության կարգով մասնակցում էր Մ. Բերբերյանը, տեղացիներից թատերախումբը համալրեցին Սուրեն Չալյանը, Ռուբեն Բարսեղյանը, Ռ. Լենկովսկայան, Շամիր և Շուշանիկ Յովակիմյանները, Ա. Խաչիյանը, Ղ. Դեմուրյանը: Ձևավորող նկարչի պարտականությունները ստանձնեց քաղաքում հաստատված գեղանկարիչ Մանուկզադեն (Ալեքսանդր Դաշտոյան), որը հանդես էր գալիս նաև դերակատարումներով:

Տքնաջան աշխատանքից հետո, 1932 թվականի օգոստոսի 11-ին բացվեց Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկ թատրոնի վարագույրը»:

Կարո Ալվարյանին ես համարում եմ իմ ուսուցիչը: Նրա մասին ես կարդացել եմ թերթերում և գրքերում, նա նվիրյալ արվեստագետ էր, հզոր կազմակերպիչ և մեծատառով Մարդ: Ես ինձ համարում եմ նաև նրա հոգևոր ժառանգորդը:

- Ռեժիսորի համար թատրոնը մի անվարագույր բեմ է, ուր արարվում են գործողությունները, դերասանների միջոցով մարմնավորվում գաղափարները, ապրումները, զգացմունքները:

- Ռեժիսորը գաղափարը բացում է ներսից, դարձնում անձանաչելի, միաժամանակ՝ շոշափելի մի իրողություն, որը և վերափոխում է կյանքը, դարձնում երազի պես աննվաճ և գերող... «Ամեն արվեստի խորքում,- սովորեցնում է Վ. Փափազյանը,- կա մի բան, որը ոչ կարելի է սովորել, ոչ էլ բացատրել»: Ինձ առաջնորդում է հենց այդ անբացատրելին, այդ Ոգին:

- Ներկայացումն, ինչ խոսք, հեղինակի և ռեժիսորի ստեղծագործական մտահղացումն է, որը իրագործվում է տաղանդավոր և շնորհալի դերասանների ջանքերի և նվիրվածության շնորհիվ:

- Ներկայացման հաջողությունը պայմանավորված է մի շարք

հանգամանքներով: Նախ պետք է ընտրել այնպիսի ստեղծագործություն, որը ոչ միայն պահանջված է, այլև ժամանակահունչ է, բովանդակալից և հետաքրքիր: Մի պիես, որի բեմադրությունը կարող է հարստացնել հանդիսատեսի հոգեաշխարհը՝ նրա մեջ արթնացնելով նշանակալի ապրումներ, գաղափարներ, հույզեր: Շատ կարևոր է նաև բեմի նկարչական ձևավորումը: Բեմն այն կերպավորված միջավայրն է, այն բնակարանը կամ թաղամասը, որտեղ ընթանում են պիեսի գործողությունները:

- Արվեստը հոգևոր սնունդ է, կենարար լույս, որով լցվելով՝ կյանքը դառնում է ավելի հետաքրքիր, կենսաբուխ և իմաստավոր:

- Թատրոնը հենց կյանքն է: Խաղ չէ միայն: Դերասանը ստեղծում է բեմական իրականություն: Անկրկնելի մի վիճակ, անփոխարինելի մի տեսլաժամ: Մեզ շրջապատող իրականությունը կարող է լինել նույնիսկ ձանձրալի: Բեմական կյանքը (իմա՝ իրականությունը) միշտ պիտի լինի հետաքրքիր և անկրկնելի: Դերասանն այն կարևորագույն գործոնն է, ով իր ձայնով, խոսքով, շարժումներով, արտահայտիչ հայացքով կերպավորում է ժամանակային հատվածը, ստեղծում հոգեվիճակների ներդաշնակ շղթա, որը զարգացող գործողությունների առանցքում հանգում է բացահայտումների նոր ընթացքին և դրամատիկ երանգների ավարտող ծիրին:

- Յուրաքանչյուր թատերական կոլեկտիվ ունի իր աշխատանքային ոճն ու նկարագիրը: Աշխատանքային առողջ մթնոլորտն ու ստեղծագործական եռուն վիճակը պահանջված և անհրաժեշտ պայման են:

- Նպատակը մեկն է՝ Բարու և Գեղեցիկի հաղթանակը, սա՛ է մարդու էության անվերջանալի ձգտումը՝ մարդուն մարդ պահելու պայքարում:

Ես չորս անգամ թատերական կոլեկտիվ եմ ստեղծել, չորս անգամ էլ քանդվել են այդ թատերական եռուն, կենսունակ օջախներ:

րը՝ թատրոնի հետ կապ չունեցող ստահակների ձեռքով: Ամեն անգամ ստիպված եմ եղել սկսել նորից: Նորից ու նորից:

Շատ մեծ է եղել բանաստեղծ, Ստեփան Զորյանի անվան գրական մրցանակի դափնեկիր Գուրգեն Գաբրիելյանի՝ Գաբո Ապր դերը Ստեփանակերտի թատերական կյանքի զարգացման գործում: Նա իրեն գերազանց է դրսևորել թատրոնի տնօրենի պարտականություններում: Կառուցողական գործունեություն,- այսպես կրճարողների մեծ արվեստագետի աշխատանքային ուղեգիծը:

- Նախանձը և անձնական շահը ստեղծագործական կյանքում կործանարար է: Ներկայացումը ընդհանուր ջանքերով ստեղծվող արվեստ է: Այստեղ նվիրվածությունը հրաշքներ է արարում, իսկ երկպառակտությունը, շահամոլությունն ու քիչնախնդրությունը ավերում ամեն ինչ՝ ներսից:

- Եթե վերլուծելու լինենք այս կամ այն թատրոնի ներքին կյանքն իր դրսևորումներով, մեր աչքի առջև կհառնի տվյալ կոլեկտիվի ուղին՝ իր վերելքներով և փառահեղ, և անփառունակ վիճակով... Անվանիներն ու նշանավորներն էլ ունեն նախանձի զգացում, անձնական շահեր, համակրանքի և հակակրանքի դրսևորումներ, որոնք անձնական բնույթից բացի՝ ունեն նաև ընդհանուրի գործը խաթարող, առաջընթացն արգելակող հատկություն: Երբեմն հեղինակությունը, որն ունի իր շրջապատը, կողմնակիցներն ու բարեկամները, անձնական վիրավորանքից դրդված՝ մղվում է երիտասարդ դերասանի դեմ՝ այդ պայքարում կիրառելով ամեն միջոց... Իսկ արդյունքում տուժում է միայն թատրոնի կոլեկտիվը: Դա է ցավալին: Ես համոզվել եմ, որ անհոգի, կիսագրագետ վարչարարությունը սպանում է կենդանի և փայփայանքի արժանի բեմարվեստը: Տարիների տքնաջան աշխատանք է հարկավոր ստեղծագործ կոլեկտիվ ձևավորելու, ամիսների ջանք՝ այն հիմնովին կործանելու համար: Յնուտ, արվեստասեր ղեկավարը մտահոգ և պատրաստակամ է բարձրացնելու թատրոնի հե-

դինակությունն ու նշանակությունը: Թատրոնը պահանջում է տևական ուշադրություն, հետևողական հոգածություն թատերարվեստի նվիրյալների նկատմամբ: Անձնական քմահաճույքը երբեք չպետք է դարձնել ելակետ: Պետք է առաջնորդվել միայն արվեստի նվիրյալներին հատուկ սրտացավությամբ, պայծառ մտքերով և գաղափարներով: Ճշմարիտ է ասված. «Արվեստում չի կարելի նորոգել, վերածնել կարելի է և պետք է...» (Վ. Փափազյան):

Ժամանակակից դրամատուրգիան ձևավորում է թատերասեր հասարակության նոր սերունդ, որը անխոնջ և անդավաճան երկրպագուն է երիտասարդ դերասանների շնորհաշատ բույլի: Ավագ դերասանների սերունդը իր աշխատածը թարմացնում և հարստացնում է նորի շնչով և ձգտում ընդգծվել ժամանակակից արվեստի ֆոնին՝ օրիգինալ և ազդեցիկ երանգներով: Թատերական կյանքի հզոր բնից շյուղարձակվում են ստեղծագործական նոր էություններ, որոնք ունեն երիտասարդական անսպառ ավյուն, աշխատասիրություն, ձգտում, սեր և համբերություն: Կարևորագույն հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են թատերարվեստում ստեղծագործական նկատելի արդյունքի հասնելու համար: Թատերական կյանքի հին ու հզոր բունը պահպանելով՝ ստեղծագործական ասպարեզ ենք բացում նաև երիտասարդ ուժերի համար, որոնք համախմբվելու և նպատակասլաց գործունեություն ծավալելու փափագ ունեն:

Թատրոնը ընդլայնում և հարստացնում է մարդկային մտահորիզոնը, բացում երազանքների երկնականարում նորանոր աստղեր, որոնք հասարակության կյանքը դարձնում են ավելի հետաքրքիր, արդյունավետ և իմաստալի: Վ. Փափազյանի հավաստմամբ՝ «Թատրոնը ժողովրդի համայնական հույզերի, նրա անցյալի հիշատակների, նրա գալիքի ակնկալության, նրա լեզվի ու բարքերի, ինչպես և նրա հոգեկան մակարդակի անսխալ չափանիշն է, նրա էության անդավաճան հայելին, նրա հավաքական սիրտն ու

խիղճը, և նա՝ ինքն է ծնում իր թատրոնը»:

Երբեմն լրատվամիջոցները կատարում են վնասակար և ավերիչ դեր թատրոնի բարդ ու անփառունակ ճակատագրում: Դերասանի մասին հորինված մի պատմությունն անգամ հերիք է, որ շրջանառվի մամուլի և հեռուստատեսության շրջապտույտում, որպեսզի խամրի երիտասարդ դերասանի նուրբ ու թրթռուն երազանքի ձերմակ թերթիկները: Նորելուկ մի տունկ իսկույն ծածկվում է անորոշության ավազով: Ավելի՛րո՞ք են դառնում բացատրությունները, արդարացումները, հորինված փաստի հերքումն անգամ... Ամենամոտ «բարեկամը» դառնում է երդվյալ թշնամի, «ակտիվանում» և գրիչ է վերցնում շուկայի կանաչի վաճառողը և դառնում «կարևորագույն օղակը» անհեթեթ վեճի ամուր շղթայում: Իսկ երդվյալ գրչակն այդ հայտնի չէ, թե վերջին անգամ էրք է եղել թատրոնի սրահում, դիտել ներկայացում կամ պատահաբար անցել մոտակա փողոցով...

Թատերական այն կուլեկտիվները, որ ես ստեղծել եմ տասնամյակների ընթացքում, այսօր պիտի դառնային ծաղկուն այգի, բուրաստան, բայց նախանձի ցեցը աստիճանաբար պառակտեց համախումբ կյանքի բեղուն աուրան, ցրեց շնորհալիների երազների ձերմակ թերթիկները, մթաստվեր ներարկեց ստեղծագործողների երակների մեջ, մոլորեցնելով անգամ թատերարվեստի նվիրյալներին անորոշ կրքերի դաժան քառսում:

Բայց... ճանապարհը փրկարար է: Ճանապարհն է իմ ընկերը: Ես միշտ բարի խորհուրդներ եմ քաղում իմ անցած ու անցնելիք ճանապարհից: Եվ ճանապարհն ինձ ասում է. «Քայլի՛ր, մաքառի՛ր, ստեղծի՛ր և նվիրի՛ր... Դ՛ն է այս կյանքում վեհն ու մնայունը»:



**ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԿՈՂ
ՓՈՐՁԵՐԸ ԵՎ ԱՊԱԳԱ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ**

**Տառապանքի ծանապարհով մարդը ձգտում է գնալ
դեպի վեր, դեպի Աստված: Ձգտում է և չի հասնում:
Այդ ձգտումը մշտակա է, մշտնջենական և անկանգ:**

Լեոնիդ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ


ՀՈԳԵՎՈՐ ԿԱՊ

*Եվ նոր կյանքն է բախում դուռդ,
Եվ դիմացդ՝ բացվող օրն է.
Աշխարհային մի լուրթ երագ,
Երագային համառ մի կյանք...*

Ռ. Եսայան

-1988թ-ին աշխատանքի եք հրավիրել Լենինականի պետական թատրոն, որպես բեմադրող ռեժիսոր: Թատերական կյանքը Լենինականում միշտ էլ բուռն է եղել: Դերասանները ինչո՞վ էին առանձնանում:

- Լինելով Շիրակ աշխարհի ծնունդ՝ ես իմ արյան մեջ միշտ զգացել եմ կարոտի կանչի զիզզազը, հողի ձգողական ուժը, այն մղումը, որ կոչվում է հոգևոր կապ: Լենինականի մայր թատրոնից ես օգտակար լիցքեր էի ստանում, և իմ ստեղծագործական ակունքն այդտեղից էր բխում ու ձյուղավորվում ինքնարտահայտման նոր բավիղներում: Երբեմն ես մեծ մղումով հասնում եմ Լենինական, կարոտս առնում, փոր-



Մ. ԲԱՆՈՒՄՅԱՆ ԵՎ Ռ. ԵՍԱՅԱՆԻ ՄԱՍԻՆՆԵՐԸ



Խորեն Աբրահամյան

ձում թատրոնում բեմադրել մի նոր ներկայացում, բայց որոշ ժամանակ անց՝ կրկին լսում եմ Ստեփանակերտի թատրոնի կանչը, որը իսկույններթ տակնուվրա է անում իմ էությունը, գամում ինձ աստանդական կյանքիս հուսավառ աստղին:

- Նոյնն էր և այս անգամ:

- Այս անգամ նույնն էր և կարծես նույնը չէր: Լենինականի պետական թատրոնը գլխավորում էր ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Խորեն Աբրահամյանը: Նա այդ ժամանակ աշխատում էր Ջակոմետիի «Կորրադո» պի-

եսի բեմադրության վրա:

- Անակնկալ էր առաջին հանդիպումը հռչակավոր դերասան Խորեն Աբրահամյանի հետ:

- Խորեն Բաբկենիչին սպասեցի ընդունարանում: Քարտուղարուհին, որ ինձ ճանաչում էր, ասաց. «Ներս մտե՞ք, դերասանների հետ փորձերը երկար կտևեն...»: Ես գերադասեցի սպասել, որովհետև ուզում էի հանդիպել հայ բեմի վարպետին առանց որևէ մեկի ներկայության: Ահա և ընդմիջման ժամը: Դերասանները դուրս եկան փորձասենյակից և ճանաչելով ինձ՝ ջերմորեն ողջագուրվեցին. «Լյոնյան, մեր Լյոնյան...»: Այո, ջերմ և աղմկոտ ընդունելությունը չվրիպեց նաև Խորեն Աբրահամյանի ուշադիր հայացքից, ով արդեն դուրս էր եկել ընդունարան և ծխում էր, իսկ ծխի հետ վեր էին ալիքվում խառը մտքերը... «Ծանոթացե՞ք, Խորեն Բաբկենիչ,-

մոտենալով՝ ներկայացրեց ինձ դերասան Սերգեյ Չոլախյանը,- Լեոնիդը մեր ստուդիան է ավարտել, հիմա Ղարաբաղի թատրոնի ռեժիսորն է...»: «Յա...,-կկոցեց աչքերը Խորեն Աբրահամյանը և նայելով ինձ՝ ոգեց,- հա... ինչ կա... ո՞նց է Ղարաբաղը...»: Խ.Աբրահամյանի հետաքրքրությունը Ղարաբաղի և նրա ցավոտ խնդրի նկատմամբ չափազանց խորն էր և զգայուն: Դիտել էր Արցախյան շարժման մասին մի շարք տեսանյութեր, համակրանքով և ոգևորությամբ էր խոսում առաջամարտիկների մասին: Այստեղ դիտեցինք և մեր...«Մենք» հրապարակային ներկայացման տեսագրությունը:

«Որոնիր և գտիր ժամանակահունչ մի պիես և բեմադրիր,- մի օր ասաց ինձ բեմի մեծ վարպետը և հավելեց,- ազատ ժամանակ էլ եկ միասին դիտենք «Կորրադո»-ի նոր տեսարանը, կարծիքներ փոխանակենք...»:

Աշխատանքից հետո սկսեցի ներկայանալ «Կորրադո»-ի փորձերին: Խորեն Աբրահամյանը ծանր աշխատանք էր կատարում: Նա ներկայացման ռեժիսորն էր և միաժամանակ Կորրադոյի դերակատարը: Տանջալի գործընթաց էր դա: Գործն ավելի դյուրին դարձնելու նպատակով բեմի վարպետը Կարեն Աբրահամյանին կանգնեցնում էր իր փոխարեն բեմում, իսկ ինքը զբաղվում ռեժիսորական հնարներ իրագործելով, որից հետո, որպես Կորրադոյի դերակատար՝ մտնում էր բեմ, խաղում, իսկ Կ. Աբրահամյանը պետք է նրան հուշեր միզանսցենը...Այդպես՝ շարունակ: Այս իրողությունը ռեժիսոր-դերասանին ինչ-որ չափով խանգարում էր միաժամանակ կենտրոնանալ և բեմադրության, և դերի վրա: Աշխատանքը ձգձգվում էր: Կար նաև տեքստը մտապահելու և հիշելու խնդիր: Այս մասին իմ մտահոգությունը հայտնեցի վարպետին: Խ.Աբրահամյանը խոստովանեց, որ իր մեջ անընդհատ պայքար է ընթանում ինքնահաստատվելու մի դժվար ու բարդ դերում, որն

այդպես անկրկնելի և հանձարեղ է կատարել մեծն Վահրամ Փափազյանը: «Ես պիտի վերակերտեմ իմ Կորրադոն,- ասաց նա.- անընդհատ հետապնդում է ինձ Փափազյանի Կորրադոյի հմայքը, ես պիտի հաղթահարեմ այդ ձգողական ուժը, կերպարային հզոր աուրան: Դրանից հետո միայն ինձ կհաջողվի բացահայտել կերպարի տարօրինակ ինքնությունն ու նկարագիրը: Այդպես ես վերակերտեցի մի օր... իմ Օթելլոն»:

Խ.Աբրահամյանի գրասեղանին մշտապես դրված էր Վ. Փափազյան-Կորրադոյի լուսանկարը: Մեծերին հատուկ անկեղծությամբ զրուցում էր, երբեմն էլ (ինչ բացառիկ պարզև) Վահրամ Փափազյանի կամ Յրաչյա Ներսիսյանի նմանությամբ խաղում էր կամ արտասանում: Ապշում էի, ինքս ինձ ասում. «Երանի թե նորից կրկներ...»: Ի՞նչ համ ու հոտով, ի՞նչ ճշտությամբ էր կատարում... Արվեստական ինչպիսի վերարտադրություն... Դա պարզև էր, մեծ արվեստագետի մեծահոգի նվիրատվությունից ծառագած մի շնոր...

Յիշում եմ. « Կորրադո»-ի մի տեսարանի քննարկման ժամանակ հայտնեցի կարծիքս, որի հետ ոմանք չհամաձայնվեցին: Ես ամենևին էլ նպատակ չունեի թերագնահատելու նկարիչ-ձևավորողի՝ Եվգենի Սաֆրոնովի ստեղծագործական կարողությունը: Ուղիղ բեմի կենտրոնում, խորքից մինչև բեմառաջ հսկայական աստիճաններ էին իջնում: Ես հայտնեցի այն միտքը, որ կաթոլիկ եկեղեցում նման բան չի կարող լինել: Կաթոլիկ կառույցն իր բարձրաթռիչ որմերով, գմբեթով և ազատ տարածքով շեշտում է մարդու փոքրությունը Աստծո տաճարում և պարտադրում խոնարհում... Խորեն Աբրահամյանն իմ այս կարծիքը շատ հավանեց, բայց միաժամանակ հայտնեց, որ ինքը մտադիր է այդ աստիճաններն օգտագործել՝ որպես հերոսի վերելքն ու անկումը խորհրդանշող միջոց: Տառապանքի ճանապարհով մարդը ձգտում է

գնալ դեպի վեր, դեպի Աստված: Ձգտում է և չի հասնում: Այդ ձգտումը մշտակա է, մշտնջենական և անկանգ: Մեծ դերասանի մտքի ճառագումն էր դա: Մենք երջանիկ էինք, որ հաղորդակցվում էինք Խորեն Աբրահամյան արվեստագետի ստեղծագործական երկունքին:

Մեծ դերասանն ունի նաև մի հետաքրքիր տարօրինակություն: Սիրում էր թեյ խմել մեծ բաժակով: Կինը՝ Գոհարը, թեյը մատուցում էր, մի կում ըմպում և նոր դնում սեղանին: Խորեն Բաբկենիչը վերցնում էր բաժակը, մոտեցնում շուրթերին... «Կարո՞ղ է էլի թափեմ,- անհանգստանում էր նա՝ նայելով կնոջը, որն ուշադիր հետևում էր ամուսնու յուրաքանչյուր շարժումին: Եվ երբ թեյի առաջին կաթիլները կաթկթում էին շապկին, դերասանները դուրս էին գալիս աշխատասենյակից, որպեսզի վարպետը փոխի վերնաշապիկը...

Փորձերը ձգվում էին մինչև ուշ գիշեր: Երբեմն էլ մինչև առավոտ: Ստացվում էր, որ Խորեն Աբրահամյանն ապրում էր թատրոնում, իսկ տուն գնում էր՝ միայն մի քանի ժամ քնելու համար:

Գրականագետ Լևոն Չախվերդյանի խորհրդով՝ բեմադրության համար ընտրեցի Ն.Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն» պիեսը: Խորեն Աբրահամյանին դուր եկավ այդ ընտրությունը: Աշխատեցի մեծ ոգևորությամբ՝ ընդգրկելով ներկայացման մեջ ստեղծագործական կարող ուժեր: Ներկայացման նկարչական ձևավորումը դեռևս պատրաստ չէր, քանի որ թատրոնի նկարիչ Մարտինը այդ ժամանակ «Կորրադո»-ի ղեկորներն էր պատրաստում: Պարզ էր, որ «Մեղադրական եզրակացություն» ներկայացման հանձնումը հետաձգվում էր և ես որոշեցի վերադառնալ Ստեփանակերտ: Միչ այդ...Մարգո Բալասանյանն էր գանգել ինձ, խնդրել, որ վերադառնամ և ստանձնեմ թատրոնի գլխավոր ռեժիսորի պարտականությունը:

- Փաստորեն, նոր հրամանագրով դուք արդեն համարվում էիք Ստեփանակերտի թատրոնի գլխավոր ռեժիսորը:

- Մինչ այդ՝ ես ազատվել էի աշխատանքից: Նոր հրամանագրով փորձում էին կրկին ինձ վերադարձնել...«Թատրոնի գործերն անհետաձգելի են», - սրանք Մարգո Բալասանյանի հետ ունեցած հեռախոսազրույցի վերջին բառերն են...

- Բայց մինչ այդ պիտի հանձնեիք «Մեղադրական եզրակացություն» ներկայացումը:

- Այո, հատկապես՝ Լենինականի թատերախումբն էլ շտապում էր, ուզում էր այն հանձնել մինչև աշխատանքային արձակուրդի սկիզբը: Լինելու էր այն, ինչ լինելու էր: Մարդը ենթադրում, իսկ Աստված կատարում է: Թատերական շատ նպատակներ ձախողվել են միայն այն պատճառով, որ նրանց իրագործումը հետաձգվել է՝ արձակուրդից հետո ավարտելու և հանձնելու բաղձանքով: Այդ մտահոգությունն էլ անհանգստացնում և շտապեցնում էր թատերախմբին՝ օր առաջ հանձնելու անկատար ներկայացումը: Իրականում դա դեռևս անկյանք և հիվանդ մի ստեղծագործություն էր, որին լքել էր լինելության ոգին:

- Փաստորեն, «Մեղադրական եզրակացություն» ներկայացման հանձնումը շտապողականության արդյունք էր: Ներկայացման հանձնումը չէր կարող հաջողվել թեկուզ այն պատճառով, որ բեմադրող ռեժիսորը ներկա չէր այդ կարևորագույն արարողակարգին:

- Մի քանի ռեժիսորներ, միմյանց հաջորդելով, փորձել են «հղկել» ներկայացման անհարթ տեղերը և կարճ ժամանակաընթացքում հանձնել: «Մեղադրական եզրակացություն» ներկայացումը Լենինականի թատրոնում ունեցավ իր առանձնահատուկ ճակատագիրը: Երկրորդ խաղարկությունից հետո ներկայացումը նետվեց արխիվային ֆոնդ:

- Իսկ Ստեփանակերտի թատոնում 87թ.-ին որոշել էին բեմադրել ադրբեջանական պիես՝ Մ. Ախունդովի «Մուսյո ժորդանը և դերվիշ Մասթալի շահը, Լենքորանի խանության վեզիրի արկածները»:

- Այդ ներկայացումը բեմադրելու համար՝ որոշեցին Երևանից հրավիրել ռեժիսոր Նիկոլայ Ծատուրյանին:

Թատրոնի կյանքում ստեղծվել էր փակուղային դրություն:

88 թվականի հունվարն էր: Ես բեմադրեցի «Նոր տարի» ներկայացումը: Նոր հույսերով և նոր երազանքներով դիմավորեցինք Նոր տարին: Չետո մեր դուռը ծեծեց 88թ.-ի փետրվարի 13-ը՝ Արցախյան շարժման փոթորկալից օրը: Արցախցիների հիշողության մեջ այդ օրը մնաց, որպես նախադեպը չունեցող մի իրադարձություն, ազգային ազատագրական շարժման վառ էջերից մեկը... Դա գալիք մեծ պայքարի նախերգանքն էր ... Ստեփանակերտի հրապարակը աստիճանբար լցվեց ցուցարարներով՝ դառնալով պայքարի և խիզախումի մեծ ասպարեզ:

Ըմբոստ ուսանողները վեր պարզեցին «Ղարաբաղցիները հավատում են Մ.Գորբաչովի կողմից հռչակված վերակառուցման կուրսին», «Արցախը պատմական Չայաստանի հատվածն է» և այլ կարգախոսներով պաստառներ:

Նվիրյալ և տաղանդավոր դերասաններ Բենիկ Օվչյանն ու Ժաննա Գալստյանը Արցախյան շարժման առաջատարներից էին, որոնք գոտեպնդում և ոգևորում էին ժողովրդին իրենց կրակոտ խոսքով, հուսավառում և ուղղորդում նորանոր նախաձեռնություններով:

- Աշխարհը վերափոխվել էր: Բնականաբար, վերափոխության զարկերակն էր բաբախում և արվեստում: Թատրոնի նշանակությունը դարձել էր թերևս անկարևոր: Բեմադրող ռեժիսորն արդեն ժողովուրդն էր: Նոր խոսք էր պետք: Արտա-

հայտման նոր միջոցներ: Կյանքը թելադրում էր նոր մտահղացումներ: Պատկերավոր մտածողության փեղկերը բացվել են դեպի կյանքի եռացող ոգին:

Կյանքը արտակարգ իրավիճակներ էր ստեղծել և՛ արվեստագետների համար, որոնց մեջ արթնացող նոր էությունը՝ հայրենասեր հայի ըմբոստացող վարքն էր:

Ազգի ճակատագիրը գրվում էր նորովի՝ տառ առ տառ: Ամեն մեկս մի տառի ծանրության տակ կքած՝ ելնում էինք դեպի միասնական պահանջատիրության հրապարակը:

- Ժողովուրդը հրապարակում էր: Ես հրապարակից նայեցի դեպի բեմը: Արվեստագետ ընկերներիս՝ Արմեն Յակոբյանի և Առնոլդ Մելիքսեթյանի խորհրդով՝ որոշեցի Արցախյան շարժման մասին ներկայացում բեմադրել: Մինչ այդ... բեմադրել էի «Նոր տարին»: Հիշում եմ. ներկայացումը դիտելու էին եկել և՛ ադրբեջանցի աշակերտները: Ներկայացումից հետո ինձ մոտեցավ ադրբեջանական ռադիոհաղորդման թղթակիցը և հարցրեց. «Ինչո՞ւ չեք բեմադրում նաև ադրբեջաներեն ներկայացումներ»: «Տարօրինակ է,- հարցրեցի ես և հավելեցի,- չեմ բեմադրում, որովհետև ես հայ ռեժիսոր եմ և աշխատում եմ հայկական պետական թատրոնում»: Պատասխանը գոհացուցիչ չէր: Այդ պահին զրույցին միջամտեց թատրոնի տնօրեն Զինավոր Գևորգյանը և թղթակցին հրավիրեց իր աշխատասենյակը: Ադրբեջանցի թղթակցին ճանապարհից հետո, Զ.Գևորգյանը մի օգտակար խորհուրդ տվեց ինձ. «Այդպիսի դեպքերում խորհուրդ եմ տալիս խուսափել շփումից՝ պատճառաբանելով, որ ադրբեջաներեն չգիտես»:

- Ժամանակը թելադրում էր նոր ասելիք...

- «Պոեզիայի թատրոնի» ստեղծումով՝ կարծես շոշափեցինք ժամանակի զարկերակը: Ներկայացման մեջ ընդգրկվեցին նաև հավելյալ ուժեր՝ ուսուցչուհի Սիրուն Ապրեսյանը, բժշկուհի Լյուդ-

միլա Գրիգորյանը, բանասեր Ժաննա Այվազյանը, դուդուկահար Դերենիկը, որոնք նոր ոգի և թարմ շունչ հաղորդեցին ասմունքային արվեստին: Ներկայացումը կոչվեց «Մենք»: Դա հենց Գևորգ Էմինի համանուն բանաստեղծության վերնագիրն էր, որն ավելի էր ամրապնդում միասնության ոգին, հանդիսատեսին վարակում պայքարի կոչով: Բեմից նորովի հնչեցին հայ քնարերգակների՝ Խ. Աբովյանի, Ա.Իսահակյանի, Ե.Չարենցի, Յ.Շիրազի, Պ.Սևակի, Գ.Էմինի, Վ.Դավթյանի, Յ.Սահյանի, Ս.Կապուտիկյանի բանաստեղծությունները: Արցախցին առաջին անգամ բեմից լսում էր Յ.Շիրազի «Ղարաբաղի ողբը», Պ.Սևակի «Անլռելի զանգակատուն»-ը և ինքն էլ հնչեցնում իր կոչը՝ «Միացում մայր Յայաստանին»: «Մենք»-ը բեմից տեղափոխվեց հրապարակ:

- Հրապարակային ժամանակներ էին և արվեստն էլ դարձավ հրապարակախոսական:

- «Կուցևոյ» կոչվող հրապարակում Ստեփանակերտի հայկական պետական թատրոնը ներկայացրեց «Մենք» ներկայացումը: Արվեստը հուզում և փոթորկում էր մասսաներին: Ժողովուրդը չէր հեռանում հրապարակից: Ներկայացումից հետո շատ երիտասարդներ դերասաններին ուղեկցում էին տուն: Քաղաքում վխտում էին զինվորական պարեկախմբերը: Ստեփանակերտի ռադիոյի աշխատակիցները ձայնագրեցին «Մենք» ներկայացումը և ուղարկեցին Երևանի ռադիոհաղորդումների խմբագրություն:

- Պարզ էր, որ թատրոնը երկար չէր կարող մնալ հրապարակում: Բեմարվեստը կյանքային խնդիրներից բացի՝ պիտի լուծեր նաև ստեղծագործական հարցեր: Դերասանները կարիք ունեին ամենօրյա աշխատանքով բացահայտելու իրենց կարողություններն ու հմտությունները:

- Սկսեցի «Չար ոգի» պիեսի բեմադրության աշխատանքը: Հավաքույթներ, ցույցեր, պարետային ժամ... Ահա նոր ու արտա-




Քենիկ Օվչյան

կարգ իրավիճակների բարդ խրոնիկան: Արցախը ևս շրջապատված էր չար ոգու մառախուղով և վստահ էր, որ ձեռքերը և ամեն շրջափակում՝ ոգու պայծառ աստղով... Ժողովուրդն անսասան էր իր համոզմունքներում և տոգորված էր հաղթելու վճռականությամբ: Թատրոնի աշխատողը և ցուցարար էր, և պահանջատեր... Թատրոնը նաև ժողովրդին միավորող բացառիկ ուժ էր... Եվ այս պիեսի բեմադրությունն էլ... ամբողջացնում էր ժամանակի և իրականության բարդ նկարագիրը: Արվեստը

ամնացորդ նվիրվածություն ու համառ աշխատանք էր պահանջում: Ժաննա Գալստյանը շարժման հորձանոտում էր և կատարում էր կարևորագույն ու անհետաձգելի աշխատանք: Դերասանները ինչ-որ չափով հեռացել էին բեմից, խառն իրավիճակը մղել էր ոմանց՝ մատնվել անիմաստ անգործության: Թատրոնի ներսում միշտ էլ եղել են մարդիկ, որոնց համար ստեղծագործական աշխատանքը ծխածածկույթ էր՝ իրենց պառակտիչ գործունեությունը առաջ շարժելու համար: Նրանց համար գոյություն ուներ միայն մեկ նպատակ, այն է՝ քանդել այն ամենը, ինչ ստեղծված էր տարիների ընթացքում, ինչ ներդրվել էր միասնական ջանքով և ջանասիրաբար ծավալել իրենց խառնակիչ գործունեությունը... Նրանց համար կարևորը առաջատար դիրքն էր, որ պիեսի իրենք գրադեցնեին... Այնուամենայնիվ, արվեստն անհաղթ է: Թատրոնի

առողջ ուժերը մեր նվիրյալ և տաղանդավոր դերասաններն էին, որոնց մասնակցությամբ էլ իրագործեցինք «Չար ոգի» ներկայացման բեմադրությունը:

Ինձ համար կարևորը գլխավոր դերակատարների ընտրությունն էր: Սոնա, Գիժ Դանիել: Կար այդ պիեսի հետ կապված մի նախապաշարում, գուցե թե՛ վախի զգացում, որն հաղթահարել կարող է միայն համարձակ դերասանը: Սոնայի դերակատարն էր Արեգա Պետրոսյանը: Գիժ Դանիելը լինելով առանցքային կերպար՝ պահանջվում էր



Գուրգեն Գարրիեյան

դերասանից առանձնահատուկ շնորհ և վարպետություն: Դերակատարը պիտի ունենար նաև երաժշտական լսողություն և երգելու շնորհք: Այդպիսի շնորհքով օժտված էին դերասաններ Մամիկոն Միքայելյանը և Ժորա Մովսիսյանը: Մ.Միքայելյանը այսպես հիմնավորեց իր հրաժարվելը այս դերից. «Գիժ Դանիել խաղացել են իմ ուսուցիչները՝ մեծն Ջովհաննես Աբելյանն ու Ալեքսանդր Ջովհաննիսյանը, յուրօրինակ դերակատար էր և՛ Գուրգեն Ջարությունյանը... Նրանցից հետո ես չեմ համարձակվում... մարմնավորել այդ բարդ ու հակասական կերպարը»: Բենիկ Օվչյանը նույնպես այս դերից հրաժարվեց և ցանկություն հայտնեց ստանձնել Նալբանդ Ոսկանի դերը: Սոնայի մոր՝ Շուշանի դերակատարն էր Մարգո Բալասանյանը: Իմ ուշադրությունը միանգամից սևեռվեց Սամվել Վիրաբյանի վրա, մտածում էի, որ նա կարող է փայլուն

կատարել Գիժ Դանիելի դերը: Նա երիտասարդ էր, ստեղծագործական ավյունով լեցուն և ամենակարևորը՝ որևէ նախապաշարման ազդեցության տակ չէր, համարձակ էր, շնորհալի և հուսադրող: Բայց այս մասին ես նախընտրում էի առայժմ լռել և չխոսել, սպասում էի հարմար պահի, և այդ պահը եկավ: Բենիկ Օվչյանը, կարծես, ընթերցելով իմ մտահոգությունը, հանդես եկավ իրատեսական առաջարկությամբ. «Գիժ Դանիելի դերը հանձնարարիկ Սամվել Վիրաբյանին, մենք էլ՝ կօգնենք, ինչով կարող ենք...» Սկսեցինք աշխատանքը: Զգացողությունս հուշում էր, որ այս ներկայացման բեմադրությունն էլ հաջողությամբ կպսակվի:

Նկարչական ձևավորման հեղինակն էր Գ.Ծատուրյանը, ով հեռանալով ավանդական ձևավորման ընդունված ձևերից, ստեղծեց խորհրդանշական տեսարաններ: Դա ավելի ազդեցիկ էր և արվեստի թարմ զգացողություն էր արթնացնում հանդիսատեսի մեջ: Մարդը ընկնում է, բարձրանում է խաչքարը, - սա ներկայացման ենթատեքստային գաղափարն է: Երկրաշարժից ավերված Շամախին խոսում է աշխարհի հետ դառը ծակատագրերի լեզվով, Աստծո հետ հաղորդակցվում խաչքարի միջոցով:

Անկրկնելի և օրիգինալ էր Սամվել Վիրաբյանի կերտած Գիժ Դանիելի դերը: Դա դերակատարման բոլորովին նոր մեկնություն էր, ազդեցիկ և յուրովի խաղ, որ անջնջելի է և անմոռաց:

Ներկայացումը հանդիսատեսի կողմից ընդունվեց մեծ ոգևորությամբ: Զետո Ստեփանակերտի թատերախումբը այս ներկայացմամբ հանդես եկավ նաև Գորիսում: Մեծ էր գորիսցիների ոգևորությունն ու համակրանքը, որն ընդգծվում էր երկարատև ծափահարություններով և ցնծության ճիչերով: Անչափ հուզվել էր և Գուսան Աշոտը, ով ներկայացումից հետո մոտեցավ և արծվենի հայացքով նայեց ինձ ու ասաց. «Կանչիր դերասաններին, թող բոլորն հավաքվեն... Այսօր ես իմ վաղեմի կարոտն առա Դարաբա-

ղից... Ձեր Գիժ Դանիելն ինձ համար գյուտ էր... Ինչքան էլ ջահել է... Բեմում նա հրաշք է ... Ես ձեզ- բոլորիդ հրավիրում եմ, եկեք մեր ուրախությունը շարունակենք ռեստորանում»: Գուսան Աշոտը գրկեց Սամվել Վիրաբյանին և համբուրեց նրա ճակատը:

Թատրոնում միշտ էլ գործել է դավի պառակտիչ մրջնանոցը: Այս անգամ էլ գործեց անվրեպ: 14 տարի շարունակ ես իմ ստեղծագործական ավյունն ու կարողությունն եմ տվել Ստեփանակերտի պետական թատրոնին, բայց այսօր պարզվեց, որ ես «իրենց կադրը» չեմ:

- Այդ օրերի ճշմարիտ պատկերը ընթերցողը տեսնում է Կ.Ալավերդյանի «Լեոնիդ Յարությունյան» գրքում. «Ստեփանակերտի թատրոնը (և ոչ միայն Սեփանակերտի), ունի մի ցավալի օրինաչափություն. ռեժիսորներն այստեղ պարբերաբար հերթափոխվում են և, որպես կանոն... հեռանում են ոչ իրենց բարի կամքով:

Թատերագետ Ռուբեն Զարյանն իր հուշերում գրում է. «...Բոլոր թատրոններում դերասանները 5-6 տարին մեկ համախմբվում են և գործում գլխավոր բեմադրիչի դեմ՝ հույսեր կապելով նորի հետ: Թեև մի հնգամյակ բավական է, որ նույն մութ ամպերը կուտակվեն նորի գլխին»:

Ինչևէ: 1988-ին շատ «գեղեցիկ» պայմաններ ստեղծվեցին և Լ.Յարությունյանը թողեց թատրոնն ու մեկնեց իր ծննդավայրը՝ Գյումրի»:

**ԵՎ ԳՅՈՒՄՐԻՆ ԴԱՐՁԱՎ ՁԵՐ ԱՐՎԵՍՏԻ
ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ
ԲԵՄԸ ԵՎ ԱՐՑԱՆՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ**

*Կարմիր պոռթկում է հիշողությունը
քարի:*

Ռ. Եսայան

- Ինչպիսի՞ իրավիճակ էր տիրում Ստեփանակերտի Վ. Փափագյանի անվան թատրոնում, երբ դուք պատրաստվում էիք հրաժեշտ տալ այն ամենին, ինչ ստեղծել, արարել, տասնչորս տարի շարունակ փայփայել եք սրտի ջերմությամբ, ստեղծագործական ջանասիրությամբ:

- 1988թ. հոկտեմբերն էր: Այն խաբուսիկ մտայնությունն էր խլրտում դերասանների սրտում, որ իրենց ստեղծագործական տեղաշարժերն ավելի նշանակալի կարող էին լինել, եթե թատրոնն ունենա նոր՝ «իրենց հոգուն հարազատ» ղեկավար: Մի խոսքով դերասանները ուզում են ունենալ՝ «իրենց կադրը»: Տասնչորս տարի շարունակ ստեղծագործել, արարել, ապրել ենք այս օջախում, նույն հարկի տակ... Եվ հանկարծ պարզվեց, որ ես «իրենց կադրը» չեմ, օտար եմ: Ժողովում ես հանդես եկա «Վ. Փափագյանի անվան թատրոնի 88թ. կատարած աշխատանքների մասին» զեկույցով: Դրանից հետո... ես ազատ էի: Երբեմնի հարազատ թատրոնի սրահում, միջանցքում և այլուր ինձ նայեցին արդեն սառը, օտարոտի հայացքով: Դա սահմակեցուցիչ էր: Կար նաև մի զավեշտական պահ: Զեկույցից հետո հայտնվելով միջանցքում, ես նկատեցի ինձ մոտեցող բեմի բանվորին, որն իր ձեռքում պահում էր սրահի պա-

տից նոր պոկած իմ մեծադիր լուսանկարը: «Ա՛ռ,- դառը խեթեց նա,- նետիր աղբանոց: Իսկ մինչ այդ՝ քորոցով հանիր աչքերը...»: Դուրս եկա փողոց՝ այլևս այս թատրոնի շեմին ոտք չդնելու վճռականությամբ:

- Եվ Գյումրին դարձավ ձեր արվեստի հին ու նոր հայրենիքը:

- Նոյեմբերին ես արդեն Գյումրիի տիկնիկային թատրոնի բեմադրող ռեժիսորն էի: Չարագատ քաղաքում ես ուրիշ անուն չունեի, ինձ պարզապես կոչում էին «Ղարաբաղի Լեոնիդ»: Եկել էի այն թատրոնը, որն ինձ ամիսներ առաջ երկու ներկայացման տիկնիկներ էր նվիրել՝ Ղարաբաղում տիկնիկային թատրոն հիմնելու համար: Չորձանուտից այս կողմ եմ հիմա: Մի նոր կյանք է սկզբնավորվում կարծես իմ մեջ և շուրջս՝ հարագատ Գյումրիում: Պատրաստվում էի բեմադրել Լեոնիդ Տրուշկինի «Խաղալիքների փախուստը» տիկնիկային ներկայացումը: Դա Նոր տարվա մեր նվերը պիտի լիներ Գյումրիի հանդիսատեսին: Իսկ մինչև Նոր տարին դեռ պետք է ապրել: Մի քանի ամիս առաջ, երբ Գյումրիի տիկնիկային թատրոնի դերասանների հետ օդանավով վայրէջք էինք կատարում Ստեփանակերտի օդանավակայանում, մեզ հետ բերելով երկու ներկայացման տիկնիկներ, որպես նվեր, իսկ դասախոս Վոլոդյա Չարությունյանի պարզած եռագույն դրոշմ ծածանվում էր մեզ ոգևորությամբ դիմավորող ստեփանակերտցիների հայացքում, մտքովս անգամ չէր անցնում, որ ամիսներ հետո հրաժեշտ պիտի տայի Վ. Փափազյանի անվան թատրոնին:

Իր խորհուրդներով ինձ նորից սկսեց աջակցել հին բարեկամս՝ ակադեմիկոս Լևոն Չախվերդյանը: Արցախյան շարժման ալիքից փոթորկվել էր և Գյումրին: Ամենուր զարթոնք էր, եռուզեռ, քաղաքային յուրաքանչյուր օր անկրկնելի էր, հարստացված ոգու նոր շնչով ու երանգով: Իսկ թատրոնի նկարիչը՝ Միքայել Վարդանյա-

նը սկսել էր մարզել ազատամարտիկներին, հայթայթելով զենք ու զինամթերք: Այդ ընթացքում թատրոնն անում էր իր գործը: Քննարկման նյութ էր դարձել տիկնիկային թատրոնի նոր շենք ունենալու հարցը: Մի օր, երբ Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Խորեն Աբրահամյանն ինձ տեսավ Գյումրիի դերասանների հետ դահլիճում նստած, շատ զարմացավ. «Ի՞նչ է, եկել ես զինվորներ տանելու Ղարաբաղ», - կատակով ասաց վարպետը և երբ իմացավ, որ տեղափոխվել եմ Գյումրի, զննող հայացքով նայեց աչքերիս մեջ ու լռեց: Հավանաբար մտածում էր, որ Ղարաբաղի լարված ու պայթյունավտանգ դրությունից մղված՝ գլուխս ազատել և հանգրվանել եմ ծննդավայրում: Մեղա՛, տեր Աստված, գուցե սխալվու՞մ եմ...

Պիտի մեկնենք Կապան՝ մասնակցելու ՍՍՀՄ տիկնիկային թատրոնների փառատոնին: Տեղավորվեցինք ավտոբուսում և պատրաստվում էինք ճանապարհվել, երբ նկատեցի, որ տղաներից ոմանք զենքով էին: Հավանաբար՝ վտանգավոր ճանապարհով պիտի անցնենք: Թատրոնի տնօրենը՝ բանաստեղծ, դրամատուրգ Աղասի Եգանյանը թեթևակի զննում էր իր ելույթի տեքստը, որ պիտի կարդար Կապանի հրապարակում: Հասանք Արարատ: Ահա շուտով ավտոբուսը պիտի թեքվի դեպի ձախ և ընթանա դեպի Գորիս-Կապան տանող ճանապարհով: Բայց կատարվեց անսպասելին: Անփորձ վարորդը ավտոբուսը քշեց ուղիղ և արագ մտավ Նախիջևանի տարածքը: Զգացինք, որ անձանոթ վայրերի միջով ենք ընթանում: Ավտոբուսը երկու կիլոմետր ճանապարհ էր կծկել անիվներով, երբ նկատեցինք մեր ետևից սլացող ավտոմեքենան: Իսկ հեռվում ուրվագծվեցին ինչ-որ արգելափակոց և զինվորների խումբ: «Էս մեզ ու՞ր եք բերել, անխիղճներ», - լսվեց կանանց անզուսպ հանդիմանանքը: Մեր ետևից սլացող ավտոմեքենայի վարորդը ազդանշան արեց, որ մենք անհապաղ կանգնեց-

նենք ավտոբուսը: Մեր երկրապահ-ազատամարտիկներից մեկը, ըստ երևույթին՝ խմբի ավագը, արագ դուրս գալով ավտոմեքենայից, մոտեցավ մեզ և հարցրեց. «Ովքե՞ր եք և ու՞ր եք գնում»: Յետո ուղեգրից իմանալով, որ գնում ենք Կապան՝ ներկայացում ցուցադրելու, կատակեց. «Կապանի համար նախատեսված ներկայացումն ուզում եք Նախիջևանի թուրքերի համար խաղալ...»: Յետո նա նստեց ավտոմեքենան և ուղեկցեց մեզ: Երեկոյանում էր: Չհասած Կապան՝ մեր ավտոբուսը կանգնեցրին երկու միլիցիոներ և պատրաստակամորեն մեզ ուղեկցեցին՝ անվտանգ անցնելու անտառամիջյան հատվածը, որտեղ վերջերս հաճախակի են դարանակալում ազերիները: Կապանի թատրոնի շենքի մոտ մեզ դիմավորեցին և տեղավորեցին հյուրանոցում: Պարզ լսվում էր հրապարակում եռացող միտինգավորների՝ ինձ այնքան ծանոթ ու հարազատ վանկարկումները. «Ղա-րա-բաղ», «Մի-ա-ցում»:

Հաջորդ օրը մենք ներկայացրինք դրամատուրգ Վարդգես Մովսիսյանի «Մկների ժողովը» տիկնիկային ստեղծագործությունը, որը ստեղծագործաբար իրականացված էր՝ ըստ Աթաբեկ Խնկոյանի համանուն առակի: Պատկերված է փլուզման ենթակա Խորհրդային Միության քարտեզը, որի տարբեր մասերից, այսինքն՝ բներից, ձառում, առաջարկություններ են անում մկները՝ երկրամասերի առաջնորդները: Ներկայացման քաղաքական երանգներն ու սուր հարցադրումները ժամանակահունչ էին, ակտուալ, որն էլ, չգիտես՝ ինչու, զայրացրեց ռուսաստանցի թատերագետին, ով հանդես գալով քննադատական ելույթով, փորձեց ժխտել և չընդունել ներկայացման նմանօրինակ նորարարական արտահայտություններն ու դրսևորումները: Պատասխան ելույթով հանդես եկավ Գյումրիի տիկնիկային թատրոնի գլխավոր ռեժիսոր Արա Տեր-Գաբրիելյանը, նշելով, որ արվեստում կարևորը բովանդակային հարստությունն է և արտահայտչաձևերի թարմությունը:

Ներկայացման առիթով առաջացած այս վեճն ու քննարկումը շոյում էին մեր՝ գյուրեցիներիս ինքնասիրությունն ու հպարտությունը: Արվեստը պատասխանում էր կյանքի առաջադրած հարցերին: Եվ դա մի կողմից՝ դժգոհություն էր առաջ բերում պահպանողականների մոտ, մյուս կողմից՝ ոգևորում և թևավորում էր մեզ՝ ազատության և անկախության նվիրյալներին: Փլուզվում էր հասարակարգը: Կանգնած էինք աշխարհային նոր մարտահրավերների դիմաց: Ի՞նչ էր սպասվում մեր հանձարեղ և բազմաչարչար ազգին. եղեռն, պատերաճ, թե... վերածնունդ: Չգիտեինք: Անհոգի ժամանակի վայրիվերումների դիմաց կանգնած էինք մենակ: Մեր փրկությունը պիտի գա միայն Արցախով: Այդպես էինք կարծում և վճռականորեն պայքարում էինք՝ հասնելու համար մեր երազանքին:

- «Արդար պահանջ, ո՛չ մի նահանջ», - այս հանգավոր և թևավոր խոսքը մանկագիր Գուրգեն Գաբրիելյանն էր գրել և թռուցիկի պես հանձնել ժողովրդին, որն իր փոթորկված ալիքների շուրթերով ընդունում կրակե խոսքն այդ և տարածում էր գյուղից-գյուղ, քաղաքից-քաղաք: Խոսքը միավորում էր աշխարհի հայությանը՝ դարձնելով մի բռունցք, մի կամք, մի ամբողջություն:

- Մեր փոթորկված հոգիները բախվում էին Կրեմլյան դեմագոգիայի դեռևս կարծր վահանին և հակադարձվում դեպի մեր հայրենիքի լեռները, որոնք ըմբոստության ջահեր են պարզել Խորհրդային պահպանողական խավարի կեղծաբարո քաղաքականության դեմ: Ո՞րն էր ելքը: Չգիտեինք: Գիտեինք միայն, որ թատերական նորարարության հզոր բռունցքը անշեղորեն հարվածում էր ինքնակալության սասանվող հիմքերին: «Մկների ժողովը» պիեսի բեմադրությունն իր ձևավորմամբ և ռեժիսորական մեկնաբանությամբ հզոր զենք ու կռվան էր այդ ժամանակ մեր ձեռքերում: Ու-

րախ էինք, որ մոսկովյան քննադատը իր հետ տանելու է բարձրագույն իշխանության հանդեպ մեր ունեցած մերկացնող և գրոտեսկային հայացքները, մեր ներկայացման սարսռեցնող տպավորությունը: Նշեմ, որ Երվանդ Ղազանջյանը՝ Պատանի հանդիսատեսի թատրոնի գլխավոր ռեժիսորը, ոգևորված և հիացած էր Վ. Մովսիսյանի պիեսով: Նա մեզնից խնդրեց փոխանցել իր վաղեմի ընկերոջը, որ նա պիեսի մի օրինակը տրամադրի իրեն՝ Պատանի հանդիսատեսի թատրոնում բեմադրելու համար:

Ի պատիվ Ե. Ղազանջյանի՝ պիտի ասեմ, որ նա հրաշալիորեն բեմադրեց պիեսը Պատանի հանդիսատեսի թատրոնում՝ կենդանի դերասանների մասնակցությամբ, բայց, ցավոք սրտի, Վարդգես Մովսիսյանը՝ պիեսի հեղինակը, բացակայում էր. նա Սպիտակի ահավոր երկրաշարժի տասնյակ հազարավոր զոհերից մեկն էր: Երվանդ Ղազանջյանը «Մկների ժողովը» ներկայացումը նվիրեց իր տաղանդավոր ընկերոջ հիշատակին:

Վերադարձանք Գյումրի: Արցախյան շարժումը նոր թափ էր առնում՝ իր հորձանքի մեջ ներքաշելով համայն աշխարհի հայությանը: Օրեր անց՝ լսեցինք մի տհաճ լուր. տիկնիկային թատրոնի գլխավոր ռեժիսոր Արա Տեր-Գաբրիելյանն իր նորակազմ ընտանիքով տեղափոխվել է Մոսկվա: Նա մինչ այդ բեմադրության էր պատրաստում Վ. Օռլովի «Ոսկե ճուտիկը» ներկայացումը, որի տիկնիկները վաղուց պատրաստ էին, դերասանների հետ տարվել էր որոշակի աշխատանք, փորձերը արդյունավետ էին ընթացել... Մնում էր անել ամենակարևորը, այն է՝ ավարտել և հանդիսատեսին հանձնել ներկայացումը: Փորձության առաջ էինք կանգնած: Չաղթահարել էր պետք ոչ միայն դժվարություններ, այլև հոգեբանական նոր խութեր ու անցուղիներ, ի մի բերելով ստեղծագործական ուժերը՝ հասնել շոշափելի և բավարարող արդյունքի: Այս էր գերխնդիրը: Ես պատրաստվում էի բեմադրել Նոր տարվա համար

նախատեսված ներկայացումը՝ Լ. Տրուշկինի «Խաղալիքների փախուստը»: Գրեթե անելանելի վիճակ ստեղծվեց: Ինձ նույնիսկ առաջարկեցին զբաղեցնել գլխավոր ռեժիսորի պաշտոնը, որից ես կտրուկ հրաժարվեցի: Թատրոնի փորձառու և գործունյա տնօրեն Ադասի Եգանյանը վաստակաշատ դերասանների հետ (Վուլոդյա Ասատրյան, Մելինե Սիմոնյան, Սեդա Չարությունյան, Մարիամ Մայյան) խորհրդակցելուց հետո, որոշեց ամեն գնով ավարտել Վլ. Օռլովի «Ոսկե ձուտիկը» ներկայացման աշխատանքները և ժամանակին հանձնել հանդիսատեսի դատին: Պարզ էր, որ ես պիտի ավարտեի կիսատ թողնված ստեղծագործական աշխատանքը, որն ինչպես ամեն մի ռեժիսորի, ինձ համար ևս տանջալից և հոգնեցնող «պարտականություն էր»: Ինչու: Որովհետև ուրիշի ստեղծագործական աշխատանք պիտի շարունակեի: Իսկ դա այնքան էլ հեշտ գործ չէր: Ես սովոր եմ առաջնորդվել իմ ստեղծագործական եռքով և ճանապարհի լույսով: Ես ձգտում էի սեփական քրտինքով նվաճել աշխատակիցների և համակրանքը, և վստահությունը: Իսկ գլխավոր ռեժիսորի աթոռը... ինձ ցավ պատճառող մի հանգամանք էր, հատկապես այն առումով, որ դեռևս չէին սպիացել Ստեփանակերտի թատրոնից ստացած իմ վերքերը: Այսքան արագ ու հախուռն գործողությունների կծիկն ինձ վախեցնում էր. ես ինձ ուզում էի տեսնել անկախ ռեժիսոր-բեմադրողի վիճակում: Առաջնայինը՝ ներքին և արտաքին դժվարություններն ու հակասությունները հաղթահարելն է: Ուրիշի (թեկուզ և քո գործընկերոջ) կիսատ թողած բեմադրությունը ավարտին հասցնելը խիզախություն է,- այսպես էի ես մտածում և ինձ համոզում՝ միանգամից և առանց երկմտելու սկսել գործը: Շարունակելով կիսատ մնացած գործը՝ դերասաններին ընդգրկեցի ստեղծագործական նոր աուրայի մեջ, բացահայտեցի նրանց առանձնահատկությունները, ընդունակություններն ու շնորհքը: Սկսեցի «Ոսկե ձուտիկը» ներկա-

յացման բեմադրության աշխատանքները: Դերակատարները, որոնք ինն ամիս շարունակ սովորել, հմտացել էին, շարունակեցին փորձերը՝ կատարյալ խաղի ոգուն հասնելու նպատակով: Նկատեցի, որ որոշակի փոփոխությունների կարիքն ունի նաև ներկայացման նկարչական ձևավորումը: Նկարիչ Միքայել Վարդանյանն իմ առաջարկությամբ փոքրացրեց ճուտիկի տիկնիկի չափը, քանի որ այն բավականին մեծ էր գայլի և աղվեսի տիկնիկներից: Ըստ իմ մտահղացման՝ ճուտիկը պիտի դուրս գար այն ձվից, որը գայլը գողանում է տատիկից և պապիկից, բերում իր բույնը և թուխս նստում: Ճուտիկը դուրս գալով ձվից, նայում է շուրջը, փորձում ճանաչել աշխարհը, իսկ գայլը նպատակ ունի նրան մեծացնել, որպեսզի նա իր համար ոսկե ձվեր ածի: Գայլի խորհրդատուն այս գործում խորամանկ աղվեսն էր: Վերջինս նպատակ ուներ ուտել ճուտիկին: Երբ ճուտիկը դուրս է գալիս ձվից, գայլը ծնողի պես հոգատարությամբ խնամում է նրան: Աղվեսը գողանում է ճուտիկին, պահում վանդակում: Աղվեսը կերակրում է ճուտիկին՝ նպատակ ունենալով նրան չաղացնել, այնուհետև՝ ուտել: Գայլը գտնում և ազատում է ճուտիկին աղվեսի ճանկից: Նրանք երկուսով գալիս են տատիկի և պապիկի բնակարանը: Հարազատ այս տան բակում գայլն այնուհետև կատարում է հսկիչ-պահապանի պարտականությունը: Իսկ ճուտիկը ոսկե ձվեր է ածում տատիկի և պապիկի համար:

Երեխաների սրտերում բարության զգացում սերմանող մի ստեղծագործություն է «Ճուտիկը» ներկայացումը: Փորձերին իր ակտիվ մասնակցությունն ունեցավ նաև դերասան Ռոբերտ Պապյանը, որն իր աշխատասիրությամբ վարակեց և ոգևորեց դերասանական խմբին: Աշխատանքը եռում էր: Նոր գույներ և նրբերանգներ ի հայտ եկան ստեղծագործական ոգու ելևէջներում: Տրամադրությունների բացասական շերտերը, որ մինչ այս հանգիստ լողում

էին աշխատանքային օրվա լաստերին, միանգամից կարծես անէ-
ացել և ցնդել էին միասնության ոգու երկնքում: Ստեղծագործա-
կան աժող եռանդը նոր հնարավորություններ էր բացում արվես-
տագետների նվիրվածության անդաստանում: Աշխատանքը
մուտք էր գործում արարման, նվիրվածության բոլորովին նոր տա-
րածքներ:

Պահը զորեղ էր ճակատագրի պես: Ծնվում էր արվեստի գործը
և ճանապարհի հարթում դեպի հանդիսատեսի հոգու խորքը: Վեր-
ջապես եկավ «Ճուտիկը» ներկայացման անդրանիկ խաղարկու-
թյան կարևորագույն պահը: Ստեղծագործական խումբը ոգևորու-
թյուն և հրճվանք էր ապրում: Դերասանուհի Մելինե Սիմոնյանը ու-
րախությունից արտասվում էր, գրկելով ինձ՝ իր խորին շնորհակա-
լությունն էր հայտնում: Սա այն բախտն էր, որ երջանիկ երթ էր
կոչվում, գուցե նաև՝ ոգու հաղթանակ: Հիշեցի իմ բարեկամ և ու-
սուցիչ Լևոն Հախվերդյանի խոսքը. «Գյումրին մեր ազգի խտաց-
ված արվեստների և արհեստների ողնաշարն է, շտեմարանը»:
Ոգու նոր առավոտն էր բացում իր թևերը ցավի ու տագնապի
մշուշների վրա:

ԴԻՎԱՅԻՆ ՈԳՈՒ ՀՈՂՄԱՊՏՈՒՅՏՈՒՄ

- Լեոնիդ Ավետիքի, ձեր հուշատետրից ես տեղեկացա, որ երկրաշարժից առաջ նշմարվել էին ապագա մեծ ողբերգության նախանշանները: Իմ կարծիքով՝ պատերազմից ահավորն ավերիչ երկրաշարժն է: Թերթելով նշումների էջերը, զարմացա՝ հանդիպելով այսպիսի տողերի. «Դերասան Գառնիկ Պետրոսյանը զարմացած պատմում է մի տարօրինակ երևույթի մասին: Ասում է՝ վախենում եմ առավոտյան մոտենալ ավտոմեքենայիս, որովհետև նրա տակ հոծ խմբով առնետներ են հավաքվում, և ես ստիպված քշում եմ այդ կրծողներին ու նոր միայն համարձակվում նստել ավտոմեքենան»: Ի՞նչն էր, արդյոք, նրանց հավաքել նույն ծածկի տակ՝ տագնապը, գու՛յժը, թե՛... փրկվելու կենդանական բնազդը: Ուշադրությունս գրավում է նաև այս փաստը. «Դերասան Ռոբերտ Պապյանը պատմեց, որ վանաձորցի երկու քույրեր, որոնք հոգեկան խնդիրներ ունեին, գուշակելով ապագայում սպասվող երկրաշարժը, դրսում վրան են խփել և ապրում են այնտեղ»: Եվ զարմանալին այն է, որ նրանք նշել էին նաև աղետի ճիշտ ժամկետը՝ դեկտեմբերի առաջին կեսը...

- Մենք ոչ միայն չհավատացինք նրանց, այլև՝ ծաղրեցինք, ասելով. «Պարապ գժերն ի՞նչ ասես հնարում են: Բուլղարիայում մի՛ Վանգա կա, Հայաստանում՝ երկու՛»:

- Ուշագրավ է և՛ երրորդ փաստը. «Արշալույսն ինձ պատմեց, որ որդու ակվարիումի ձկները ժամանակ առ ժամանակ իրենց դուրս են նետում ջրից»: Սա ահավոր իրողություն է...

- Այդ տարօրինակ երևույթներն, իհարկե, որոշակի չափով ազ-

դում էին մարդկանց վրա, ինչքան սահմուկեցուցիչ էին, այնքան մենք քամահրանքով էինք նայում այդ իրողություններին, այնքան մեր կատակներն ու հումորը անզուսպ էին ու թունդ:

1988թ. դեկտեմբերի 7-ի աշխատանքային սկիզբը հայտարարեցի 9.30 թոպեն: Ոմանք դժգոհեցին, ոմանք կարծիք հայտնեցին, որ իրենք այդ ժամին սովոր չեն արթնանալ, իսկ աշխատելն, ընդհանրապես, անհնարին է... Ես իմ որոշման մեջ հաստատակամ էի և հորդորեցի աշխատակիցներին. «Յանկարծ չփորձեք աշխատանքից ուշանալ... Ով բացակայեց, նա ծույլ է ու անբան, իսկ անբան աշխատողներից միշտ ազատվում են առանց խղճի խայթի: Այնպես որ ուշադիր եղեք՝ թեկուզ ինքներդ ձեր հանդեպ»:

- Ամուսիններ Անդրանիկն ու Թամարան և նրանց որդին՝ Ջոնը երկրաշարժի զոհը չդարձան միայն մի պատճառով, այն է՝ ձեր պահանջով 9.30-ին նրանք գտնվում էին թատրոնի շենքում: Աշխատանքի էին եկել: Իսկ նրանց բնակարանը հիմնահատակ փլուզվեց և, փանք Աստծո, որ այդ ժամին ընտանիքի անդամները ներկայացման փորձով էին զբաղված: Իսկ դուստրը մենակ մնալով, նպատակահարմար էր գտել դուրս գալ տնից՝ զբոսնելու: Դուք նրանց կյանքը փրկել եք: Ձեզ առաջնորդում էին թատերարվեստի նկատմամբ ունեցած սերն ու նվիրվածությունը:

- Ես նույնպես երկրաշարժից փրկվեցի պատահաբար: Երբ թատրոնի երկհարկանի շենքը սկսեց օրորվել, աշխատակիցներից մեկը գոռաց. «Ժանչկ է»: Ես բազկաթոռից արագ վեր թռա և նետվեցի դուրս: Յետ նայեցի և ինչ տեսա: Միջնապատը փլվեց ու դիղ իմ բազկաթոռի վրա՝ փլատակի տակ թողնելով «Խաղալիքների փախուստը» պիեսի տեքստը: Ի դեպ՝ լսել եմ, որ Ստեփանակերտի թատրոնի դերասանները այդ օրերին մտահոգված էին.

«Եթե Լեոնիդ Չարությունյանը երկրաշարժից զոհվի, մեղքը մերն է...»:

- Դեկտեմբերի 6-ի իրիկունը հետք անգամ չէր կրում ո՛չ տազնապի և ո՛չ էլ ցավի: Ամբողջ գիշերը քեֆ ու խրախճանքի մեջ էիք:

- Ներքին լարվածությունը թուլացնելու համար՝ Լևոն Բաղդասարյանը առաջարկեց գնալ ռեստորան և ծաշել: Մեր այս համատեղ միջոցառումը, որ կարելի է կոչել տոնախմբություն կամ խրախճանք, ձգվեց մինչև ուշ գիշեր, տեղաշարժվելով փողոցից փողոց, թաղամասից թաղամաս: Այդպես հասանք այն շենքի ծաշարանին, որտեղ ապրում են մեր դերասանները՝ Անդրանիկն ու Թամարան, որոնք իրենց դժգոհությունն էին հայտնել ինձ, ասելով, որ առավոտյան այդքան շուտ (9.30 ժամին) չեն գա աշխատանքի: Մայիս Դարբինյանն առաջարկեց ծաշին հրավիրել նաև Անդրանիկին: Այդպես էլ արեցինք: Դա որոշակի չափով կջերմացնի մեր հարաբերությունները: Անդրանիկն եկավ, ձեռքին՝ մի շիշ օղի, նստեց՝ միանալով մեր կերուխումի մշուշապատ առանցքին: Ժամերը գլորվում էին խրախճանքի հարթակով, որը տեղ-տեղ ընդմիջվում էր վեժ ու կռվի խորդուբորդություններով: Չասանք «Կարմիր խաչի» խանութին կից ծաշարանին: Մայիսն ու Անդրանիկը՝ մեր մեջ «3-րդ հարկ» ունեցող բարձրահասակ այրերը, միայն իրենց հասու «բարձրության ոլորտում» արած կատակները վերածեցին կոշտ վեժի: Սկսված աղմուկից և քաշքշոցի տարօրինակ բնույթից մղված՝ հարևան բնակարանի դուռը բացվեց, և մեր դիմաց հայտնվեց դրամատուրգ Վարդգես Մովսիսյանը (Լարիկը): Նա ժպտացող կապույտ աչքերով նայեց մեզ և ասաց. «Տղերք ջան, էս ինչ լավ եք արել, որ ինձ հյուր եք եկել: Մի՛ վիճեք, բարձրացեք երկրորդ հարկ, տան տեղը մոռացե՛լ եք...»: Յյուրընկալ տան-

տերը մեզ համար սեղան բացեց՝ հոգու ջերմությամբ ու սիրով պարուրելով գիշերային անդորրաբեկ ժամը: «Ախր, գիտեմ, որ գալու՛ եք, քունս չի տանում: Էս անձրևն էլ արդեն երկու օր է չի կտրվում, գոնե ձյուն գար... դեկտեմբեր է, չէ... Ոնց որ երկինքը լա՛... Ու՛մ վրա է լացում... մեզ վրա, թե... մեր անհայտ բախտի... Չգիտեմ»: Մենք միանգամից լռեցինք՝ մտածելով. «Յաճելի կլինի, եթե ձյուն գար... Գոնե իր սպիտակ սավանով կծածկեր մեր հոգսերը...»: Արդեն լուսանում էր: Պայմանավորվեցինք հանդիպել վաղը և շարունակել մեր խնջույքը փորձից հետո... Միայն մի բան էի մտածում. «գոնե կարողանայի աչք փակել... մի ժամով, թե կես... միևնույն է... Միայն թե՛ կարողանայի...»: Գնացի եղբորս՝ Վահրամի տուն: Ընտանիքս այնտեղ էր: Երբ նոր էի տեղափոխվել Գյումրի, ապրում էինք մերթ մորս մոտ՝ նրա բնակարանում, մերթ էլ իմ աներոջ տանը՝ եղբորս տան հարևանությամբ գտնվող շենքում: Բայց մի օր եղբայրս՝ Վահրամը ընդվզեց՝ ասելով. «Դու եղբորդ տանը ապրիր, ոչ թե աներանց մոտ...»: Դուռը բացեց եղբայրս և տեսնելով ինձ՝ ուրախացավ: Սեղան բացեց՝ ասելով. «Զե՛ք ենք անելու...»: Ես քնելու հույսս լիովին կորցրի: Եղբայրս հայտնեց ինձ, որ զոքանչս եկել, երեխաներիս «զոռով» իր տունն է տարել... Նայեց ինձ ուշադիր և կարոտով ասաց. «Արդեն լուսանում է, մնա տանը, միասին մի հետաքրքիր օր կանցկացնենք...»: «Չեմ կարող,- ասացի,- այսօր կարևոր փորձ ունեմ»: Ուղիղ ժամը 9.30 րոպեին մտա փորձասենյակ: Բոլոր դերասանները եկել, ինձ էին սպասում: Չնայած բոլորի հայացքում էլ մնացել էին երեկվա բոհեմական կյանքի հետքերը, ամեն մեկը ձգտում էր թարմ ու աշխատունակ երևալ, ցուցադրելով ստեղծագործական եռանդի իր հնարավորությունները: Անմիջապես դերասաններին ընդգրկեցի աշխատանքային ակտիվ ծիրի մեջ, հրաժարվելով կարևոր նպատակից ուշադրությունը շե-

դող քայլերից, աստիճանաբար մղեցի ստեղծագործական խմբին դեպի արդյունավետության կարևոր ու օգտակար ռիթմերը: Հունի մեջ էր մտնում աշխատանքային եռանդուն օրը: «Տեսնու՞մ եք,- կատակեցի ես,- պարզվում է գիշերային բուռն ու անքուն խնջույքները բնավ էլ չեն խանգարում ստեղծագործական աշխատանքին»:

Հայտարարեցի 15 րոպե ընդմիջում: Հենց այդ պահին էլ սկսվեց դարավերջի ահավոր երկրաշարժը: Գոռոցը, որոտն ու ծիչը խառնվում էին այդ դիվային ոգու հողմապտույտում: «Ժա՛շկ է, փախե՛ք», - գոռաց Վոլոդյան՝ իրեն նետելով դեպի դուրս: Ես վեր թռա բազկաթռռից և մղվեցի դեպի փորձասենյակի նեղ դուռը, որն իր մարմնով փակել էր Գառնիկը. ոչ առաջ էր գնում, ոչ էլ՝ ետ: Սկսեցինք հրել նրան դեպի դուրս. ասես մսեղեն խցան էինք հանում դևի կոկորդից: Լուսամուտից տեսա ճոճվող աստիճանները և սարսափեցի: Կրծքիս խաչը սեղմեցի շուրթերիս. «Տեր, փրկի՛ր զավակներիս, փրկի՛ր եղբորս՝ Վահրամի՛ն, փրկի՛ր...»: Նայում էի ահռելի ուժով իրար զարնվող շենքերին և աղոթում... Ցնցումը հանդարտվեց: Դուրս եկա փողոց: Վոլոդյան գրկեց ինձ, ուրախացավ՝ տեսնելով ինձ. «Կարծեցի, թե մնացել ես փլատակներում...»: Դիմացի բաղնիքից դուրս եկել, վազում էին փողոցով մերկ կանայք, երեխաներ՝ ձեռքերում ամուր բռնած՝ հագուստները, փորձում էին հագնել այս աղետին անհարիր մի հանդարտությամբ: Ահավոր էր: Ծանր: Փողոցն ի վեր բարձրացա, աջ կողմում, բարձրահարկ շենքի փլատակների տակ տեսա ավտոմեքենաներ: Թեքվեցի դեպի ձախ. Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանն էր փլված: Կիսափլված էր թիվ 16 դպրոցի շենքը, փլատակների դիմաց արնահոսող գլուխը ձեռքերով բռնած՝ ուսուցչուհու կողքին կանգնել էր մի պատանի. դիվային ոգու ինչպիսի՛ կտավ: Ողբ ու կական էր հո-

սում փողոցներով: «Մի խելագարվեք, մարդիկ», - խնդրում էի ես՝ առաջանալով դեպի եղբորս՝ Վահրամի բնակարանը: Հասա այն շենքին, որտեղ աներոջս և իմ ընտանիքն էր ապրում: Շենքը զարմանալիորեն կանգուն էր մնացել: Շենքի դիմաց խմբվել էին մարդկային ճակատագրեր, մոլորյալ հույսեր, ցավի պատառիկներ: Տեսա զավակներիս և որոշ չափով հանգստացա: «Գնամ, Վահրամ հոպարին փնտրեմ», - ասացի զավակներիս և նկատեցի, որ զրքանչս ինձնից թաքցնում էր արցունքոտ հայացքը... Նայեցի եղբորս՝ Վահրամի բնակարանի ուղղությամբ: Շենքի փոխարեն տեսա... տառապանքի, ցավի ու տանջանքի մի կույտ:

Արհավիրքը և օգնության բացակայությունը առաջին ժամերին մեզ վերածել էին ավերակներն անվերջ փորփրող «անզգա մեքենաների»: Հետո երևացին օգնության եկած առաջին խմբերը, որոնց համար անհրաժեշտ էր ստեղծել աշխատելու պայմաններ:

Առաջին ծանոթը, որին հանդիպեցի այս աղջամուղջում, Ղարաբաղից Գրիգոր Աֆանեսյանն էր, որ գրկեց ինձ ջերմորեն, հարազատի պես: Չկարողացա խոսել: Խոսքն ասես խեղդում էր ինձ երկաթե ձեռքերով: Լռությունն իմ սենյակն էր դարձել, որտեղ և ես ապրում էի: Հրապարակում ծովացել էր մարդկային ամբոխը, տարուբերվում էր մերթ աջ և մերթ ձախ, որոնում գոյատևման մի ելք: Ամեն մեկն անում էր այն, ինչ կարող էր: Հանդիպեցի մորաքրոջս որդուն՝ Հովհաննեսին, ով իր ընկերների հետ հաց էր բաժանում մարդկանց: Սա երևի Աստծո պարզն էր: Հինգ հատ հաց գրկած՝ դուրս եկա մարդկային փոթորկված հեղեղատից և քայլեցի դեպի տուն: Մարդկանց մոտով անցնում էի ստվերի պես, հարցուփորձ անում... Իմ դիմաց կարծես ոչ թե մարդիկ էին, այլ՝ ուրվականներ: Ես մեկուսանում աստիճանաբար, դառնում էի ինքս իմ վկան: Հարազատներս բահերով քանդում էին ավերակները, փնտրում...

հետքերը շնչող կամ դիակացած որևէ մեկին: Եվ եթե մեկը հարազատի դիակ էր հանում փլատակի միջից, համարում էր դա «հաջողություն»: Հանդիպեցի Երևանից եկած ուսանողների, որոնց խոսքը, ծիծաղն ու կատակը խոցում էին ինձ բազում ասեղներով. ասես արշավ էին եկել... «Տարօրինակ, տարօրինակ մարդ արարած»: Ուսանողներն ինձնից հաց խնդրեցին, տվեցի: Մնացած երեք հացը դրեցի բաձկոնիս տակ, որպեսզի հասցնեմ զավակներիս: Օգնության էին եկել ուկրաինացիները՝ տեխնիկապես զինված: Գրանցվեցին շտաբում: Հետո հանդիպեցի ֆրանսիացիներին՝ իրենց վարժեցրած շներով: Հինգ օր անց՝ գտանք եղբորս՝ Վահրամի և իր երկու որդիների՝ Դավթի ու Հրայրի դիակները: Տասնչորսն իմ հարազատներից դարձան երկրաշարժի զոհ: Հետագայում պարզվեց, որ իմ բարեկամներից մեկը շփոթել և իր մոր դիակի փոխարեն գերեզմանոցում հուղարկավորել էր անծանոթ մի կնոջ: Եվ երբ գտնվեց իր մոր դին, նրան էլ հուղարկավորեցինք, անհայտ կնոջն էլ համարեցինք մեր հարազատը: Տարօրինակ, տարօրինակ շատ բան կար այս ամենում: Այդ ժամանակ նույնիսկ անծանոթ մարդուն ոչ ոք չէր հարցնում, թե ինչ գործ ունի իր տանը. ընդունում էին հարազատի պես, իսկ ուշանալիս կամ բացակայելիս՝ անհանգստանում ու փնտրում...

Երկրաշարժի զոհ դարձավ նաև թատրոնի ադմինիստրատոր, արցախյան շարժման նվիրյալ Գագիկ Խաչատրյանը: Դրամատիկական թատրոնից զոհվել էին վաստակավոր արտիստուհի Լիզա Ալիխանյանը, երիտասարդ դերասանուհի, իմ մանկության ընկերուհի Ռիտա Շառոյանը: Ձոհվեցին դրամատուրգ Վարդգես Մովսիսյանը, բանաստեղծ Արարատ Մկրտումյանը, բանաստեղծուհի Տանյա Հովհաննիսյանը:

Ինչու՞ չհավատացինք Աղետի նախանշաններին, այն բնագրա-

յին ազդակներին, որ մեզ էին հաղորդում կատուները, առնետները, ձկները: Հայաստանի ողջ տարածքում պարետային ժամ էր սահմանված, իսկ Գյումրիում՝ ո՛չ: Ձերբակալեցին և Մոսկվա տեղափոխեցին «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարներին, գլխատելով Արցախյան շարժումը: Դա էլ ազդանշան էր: Խորհրդային զորքը Գյումրիից տեղափոխվեց մի այլ հանգրվան: Խորհրդային սպաների ուղեկցությամբ տարհանվեց թուրքաբնակ գյուղերի բնակչությունը: Դա էլ ազդանշան էր: Օդում կախվեցին բազում հարցեր, որոնց սպիտակ ու սև ստեղների վրա անձրևի կաթիլները նվազեցին տառապանքի ու ցավի բյուր սիմֆոնիաներ:

- Ուզում եմ խոսքդ շարունակել երկրաշարժի մասին գրած իմ բանաստեղծության տողերով:

Կարմիր պոռթկում է հիշողությունը

քարի: Մահը պատկեր է կորզում

ապագայից:

Մի դուռ

է փլվում թռչնի կտցից ընկած

երկնքի վրա:

Նահատակ է

լռությունը:

Սպիտակը ծածկվում է հիշողությամբ

ձյան:

ԱՂԵՏՅԱԼ ՀՈՒՅՍԵՐ ԵՎ ՀԱՌՆՈՂ ԵՐԱՁՆԵՐ

*Ճանապարհները արյունոտ
փողերն են ճակատագրի,
որոնցից հարություն են առնում թռչունները...
Ռ. Եսայան*

- Երկրաշարժից հետո, իհարկե, դժվար էր նայել բեմին և տեսնել մարմնավորվող տեսիլներ: Տեսիլներն այլևս արյունոտ էին և բուրում էին տխուր առավոտներով: Այնուամենայնիվ, բեմը ձգողական մեծ ուժ ունի, և վարագույրներ բացող ձեռքը՝ ժամանակն է, որը հետզհետե միավորում է սովորականն ու անսովորը, ցավի լույսն ու երազի շնչառությունը, վախի սրտատրոփն ու նախաձեռնությունների նոր տարերքը: Անհրաժեշտ էր ժամանակի շնչառության մեջ բացել մտահղացումների նորանոր ծաղիկներ,- դա՛ էին պահանջում հարազատներ կորցրած գյումրեցու լուռ հայացքն ու բռունցքող բառերի ձիչը:

- «Կարիք չկա տրվել անհուն վշտին, կուլ գնալ ու կոտրվել հոգեպես,- Լևոն Բաղդասարյանի հորդորը վարակիչ էր և միաժամանակ սփոփիչ,- ինչո՞ւ տրվել տխրության ալիքներին, պետք է հաղթահարել վիշտը և աշխատանքի միջոցով ամրապնդել մեր սասանված ոգին: Եկե՛ք ամանորյա ներկայացում բեմադրենք և ավերակված քաղաքին ծիծաղ պարգևենք»: Սա, իհարկե, համարձակ առաջարկություն էր, խելահեղ մի քայլ, որը, բնականաբար, առաջին պահերին ոմանց համար անհեթեթություն էր, արտառոց մի բան, անհոգի ու հանդուգն մոտեցում... Մարսել էր պետք ոչ միայն արտառոց առաջարկությունները, այլև մոտեցող և զգվող ժամանակի բուրումնավետ հայացքը: Ինքնաօտարման սենյակից դուրս

գալով՝ մտնում էի անորոշության պաղ միջանցքը: Յաջորդ կանգառը՝ սերն է: Բայց մինչ այդ՝ պետք է ապրել... Ցավի միջով էր անցնում մեր ճանապարհը՝ հանդիպելով տառապանքի ու վշտի անեզր մառախուղին: Ես տասնչորս հարազատ եմ կորցրել և ամեն մեկն ինձ համար մի անկրկնելի ու անփոխարինելի աշխարհ է՝ նուրբ թելերով կապված քաղաքին և իմ ստեղծագործ ու տառապյալ հոգուն:

- Ձեր հուշատետրից տեղեկացա, որ այդ օրերին Յայաստանի թատերական գործիչների միությունը, որի նախագահն էր թատերարվեստի երախտավոր Խորեն Աբրահամյանը, նյութապես աջակցում էր թատերական կոլեկտիվներին և դրամական օգնություն հատկացնում Միության անդամներին:

- Խորեն Աբրահամյանի մարդկային նկարագիրն ինձ համար առինքնող է, հարգանքի ու սիրո արժանի: Նա իր գործունեությանը փորձում էր լցնել այն դատարկ մասը, որ գոյացել էր կյանքում և մեր հոգիներում Աղետի հուժկու հարվածներից: Դրամական օգնությունից բացի՝ Միության նախագահի նախաձեռնությամբ արհավիրքից տուժած աշխատակիցները իրենց ընտանիքներով տեղավորվում էին պանսիոնատներում, ստանում աջակցություն, երբեմն էլ մեկնում արտասահմանյան երկրներ՝ ճամփորդելու: Ցավալին այն է, որ այդ հնարավորություններից հաճախ օգտվում էին նաև նրանք, ովքեր արհավիրքի ժամանակ զոհեր չեն ունեցել, իսկ նրանց բնակարանները անվնաս էին: Նրանք, ովքեր իրոք աղետոյալ էին և զոհեր ունեին, ուզենային էլ, չէին կարող հեռանալ ավերակված քաղաքից... Վիշտը կխեղդեր նրանց...

- Երկրաշարժից առաջ ուզում էիք բեմադրել Լ.Տրուշկինի «Խաղալիքների փախուստը» տիկնիկային ներկայացումը: Բայց ձակատագրի ձեռքը այլ բան էր նախանշել ձեր ստեղծագործական ճանապարհին: Այդ ներկայացման սցենարը մնաց

փլատակների տակ: Փաստորեն այդ ստեղծագործությունը չսպանվեց, որովհետև նա կենդանի հոգի է: Ո՛չ պատերազմը, ո՛չ էլ աղետը չեն կարող սպանել գրական ստեղծագործությունը, որովհետև նա անմահ է: Սպանվեց ձեր մեջ այդ ներկայացումը բեմադրելու ցանկությունը: Ահա թե որն է ձշմարտությունը:

- Նա դարձավ վերք և սպիացավ: Ես ծածկված եմ այդպիսի բազմում սպիներով: Բայց նայնպես՝ այդ սպիների միջից ես այսօր կարող եմ նայել ու ժպտալ. «Ողջոյն, կյանք, ես քո ստեղծագործ ոգին եմ և հայտնաբերվող եզերքի նկարագիրը»:

- «Կյանքում ոչինչ չկա հավիտենական, մարդն ինքը հավիտենական չէ...,- նկատել է Վահրամ Փափազյանը: - Ոչինչ հարատև չի եղել, չկա. մշտնջենականությունը իմաստից զուրկ է, և կյանքը ինքը սկզբնավորությունների անվերջ շարան է»:

- Կարելի է ասել, որ սկզբնավորությունների շարան է և՛ իմ կյանքը: Աղետից հետո նոր բան սկզբնավորելը մի քիչ դժվար էր: Նոր ներկայացում բեմադրելու առաջարկությունը կախվեց օդում: Ես սարսափում էի այդ մտքից, խփվում պատեպատ: Լևոն Բաղդասարյանը և Աղասի Եգանյանը համոզում էին ինձ, ստիպում վերափոխվել... Փլատակների տակից կանչում էր ինձ մի ձայն... «Խաղալիքների փախուստը»... Սպիտակ թուղթ էր դրված սեղանին: Կրկին: Կողքին՝ գրիչը լռել էր: Հավիտյան: Ո՛չ: Թղթին շարժվում էր գրիչը, ինչպես սառույցի վրայով: Լռության սառույցն ահավոր էր և սահմեկեցուցիչ: Թղթին գրում եմ այս անգամ կարծես՝ գոհի արյունով: Լևոն Բաղդասարյանը և Աղասի Եգանյանը ոգեշնչվելով՝ թղթին են հանձնում «Տարեմուտի զանգակներ» պիեսի տեքստը: Ես կամաց-կամաց ներծծվում էի նրանց ոգևորության ալիքների մեջ և ինքս ինձ գտնում... հիշողության եզրին: Ես դժկամորեն սկսեցի փորձերը և աստիճանաբար մարմնավորեցի առաջին մտահղացումը: Որոշ ժամանակ անց՝ հանձնեցի ներկայացումը: Առաջնա-

խաղը կայացավ: Եվ ականատեսը դարձանք... նոր ոգևորության: Մանուկների ծիծաղը բալասան էր, սփոփող ուժ կար հանդիսատեսի հայացքում... Որոշումը ճիշտ էր... Ծնողների արցունքների միջից բացվում էր մի դուռ դեպի արվեստը: Բեմադրությունը կենդանություն էր տվել ավեր քաղաքին: Ինչ-որ բան ինչ-որ տեղ փոխվեց: Հաղթահարվեց տառապանքի առաջին աստիճանը... Հարկավոր էր շարունակել այդ ոգով... Շուտով Երևանից վերադարձան դերասանները և համալրեցին ստեղծագործական կոլեկտիվի կազմը: Ձմեռ պապ և Ձյունանուշիկ ... այդ բառերն արդեն խորթ էին հասարակության համար: Հա-սա-րա-կու-թյուն,-ցավից բզկտված այս բառը ինքնահաստատման դռներն էր ծեծում և թատրոնում գտնում սփոփանք ու մխիթարություն: Հեքիաթով լցվում էր օրը: 1989-ի ամանորյա հանդեսը ոգևորության մի շրջապտոմյտ էր վշտի ու արցունքի ծովի վրա: Ներկայացումների միջոցով հոգու թեթևություն ապրեց Գյումրին: Ասես պահմտոցի էինք խաղում տառապանքի ու վշտի հետ: Աշխատանք,- ահա մեր ստեղծագործական որոնումների միակ բանալին: Ստեղծագործությամբ հաղթահարեցինք կյանքի դժվարությունները:

- Աստիճանաբար վիշտն ու արհավիրքը հաղթահարելով, փորձում էիք ներկայացումների միջոցով հոգեկան թեթևություն բերել աղետոյալ քաղաքին: Դա, իհարկե, դժվար էր, բայց ձեզ հաջողվում էր, արդյոք, միասնական ուժերով հաղթահարել այն դժվարությունները, որոնք օրեցօր ծառանում էին թատերախմբի առջև:

- Բնականաբար, դժվարին պահերին մարդիկ դառնում էին ավելի հոգատար, բարի և համբերատար: Ընկերական ջերմ մթնոլորտում աշխատելն ուղղակի հաճույք էր: Մարդիկ պատրաստ էին ընդառաջ գնալ միմյանց, օգնել, աջակցել՝ ինչով կարող էին:

- Իսկ բեմադրությունը, ինչպես միշտ, ձեր տարերքն էր, ձեր ստեղծագործական անհանգիստ ոգու բանալին: Թատերա-

խումբն այդ օրերին ապրում էր որոնումների արդյունավետ ընթացքով, ամեն ինչ նորից սկսելու վճռականությամբ:

- Բեմադրելու համար ընտրեցինք Ա.Կուռյանդսկու և Ա.Խայտի «Դե գայլ, սպասիր» ներկայացումը: Այդ օրերին թատրոնի նկարիչը՝ Միքայել Վարդանյանը իր ջոկատով հաճախ էր մեկնում Արցախ և մասնակցում պաշտպանական մարտագործողություններին: Մենք սրտատրոփ սպասում էինք մեր քաջորդիների վերադարձին, հույս ունենալով, որ ազատագրվող Արցախով կսկզբնավորվեն մեր նոր Հայրենիքի ազատ ու անկախ օրերը: Բանաստեղծուհի Մետաքսեն ձեռնարկել էր հայրենասիրական մի շարժում, որի կարգախոսն էր. «Ամեն ինչ կռվող ջոկատների համար, ամեն ինչ շրջափակված ու պայքարող Արցախի համար»: Յուրաքանչյուր հայի, առավել ևս՝ գյուրեցու համար Արցախի մղած պայքարը կյանքի և լինելության բարձրակետն է, ապրելու և գոյատևելու իմաստը: Դրա վկայությունը հենց ընտանիքը կորցրած գյուրեցու այն խոսքն էր, որ նա ուղղել էր աղետոյալ գոտի այցելած ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Միխայիլ Գորբաչովին: Երբ վերջինս հարցրել էր նրան կորցրած ընտանիքի մասին և փորձել ցավակցել, գյուրեցի այրը հարցրել էր նրան. «Իսկ ինչպե՞ս է լուծվելու Ղարաբաղի հարցը»: Մ.Գորբաչովն, իհարկե, նախ զարմացել էր, ապա զայրացել այդ անակնկալ հարցադրումից: Եվ գուցե հոգու խորքում նա էլ հասկացել էր, որ Արցախը հայ ժողովրդի փրկության դուռն է, որը պետք է կրնկի վրա բացվի դեպի հարատևություն: Եվ հայ զինվորը այդ դռնով մտնելով, զենքը վայր կդնի միայն ազատագրված Արևմտյան Հայաստանի սուրբ քարերի վրա:

Ակամայից հոգուդ մեջ ճառագայթում են մեծ քնարերգուի՝ Վահան Տերյանի տողերը.

Չի հասկանա ձեր հոգին և ծույլ, և օտար,

Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամեն քար:


Եվ այսպես, երկրաշարժի թողած ավերի, ցավի, սովի և արդեն

լայնամասշտաբ պատերազմի վերածվող արցախյան շարժման դժվարին պայմաններում կյանք ստացավ և բեմականացվեց «Դե գայլ, սպասիր» ներկայացումը: Պատերազմի զինվորի պես մաքառող ու մարտնչող է և այս ներկայացումը, որը, ինչպես իմ բեմադրած շատ ներկայացումներ (Վլ.Օռլովի «Ոսկե ճուտիկը», Ա.Միլնի «Վինի Թուխի խնջույքը», Գրիմ եղբայրների «Ծերուկ հրաշագործը», Վ.Վարդանյանի «Լուսերեսն ու Վարդերեսը», Ա.Խայտի «Արջն ու քոթոթը»), ընդգրկվելով Գյումրիի տիկնիկային թատրոնի խաղացանկում, տասնամյակներ շարունակ ցուցադրվում են և բավականություն տալիս բազում հանդիսատեսների: Ես հպարտ եմ, որ իմ բեմադրած ներկայացումները Երևանի, Գյումրիի, Ստեփանակերտի, Շուշիի բեմերից շարունակում են հաղորդակցել հանդիսատեսի հոգուն ու մտքին, ստեղծելով արվեստի բաբախուն աուրա և ջերմ մթնոլորտ: Ոմանք փորձում են թերագնահատել տիկնիկային ներկայացումների դերն ու նշանակությունը, մոռանալով, որ տիկնիկային արվեստը մարդկային հոգին հարստացնող և վերածնող ուժ ու պաշարներ ունի: Հիշենք արձակագիր, թատերագիր, ՀՀ պետական մրցանակի կրկնակի դափնեկիր Պերձ Զեյթունցյանի խոսքը. «Հո՞ծ ասֆալտի տակից խոտը դուրս է գալիս լույս աշխարհ, ապացուցելով աշխարհին, որ ճշմարտությունն ասելու համար հազար ու մի միջոց կա: Այդ ճշմարտության ձայնը թատրոնը հնչեցրել է միշտ, երբեմն՝ կիսաձայն, երբեմն՝ խռպոտ, հազվադեպ՝ լիաբուռն»:

- Աշխատանքը ոգևորում և թևավորում էր ձեզ, մղում նոր որոնումների: Մենակ չէիք: Թատերախումբը գործում էր ընտանիքի պես համատեղ և ներդաշնակորեն: Երևանից այցելող արվեստագետները ձեր մեջ և թատրոնի առօրյայում փորձում էին տեսնել պայքարող, անհաղթ և անկոտրում այն ոգին, որը ստեղծելու, արարելու շնորհքով էր օժտված և ձգտում էր փյունիկի պես մոխիրներից հարություն տալ հայի լի-


**Նելության հանգրվաններին՝
հավատին, հույսին, կամքին,
լեզվին, հոգուն:**

- Երբ արդեն ցավի ու տառապանքի հետ «լեզու գտած», վերանորոգում էինք մեր ժամանակավոր կացարանները, վերագտնում ապրելու հույսն ու ստեղծագործելու տարերքը, մեզ այցելեցին ակադեմիկոսներ Ռուբեն Զարյանը, Լևոն Չախվերդյանը, թատերագետներ Լևոն Մուֆաֆյանը, Գևորգ Սանոյանը: Նրանց հետաքրքրում էին աղետյալ գոտում ստեղծվող թատերարվեստը:



Լևոն Չախվերդյան

Նրանց հոգատար վերաբերմունքը հույս էր ներշնչում, ամոքում մեր ցավը, միաժամանակ ոգևորում և մղում մեզ գործելու, ինքնահաստատվելու նոր իրավիճակում: Դերասան Սամվել Գրիգորյանն էր ուղեկցում պատվավոր հյուրերին դեպի տիկնիկային թատրոն և հուզվել, զարմացել էր, որ հեղինակավոր ակադեմիկոսներն ու արվեստագետները սրտանց և լրջորեն հետաքրքրվում են տիկնիկային թատրոնով: «Դե գայլ, սպասիր» ներկայացումը դիտելուց հետո, Լ.Չախվերդյանն ասաց. «Ներկայացումից ստացա մեծ բավականություն, հրաշալի տպավորություն, որը շուտով կփոխանցեմ Չայաստանի թատերական գործիչների միության նախագահ Խորեն Աբրահամյանին»: Որոշ ժամանակ անց՝ Միությունը տիկնիկային թատրոնին հատկացրեց խոսուն մի գումար՝ բարձրաձաշակ բեմադրության համար: Մենք սկսեցինք աշխատել ավելի մեծ ոգևորությամբ և պատասխանատվությամբ: Յրաշալի է, երբ կատարված գործը գնահատվում է: Չէ որ աշխատանքից ստացած



Սոս Սարգսյան

նգևորությունը ոչ միայն արմատներ սնուցող էր, այլև առաջնորդիչ ուժ: Դժվարություններն հաղթահարում էինք, հիշելով ժողովրդի խոսքը. «Ցավը տվեցին սարերին՝ սարերը չտարան, ցավը տվեցին մարդուն՝ մարդը տարավ»: Մեզ զգաստացնում էր Ա Շեքսպիրի իմաստուն խոսքը. «Ցավերը չեն գալիս հատ-հատ, այլ՝ հոժ խմբերով»: Մեր բաժին պատերազմը, շրջափակումն ու երկրաշարժը հաղթահարեցինք՝ կռվելով, տոկալով, արարելով, բեմադրություններ անելով և

ստեղծագործական նոր օջախներ ստեղծելով:

Շուտով ՀՀ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը հիմնադրեց թատերական մի նոր օջախ, որը կոչվեց «Համազգային թատրոն»: Ես, որպես ռեժիսոր, սկսեցի աշխատել նաև նորաստեղծ «Շիրակ» հեռուստաստուդիայում, որտեղ բանաստեղծ Արա Արտյանի մասնակցությամբ նկարահանեցի «Դարբինների զարմը» կարճամետրաժ ֆիլմը: Իսկ Վանաձորի տիկնիկային թատրոնում բեմադրեցի Ա.Խայտի «Հաջողակ որս» ներկայացումը: Այդ ամենը չխանգարեց ինձ անմասն և լիակատար աշխատելու Գյումրիի տիկնիկային թատրոնում:

«Համազգայինի» թատրոնում Համլետ Հովհաննիսյանը շարունակում էր Դ.Դեմիրճյանի «Քաջ Նազարը» պիեսի բեմադրության փորձերը: Հ.Հովհաննիսյանն ինձ հրավիրեց աշխատելու նորաստեղծ թատրոնում: Ես համաձայնեցի: Ուրախ էի, որ պիտի աշխատեի ՀՀ ժողովրդական արտիստներ Մայիս Կարազյոզյանի, Կա-

րեն Ջանիբեկյանի, վաստակավոր արտիստներ Ռազմիկ Աբրահամյանի, Ամիրան Գալստյանի, Անդրանիկ Չարությունյանի հետ: Չամլետ Չովհաննիսյանն հավատարիմ լինելով աշխատանքային իր առանձնահատուկ ոճին, փորձարարական թատրոնի սկզբունքներով անընդհատ փոփոխում էր պիեսը, նյութը դարձնում ժամանակակից, կերպարները՝ արդիական ու հեշտ ընկալելի: Ես ներկայացման մեջ պիտի մարմնավորեի Իշխան Սաքոյի կերպարը, որը Քաջ Նազարից ավելի վտանգավոր, փառասեր և հեռահար նպատակների տեր անձնավորություն էր, բոլորովին նոր և ազդեցիկ մի տիպ, որ առաջին անգամ բնավորության խորքային այս ընդգրկումով պիտի ներկայացվեր հանդիսատեսին: Սուս Սարգսյանի կարծիքով՝ Իշխան Սաքոն բարդ և հոգեբանական խորքերով առանձնացող կերպար է, որը, բնականաբար պետք է ազդեցիկ ներգործություն ունենա հանդիսատեսի վրա: Ես մասնակցում էի բեմադրության փորձերին և ձգտում, որպես դերասան, անմնացորդ նվիրվածությամբ հաջողության հասնել այդ բարդ ու հակասական կերպարի մարմնավորման դժվարին գործում: Չարկավոր էր ապացուցել, որ հենց դ՛ուր ես այն արժանավորը, որն իրավունք ունի զբաղեցնելու նորաստեղծ թատրոնի այն բաց տեղը, որն երազում էին օժտված և «փողոցում հայտնված» շատ դերասաններ: Եթե թատերախմբում ընդգրկված դերասաններն իրար գիտեին միասին աշխատելու և Երևանում ապրելու հանգամանքով, ապա ես նրանց համար բոլորովին անծանոթ էի, քանի որ տասնչորս տարի շարունակ աշխատել եմ միայն Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնում: Այդ իսկ պատճառով Երևանի թատերական կյանքի հետ ես համարյա առնչություն չունեի: Չիմա բացվել է ասպարեզը ինքնահաստատվելու համար: Փորձերը շարունակվում էին: Ինձ ոգևորում էին երիտասարդ թատերագետ Չովհաննես Երանյանի կարծիքն ու գնահատականը իմ աշխատանքի մասին: Չիացմունքի խոսք չէր դա միայն: Իմ կատա-

րած աշխատանքի նկատմամբ ուշադիր էր և Կարեն Զանիբեկյանը, իսկ Անդրանիկ Չարությունյանը գերազնահատեց իմ հնարավորությունները: Գուցե իրատեսը հենց նա էր: Վերջինս ռեժիսոր Յամլետ Յովհաննիսյանին առաջարկեց հանձնարարել ինձ Քաջ Նազարի դերը: Ռեժիսորն, իհարկե, ժպտաց, իր գոհունակությունն արտահայտելով իմ կատարած աշխատանքի հանդեպ, հավելելով, որ այնպիսի բարդ ու նոր կերպար, ինչպիսին Իշխան Սաքոն է, նորույթ է լինելու, այդ իսկ պատճառով մեծ ջանք ու եռանդ է անհրաժեշտ մարմնավորելու և հանդիսատեսին լիակատար խորքով ներկայացնելու այդ տիպական անձնավորությանը: Նա նշեց նաև, որ դա ոչ միայն իր, այլև՝ Սոս Սարգսյանի կարծիքն է: Գրող-հրապարակախոս Ռուբեն Յովսեփյանն էլ զրույցի ժամանակ նշեց, որ մինչև հիմա թե՛ ներկայացումներում և թե՛ «Քաջ Նազար» ֆիլմում Սաքոյի կերպարը ներկայացվել է մակերեսային և հպանցիկ: Ես, որպես դերասան, պետք է կարողանայի այդ կերպարը ներկայացնել նորովի, իր հոգեբանական խորքով և գրավչությամբ: Փորձերի ընթացքում Դ.Դեմիրձյանի հայտնի պիեսը՝ «Քաջ Նազար»-ը, այնպես փոփոխվեց, որ դարձավ անձանաչելի՝ ձեռք բերելով արդիական հնչեղություն: Փոխվեց անգամ պիեսի անվանումը, «Քաջ Նազար»-ը դարձավ «Տհենց»: Սոս Սարգսյանը պահանջեց ներկայացնել «Քաջ Նազար»-ի առաջնախաղը՝ ըստ նախատեսված ժամկետի: Բեմադրությունն, ըստ էության, կիսատ էր և անպատրաստ, թեև ուներ շատ հետաքրքիր ու թարմ դրվագներ, դերասանական առանձին փայլուն կատարումներ: Ճամփաբաժան ժամանակներ էին: Ռեժիսոր Յամլետ Յովհաննիսյանն ինձ հայտնեց, որ Սոս Արտաշեսին ինձ և Ռազմիկ Աբրահամյանին ուզում է պահել թատրոնում: Սակայն Ռ.Աբրահամյանն հրաժարվեց, չընդունեց այդ առաջարկությունը և աշխատանքի ընդունվեց ՅՅ մշակույթի նախարարությունում, որպես ժամանակակից արվեստի բաժնի աշխատող: Ես կանգնեցի դժվար ընտրության առաջ:

Սոս Սարգսյանն ինձ հայտնեց, որ մտադիր է բեմադրել Շեքսպիրի «Լիր արքան», որտեղ ես պիտի ստանձնեի խեղկատակի, իսկ ինքը՝ Լիր արքայի դերը: Առաջարկությունն, իհարկե, գայթակղիչ էր, թեև ճակատագրի ձայնը իմ ականջին այլ բան էր շնչում:

Նորից ինձ աշխատանքի հրավիրեցին Ստեփանակերտի դրամատիկական թատրոնից: Յին կարոտն իմ մեջ սկսեց փոթորկվել և ճակատագրի ափերը ողողել լուսապայծառ հույսերով: Ես անկարող էի՝ չգնալ: Չէ որ ինձ կանչում էր անհավասար մարտերում հաղթանակներ կռած Արցախը: Եվ ես ընդառաջ գնացի այդ հզոր ձայնին, հույս ունենալով, որ նրա կենարար հողով և աստվածային ջրով կապաքինվեն իմ բոլոր վերքերը:

Ուզում եմ իմ կարոտն ու սերն արտահայտել ձեր «Ղարաբաղ» բանաստեղծության տողերով.

***Քո լույսը հո՞ղ է և ունի կշիռ,
Եվ քո անձրևը աստղատարափ է,
Իսկ աղջիկներդ՝ հույսի նամակներ՝
Ընկղմված բախտի ծրարների մեջ:***

***Թե դու երակ ես և հույսի տանիք,
Քո արյունը հենց հիշողությունն է,
Որի ակունքը այն է, հայրենիք,
Որ մանուկներիդ պորտը կտրվի
Միայն տաքարյուն քո ազգանունից
Եվ քո տառերում բացվող երկինքը
Թևը դո՛ւրս քաշի մոռացման վիհից:***

***Քո լույսը հո՞ղ է և ունի կշիռ,
Եվ քո անձրևը աստղատարափ է,-***

**Երկունքիդ լույսից այնպես երակվիր,
Որ քո անցյալն ու գալիքը արբեն:**

Բանաստեղծության մեջ մաղթում եք, որ Ղարաբաղի անցյալն ու գալիքը արբեն լույսով, իսկ ներկա՞ն...

- **Լավ նկատեցիք ենթատեքստում պահված միտքը: Բանաստեղծությունը գրված լինելով 1987 թվականին, արտահայտում է նաև Ղարաբաղի բռնակցված լինելը Ադրբեջանին: Դրա համար էլ ներկան պիտի փոթորկվի և ընդվզի:**

- Տարածքը դեռևս հայրենիք չէ:

- Այո՛, ուրիշի տարածքի վրա բնավորված ազգն ու պետությունն էլ ազատ լինել չեն կարող: Նրանք մշտապես ապրում ու գոյատևում են ականապատված տարածքի վրա, որը ցանկացած ժամանակ կարող է պայթել: Թուրքիան և Ադրբեջանը կազմավորվել և հաստատվել են պատմական Չայաստանի հողերի վրա: Ես այս օրերին Թուրքիայի փլուզման տեսիլքն եմ տեսնում:

Չայտնությունը սա՛ է.

դդրդում են ցավի անդուդներն անհագ,

և Թուրքիան, որպես


կափարիչ Խավարի,

գլորվում է

պատմության

աստիճաններով...

Եվ Մասիսն Չիսուսի Նոր Գալուստի դո՛ւռն է...



ԲԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՏԵՍԱԴԱՆՏԸ

**Երիտասարդների հետ աշխատելը ես համարում եմ
բարեբախտություն:**

Լեոնիդ ՋԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏՐՈՆ

- **Լեռնիդ Ավետիքի, թատրոնը, որպես մարդկանց միավորող ուժ, մշտապես նոր գաղափարներով է սնուցել սերունդներին, հարստացնելով նրանց հոգեաշխարհը: Իսկ երիտասարդները միշտ առանձնակի սիրով ու ջերմեռանդությամբ են կապվում թատերարվեստի գերիչ աշխարհին:**

- Լինելով Ստեփանակերտի թատրոնի ամենաերիտասարդ ռեժիսորը, միշտ ձգտել եմ ուշադրության կենտրոնում պահել երիտասարդ դերասաններին, որովհետև գիտեի, որ նրանց հոգին նուրբ է ու զգայուն, իսկ ուժերն` անսպառ:

- **Բնականաբար, նրանց ընդունակությունն ու շնորհքը բացահայտելու նպատակով դուք շատ ջանքեր եք գործադրել, աշխատելով լիարժեք դարձնել նրանց ստեղծագործական կյանքը:**

- Պետք է նշեմ, որ Ստեփանակերտի, թատրոնը հեռու է եղել հայ թատերական միջավայրից, ակամայից կանգնելով դժվարությունների առաջ. այստեղ կադրերի համալրման հարցը միշտ եղել է առավել բարդ և խնդրահարույց: Երիտասարդների հետ աշխատելը ես համարում եմ բարեբախտություն, որովհետև այդ հանգամանքն ինձ մղում է ինքնարտահայտվելու նոր կողմերով, կարևոր է և այն իրողությունը, որ ես իմ գիտելիքն ու փորձը փոխանցելով երիտասարդ դերասաններին, օգնում եմ նրանց ինքնահաստատվելու այս բարդ ու դժվարին գործում:

- **Միջավայրը կրթարան է նաև: Այդպես չէ:**

- Ստեփանակերտի թատրոնն ինքն էր ստեղծում թատերական միջավայր` կրթելով երիտասարդ դերասաններին: Թատերասեր տղաներ և աղջիկներ ենք ունեցել, որոնք կապվելով և նվիրվելով

թատերական կյանքին, դարձել են դերասաններ: Ուշագրավ է Վահրամ Փափազյանի այս մոտեցումը. «Հասկանալ մարդկային իմացականության տարրալուծման հոյակապ պատկերը... հնարավոր է, բայց բեմի վրա պատկերացնելու համար վերապրելու ընդունակությունն իսկ հերիք չէ, և ինքնակրթության բնածին շնորհն անհրաժեշտ է»:

-Դուք աշխատելով տարբեր սերունդների հետ, մշտապես ձգտել եք ստեղծել թատերական առողջ մթնոլորտ,-սա է ստեղծագործական արդյունքի հասնելու միակ ճանապարհը: Ձեր երազանքներից մեկն էլ մանկապատանեկան թատրոն ունենալն էր:

-Կյանքի մեծագույն պահանջն է՝ կրթել սերունդներին: Իմ խորին համոզմամբ՝ մանկապատանեկան թատրոնն իր բացառիկ դերն ու նշանակությունն ունի: Անհնար է ձևավորել նրբաճաշակ և արվեստասեր հասարակություն առանց մանկապատանեկան թատրոնի: Շատ կարևոր է նոր սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Թատերական կյանքը պետք է սկզբնավորել հենց դպրոցներում, դա հնարավորություն կտա մշտապես եռուն ու արգավանդ պահել բեմական կյանքի տեսադաշտը:

-Վահրամ Փափազյանն ունի նաև այսպիսի հրաշալի տողեր. «Եթե մարդ պատասխանատու չէ իր կյանքի սկզբի համար, վերջավորության համար նա պատասխանատու է անպայման...»:

Կարելի է ասել, որ դպրոցը պատասխանատու է մարդու և սկզբի, և՛ հասունության համար, իսկ թատրոնը մարդկության արթուն խիղճն է, որ երազանքի լապտեր է վառում խավարում:

- Մանկապատանեկան թատրոնը թատերարվեստի այբուբենն է:

Ստեփանակերտի թատրոնն իր ստեղծման օրից զգացել է այդպիսի թատրոն ունենալու անհրաժեշտությունը: Հանրապետության ժողովրդական արտիստ, ռեժիսոր Իվան Հովհաննիսյանը Ստեփանակերտում բեմադրել է մանկապատանեկան ներկայացում (Վ.Մելեխովա, «Ֆրից Բաուեր» (Փոքրիկ կոմունիստ) 1933թ.), բայց, որպես թատերարվեստի լիարժեք ձյուդ, այն Արցախում դեռևս չէր կայացել:

Երիտասարդ դերասաններն ինքնաբացահայտվում են և հանդիսատեսի, և փորձառու դերասանների համար: Աշխատանքային հնարավորություններն ընդլայնվում են:

-Եթե երիտասարդ դերասանները նախաձեռնող են, գործունյա, օժտված ու կիրթ, նրանց հետ աշխատելն, իրոք, բախտավորություն է:

-Իհարկե, երիտասարդների հետ աշխատելը բախտավորություն է: Ինքնին դառնում ես նրանց բեմական առաջին ուսուցիչը, նրանց բեմական մկրտության կնքահայրը: Առաջին սիրո պես մի բան է առաջին բեմելը:

Թատերական կյանքը աստիճանաբար թարմանում է՝ դեպի իրեն ձգելով նաև դպրոցական հանդիսատեսին: Երիտասարդները միշտ թարմ շունչ են հաղորդում թատրոնի ավանդական խաղաձին:

Հետաքրքիր ու հաջողված փորձ էր Գ.Մամլինի «Ողջույն դինոզավրերին» պիեսի բեմադրությունը:

-Ադրբեջանական ենթակայության գործոնը նույնպես ազդում էր թատրոնի աշխատանքային ոգու մաքրության վրա՝ անընդհատ ձգտելով հայ մշակույթի դաշտ ներկրել բովանդակային խորթ տարրեր և հատկանիշներ, որոնք անհարիր էին մեր թատերարվեստի արժեքային համակարգին:

Հիշենք Վարսիկ Գրիգորյանի 1988թ. «Հայրենիքի ձայն»

թերթում տպագրված խոսքը. «Ստեփանակերտի հայկական թատրոնը երկար տարիներ կտրված լինելով մայր Չայաստանից, ստանձնել է Արցախի աշխարհի մշակույթի սատարումը, պահպանել հայ բեմարվեստի ավանդույթները, բեմերից հնչեցնել մայրենի լեզուն, կերտել հայեցի արվեստ: Այս փոքրիկ Չայաստանը պատմության քմայքով պոկված մայր երկրից, իսկական բռնադատման է ենթարկվել, զգուշացել բարձրաձայն խոսել իր արմատների մասին և եթե պահպանել է իր ինքնությունը, լեզուն, ազգային արժանապատվությունը, ապա այստեղ որոշակի է եղել և թատրոնի ծառայությունը»...

- Արվեստագետ Վարսիկ Գրիգորյանը իր խորաթափանց հայացքով նկատել է Ադրբեջանի և քաղաքական ճնշումները Արցախի ժողովրդի վրա, և բնիկ ժողովրդին իր մշակութային ակունքներից կտրելու բարբարոսական փորձերը...

Ինչ վերաբերում էր այն հարցին, թե մեր աշխատանքին ինչքանով էր խանգարում ադրբեջանական ենթակայության գործոնը, կասեմ հետևյալը: Դա մի խնդիր էր, որը մենք հաղթահարում էինք կոլեկտիվ համաձայնությամբ: Ինչո՞ւ պիտի բեմադրեինք պիեսներ, որոնք խորթ են մեր ազգային ոգուն: Ցածրորակ «մշակույթը» անարժեք է և ոչինչ չասող: Մեր դարավոր խաչքարերը ոչնչացնող խառնամբոխի «մշակույթն» էլ բարբարոսական է: Դա վտանգավոր էր նաև այն առումով, որ բեմադրելով ադրբեջանական ցածրորակ ներկայացումներ, մենք առաջին հերթին ազգային արմատներից հեռացնում ենք հայ հանդիսատեսին: Որպեսզի հեշտությամբ ազատվեինք օտարից պարտադրված ստեղծագործություններից, նախօրոք պայմանավորվում էինք պիեսների ընտրության կարևորագույն հարցում:

-Արդյունքում՝ մեր մշակույթի ազնվագույն հատկանիշները չեն կորչում, պահպանվում են, իսկ հասարակության նե-

րաշխարհը լցվում է հոգևոր անհրաժեշտ լույսով և ոչ թե՛ անորոշության մառախուղով:

-Անորոշության մառախուղը ցրող մեծագույն ուժերից մեկը՝ հենց թատրոնն է:

«Ողջույն դինոզավրերին» պիեսը մեզ ընձեռեց նաև կարծրատիպեր փշրելու հնարավորություն: Օրինակ: Որպեսզի հանրապետության ժողովրդական արտիստուհի Մարգո Բալասանյանը համաձայնվի խաղալ մի ներկայացման մեջ, որն ունի ընդամենը երկու դերակատար, իսկ իր խաղընկերն էլ լինի ոչ թե վարպետ դերասան, այլ երիտասարդ ու խոստումնալից մեկը, ասենք՝ դերասան Վաչե Փահլևանյանը, ռեժիսորից պահանջվում էր հոգեբանական մեծ աշխատանք կատարել՝ միաժամանակ համոզելով նրա թաճաշակ դերասանուհուն մի այլ հայացքով նայել բեմական ստեղծված իրավիճակին: Այստեղ շատ կարևոր են նաև ինքնահաղթահարման ուժի առկայությունը, իրերին նոր հայացքով նայելու կարողությունը:

Երկու դերակատարներն էլ հավասարապես ծանրաբեռնված են բեմում՝ թե՛ դերատեքստի և թե՛ դրամատիկ գործողության մեջ լինելու տեսակետից: Նրանց շփումն արտաքին աշխարհի հետ կատարվում է միայն իրենց գործողությունների, արտահայտած մտքերի և հեռախոսի միջոցով: Չկան այլ դերակատարներ, որ լրացնեն և հարստացնեն նրանց շփումների ոլորտը: Երկուսով հավասարապես պիտի քաշեին իրենց «լուծը»: Հոգեբանական լարումը գնալով աճում է և այն անհրաժեշտ է պահպանել մինչև վերջ, այլապես հանդիսատեսը կկորցնի հետաքրքրությունը...

Կար նաև մի այլ խնդիր: Ըստ հեղինակի՝ պիեսում դերերից մեկը երաժշտի դերն է, որը և ստանձնեց Վաչե Փահլևանյանը: Վերջինս, ինչ խոսք, երաժիշտ չէր, բայց երաժիշտներ Արթուր Ալեքսանյանի և Օլեգ Փիրումյանի մասնագիտական օգնությամբ՝ սկ-

սեց տիրապետել հարվածային գործիքներին: Իրենց օգտակար աջակցությունը ցուցաբերեցին նաև կոմպոզիտորներ Սերգեյ Մարկոսյանն ու Վլադիմիր Արզումանյանը: Անհրաժեշտ էր ձեռք բերել նաև հարվածային գործիքներ, կատարել որոշակի հավելյալ ծախսեր: Դժվարությունները ստիպեցին մեզ երկմտել. «Արժե՞ բեմադրել այս ներկայացումը»: Եվ Մարգո Բալասանյանի հաստատական վճիռն օգնեց կողմնորոշվելու այս խճճվող հարցում. «Մայրաքաղաքային թատրոն ենք, ինչո՞ւ չպիտի կարողանանք բեմադրել նաև փորձարարական պիես»:

Անցավ երկու շաբաթ: Վաչեն, որ ամեն օր փորձերից հետո բարձրանում էր երկրորդ հարկ՝ մշակույթի տանը հարվածային գործիքների վրա պարապելու, հայտնեց ինձ, թե երաժիշտները՝ Արթուր Ալեքսանյանը, Օլեգ Փիրումյանն ու Վլադիմիր Արզումանյանը հրավիրում են տեսնելու իրենց աշխատանքի արդյունքը: Գնացի: Եվ այն, ինչ ցուցադրեց Վաչե Փահլևանյանը, իմ սպասածից վեր էր, որովհետև տեսածս մասնագետի ցուցադրած հնարք ու վարպետություն էր: 20 րոպե շարունակ ես լսում էի հարվածային գործիքներով արարվող կախարդական երաժշտությունը, հարափոփոխ ռիթմերի հմայիչ համանվագը: «Վաչեն կարող է երկրորդ մասնագիտությամբ աշխատել ցանկացած էստրադային խմբում, որպես վարպետ թմբկահար», -որսալով գոհունակությունից փայլող հայացքս՝ ասաց Արթուր Ալեքսանյանը:

Այս հաջողությունը ոչ միայն ոգևորիչ էր, այլև՝ հուսադրող: Մեր թատրոնի համար աննախադեպ այս նորությունը կարևոր էր և այն առումով, որ անհրաժեշտ պահին դերասան Վաչե Փահլևանյանը կարող է ցուցադրել իր երաժշտական հմտությունը: Դա բեմում ոչ միայն ազդեցիկ իրողություն էր, այլև կենդանի երակ, դրամատիկ դրվագի բաբախող մաս... Հիշում եմ Հովհաննես Կարապետյանի բեմադրած «Նամուս»-ը, որտեղ ես Սմբատի դերակատարն էի:

Խնջույքի տեսարանում նվագում էին դրսից հրավիրված երաժիշտները: Դա էլ բեմական լուծում էր: Նշեմ նաև, որ իմ բեմադրած «Դավիթ Կոպերֆիլդ» ներկայացման մեջ դերասանուհի Արեգա Պետրոսյանը ջութակ նվագելու շարժումներն էր յուրացրել՝ ընդամենը երևութային տպավորություն ստեղծելու համար:

Այս դեպքում բեմական արդյունքն ու հանդիսատեսի ստացած տպավորությունն ուրիշ էին: Յեղիճակի պահանջի համաձայն՝ դերակատարը, այստեղ՝ Վաչե Փահլևանյանը, ցուցաբերում է երաժշտական հմտություն:

Մարգո Բալասանյանն այս դերում նույնպես հաղթահարեց հոգեբանական որոշակի խոչընդոտներ և այս անգամ էլ կարողացավ գերազանցել ինքն իրեն:

«Ողջույն դինոզավրերին» ներկայացման առաջնախաղը փայլուն էր և ազդեցիկ: Դահլիճում գերակշռող մաս էին կազմում երիտասարդները, որոնք այս ներկայացումն ընդունեցին ինքնաբերական հրճվանքով և ոգևորությամբ: Թատրոնում տիրում էր թատերարվեստի զարմանահրաշ ոգին: Թարմ հոսանքն ինքնին վարակել էր հանդիսատեսին:

- Կարինե Ալավերդյանի կարծիքով՝ «Գ.Մամլինի «Ողջույն դինոզավրերին» բեմադրությունը յուրատեսակ փորձաքար էր և՛ ռեժիսորի, և՛ ընդամենը երկու գլխավոր դերակատարների համար, որոնք երկու ժամից ավելի լարված պահում էին դահլիճը: Աննա Անդրեևնա - Մարգո Բալասանյանի և Վասիլի- Վաչե Փահլևանյանի բեմական երկխոսության մեջ հնչում էր բարու, գեղեցիկի, մարդկայինի հավիտենական թեման: Երկու տարբեր սերնդի ներկայացուցիչներ են նրանք, սակայն հարազատ են կյանքի, մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով՝ պարտքի զգացում, ընկերասիրություն, նվիրվածություն. ահա նրանց սրբությունները: Առաջացած

տարիքով, բայց երիտասարդ հոգով Աննա Անդրեևնան իր բարությանը, հավատի լույսով լցնում է բեմը, դահլիճը, իսկ Վաչե Փահլևանյանի անմիջականությամբ և ռոմանտիկ խաղով կերտված Վասիլին կաշառում է հանդիսատեսին»:

- Կ.Ալավերդյանի խորաթափանց հայացքից չի վրիպել ոչ միայն դերասանների հմուտ կատարումները, այլև ներկայացման նկարչական հմուտ ձևավորումը. «Գեղեցիկ գրական գործի, հմուտ ռեժիսուրայի, վարպետ, ներդաշնակ խաղի, հաջողված նկարչական ձևավորման (Գ.Ծատուրյան) միասնությամբ ստեղծվեց պատանի հանդիսատեսի հոգու հետ խոսող ներկայացում, որը բազմիցս ընդմիջվում էր ծափահարություններով և հիացական բացականչություններով»:

-Յետագայում, իհարկե, պատանի հանդիսատեսի հոգու հետ խոսող բազում ներկայացումներ բեմադրեցիք, դառնալով մանկապատանեկան թատրոնի հիմնադիրն Արցախում: Նոր բեմադրություններում (Ա.Զխեիձեի «Ազատ թեմայով շարադրություն», Գ.Խուզակի «Անդրոն և Սանդրոն», Վ.Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը», Խ.Ավագյանի «Անահիտ») շարունակեցիք իրականացնել այն նոր մտահղացումները, որոնք արդեն սկսել էին հուզել և գրավել պատանի հանդիսատեսին:

-Սերը արվեստի հանդեպ պետք է սերմանել մանկուց: Թատրոնը կյանք է: Եթե մարդը թատերական ներկայացում չի դիտում, դժվար է նրանից պահանջել, որ լինի լավ քաղաքացի կամ լուրջ մտածող... Այո՛, ոչ միայն ճանապարհ է, այլև հայացք, դիմագիծ ու ձայն ունենալու հնարավորություն: Նույնն էլ վերաբերում է երեխային:

Եթե երեխան ներկայացում չի դիտում, ուրեմն նա արդեն կողոպտված է:

- Թատրոնը նաև մեր մտքի տեսողությունն է, հոգու նկարագիրը:

-Ա.Չխեիձեի «Ազատ թեմայով շարադրություն»-ը թարմ շունչ հաղորդեց մեր թատերական կյանքին: Ներկայացման կենտրոնական հերոսների դերակատարները երիտասարդ դերասաններն էին՝ Սամվել Եվրիյանը, Բագրատ Գևորգյանը, Գայանե Չարությունյանը, որոնք այդ դերերով ոչ միայն հաստատեցին իրենց ինքնությունը, այլև նոր կողմերով բացահայտեցին իրենց բեմական ունակությունն ու շնորհքը:

Չետաքրքիր և հուզիչ էր նաև Գեորգի Խուզակի «Անդրոն ու Սանդրոն» պիեսի բեմադրության պատմությունը: «Անդրոն ու Սանդրոն» օտեթական պիես է: Նշեմ, որ Երևանի հեռուստաթատրոնը բեմադրել էր այդ ստեղծագործությունը երկու հրաշալի դերասանների՝ Էդգար Էլբակյանի և Զարեհ տեր Կարապետյանի մասնակցությամբ: Պարզ է, որ իմ բեմադրությունը պետք է լինի նորովի, օրիգինալ և յուրովի մեկնաբանությամբ: Մենք պետք է ապացուցեինք, որ մեր թատրոնը, մեր դերասանների ուժերն ու պոտենցիալը մրցունակ են: Համարձակություն ցուցաբերեց նաև թատրոնի ղեկավարությունը՝ ինձ՝ բեմադրող ռեժիսորիս և նկարիչ ձևավորողին՝ Գրիգորի Ծատուրյանին, գործուղելով Օտեթիայի մայրաքաղաք Ցխենվալի: Մեր նպատակն էր հանդիպել պիեսի հեղինակին՝ Գեորգի Խուզակին, մոտիկից ծանոթանալ օտեթական մշակույթին և ամենակարևորը՝ Ստեփանակերտ հրավիրել մի պարուսույցի՝ ներկայացման մեջ ազգային պարեր բեմադրելու համար:

Հասանք Օտեթիայի մայրաքաղաք Ցխենվալի: Տեղավորվեցինք հյուրանոցում: Ես որոշեցի զբոսնել քաղաքի փողոցներում: Գրավիչ էին առանձնատներն իրենց տնամերձ պարտեզներով և այգիներով, որոնք հիշեցնում էին ինձ Ստեփանակերտի հարազատ կո-

լորիտը: Քաղաքի համապատկերում իշխում էր եկեղեցին իր գմբեթով և խաչով: Ներս մտնելով, հասկացա, որ եկեղեցին ... քաղաքային թանգարան է: Աշխատակիցներից տեղեկացա, որ այս շինությունը եղել է «վրացական» եկեղեցի, որն հետագայում հայերը «գնել են» ... Ես իսկույն հերքեցի այդ սնամեջ փաստը, նշելով, որ հայերը եկեղեցի կառուցող են և ոչ թե՛ գնող...

Նույնատիպ մի փաստ ինձ ցնցել էր տարիներ առաջ Ջվարիի եկեղեցում... Ուսումնասիրում էի զարդաքանդակներում նշմարվող հայատառ գրությունները և ցույց տալիս իմ համակուրսեցի դիրիժոր, ազգությամբ՝ տաջիկ Սուլեյման Շադամանովին: Վրացի ուղեկցողն հետաքրքրվեց, թե ես ի՞նչ եմ որոնում... Ասացի՝ «Հայատառ գրությունները վկայում են, որ մենք գտնվում ենք հայկական եկեղեցում»: Վրացի ուղեկցողը քիչ մնաց պայթեր զայրույթից և արհամարհանքով ասաց. «Դրանք ընդամենը զարդանախշեր են... Հայերդ սիրում եք ամեն ինչ վերագրել ձեր մշակույթին...»: Դիրիժոր ընկերս ինձ մի կողմ քաշեց և ասաց. «Իզուր ես ասում... Սրանից հետո էլ կջնջեն տառերը...»: Ես միշտ կհիշեմ դիրիժոր ընկերոջս հեռագնա և պարզ խորհուրդը...

Բայց, այնուամենայնիվ, համարձակվեցի «զրուցակիցներիս» հարցնել. «Եթե այդ տառերը կան, գոյություն ունեն, ապա ո՞վ է այդ տառ-քանդակների հեղինակը»: Պատասխանը՝ անտեղյակ մարդկանց ուսերի թոթվումն էր: Իսկ ինձ համար ամեն ինչ պարզ էր. անարմատ, անհիմն, անապացուցելի պատմություն էր այս ամենը, որը վեր է ածվում մշակութային քառսի:

-Աշխարհում գործում է մի չգրված օրենք. պետականություն չունեցող ազգի մշակութային արժեքները դառնում են ավար, ուրիշի սեփականություն:

Այդ մասին ես իմ անհանգստությունն եմ արտահայտել 87թ. գրած «Խռովք» պոեմում.

*Չիմա...քոչվոր ոճիրների մի հոծ ամբոխ
 Իր խեղճ մտքի կույր խավարից հանում է ոխ.
 Դինջ խեղում է խաչքարածև մի հիացմունք,
 Դարաերակ ամեն երազ ու սրբություն,-
 Եվ այդքանից հետո նաև... տեր դառնալով
 Այլաքրտինք խոյանքների ու պատմության...
 Թուհ, ինչքան է անտանելի այս բարբարոս
 Խլվլոցը այլասերման...*

-Այո՛, այդ ոլորտում ադրբեջանական իշխանությունները «Ֆան-տաստիկ արդյունքների» են հասել... Բայց երբ տեսնում ես, որ նույն քաղաքականությունը տարվում է նաև Վրաստանում, որտեղ նույնպես փորձում են յուրացնել ու սեփականացնել հայկական մշակույթի աժեքները, հոգով դառնանում ես և փրկարար ելքը տեսնում միայն ազգային հզոր պետականություն ունենալու մեջ:

-Չարագացած երկրներում օրենքով պաշտպանված են մշակութային արժեքները: Մշակույթը ոչ միայն երկրի դիմագիծն է, ոգին ու տեսողությունը, այլև նրա ապագան, լինելության գրավականը: Ուշագրավ է մեծ զորավար և ոգու ճարտարապետ Գարեգին Նժդեհի խոսքը. «Չար ու ավերիչ են լինում ստեղծագործելու անզորությունից տառապող ժողովուրդները միայն: Չայաստանի հարևաններից և նրա ոսոխներից, դժբախտաբար, քիչերն էին զերծ այդ չարանյութ տկարությունից:

Ահա թե ինչու արյունը, ավերն ու ավարը անպակաս եղան Չայաստանից: Այս պայմաններում իսկ, իր էության հավատարիմ՝ հայը պիտի մղվեր շինարարել անդադրում: Նա, որ մի ժամանակ ասել էր՝ «Անին շեն, աշխարհ ավեր», պիտի չկարողանար հաշտվել իր երկրի կիսավեր վիճակի հետ: Իր

պատմության կարելիությանց սահմաններում՝ հայն այսպես է հատուցել իր գոյության թշնամիներին. «Քանդեցին, ահա՛ ավելի լավը կկառուցեմ»:

-Գարեգին Նժդեհը ոչ միայն մեծ զորավար էր, այլև մեծ մտավորական: Իմ մեջ մշտապես ապրում է նրա ասույթներից հատկապես այս մեկը. «Մարդկությունը տառապանքին կպարտի իր հոգևոր ողջ մշակույթը: Ով տառապանքից է փախչում՝ կատարելությունից է փախչում: Ով չի տառապել՝ չի աճել, չի հզորացել ոգով»:

-Իսկ ստեղծագործող մարդու ոգին հրաշքներ է արարում...

Երբ քո ստեղծածը գողանում են ուրիշները և փորձում դարձնել իրենց մշակութային դիմագիծը, ոչ միայն քեզ են աղքատացնում, այլև իրենք են աղքատանում ոգով: Որովհետև քո ստեղծածը քո ոգու ծնունդն է և նկարագիրը: Նժդեհի հավաստմամբ՝ «Օտար մշակութային արժեքների յուրացումը-մասնավորապես նրա արտաքին փայլի, նրա բացասական կողմերի յուրացումը- տկարացնում է յուրացնողի ազգային ոգին»:

-Իրավ, հայ ազգը անմահ է և հավիտենական հենց իր ինքնատիպ և բացառիկ մշակույթով: Բեմի մեծ վարպետ Վահրամ Փափազյանը խոստովանել է. «Պաշտում էի Իտալիան և նրա հանճարը, բայց զգում էի, որ իմը չէր նա, ոչ էլ ես՝ իրենը, սիրում էի զվարթ, նրբամիտ, ազատ Ֆրանսիան, բայց գիտեի, որ ֆրանսիացի չեմ: Եվ անհայրենիք հոգու մղձավանջը չարաշուք ամպի նման կուտակվում էր իմ հոգու հորիզոնում ու սպառնում մթազնել իմ անհոգ ու շենշող պատանու ամբողջ երկինքը: Այդ հայրենաբաղձ գաղտնի տազնապն էր, գուցե, որ... համոզեց ինձ, թե՛ առանց հայրենիքի ինչ և ինչքան էլ որ սերմանեի, չլինելով իմ հարազատ,

իմ սեփական արտում, բերքը, հետևաբար, կլինի օտարի բաժին»:

-Դուք ձեր հոգևոր սերմերը հանձնել եք միշտ հարազատ հողի ակոսներին, որոնք անակնկալ բերքով են դիմավորել մարդկանց, նրանց մեջ բացահայտելով առեղծվածային կյանքի դռները, և ձեզ բեմարվեստի հասցեներն են ողջունել ոգու նորանոր բացահայտումներով, և Անհայտի ձեռքն է բացել փառքի դուռը...

Եկել հասել եք Հարավային Օսիա, որպեսզի հանդիպեք «Անդրոն ու Սանդրոն» պիեսի հեղինակին՝ Գեորգի Խուզակին, իսկ նա, պարզվում է, Հյուսիսային Օսիայում է և դիտում է իր մի այլ ներկայացման առաջնախաղը: Ոչինչ: Դա հո աշխարհի վերջը չէ, ոչ էլ սկիզբը... Կարևորն այն է, որ մի քանի օր ապրեցիք այն միջավայրում, որտեղ ստեղծվել է այդ դրամատիկական երկը: Իսկ նկարիչ Գրիգորի Ծատուրյանն էլ, բարեբախտաբար, հասցրեց գտնել այն բացառիկ գույները, որոնք պակասում էին իր բազում անշրջանակ կտավներին:

-Նշեմ, որ Ցխենվալիում մենք՝ ես ու նկարիչ Գրիգորի Ծատուրյանը, հասցրեցինք դիտել նաև երկու ներկայացում: Զավեշտականն այն էր, որ Ցխենվալիի թատրոնի շենքը միաժամանակ ծառայում էր երեք տարբեր հիմնարկների՝ Պարի պետական անսամբլին, «Կոստա Խեթագուրովի անվան պետական թատրոնին» և վրացական նորաստեղծ թատրոնին, որոնք շաբաթական երկուական օր շենքում ծավալում են իրենց մշակութային գործունեությունը: Ես փառք տվի Աստծուն, որ Ստեփանակերտի հայկական պետական թատրոնը գործում է ճարտարապետական ուրույն դիմագիծ ունեցող մի փառահեղ շենքում, որը Ղարաբաղում համարվում է նաև Պատվի և Փառքի պալատ, որտեղից ժողովուրդն իր մեծագույն զավակներին սգո ծիսակարգով ծանապարհում է դեպի

Աստծո արքայություն:

Վրացի ռեժիսորն ինձ պատմեց, որ Ցխենվալիում վրացական թատրոնն պահելն անհիմաստ է, քանի որ չունենք հանդիսատես: Պետական քաղաքականության արդյունք է դա: Վրացական իշխանությունը նպատակ է հետապնդում վրացական թատրոնի համար ներմուծել վրացի հանդիսատես: Այդպես Ստեփանակերտում ադրբեջանցի երգիչներ էին խցկում երգի-պարի համույթի մեջ: Ո՞ւմ համար...

Երեկոյան դիտեցինք վրացական ներկայացումը: Չանդիսատես կա՞ր, չգիտեմ: Ընդամենը 5-6 հոգի, որոնք հորանջում էին ձանձրությից: Ներկայացման միտքն այն էր, թե ինչպես Թբիլիսիում աստիճանաբար նվազում է վրացիների թիվը, իսկ նրանց բնակարանները զբաղեցնում են փողոց մաքրող եզրիների բազմազավակ ընտանիքները:

Հաջորդ օրը դիտեցինք օսեթական ներկայացում, որը համեմված էր ազգային սովորույթներով և պարերով: Դիտարժան բեմադրություն էր: Դահլիճը լեփ-լեցուն էր: Առաջնախամղ էր: Ո՛չ: Պարզապես բնակչությունն այդպես սատարում էր ազգային թատրոնին: Նույն առողջ մթնոլորտն էր տիրում և թերթի խմբագրությունում: Խմբագրի վկայությամբ՝ ընտանիքներով բաժանորդագրվում են թերթին, որպեսզի թերթը, որպես օսեթական լեզվով լրատվամիջոց, մշտապես գործի: Ընդօրինակման արժանի վերաբերմունք է դա, ազգային բարձր ըմբռնում:

Նշեմ նաև, որ օսեթական կոլորիտով միջավայրում նկարիչ Գրիգորի Ծատուրյանը ներշնչվեց և ստեղծեց մի քանի հաջողված էսքիզներ բեմի ձևավորման և զգեստների համար:

Ստեփանակերտի մեր ոգևորությունն ու ներշնչանքը իսկույն փոխանցվեց դերասաններին:

Պարուսույց Մելս Շավոխովը պայմանավորված օրը եկավ

Ստեփանակերտ՝ ներկայացման համար բեմադրելու օտեթական պարեր: Նա գոհ էր արցախյան հյուրընկալությունից: Արվեստի նվիրյալը օգտակար խորհուրդներ տվեց նաև ազգային բնավորությունների և մարդկային փոխհարաբերությունների կերտման, ազգային կոլորիտի և նրբերանգների ստեղծման առնչությամբ: Անձամբ ճանաչում էր ժողովրդական արտիստներ Նաիրուհի Ալավերդյանին և Աշոտ Բաբայանին, ոգևորված էր նրանց արվեստով:

Գեորգի Խուզակի «Անդրոն ու Սանդրոն» ներկայացումը հանդիսատեսն ընդունեց ոգևորությամբ ու ծափոջույններով:

Իրականություն դարձավ թատերական ևս մի երազանք:

Չետաքրքիր էր նաև Վարդգես Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը» պիեսի բեմադրության պատմությունը: Ասեմ, որ Երևանի դրամատիկական թատրոնում ռեժիսոր Հրաչյա Ղափլանյանը փայլուն կերպով բեմադրել էր այդ պիեսը և, եթե չեմ սխալվում, հեղինակը այդ պիեսը գրել էր հենց այս թատրոնի համար: Իսահակ Ալավերդյանն, ինչպես միշտ, ոգևորված համոզում էր ինձ, որպեսզի ես, առանց ժամանակ կորցնելու, ձեռնամուխ լինեմ այդ ժամանակակից պիեսի բեմադրության աշխատանքին: Նրա բերած փաստերը ծանրակշիռ էին. պիեսում վեր են հանվում երիտասարդությանը հուզող բազմաթիվ հարցեր, ուշադրության կենտրոնում են դպրոցը, ուսուցիչը և աշակերտը, որոնք իրենց հարաբերությունների շրջապատւյտում ամբողջացնում են որոշակի իդեալներ, բացահայտում հոգեբանական նոր շերտեր:

Ես էլ էի ուզում բեմադրել, բայց պիեսը Երևանի դրամատիկական թատրոնը մեզ չի տրամադրի. առաջին բեմադրության իրավունքն իրենն է:

Որոշեցինք Իսահակ Ալավերդյանին գործուղել Երևան՝ «Վերջին ուսուցիչը» պիեսը ձեռք բերելու նպատակով: Ինչպես ասում են՝ ուրբաթն ավելի շուտ եկավ... ՀՀ գրողների միության նախա-

գահ Վարդգես Պետրոսյանը ժամանեց Ստեփանակերտ՝ գրական հատուկ առաքելությամբ:

Գրական միջոցառումն էլ հենց տեղի ունեցավ թատրոնի դահլիճում: Վ.Պետրոսյանը անվանի մանկագիր Գուրգեն Գաբրիելյանին հանձնեց Յայաստանի գրողների միության Ստ. Զորյանի անվան ամենամյա մրցանակը:

Այդ օրը մեզ համար տոն էր: Աստված էր ճանապարհի հարթում մեր թատրոնի համար: Պահը հարմարավետ էր և ես Վարդգես Պետրոսյանին ներկայացրի թատրոնի ծրագիրը՝ «Վերջին ուսուցիչը» պիեսի բեմադրության առնչությամբ: Վ.Պետրոսյանը խոստացավ պայմանավորվել ռեժիսոր Յ.Ղափլանյանի հետ և հարթել խոչընդոտը:

Սկսեցինք «Վերջին ուսուցիչը» պիեսի բեմադրության աշխատանքը: Դերերի բաշխումն այնքան էլ դյուրին չէր: Փարիզից դեռ նոր վերադարձած տաղանդավոր դերասանուհի Էմմա Պապայանը՝ գրող և դրամատուրգ Արամաշոտ Պապայանի դուստրը, նշանակալի դերով ուզում էր ներկայանալ Արցախի հանդիսատեսին: Նա ստանձնեց երիտասարդ ուսուցչուհու դերը: Երիտասարդ ուսուցիչ Մամյանի դերակատարն էր տաղանդավոր դերասան Սամվել Վիրաբյանը: Նախապես ոչ ոք համաձայն չէր, որ այդ դերը Սամվել Վիրաբյանի համար էր: Ոմանք գտնում էին, որ այդ դերը կարող է մարմնավորել միայն բարձրահասակ և նիհար տեսքով, այն էլ՝ սիրահարված երիտասարդը: «Ինչպես հասկանա՞լ, կարծիքս հայտնեցի դերաբաշխումների քննարկման ժամանակ, չաղ երիտասարդը չի կարող սիրահարվել»:

Դպրոցի տնօրենի դերակատարն էր հանրապետության ժողովրդական արտիստ Զինավոր Գևորգյանը, ով վարպետորեն մարմնավորեց բարի և խիստ, միաժամանակ պահպանողական ղեկավարի կերպարը:

Տեղի էր ունենում նոր և հին հայացքների բախում, հակասությունների տեղապտույտում բացահայտվում էր նորի դիմագիծը:

Կոլորիտային գրավչություն ունեին նաև հանրապետության ժողովրդական արտիստուհի Նվարդ Ասատրյանի և վաստակավոր արտիստուհի Արֆենյա Գրիգորյանի կերտած կերպարները, որոնք իրենց հատուկ հայացքներով անվերապահորեն լրացնում և ամրապնդում էին Զինավոր Գևորգյան - դպրոցի տնօրենի գաղափարական դրյակի պատը: Նոր հայացքների կրողներն էին Սամվել Վիրաբյանի և Էմմա Պապայանի կերտած կերպարները, որոնք հասունացող և սանձակոտոր երիտասարդների գործողություններում տեսնում էին նրանց ինքնահաստատումը: Նորի և հինի հավերժական պայքարի համապատկերն է այս ներկայացումը, որը հանդիսատեսի կողմից ընդունվեց ոգևորությամբ և ծափոլջույններով: Ներկայացումից հետո Էմմա Պապայանը (ի դեպ՝ նա նույնպես Ս.Վիրաբյանին չէր պատկերացնում երիտասարդ, այն էլ՝ սիրահարված ուսուցչի դերում) խոստովանեց, որ սիրահարվել է Սամվել Վիրաբյանի կերտած կերպարին: Դա արդեն հաղթանակ է:

-Թատրոնի տարեգրության մեջ արձանագրվեց ևս մի ձեռքբերում. «1985թ. Ստեփանակերտի Մ.Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը բեմադրեց Վարդգես Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը» պիեսը, որը ջերմորեն ընդունվեց մեր լեռնաշխարհի հանդիսատեսի կողմից»:

-Դուք էլ այն կարծիքն ունեք, որ մեծ է թատրոնի դերը երիտասարդ սերնդի գեղագիտական և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

-Երիտասարդ սերնդի գեղագիտական և ռազմահայրենասիրական դաստիարակությունը սկզբնավորվում է դպրոցում: Թատրոնը նախ և առաջ ընդլայնում է երիտասարդների մտահորիզոնը, հարստացնում նրանց բառապաշարը, կատարելագործում խոսքը: Թատրոնը նաև ապրելու մշակույթ է: Նրա բացակայությունը... քառսի սկզբնավորումն է:

-Մեջ բերեմ մի հատված Ալեն Դալեսի (հետագայում՝ ԱՄՆ հետախուզության պետ) 1945թ-ին ԱՄՆ-ի կոնգրեսում արտասանած ճառից. «...Քառս սփռելով՝ մենք աննկատ իրենց իրական արժեքները կփոխենք կեղծերով և կստիպենք նրանց հավատալ այդ կեղծ արժեքներին: Գրականությունից և արվեստից մենք աստիճանաբար դուրս կմղենք նրա հասարակական էությունը, դուրս կմղենք նկարիչների մոտից ժողովրդի հոգու խորքում կատարվող գործընթացների պատկերման և ուսումնասիրության ցանկությունը, իսկ գրականությունը, թատրոնը, կինոն պետք է պատկերեն և փառաբանեն միայն ամենազազրելի մարդկային զգացմունքները»:

-Աշխարհը մինչև այսօր կարծես թե գնում է այդ ճանապարհով: Բայց Ա.Դալեսի առաջարկած «ծրագիրը» ոչ թե իր երկրի հասարակության, այլ նախատեսվել է հարևան երկրների ժողովուրդների համար, որպեսզի հեշտ լինի նրանց (այսինքն՝ ստրուկներին) կառավարելը: Զրկելով ազգային ինքնությունից՝ մարդը դառնում է անդամ, անհավատ և վեհ ձգտումներից զուրկ մի էություն, ավելի շատ՝ մեքենա, քան՝ մտածող ու դատող արարած:

-Յետաքրքիր է Ա.Դալեսի ճառի շարունակությունը. «Մենք պետք է օգնենք ու բարձրացնենք այնպիսիներին, որոնք կսկսեն սերմանել, սրսկել մարդկային գիտակցությունում սեքսի, բռնության, սադիզմի, դավաճանության, այլ խոսքերով՝ ցանկացած անբարոյականության պաշտամունք»:

-Վերջին տասնամյակներում (Խորհրդային միության փլուզումից հետո) մեր արվեստի դաշտում ոմանք տուրք տվեցին այս «ուղղությանը», բայց գերակշռողն ու ազդեցիկը առողջ մտածելակերպ ունեցող արվեստագետների ստեղծագործություններն են: Բեմադրության համար պիես ընտրելիս՝ ես միշտ նկատի եմ ունենում այն հանգամանքները, թե տվյալ ստեղծագործությունը հարստացնո՞ւմ է, թե աղքատացնում հանդիսատեսի հոգեաշխարհը, ոգևորո՞ւմ է, զինում նոր հույսերով, թե միայն հուսալքում է, բարոյագրկում սերունդներին:

-Թատրոնը, որպես երիտասարդների գեղագիտական և ռազմահայրենասիրական դաստիարակության միջոց, այսօր կատարո՞ւմ է իր բացառիկ առաքելությունը՝ արթուն և կենդանի պահելով հոգևոր դաշտը, մշտապես նպաստելով նոր հայացքների և գաղափարների սկզբնավորմանն ու հաստատմանը կյանքում:

Ուշագրավ խոստովանություն է արել բանաստեղծ, լրագրող Դավիթ Միքայելյանը Վարդգես Բաղդյանի «Ես մնում եմ» պիեսի բեմադրությունը դիտելուց հետո. «Պիեսում շոշափվում է հասարակական հնչեղության մտահոգիչ խնդիր՝ երկրից արտագաղթելու տենդը, որ հետպատերազմյան շրջանում մի տեսակ «գայթակղիչ» է դարձել որոշ ընտանիքների համար և վճռորոշ մեր ժամանակներում կարող է լրջորեն սպառնալ ժողովրդագրությանը: Իսկ մեր երկրում, լինի դա Չայաստանում, թե Լեռնային Ղարաբաղում, ուր մեր ժողովրդի գավակներն իրենց կյանքը չեն խնայել հայրենիքը պաշտպանելու համար, արյան գնով ազատագրեցին Արցախը, ինչպիսի հանգամանքներում էլ որ հայտնվելու լինեն, ոչ մեկին բարոյական իրավունք չի վերապահվում լքել երկիրը և բռնել արտագաղթի ճամփան, «մանավանդ, որ հողն այդ, որ հա-

յորդիների արյամբ է ներկված, պատմական մեր հայրենիքն է ու այնտեղ մեր նախնիների և ծնողների գերեզմաններն են, նրանցից ժառանգած հարուստ ավանդույթները, մեր հոգևոր, պատմամշակութային հուշարձաններն ու կոթողները, վանքերը, եկեղեցիներն ու սրբացած մատուռները»... Ու այս «համապատկերի» մեջ խրոխտ և առավել վճռական է հնչում հեղինակի դատապարտող խոսքը. «Նման արժեքների տերը, որ առավել զրկանքներ է կրել դաժան պատերազմում, այսօր իրավունք ունի, արդյո՞ք, լքելու հող հայրենին»:

«Եթե ներկայացումը դիտելուց հետո թեկուզ մեկ ընտանիք, մեկ հայ մտափոխ կլինի և իրեն հետ կպահի ամերիկաներ մեկնելու մտադրությունից՝ նախընտրելով ապրել Հայրենիքում, ուրեմն ես հասել եմ իմ նպատակին», -համոզված է պիեսի հեղինակը»:

-«Ես մնում եմ» պիեսը բեմադրելիս որոշակի չափով սրել և ուժգնացրել եմ հեղինակի հոգեբանական այն լուծումները, որոնք վերաբերվում են երտասարդների ինքնահաղթահարման գործընթացների կերպավորմանը: Հերոսների կենդանի խոսքն ու շարժումները բեմարվեստում ազդեցության ուժեղ դաշտ են ստեղծում, երբ բխում են իրական հիմքից և հանգում տարիներ որոնված և գտնված հոգևոր ելքին: Սա է արվեստի իրականությունը, որը հանդիսատեսի հոգում երկար ապրելու հնարներ է գտնում:



ՆԿԻՐՅԱԼ ՌԵԺԻՍՏՐԸ
ԵՎ ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՕՐԸ

*Դերասանը պիտի կարողանա ստեղծել կենդանի
կերպար և ոչ թե խաղալ հենց այնպես, խաղալու համար:*

Լեոնիդ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՐԿԻՆ ԴՌՆԵՐԸ ԲԱՑՎՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ԻՆՔՆԱՅԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԱՎՈՏՆԵՐԸ

*Դռներն են բացվում՝
բևեռները հոգու:
Դեմքիս բեկորները...
աղաղակում են
քիվերից Լուսնի:
Ռ. Եսայան*

- Ճակատագիրը քորոցով չհանեց ոչ միայն մեծադիր լուսանկարիդ, այլև ձեր աչքերը, որովհետև դրանք պիտի լուսավորեն անդունդի եզրին կանգնած փափազյանական թատրոնի նորոթյա իղձերը: Պատերազմից հետո երկիրը փորձում էր շտկել իր մեջքը, ուժերը հավաքել և բացել նոր օրվա պատուհանը, որը, բնականաբար, արվեստն էր: Եվ չհապաղեցիր, երկար, որ Ստեփանակերտի թատրոնի դռները կրկին բացվեն դեպի հավատը, դեպի հույսը, դեպի հանդիսատեսի ջերմ ու սրտատրոփ սպասումը: Կարինե Ալավերդյանի հավաստմամբ՝ թատրոնի վիճակը հոգեվարքային էր. «Թվական 1995: Կյանքի բնականոն ընթացքից դուրս եկած Ստեփանակերտ: Նյութապես և բարոյապես հյուծված, անկենդան թատրոն:

Դերասանները՝ չնայած ցրտին ու պակասությանը, ամեն օր ճշտապահությամբ ներկայանում են թատրոն, եթե նույնիսկ անելիք չկա՝ թող գեթ մարդկային շունչը չկտրվի նրանց համար կյանքի իմաստ և սրբություն դարձած շենքի պատերի ներսում:

Հանդիսատեսը՝ ավագները, հոգսերով ծանրաբեռնված՝ մոռացել են «տաճար տանող ճանապարհը», երիտասարդներ-

րը չեն հասցրել ըմբռնել թատրոնի համն ու հոտը, ավելի փոքրերը պատկերացում չունեն՝ ինչ է թատրոնը, խզվել է թատրոն-հանդիսատես՝ տարիներով փայփայված կապը»:

- Այդ խզումն, իհարկե, հոգևոր աշխարհում տագնապահար ոգու զանգի էր նման: Հասարակությունն օտարվել էր ինքն իրենից, օտարվել թատրոնից, իսկ դերասաններից ոմանք էլ շուկաներում առևտուր էին անում՝ փորձելով դուրս չմնալ գոյատևման ահեղ պայքարից: Կ. Ալավերդյանն իրավացի էր, երբ գրում էր. «Հասարակությունը հիվանդ է: Նոր տնտեսական հարաբերություններ կոչվածը, ասել է՝ պահանջարկի և առաջարկի «ոսկե կանոնը», խժռում է տարիներով ստեղծված հոգևոր արժեքները, մշակույթը «մեծապատիվ մուրացկանի» կարգավիճակով քարշ է տալիս իր գոյությունը: Ամայացած հոգիների պարարտ հողի վրա հախուռն ծաղկում են ապրում արվեստի թափոնները: Թատրոնը մի տեսակ շվարած, մոլորված «անմեղ մեղավորի» խեղված հոգեվիճակով ծուռվիզ սպասում է, որ իշխանությունները սթափվեն և հիշեն իրեն»:

Տարիներ առաջ էր. այդ ժամանակվա ԼՂՀ ժողկրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Մարսել Պետրոսյանը մի օր զանգեց և հայտնեց ինձ, որ ես կառավարության որոշմամբ հրավիրված եմ աշխատանքի՝ Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան թատրոնում՝ որպես ռեժիսոր և գեղարվեստական ղեկավար: Ես մինչ Ստեփանակերտ տեղափոխվելը՝ որոշեցի ավարտել բոլոր կիսատ թողած գործերս: Դա սկզբունքի հարց էր: Ստեղծագործական մտահղացումներս իրականացնելուց հետո միայն ես կարող եմ ինձ ազատ և բավարարված զգալ: Նախ՝ Վանաձորի իմ հիմնած տիկնիկային թատրոնում ավարտեցի «Քեֆ անողի քեֆը չի պակսի» ներկայացման բեմադրությունը: Սցենարը գրել էի՝ ըստ Յովի. Թումանյանի համանուն հեքիաթի: Հետո՝ «Շիրակ» հեռուստատեսության գլխավոր խմբագիր Ժորա Վարոսյանի հորդորով և սցենարի հեղինակ, բանաստեղծ Արա Արտյանի

օգնությամբ, ամբողջացնելով սյուժեն և ավարտելով մոնտաժային աշխատանքները՝ հեռուստադիտողի դատին հանձնեցի «Դարբինների զարմը» կարճամետրաժ ֆիլմը: Մի օր մշակույթի քաղաքային բաժնի վարիչ Յասմիկ Կիրակոսյանն ինձ հայտնեց, որ Ստեփանակերտից հաճախ են զանգում և հետաքրքրվում ինձնով. «Եղբայր, դարաբաղցիք քեզ որոնում են. հո թատրոնը հետո Գյումրի չե՞ս բերել... Որ մի օր գնաս, այստեղ մերոնք կհամաձայնեն... Չէ որ մեր թատրոնն էլ ռեժիսորի կարիք ունի»: Այդ պահին կրկին հնչեց հեռախոսազանգը: Տիկին Յասմիկ Կիրակոսյանը քիչ անց հեռախոսափողը փոխանցեց ինձ: Նախարար Նելլի Ոսկանյանը հարազատ և վճռական ձայնով ինձ համոզում էր, որ ես Ստեփանակերտի թատրոնում ստանձնեմ գլխավոր ռեժիսորի պարտականությունները: Ես երկմտանքի մեջ էի: Ի՞նչ անել: Կոմպոզիտոր, դիրիժոր Լորիս Ճգնավորյանը, որ այդ ժամանակ գտնվում էր մշակույթի բաժնի վարիչի սենյակում, հորդորեց ինձ ընդունել առաջարկությունը. «Արցախում կյանքի-մահի կռիվ է բոլոր ասպարեզներում, և այնտեղ գնացողը՝ զինվոր է»: Այդ խոսքն ինձ օգնեց հաղթահարել իմ երկմտանքը և կայացնել Արցախ մեկնելու իմ հերթական վճիռը:

- Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան թատրոնի վիճակն, իրոք, հոգեվարքային էր: Կ. Ալավերդյանի վկայությամբ՝ թատրոնը հաշմված էր. «Մեկնարկային կետը՝ զրոյական, խթանիչ ուժը՝ մասնագիտական սեր, նվիրվածություն»:

- Թատրոնի վիճակը ոչ միայն ծանր էր, այլև՝ ողբերգական: Երբեմնի կյանքով լեցուն մեղվանոց-օջախը մարած փեթակի էր նման: Պատերազմի մահաբեր շունչն էր զգացվում շինության բոլոր անկյուններում: Սիրտդ ճմլվում էր, երբ նայում էիր հսկայական շենքի դատարկ միջանցքներին և խավարում թաղված դահլիճին: Յանրապետության ժողովրդական արտիստ Իվան Յովհաննիսյանի ղեկավարությամբ թատերախումբը սկսեց հաղթահարել դժ-

վարությունները և մեկ շաբաթ հետո ներկայացրեց Գ. Թավրիզյանի «Մելիքի աղջիկը» բեմադրությունը: Տպավորությունը վիատեցնող էր, քանզի բեմում, բացառությամբ երիտասարդ դերասանուհիներ Նարինե Ավետիսյանի և Նաիրա Աղաջանյանի խաղի, մյուս դերասաններն ու դերասանուհիներն իրենց խաղով տպավորություն չգործեցին: Դերասաններ Սամվել Վիրաբյանն ու Սամվել Եվրիյանը կարող ուժ էին, բայց նրանց խաղը դեռևս որակագուրկ էր: Նրանց նիրհող ուժերն ու կարողություններն արթնացնել էր պետք: Ռեժիսորը պարտավոր էր ակտիվացնել թատերախմբի ստեղծագործական որոնումներն ու ստեղծել աշխատանքային կենսունակ աուրա: Երեկ էլ, այսօր էլ թատրոնի դերն ու նշանակությունը միշտ մնում են նույնը. լինել հնարավորին չափ իր ազգի, ժողովրդի հոգևոր գաղափարակիրը, լեզվի կրողն ու արտահայտիչը, ուղեցույցն ու ջահակիրը, զինել ազգին հոգեպես, որն էլ նրա անպարտելիության գրավականն է: Սա կարևոր սկզբունք է, որից դուրս գործելն անիմաստ է, աննպատակ և ոչ արդյունավետ:

Քանի որ Երևանից դերասաններ հրավիրելն անհնարին էր, որոշեցի աշխատանքի հրավիրել թոշակառու դերասաններին՝ Մամիկոն Միքայելյանին և Նվարդ Ասատրյանին: Թատրոնից դուրս էին նաև միջին սերնդի շնորհալի մի խումբ դերասաններ, որոնք զբաղված էին իրենց բնույթին անհարիր աշխատանքներով: Անհրաժեշտ էր թատրոնում ստեղծել նորմալ, աշխատանքային մթնոլորտ, որը կնպաստեր բացահայտելու դերասանների ստեղծագործական ուժերն ու հմտությունները: Թատրոնից դուրս գտնվող սև ուժը, որը համառորեն պայքարում էր և իր քայքայիչ գործողություններով փորձում անդամալույծ անել թատերախմբին, գայթակղում էր դերասաններին նոր թատրոն ստեղծելու առաջարկությամբ: Դա էր պատճառը, որ հանրապետության ժողովրդական արտիստներ Մամիկոն Միքայելյանն ու Նվարդ Ասատրյանը բավականին ուշացումով միայն կարողացան մասնակցել թատերախմբի փորձերին: Ընկերոջս՝ տաղանդավոր ռեժիսոր Յամ-

լետ Յովհաննիսյանի առաջարկությամբ, բեմադրելու համար ընտրեցի Դ. Ռիկարդոյի «Առլեկինը՝ արքա» պիեսը, որի մեջ արծաթավող հարցերը բազմաշերտ են, իսկ հիմնական գաղափարը՝ ժողովուրդ-իշխանություն հարաբերությունը: Թատրոնում ընդգրկված դերասանները (Բենիկ Օվչյան, Մարգո Բալասանյան, Միքայել Չարությունյան, Զաքիկ Չարությունյան, Արեգա Պետրոսյան, Ժորա Մովսիսյան, Զինավոր Գևորգյան, Սամվել Վիրաբյան, Սամվել Եվրիյան) հուսադրող էին և իրենց փորձով ու կարողություններով՝ բացառիկ ու ոգևորիչ: Համոզված էի, որ նրանց հետ նպատակասլաց ու անխոնջ աշխատելով, կարող եմ հասնել ցանկալի արդյունքի: Հիշեցի իմ դասախոսի՝ թատերագետ Յենրիկ Յովհաննիսյանի խորհուրդը. «Ես դերասանից եմ սկսում, որովհետև դերասանին եմ համարում կենտրոնական անձը թատերական օրգանիզմի մեջ, դերասանին եմ համարում այդ արվեստի սկզբունքի, առանձնահատկության կրողը, նրա շարժիչ ուժը: Դերասանից պիտի ամեն ինչ սկսվի»: Մտածում էի, որ տաղանդավոր դերասան Ժաննա Գալստյանի անհատականությունն ի զորու է միավորելու դերասաններին ու մղելու ստեղծագործական նոր ձեռքբերումների: Եվ որոշեցի այցելել Արցախյան զոյապայքարի նվիրյալ Ժաննա Գալստյանին և առաջարկել նրան ստանձնել ներկայացման պատասխանատու ու բարդ դերերից մեկը՝ Գիզայի դերը: «Առավոտյան ժամը 11-ին ես կլինեմ փորձասենյակում», - հանդիպման ժամանակ ասաց Ժաննան՝ մի անչափելի ուրախություն և ոգևորություն պարզաբերելով ինձ: Գտնված էր դերասաններին միավորող ուժը: Դա սերն էր դեպի թատերարվեստը: Մնում էր գտնել ստեղծագործական մյուս բանալիները՝ վստահությունն ու հավանորդ սեփական ուժերի նկատմամբ և անխոնջ աշխատանքը:

-Պարոն Չարությունյան, ձեր լավատեսությունն, իհարկե, վարակիչ է և հուսադրող: Թեև, ես կարծում եմ, իրականությունն այլ բան էր հուշում: Այնքան էլ հեշտ չէր միավորել այնպիսի մի թատերախմբի դերասանների, որոնք իրենց հոգում

պատերազմի հետքերն էին կրում ու դեռևս խարխափում անորոշության ցանցում: «Մարտիկ» թերթի թղթակիցն իրավացի էր, երբ «Կգա ստեղծագործելու ձեր ժամանակը» հարցազրույցում նշել էր. «Թատրոնի գործունեության համար խիստ աննպաստ էր անցած 5-6 տարին»: Դուք, իհարկե, համաձայնվել էիք նրա հետ, հավելելով. «Իրոք, անցած 5-6 տարին աննպաստ է եղել և ոչ միայն՝ թատրոնի համար, բայց եթե մասնավորեցնենք, թատրոնի համար այդ տարիները եղել են սպանիչ. քայքայվել է թատերական տնտեսությունը, ստեղծագործական կոլեկտիվը ցաքուցրիվ է եղել, շատերը հեռացել են ընդմիջտ, ոմանք՝ հիվանդացել ու դարձել անաշխատունակ, շատերը՝ հարազատներ ու զավակներ կորցրել և ներանձնացել իրենց վշտի մեջ: Այս ամենով հանդերձ՝ թատրոնի ոչ մեծ կոլեկտիվը ճակատին տվել է կռվող ու մարտնչող զինվորներ. նրանցից են Մարտին Ալոյանը, Ալեքսեյ Յայրիյանը, Ալեքսանդր Յայրապետյանը, Արմեն Սարգսյանը, Արթուր Ղահրամանյանը: Մենք հպարտ ենք առանձնապես ժաննա Գալստյանով. նա եղավ Արցախյան շարժման ու գոյապայքարի առաջամարտիկներից: Սրբազան կռվին թատրոնը տվել է նաև իր զոհը. մեր ստուդիայի ուսանող Սուրեն Յակոբյանն ընկել է ճակատում: Եվ մեզ համար այդ մեկ զոհն էլ շատ է թանկ, քանզի կտրվել է հայրորդու կյանքի թելը, ով կարող էր հրաշալի ու բեղմնավոր ընտանիքի հայր լինել կամ էլ, ինչու՞ չէ, մեծ ու տաղանդավոր արվեստագետ: Իսկ հիմա մենք հպարտ ենք նրա անձնուրացությամբ ու խոնարհվում ենք այդ սուրբ հիշատակի առաջ: Սակայն ի հեճուկս այս ամենի, թատրոնը կա և կլինի, քանզի այն յուրաքանչյուր ազգի ու ժողովրդի հոգեկան զարկերակն է, նրա կենսունակության, ոգու արտահայտությունը: Իսկ ոգին երբեք չի մեռնում»:

Իրոք, արվեստը հայ կենսակերպի անհրաժեշտ մաս կազմելով՝ ուղիղ կապի մեջ է ժողովրդի, երկրի գոյության ու

անվտանգության հիմնախնդիրների հետ: Ճիշտ է, թատերախմբի դերասանների մեծամասնությունը վճռական էր տրամադրված, ուզում էր աշխատել, ստեղծագործել և հասնել լիակատար արդյունքի, բայց ժամանակի ձեռքն ուղղորդում էր ոմանց ոչ թե միավորվել, այլ՝ խափանել ձեր սկսած գործը:

-Ժաննա Գալստյանի ներկայությունը ոգևորություն և ուրախություն հաղորդեց դերասաններին: Կ. Ալավերդյանի հավաստմամբ՝ «ամեն մի ժամանակաշրջանում թատրոնն իր առանցքային դեմքն է ունենում: Նոր ժամանակների համար այն դարձավ երկար ընդմիջումից հետո խրամատներից բեմ բարձրացած Ժաննա Գալստյանը՝ որպես ազգային կերպար և դերասան»:

Ներկայացման փորձերը սկսված էին: Սակայն, ինչպես հաճախ էր պատահում թատրոնի կյանքում, մի աննշան դեպք կամ դիպված պատճառ էր դառնում, որպեսզի խափանվեր այնքան կարևորագույն և երազված գործը: Կային նախանշաններ էլ, որոնց անվերապահորեն հավատում էին թատրոնի մարդիկ: Օրինակ: Եթե փորձի ժամանակ պիեսի տեքստն ընկնում էր դերասանի ձեռքից, նա անմիջապես հոգատար քնքշությամբ պիտի նստեր թերթերի վրա և նոր միայն փորձեր վերցնել հատակից: Այլապես ներկայացումը կամ դերասանների ստանձնած դերը (Աստված չանի) կարող էր տապալվել: Այս միջային հոսանքները դերասանների կյանքի մեջ էին թափանցում այն ստեղծագործություններից, որոնք բեմադրվում էին: Սրանում ես համոզված էի: Ճանապարհը հատող սև կատուն գուցե ավելի ազդեցիկ չէր, քան այս դիպվածը կամ նախանշանը: Գուցե, ո՛վ գիտե... Այս նախանշաններն, իհարկե, ինձ համար սնոտի արտահայտություններ չէին, այլ՝ զվաճալի իրողություններ, որոնց ես հեշտությամբ շրջանցում էի: Ինձ ավելի շատ մտահոգում էր մի բան. արդյո՞ք, բոլոր դերասաններն են նվիրված աշխատում, թե՞ նրանց մեջ կա մեկը, ով մտածում է «հարվածել թիկունքից», ինչպես «Ծառերը կանգնած են մահա-

նում» ներկայացման առաջնախաղի ժամանակ: Կասկածս իրականություն դարձավ. այն պահին, երբ բավարար փորձերից հետո ուզում էի վերջապես թատրոնի վարագույրը բացել և ներկայացումն ի վերջո մարմնավորված տեսնել բեմում, լսեցի ահարկու գույժը. «Դերասաններից մեկը հիվանդացել է»: «Այդ դեպքում ինչո՞ւ չենք այցելում մեր հիվանդ ընկերոջը: Գուցե նա մեր օգնության ու աջակցության կարիքն ունի», - անհանգստացա ես: «Երանի՜ թե այդպես լիներ, պարոն Չարությունյան: Նա գիշերը հիվանդանոցում է, իսկ ցերեկային ժամերին աշխատում է խանութում», - այս պատասխանն ուղղակի խոցեց ու տակնուվրա արեց հոգիս: «Մի՞թե իրականանում էր կասկածանքս: Իսկ դերասանների տքնաջան աշխատանքն ու երկարատև ապաստումը որևէ արժեք չունեին՝ այդ ստահակի համար: Ուրեմն, դերասանական ստոր տեսակը ևս ժառանգաբար փոխանցվելու հատկություն ունի», - այս մտքին հանգեցի մի քանի օր հետո, երբ ուզում էի այցելել հիվանդանոց, իսկ դերասաններից ոչ-ոք չուզեց միանալ ինձ: -«Մի՞թե երկրաշարժի արհավիրք ու պատերազմ տեսնելուց հետո էլ մարդ կարող է այդպիսի ստորություն անել: Ես կյանքից կտրված և գրքային դատողություններով ապրող մեկն էի, որ նվիրումով ու հոգատարությամբ պարուրում էի ամեն մի դերասանի՝ մղելով ինքնաբացահայտման... Փայլուն, աստեղային այդ ակնթարթները մի՞թե այնքան էլ արժեք չունեին... Մի՞թե արվեստը փրկության ձեռք չէր... Չավատավոր ու աջակից բարեկամ...», - մտորում էի ես և փրկության ելք փնտրում:

Ժողովրդական իմաստությունն էլ չուղղորդեց ինձ՝ զգոն ու սթափ գործելու. «Կավից հաց չի թխվի»: Իսկ իմ հոգատար ու ջերմ վերաբերմունքից, տքնաջան աշխատանքից, ուշադիր ու ներթափանցող հայացքից, կարծում եմ, հոգևոր հանգ կթխվի, - այս մասին խորհելով՝ անցնում էի Ստեփանակերտի «Պյատաչոկ» կոչվող պուրակի միջով, երբ նկատեցի աջակողմյա ճանապարհով սրընթաց անցնող մեքենան, այն սև կետը, կամ բիծը, որն ինձ համար

կարծես չար դիպվածի խորհրդանիշ էր: «Ձախորդ օրերը ծնունդն են կուգան ու կերթան», - Ջիվանու աստվածաշունչ խոսքերն օդի պես շնչեցի և պարուրվեցի հաճելի զգացողությամբ: Որպեսզի օրն ինձ համար չդառնար փակուղի, այլ՝ խթանիչ ուժ, որոշեցի աշխուժացնել թատերական կյանքը՝ նոր ոգի ու շնչառություն հաղորդելով խաղացանկում ընդգրկված բեմադրություններին: Դրանք էին՝ Գ. Թավրիզյանի «Մելիքի աղջիկը», Ժ. Անանյանի «Թռչող ափսեից իջած մարդը», Վ. Յակոբյանի «Արցախյան բալլադ»-ը: 1990-92թթ. Վ. Փափազյանի անվան թատրոնը ոչ մի ներկայացում չի բեմադրել:

...Դրանք թատրոնի կյանքում գորշ տարիներ էին, որոնց սահմակեցուցիչ ստվերները դեռևս պահպանվում էին խոնավ ու ցուրտ դահլիճում: Հանդիսատեսին գրավելու և հրապուրելու լավագույն միջոցը միայն հետաքրքիր ու պահանջված բեմադրություններ ցուցադրելը չէ: Թատրոնը սրբազան օջախ է, ուր հանդիսատեսը պիտի ոգևորություն ու հիացմունք ապրի՝ հարստացնելով իր հոգեաշխարհը, ընդլայնելով մտահորիզոնը: Անչափ կարևոր է նաև կադրային հարցը: Արդարացի է թատերագետ Յենրիկ Յովհաննիսյանը, երբ մտահոգվում է. «Թատրոնի մասին խոսելիս խնդրի բոլոր կողմերը շոշափում ենք՝ կազմակերպչական, նյութական-ֆինանսական և այլն, բայց ոչ մի անգամ չենք մտածում, թե թատերական կրթությունն ինչ վիճակում է կամ կա՞նա առհասարակ թատերական կրթություն: Այս հարցը երբեք չի շոշափվում կամ արված ակնարկներն անցնում են անհետևանք»: Անհրաժեշտ է ստեղծել նաև թատերական ստուդիա: Հույսներս դրել ենք մատաղ սերնդին թատրոնի հետ կապելու խնդրի վրա: Առանց հանդիսատես, համաձայնենք՝ չկա ու չի լինի թատրոն, իսկ առանց թատրոն էլ, համաձայնենք՝ յուրաքանչյուր ժողովուրդ կվերածվի անդեմ մարդկային զանգվածի:

«Արցախյան բալլադ»-ն ընդամենը մեկ ցուցադրություն է ունեցել, որից հետո հանվել է խաղացանկից: Պատճառն ապշեցուցիչ

էր: Պարզվում է, խարդավանքների զոհ էր այդ բեմադրությունը: Այդ վերաբերմունքից վիրավորված էր և պիեսի հեղինակը՝ բանաստեղծ Վարդան Չակոբյանը: Ներկայացումը կրկին ցուցադրելու համար անհրաժեշտ էր կատարել վերականգնողական որոշակի աշխատանք: Որոշեցի Երևանից հրավիրել բեմադրող ռեժիսորին՝ Կարեն Աբրահամյանին, ում մտքի արգասիքն էր այդ ներկայացումը, նրա հոգեզավակը: Նամակով դիմեցի ՀՀ մշակույթի նախարար Չակոբ Մովսեսին՝ խնդրելով նրան որոշակի գումար հատկացնել՝ «Արցախյան բալլադ» ներկայացման վերականգնողական աշխատանքն իրագործելու համար: Նախարար Չակոբ Մովսեսն ըմբռնումով մոտեցավ խնդրին՝ հատկացնելով անհրաժեշտ գումարը, և շուտով ռեժիսոր Կարեն Աբրահամյանը սկսեց փորձերը՝ ներկայացման նորոգման և վերականգնման նպատակով: Մեկ շաբաթ անց՝ Ստեփանակերտի հանդիսատեսի համար ներկայացվեց «Արցախյան բալլադ»-ի բեմադրությունը, որն ինքնահաստատման և ինքնահաղթահարման նոր փուլ էր փափազյանցիների համար: Փշրվեց թատրոնի շուրջ գոյացած սառույցը: Դերասանները կարծես ոչ թե խաղում, այլ ամիսներ տևող պարապությունից վրեժ էին առնում:

-Իհարկե, թատերախումբն աշխատում էր դժվարին պայմաններում: Եվ երկար դադարից հետո արդյունավետ աշխատանք կազմակերպելը նույնպես սխրագործություն էր: «Յոգսեր, չլուծված խնդիրներ» խորագիրը կրող հարցազրույցում (հեղինակ՝ Մադլեն Սողոմոնյան, «ԼՂ Հանրապետություն», 19.09.1995թ.) դուք նշել եք, որ «մեր օրերի թատրոնի գլխավոր խնդիրն, իհարկե, կերպարի հոգեբանության, ապրումների հավաստի պատկերումն է: Անկախ այն բանից, թե այդ հերոսն ինչ տեղ ունի պիեսում, դերասանը պիտի կարողանա տալ նրա, որպես մարդկային անհատականության, ճիշտ ու համոզիչ բնութագիրը»:

- Նույնը կարող եմ ասել նաև այսօր: Դա իմ համոզմունքն է: Դե-

րասանը պիտի կարողանա ստեղծել կենդանի կերպար և ոչ թե խաղալ հենց այնպես, խաղալու համար: Կարծում եմ, հավաքվել էր դերասանական լավ կազմ: Կրկին մեզ հետ էր բոլորիս սիրելի ժաննա Գալստյանը: Ներկայացման մեջ (խոսքն «Առլեկինը՝ արքա»-ի մասին է) ընդգրկված էին հանրապետության ժողովրդական արտիստներ Բենիկ Օվչյանը, Մարգո Բալասանյանը, Ջինավոր Գևորգյանը, վաստակավոր արտիստներ Միքայել Չարությունյանը, Քաջիկ Չարությունյանը, այլք:

Այո, «ձնհալից հետո» Մադլեն Սողոմոնյանի հեղինակած այդ հրապարակումը ոգևորիչ էր և հուսադրող: Բայց թատրոնի վիճակը շարունակում էր մնալ ողբերգական: Վերոնշյալ հարցազրույցում ես այդպես էլ նշել էի. «Պահանջել մեծագույն արդյունք, հնարավոր չէ: Ես սա չեմ ասում արդարանալու համար, պարզապես ընդգծում եմ վիճակը: Մինչև հիմա (սեպտեմբեր 19, 1995թ.) մեր դերասաններն աշխատավարձ չեն ստացել, փորձերին ներկայանում են կիսաքաղց վիճակում: Դա ցավալի է: Շատ կուզենայի ներկայացման համար ունենալ հովանավոր: Պետությունը չի կարող բեմադրական բոլոր ծախսերն իր վրա վերցնել»:

-Երկարատև ընդմիջումից հետո, 1995թ. դեկտեմբերի 20-ին, հանդիսատեսի դատին հանձնվեց «Առլեկինը՝ արքա» ներկայացումը: Նկարչական և երաժշտական ձևավորումները վարպետորեն և ճաշակով կատարել էին նկարիչ Անտոն Քեշիշյանը, երգահան Վլադիմիր Ոսկանյանը: «Պրեմիերա Ստեփանակերտի թատրոնում» հոդվածում Նվարդ Սողոմոնյանը նշել է. «Ներկայացման գերխնդիրը փորձում էին տանել վաստակաշատ դերասաններ Բենիկ Օվչյանը (Տանկերեդ), Մարգո Բալասանյանը (թագուհի), Քաջիկ Չարությունյանը (Առլեկին - Բոեմոնդ), Միքայել Չարությունյանը (Պանտալոնե), Սամվել Վիրաբյանը (Բոեմոնդ): Ի ուրախություն իր երկրպագուների, նորից բեմի վրա է առեղծվածային ժաննա Գալստյանը (Գիզա), ում բեմելն ընդունվեց ծաղիկներով:

Ներկայացման հաջողությանն իրենց խաղով նպաստեցին շնորհալի երիտասարդ դերասաններ Ռենիկ Մուրադյանը (Էտոն), Նարինե Ավետիսյանը (Կոլոմբինա)»:

-Թատրոնը «Առլեկինը՝ արքա» պիեսը 1996թ. հունիսի 4-ին ներկայացրեց նաև Երևանի Պարոնյանի անվան թատրոնում: Թատերական գործիչների միության նախագահ Երվանդ Ղազանջյանի նախաձեռնությամբ «Սյունիք-96» փառատոնի վերջին ակորդը հնչեցրինք «Առլեկինը՝ արքա» պիեսով: Այս բեմադրությունն առաջինն է խաղաղության պայմաններում, որ դրել ենք մեծ կարոտով, հաճույքով և ոգևորությամբ: Այն համախմբեց քայքայվող թատերախումբը: Այսուհետ պիտի այնպես գործենք ու աշխատենք, որպեսզի արժանի լինենք Փափազյանի անվանը... Ի դեպ՝ ներկայացումը նկարահանվեց Չայաստանի կենտրոնական հեռուստատեսության կողմից, եթեր արձակվեց և այժմ պահվում է «Ոսկե ֆոնդում»:

-Ժամանակի պահանջն էր՝ արդիականացնել բեմական կյանքը՝ օգտագործելով նոր հնարավորությունները: Ինչպես վերականգնվեց բեմական խաթարված կառույցը և հիմնովին նորոգվեց ետպատերազմյան դժվար պայմաններում:

-Նախարարության աշխատակիցների հետ պայմանավորվեցինք միանգամից փոխել բեմական հին սարքավորումները և տեղադրել կառավարման նոր վահանակը: Սա բավականին բարդ ու դժվարին աշխատանք էր, որը հաջողությամբ իրականացրին մասնագետները: Երկու շաբաթ տևած գիշերային աշխատանքներն ավարտվեցին, և բեմը վերակենդանացավ նոր սարքավորումների առկայությամբ:

Թատրոնի կյանքն աշխուժանում էր և վերականգնվում էր աշխատանքային ռիթմը: Այդ ժամանակ «Առլեկինը՝ արքա» ներկայացման փորձերն էի անցկացնում փորձասենյակում: Աշխատում էինք լավ ժամանակներին հատուկ ռիթմով՝ առավոտյան և երեկոյան: «Առլեկինը՝ արքա» ներկայացման առաջնախաղը նման էր

տոնահանդեսի: Մեծ սպասելիքներ ուներ հանդիսատեսը: Չավակնոտ էին և մշակույթի նախարարության աշխատակիցների սպասելիքները. չէ որ նրանք ամեն ինչ արել էին՝ փայլուն արդյունքի համար: Ներկայացումն ընթանում էր: Եվ ինձ՝ բեմադրող ռեժիսորիս թվում էր, թե դահլիճը դատարկ է: Երբեմն դռան ձեղքից նայում էի՝ համոզվելու համար, որ դա ամենևին էլ այդպես չէ: Ներկայացումն ավարտվեց: Դահլիճը դրդաց ծափերից ու բացականչություններից: Դեպի բեմ նետվող առաջին ծաղկեփունջը բաժին հասավ արժանավորին՝ Ժաննա Գալստյանին: Բեմը կենդանացել և կարծես վայելում էր դերասանների և հանդիսատեսի ուրախությունը, ոգևորությունն ու ձիջը: Դահլիճում էին և Ժաննա Գալստյանի զինակից ընկերները, ովքեր դժգոհում էին, թե ինչու Առլեկինի դերակատար Քաջիկ Չարությունյանն իրենց «քույրիկին», այսինքն՝ Ժաննային (Գիզայի դերակատարին) ասում է. «Ես զգվում եմ քեզնից»: Երկար ժամանակ բացատրում էինք նրանց, որ դա ոչ թե Քաջիկ Չարությունյանն է ասում, այլ՝ Առլեկինը, բայց ապարդյուն... Նրանք իրենցն էին պնդում... Նրանցից մեկը նույնիսկ սպառնաց... «Էլ տի պեն չասիս, ախպեր, եղամվ...»: Սա ներկայացումից հետո զավեշտական պատահարն էր, որ կաթիլ-կաթիլ գնաց ու խառնվեց ոգևորության ծովի ալիքներին:

Ներկայացումն իր ասելիքով արդիական էր, թեև պատմական իրադարձություններ էին ծավալվում բեմում: Ետ ու առաջ շարժվող փոքրիկ հարթակն այն վայրն էր, ուր բախվում էին կյանքի ու մահի պայքարում անհաշտ պալատական ուժերը, որոնք ամեն ինչ անում էին հանուն գահի ու թագի, ինչից և բզկտվում էր խարդավանքների ալեբախումից հողմածեծ երկիրը:

«Առլեկինը՝ արքա» ներկայացումը թատերական կյանքի նոր փուլի սկիզբն էր:

Որոշեցի, որպես Նոր տարվա նվեր, երեխաների համար բեմադրել «Տարեմուտի հրաշքներ» տոնածառային ներկայացումը: Ես և սցենարի հեղինակն էի, և բեմադրող ռեժիսորը: Թատերախմ-

բի կողմից իմ այս առաջարկությունն ընդունվեց ոգևորությամբ: Ներկայացման փորձերն ընթացան հաջողությամբ, և շուտով տեղի ունեցավ առաջնախաղը: Ես միշտ սիրով եմ բեմադրել Ամանորյա ներկայացումներ, բայց, ցավոք սրտի, թատրոնի ղեկավարները դրանք չեն համարել լիարժեք ներկայացումներ: Այնինչ այդ ներկայացումները ոչ միայն լիարժեք էին, այլև՝ առանձնահատուկ. կարևորագույն նշանակություն ունեին մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության համար:

Այս անգամ էլ երեխաները ոգևորված էին և պատրաստ՝ դիտելու ներկայացումը, երբ հանկարծակի լույսերը հանգան... Եվ բոլորս հայտնվեցինք խավարի մեջ: Ի՞նչ պիտի անենք: Ժաննա Գալստյանը գտավ ելքը. «Այս անգամ էլ կխաղանք մոմերի լույսի տակ»: Խանութից բերվեց 80 հատ մոմ: Բեմը լուսավորվեց մոմերի խորհրդավոր լույսով: Առանց երդվելու՝ ասեմ, որ այս մանկական ներկայացումն անջնջելի հետք թողեց իմ հիշողության մատյանում՝ «Սուրբ Շուշանիկ», «Չարսեր... կեսուրներ...» ներկայացումների պես: Դա երջանկություն էր, երբ ինձ թվացել է, թե լեփ-լեցուն դահլիճը դատարկ է, դահլիճում շնչառություն չկա, և երբ նայել եմ դահլիճին և լսել լռությունը, արարումի անսահման բերկրանքն եմ զգացել... Այդ պահին էր հենց, որ մտածեցի. «Ես, այնուամենայնիվ, երջանիկ մարդ եմ, և մեծ իմաստ կա իմ ապրած կյանքի ու աշխատանքի մեջ»:

ՈՒՇԱԳՐԱՎ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԲԵՄՈՒՄ

- Լեոնիդ Ավետիքի, 90-ական թվականներին Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնում նոր աշխուժություն նկատվեց, աստիճանաբար թատերական կյանքը մղվեց դեպի նոր հուն՝ գրավելով հանդիսատեսին նոր ներկայացումներով (Յ. Շիրազ «Սիամանթո և Խջեզարե», Ռ. Աբրահամյան «Յարսեր... կեսուրներ...», Է. Ռսլակկի «Այլանդակ Էլզան», Եվրիպիդես «Անդրոմաքե», Խ. Ասատրյան «Ձկնորս Սանոն և որսորդ Վանոն», Ա. Կուռյանդսկի, Ա. Խայտ «Դե՛, գայլ, սպասիր...», Ա. Օստրովսկի «Անմեղ մեղավորներ, Է. Լաբիշ «Միզանտրոպ», Ռ. Աբրահամյան «Սուրբ Շուշանիկ»): Այսքան նորությունները՝ միայն հինգ տարում: Մշակույթի նախարար Արմեն Սարգսյանի հավաստմամբ՝ «Մինչև Արցախում ազգային-ազատագրական շարժումը մեր թատրոնը իր ուսերին էր կրում մշակութային կյանքի ծանրաբեռնվածության 80 տոկոսը: Ներկայիս անկախության պայմաններում նրա նշանակությունը էլ ավելի կարևորվեց: Եվ մենք բոլորս պետք է անենք ամեն հնարավորը, որպեսզի Արցախի թատրոնը դառնա մշակութային օջախների թագն ու պսակը»:

Ի՞նչ սկզբունքներ էին առաջնորդում ձեզ ստեղծագործական որոնումների նոր տեսադաշտում:

- Մեր թատրոնի ճակատագիրը նման է ժողովրդի ճակատագրին: Իր կենսագրականով նա ևս արցախցի է՝ կորուստներով, նվաճումներով և ազգի մաքառումներով: Մեր թատրոնը մեր ճակատագրի թարգմանն է եղել: Ուստի իզուր չեն ասել մեծերը, եթե ուզում ես ճանաչել ժողովրդին, շփվիր նրա թատրոնի հետ: Թատ-

րոնը պահանջում է նվիրում ու զոհաբերություն, իսկ դրա համար առողջ ու արվեստասեր հասարակության կարիք կա:

- «Չայկի սերունդն» իր «Չետգրության» մեջ նշում է. «Ասում են արվեստը մի անեզր օվկիանոս է, ուր լողանալով ասի չես հասնի: Չիրավի, այդպես է: Թատրոնը անմահ արվեստ է, քանզի քայլում է կյանքի հետ և արտացոլում մեզ համար նրա տեսանելի և անտեսանելի կողմերը: Սա այն աշխարհն է, ուր մտնելով, սիրելի՛ երիտասարդ, կարող ես քեզ համար բացել անտեսանելի ու փակ կյանքի բոլոր դռները: Ուստի, եկ համարձակորեն մտնենք այնտեղ և, վստահեցնում ենք, չես փոշմանի: Մեր արվեստի միակ տաճարն այսօր «մրսում է»»: Զերմացնենք այն մեր ներկայությամբ և կջերմանանք ինքներս»:

- 1997թ. մայիս-հունիս ամիսներին դերասանները Չակոբ Պարոնյանի «Չարսեր... կեսուրներ...» կատակերգությամբ մասնակցել են «Լոռի-Շիրակ-97» փառատոնին, որտեղ պարզևատրվել են հուշամեդալներով: Աշնանը թատրոնը մասնակցել է նաև «Անտիկ աշխարհը և մենք» թատերական փառատոնին և արժանացել բարձր գնահատականի: Վերջին երկու տարում կայացած փառատոների արդյունքներով՝ թատրոնին շնորհվել է երեք մրցանակ, այդ թվում երկուսը՝ Եղիշեի և մեկը՝ Արտավազդի անվան: Սա, իհարկե, մեծ ձեռքբերում է:

- «Առլեկինը արքա» ներկայացման մասին ուշագրավ բնորոշում ունեք. «Սա մեր թատրոնի զավակն է, հետպատերազմյան առողջ սիրուց ծնված...»: Ձեր հուշատետրից տեղեկացա, որ դեպի թատրոն տանող ճանապարհը մոռացել էր հանդիսատեսը, որից տկարացել էր նաև թատերախումբը: Այսպիսի դժվարությունները հաղթահարվում են միայն ոգու խիզախությամբ: Ռեժիսորի ներդաշնակ աշխատանքի շնորհիվ ներթատերական կյանքը աստիճանաբար կազդուրվել և

զորեղացել է: Պետք է հավատալ միայն սեփական ուժերին: Ինձ խորապես հուզեց նաև ձեր կողմից արված ևս մի գրառում. «Ասում եմ՝ առանց չափազանցելու. ընդմիջումներին, եթե օրը արևոտ էր լինում, դերասանները դուրս էին գալիս և տաքանում դիմացի տների պատերի տակ»:

- Այո, փորձում էինք ջերմեռանդ աշխատանքով տաքացնել բեմը: Ցուրտ ու խոնավ դահլիճն ահազանգ էր, որ թատրոնից հեռացնում էր հանդիսատեսին: Սակայն թատերաբեմում իշխում էր հավատաբեր և կենսառատ խոսքը: Թատերասեր հասարակության ոգու կորոզվով ուրախանում էինք և տոգորվում նորանոր հղացումներով: Ուշագրավ է թատրոնի նվիրյալներից մեկի՝ Երվանդ Ղազանջյանի անկեղծ գնահատանքի խոսքը. «Չաշվի առնելով այն բոլոր դժվարությունները, որոնք վերջին տարիների ընթացքում հաղթահարել է Արցախի թատերախումբը, ինձ խորապես համոզում է, որ այն, ինչ արվել է այստեղ, ավելի կարևոր ու պատվաբեր է, քան այն, ինչ ժամանակին արել են Չայաստանում»: Տպավորիչ է նաև ԼՂՀ վաստակավոր նկարիչ Լավրենտ Ղալայանի խոսքը. «Չիմա մեր թատրոնը վարպետների դպրոցի կարիք է զգում, որքան էլ ռեժիսորը մեծ դեր ունենա թատրոնի համար, լավ ռեժիսորին լավ դերասաններ են պետք»:

- Պոեզիայի բեմադրությունը դժվարին և բարդ գործ է: Այնուամենայնիվ դուք համարձակորեն ձեռնամուխ եղաք մեծն Յովհաննես Շիրազի «Սիամանթո և Խջեզարե» դրամատիկական պոեմի բեմադրության աշխատանքին:

- Դերասան Բենիկ Օվչյանը հանձն առավ ձևավորել ներկայացումն առանց վճարի: Ազատ ժամանակ նա ուշադրությամբ հետևում էր դեկորների և զգեստների պատրաստման աշխատանքին, որն հմտությամբ ու ջանասիրությամբ իրականացրեց ձևավորող նկարիչ Օկտյաբրինա Բալայանը: Երիտասարդ դերասանուհի Նարինե Ավետիսյանի կերտած Խջեզարեն ազդեցիկ էր և գրավում

էր հանդիսատեսին պոռթկուն խաղով: Սիամանթոյի դերակատարն էր Քաջիկ Չարությունյանը, որն իմ խորհրդով, կեղծամով ծածկելով մազերից նոսրացող գլուխը և հագնելով հերոսին հատուկ զգեստ, կարողացավ «համոզել» խցեզարեի դերակատար Նարինե Ավետիսյանին ընտելանալ ու հավատալ կերպարին... Ազդեցիկ կերպարներ էին Բենիկ Օվչյանի Չարեհ բեկը, Միքայել Չարությունյանի և Սամվել Վիրաբյանի Ազիզ բեկը: Ներկայացումը ստացավ հավաստի և կոլորիտային երանգավորում:

- Հանդիսատեսը ոգևորությամբ ու սիրով ընդունեց Յ. Շիրազի «Սիամանթո և խցեզարե» ստեղծագործության բեմադրությունը: Անվանի ռեժիսոր Վահե Ճահվերդյանի հավաստմամբ՝ Արցախի հանդիսատեսը օժտված է բարձր ճաշակով: «Արցախի հանդիսատեսին ես շատ բարձր եմ գնահատում,- ասել է նա,- ինչ գործ որ նա հավանում է, համարձակորեն կարող եմ ասել՝ կհավանեն նաև Մոսկվայում ու Փարիզում»:

- Ինչպիսի տեղեկատվական հեղեղ էլ տարածելու լինեն ռադիոն, հեռուստատեսությունը, համակարգիչը, միթե կարելի է դա համեմատել հանդիսատես-դերասան այն կենդանի շփման, այն ջերմ մթնոլորտի հետ, որ հատուկ է միայն թատերարվեստին: Թատերական արվեստի էությամբ էլ, որը երաժշտության, գեղանկարչության, գրականության և արվեստի մյուս բաղադրամասերի օրգանական ամբողջությունն է, պայմանավորված է թատրոնի կախվածությունը պետությունից: Այսօր, երբ շուկայական պայմանները բևեռացվել են այն ամենի կոմերցիոն կողմը, ինչ մտնում է առևտրի շրջանակները (ինքնաձայնասածածկում, շահութաբերություն) թատրոնը ի վիճակի չէ միայնակ գոյատևել: Թատրոնի շենքն էլ վաղուց կապիտալ վերանորոգման կարիք ունի: Ասել է թե՛ պետության օգնությունը օդի պես անհրաժեշտ է:

- Թատերական կյանքին դինամիկ լիցք հաղորդելու նպա-

տակով՝ հարկ էր լինում երբեմն նորոգել և խաղացանկում տասնամյակներ պահել նաև հաջողված և հանդիսատեսի կողմից սիրված ներկայացումները: Դրանցից հենց նշենք «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացումը:

- Հանդիսատեսի կողմից սիրված այդ ներկայացումը մենք ստիպված էինք մշտապես նորոգելու: Պապի դերակատար Իվան Յովհաննիսյանին փոխարինեց Միքայել Հարությունյանը: Իսկ Մաուրիսիոյի դերակատար Սամվել Եվրիյանին փոխարինեց Սամվել Վիրաբյանը: Տատիկի դերակատար Մարգո Բալասանյանի հավաստմամբ՝ նորոգված բեմադրությունը իր ազդեցությամբ զգալիորեն զիջում էր նախկինին: Պատճառը պարզ էր: Իվան Յովհաննիսյանն ու Սամվել Եվրիյանը տարիների ընթացքում հղկել և բյուրեղացրել էին ներկայացման մեջ իրենց կատարած դերերն այնպես, որ այդ դերակատարությունները դարձել էին անհատականացված ու անփոխարինելի: Այդպես Մարգո Բալասանյանի կերտած Տատիկի հանրահայտ կերպարը շարունակեց իր ստեղծագործական երկարակյաց երթը Վ. Փափազյանի անվան թատրոնի բեմում: Տաղանդաշատ դերասանուհին նոր դերակատարներին (Միքայել Հարությունյանին և Սամվել Վիրաբյանին) իր ակտիվ և ազդեցիկ խաղով մղեց վերափոխվելու և կրկնապատկված ջանքերով աստիճանաբար շտկելու և լրացնելու թերություններն ու բացթողումները, որի արդյունքում «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացումը տարիներ շարունակ մնաց թատրոնի խաղացանկում:

- **Դուք պրպտուն միտք ունեք և վառ երևակայություն: Կարծում եմ՝ պարոնյանական թեմաներով ներկայացում բեմադրելը համարձակություն էր, հատկապես այն պատճառով, որ Ստեփանակերտի թատրոնի բեմում կես դար առաջ էր միայն խաղացվել անվանի երգիծաբանի գրչին պատկանող ստեղծագործություն. «Ստեփանակերտ» թերթի խմբագիր, արձա-**

կազիր Սոֆյա Սարգսյանի հավաստմամբ՝ «1987թ. «Լոռի-Շիրակ» փառատոնին մասնակցելով, թատերախումբը, ըստ Յ. Պարոնյանի «Կամիթների», ներկայացրեց Ռ. Աբրահամյանի «Չարսեր... կեսուրներ» պատկերաշարը: Այն ինքնատիպ էր նրանով, որ 1952-ից ի վեր Ստեփանակերտի թատրոնում Պարոնյան չէր բեմադրվել: Ներկայացումը դիտողների համար դարձավ արևմտահայ դասականի ու լեզվի ուսուցման բաց դաս: Ուրույն գնահատական տվեց երևանյան թատերախումբը՝ «Արևմտահայերենով ներկայացված խաղը երևույթ է: Բեմադրությունն իր տեսակի մեջ հաղթանակ է»: Կարող եք ներկայացնել այդ խիզախ մտահղացումն իրականացնելու ընթացքն ու պատմությունը:

- Թատրոնի խաղացանկը բազմազան ու հետաքրքիր դարձնելու նպատակով՝ որոշեցի բեմադրել արևմտահայ դասական Չակոբ Պարոնյանի ստեղծագործություններից մեկը: Այդ մասին հայտնեցի թատրոնի ստեղծագործական խմբին: Երիտասարդ դերասանները ուզեցին իմ այս առաջարկությամբ, մինչդեռ ավագ դերասանները ցուցաբերեցին սառն անտարբերություն: «Մեզ համար դժվար է յուրացնել արևմտահայ լեզուն», - ասացին նրանք: Արևմտահայ լեզվով կամ թիֆլիսյան բարբառով պիեսների բեմադրությունը խնդիր է նաև Չայաստանի թատրոններում, բայց ես այն կարծիքին եմ, որ չպետք է հրաժարվել դասական արվեստի գանձերից՝ միայն լեզվի դժվարության պատճառով: Կիսում եմ Սոֆյա Սարգսյանի այն միտքը, որ արվեստի օջախը, դեռ բակից սկսած, հոգի պետք է շոյի, բավականություն պարզևի: Թատրոնի բեմը մշտապես ծանրաբեռ է իրենց գործին նվիրյալ առաքյալներով:

Լսել էի, որ իմ համակուրսեցի ռեժիսոր և դերասան Ռազմիկ Աբրահամյանը պարոնյանական թեմաներով սցենար ունի գրած: Չայաստանի հեռուստատեսության պատվերով սկսել էր նկարա-

հանման աշխատանքները, սակայն չի ավարտել... Դա ոչ թե ամբողջական պիես էր, այլ վեց տեսիլ՝ մեկ վերնագրի տակ. «Չարսեր... կեսուրներ»: Ընկերոջս՝ Ռազմիկին խնդրեցի տրամադրել ինձ այդ աշխատանքը՝ Ստեփանակերտի թատրոնում բեմադրելու համար: Զգացի, որ չի ուզում. «Չէ, դա թատրոնում հնարավոր չէ բեմադրել», - ասաց նա: Ես պնդեցի իմ առաջարկությունը. «Գոնե տուր ընթերցեմ, հետաքրքիր է...»: Ռ. Աբրահամյանն իր մոտ եղած հինգ տեսիլները տրամադրեց ինձ, խոստանալով գտնել և ուղարկել նաև վեցերորդը:

- Այս ամենի մասին, իհարկե, հանդիսատեսը չգիտի և լավ է, որ չգիտի: Նրան միայն ստեղծագործական արդյունքն է հետաքրքրում: Բայց, ի վերջո, ամեն ստեղծագործություն, ինչպես մարդը, ունի իր ձևատագիրը: Եվ այս ներկայացման ձևատագրում որոշիչ դերակատարություն ունի բեմադրող ռեժիսորը:

- Դա այդպես է: Եվ ավելին: Ամեն որոնում անցնում է ռեժիսորի ոգու լույսի միջով և վերադառնում բեմ: Ես իբրև գեղարվեստական ղեկավար, երբեք շեշտը չեմ դրել որևէ ժամանակաշրջանին պատկանող հատուկ ստեղծագործության վրա, այլ փորձել եմ բեմադրել այն, ինչ տվյալ պահին հետաքրքիր է հանդիսատեսին: Իսկ դրանք կարող են լինել և՛ դասականների գործերը, և՛ ժամանակակիցների:

«Չարսեր... կեսուրներ»-ը անակնկալ էր ինձ համար: Ռազմիկ Աբրահամյանը արժեքավոր և մնայուն գործ է կատարել: Նյութը գրված է հրաշալի և գրագետ արևմտահայերենով: Գործողություններն անչափ շարժուն են, երկխոսությունները՝ լակոնիկ ու սուր: Տեսարանները՝ անսպասելի, չափազանց հավաստի ու ավարտուն: Մտքիս մեջ սկսեցի մարմնավորել բեմավիճակները՝ հարստացնելով նորանոր երանգներով: Բայց դեռ սպասել էր պետք: Երբ հեղինակից կստանամ նաև վեցերորդ տեսիլը՝ այնժամ կարող եմ արդեն թատերախմբին ներկայացնել «Չարսեր... կեսուր-

ներ»-ի ամբողջական տեքստը,- մտորում էի ես և սպասում զանգի:

Ժամանակը հոսում էր: Եվ Ռ. Աբրահամյանն այդպես էլ չգտավ վեցերորդ տեսիլի տեքստը: Ես խնդրեցի, որ նա թույլատրի, որպեսզի վեցերորդ տեսիլի փոխարեն ներկայացման մեջ մտցնեմ մի տեսարան Յ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան» պիեսից: Նա համաձայնեց: Սկսեցի աշխատանքը: Հաջողությունն ուղեկցում էր ինձ, ուղղորդում:

Այդ ժամանակ նախարար Արմեն Սարգսյանը հանձնարարեց ինձ ընտրելու որևէ ներկայացումից մի ուշագրավ և ազդեցիկ դրվագ՝ Երևանի Օպերայի և բալետի թատրոնում ներկայացնելու համար: Դա պիտի եզրափակեր «Արցախյան մշակույթի օրերը Երևանում» միջոցառումների շարքը: Իմ մեջ սկսեցին խլրտալ հանկարծաստեղծման լուսավոր ակնթարթները: «Հարսեր... կեսուրներ» ներկայացումն, իմ կարծիքով, հենց նպատակահարմար էր ներկայացնել Երևանյան հանդիսատեսին: Երևակայությանս մեջ սկսեց մարմնավորվել բեմավիճակների շղթան: Բեմում տեղադրեցի մի անթիկնակ աթոռ, որի վրա և շուրջը պիտի զարգանային կարճ ու ազդեցիկ գործողությունները: Երիտասարդ դերակատարին առաջարկեցի մտնել բեմ և նրան միզանսցեններ թելադրելով, սկսեցի կառուցել տեսարանը: Փորձին ներկա դերասանները ոգևորվեցին՝ տեսնելով հաջող ընթացքը: Անհրաժեշտ էր մշակել ու հղկել գտնված դրվագը: Փաստն այն էր, որ ստեղծագործական պոռթկման արդյունքում ծնվել և կյանք է ստացել բաղձալի տեսարանը: Հանկարծաստեղծման շղթան սկսեց ակտիվորեն գործել և հաջորդ օրերին: Սկսվեցին բուռն ու սրընթաց փորձերը: Առաջին տեսարանը կոչվեց «Հարս մը, որ գեղեցկության օժիտ բերած է...»: Աստիճանաբար գործողության մեջ ընդգրկվեցին և մյուս դերասանները: Օրիգինալ էին բեմի կահավորումն ու ձևավորումը: Բեմի կենտրոնում դրված անթիկնակ աթոռը ծածկվեց սպիտակ շղարշով: Ետնավարագույրն ու երեք նույնատիպ

կուլիսները նույնպես սպիտակ էին: Հարսանեկան զգեստը, որ կախված էր վերևում, խորհրդանշում էր անաղարտություն ու մաքրություն: Աթոռը այն հարթակն էր, ուր կերպավորվում էին ամուսնական զույգերի գործողությունները: Բեմի խորքում դրված էր սպիտակ շղարշով ծածկված ձվաձև հայելին, որը կարծես ճակատագրի աչքն էր: Պարային ռիթմիկ երաժշտությունը կարևոր «դերակատարներից» էր, որի հնչյուններից վարակված դահլիճը արձագանքում էր ծափողջույններով: Յուրաքանչյուր տեսարան ավարտվում էր համր պատկերով: Հետո սկսվում էր հաջորդ տեսարանը: Դերակատարները կարճ բնորոշումներով որակում էին անցած տեսարանի միջադեպերը: Շարժիչ ուժը հումորն ու երգիծանքն էր: 12 օրվա ընթացքում պատրաստվեց «Հարսեր... կեսուրներ» ներկայացումը: Ընթացքում «Ատամնաբույժն արևելյան» պիեսից վերցրած տեսարանը փոխարինեցի Ռ. Աբրահամյանի ուղարկած վեցերորդ տեսիլով, որն ավելի համահունչ էր ներկայացման ոգուն: Դերասանները մի դեպքում դերակատար էին, մի այլ դեպքում՝ հանդիսատես: Տեսարանները կառուցվում էին հանպատրաստից, ստեղծելով այնպիսի բեմավիճակ, երբ դերասանը կատարում էր մի քանի դերեր, և դա բնական ու օրիգինալ էր ընդունվում:

Երևանում ներկայացումն ընդունվեց մեծ ոգևորությամբ: ՀՀ Ժողովրդական արտիստուհի Գրետա Մելքումյանը հիացմունքն ու բավականությունն արտահայտելով, հետաքրքրվեց և խոսեց նաև բեմական հղացումների և գյուտերի նմանօրինակ ծնունդների մասին: Իսկ ՀՀ Ժողովրդական արտիստ, Վանաձորի թատերական գործիչների միության մասնաձյուղի նախագահ Վոլոդյա Հարությունյանը անկեղծորեն խոստովանեց. «Վաղուց նման լուսավոր և ազդեցիկ ներկայացում չէի տեսել: Ծնորհակալ եմ...»: Ներկայացումն ըմբռնչեցին և իրենց հիացմունքի խոսքն ասացին թատերագետներ Լևոն Հախվերդյանը, Լևոն Մուֆաֆյանը, ՀՀ Ժողովր-

դական արտիստ Ռուբեն Մաթևոսյանը, արձակագիր Յրաչյա Մաթևոսյանը: «Ուրեմն Պարոնյանին այսպես էլ կարելի է ներկայացնել,- խոստովանեց իմ ուսուցիչն ու բարեկամը` Լևոն Յախվերդյանը,- առանց կենցաղային մանրամասների ու միջավայրի: Վերկենցաղային ազնվական մեկնությամբ: Ղարաբաղի դերասաններն ինչ մաքուր արևմտահայերենով են խոսում, ինձ համար չափազանց անսպասելի ու ականջ շոյող հնչողություն է, իսկ գործողությունները կառուցիկ են, սրընթաց, դիտարժան: Ես ուզում եմ այն գիրուկ դերասանին հատուկ շնորհավորել, ինչ թեթև ու առանց ծիգի է շարժվում բեմում, հրաշալի պլաստիկական դերասան է` ցցուն կերպարային զգացողությամբ...»: Խոսքը Սամվել Վիրաբյանի մասին է: Բեմում նա միաժամանակ մարմնավորել է երեք կերպար, որոնցից ամենամեծ տպավորությունն իմ ամենատես ուսուցչի համար թողել էր նրա կերտած պարի ուսուցչի կերպարը: Իսկ սցենարի հեղինակ Ռազմիկ Աբրահամյանն ասաց. «Շնորհակալ եմ` ինձ դրամատուրգ կնքելու համար: Ես չէի հավատում, թե այս պիեսը հնարավոր կլիներ բեմադրել, դուք այդ արեցիք, ինչի համար անսահմանորեն շնորհակալ եմ...»:

Ուշագրավ էր նաև թատերագետ Բախտիար Յովակիմյանի կարծիքը. «Դուք, հիրավի, արժանավոր ու հերոսական թատրոն եք, հարևան անկողնում արցախցուն: Դուք խիզախել ու բեմ եք հանել պարոնյանական զուլալ, մարգարտյա խոսքը, նույնքան զուլալ հնչողությամբ և մեզ պարզևել նաև դրամատիկական թարմ մտածողությամբ մի նոր անուն` հանձին Ռազմիկ Աբրահամյանի: Եվ ամենագնահատելին, դուք, պատերազմի վերքերը դեռ չսպիացած, ծիծաղ ու խինդ եք պարզևում մեզ` մեր հաղթական ժողովրդին»:

«Յարսեր... կեսուրներ» ներկայացումը խաղացվեց համարյա ողջ Յայաստանում` Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Տաշիրում, Լոռիում, Արմավիրում, Թալինում, Արթիկում, Մարալիկում...

- Պարոն Չարությունյան, թատերական կյանքում Ձեզ համար ինչն է արտառոցն ու անըմբռնելին:

- Թատրոնն, ինչ խոսք, առեղծվածային և անակնկալներով հարուստ մի աշխարհ է, որտեղ առողջ մթնոլորտն օդի պես կարևոր անհրաժեշտություն է: Իմ աշխատանքային փորձը վկայում է, որ թատրոնի զարգացման համար նպաստավոր է կայուն ժամանակաշրջանը: Խորհրդային տարիներին թատրոնն ավելի շատ էր պաշտպանված օրենքով: Մեծ էին նաև թատրոնի դերն ու նշանակությունը հասարակության կյանքում: Թատրոնի կյանքում ծաղկուն և լավ ժամանակներ շատ են եղել, սակայն արտառոցն ու անհասկանալին այն էր, որ այդ ժամանակ ավելի խիստ ու կրքոտությամբ էր քննադատվում թատրոնը, անգամ հնչում էր այսպիսի կոչ՝ «Թատրոն չունենք»:

- Բանաստեղծ, գրականագետ Սուկրատ Խանյանն իր մտահոգություններն է արտահայտել «Թատերական մի ներկայացման և մեզ հուզող խնդիրների մասին» հոդվածում. «Դիտելով «Այլանդակ Էլզան» ներկայացումը ես որպես մեր թատրոնի հին և նվիրյալ բարեկամներից մեկը, կցանկանայի արտահայտել իմ և՛ տագնապները, և առաջարկները՝ կապված մեր այդ կարևոր մշակութային օջախի ներկայի և ապագայի հետ:

Թատրոնի ներկայացումների ժամանակ հանդիսականների թիվը 65-ից չի անցնում: Ինչո՞ւ է օրեցօր պակասում հանդիսականների թիվը: Առանձին ընկերներ վկայակոչում են նաև խոշոր քաղաքների նույն վիճակը: Սակայն դա արդարացում չէ: Մեր փոքրիկ քաղաքը մշակութային առատ օջախներ չունի, որտեղ երիտասարդները (և ոչ միայն երիտասարդները) կարողանային անցկացնել իրենց հանգիստը: Նշանակում է՝ պետք է ակտիվացնել թատրոնի հետ կապող օղակները: Անհրաժեշտ է առաջին հերթին սովորող երիտասարդների հա-

մար կազմակերպել կոլեկտիվ հաճախումներ և անմիջական քննարկումներ»,- գտնում է Ս. Խանյանը:

- Դա, լավ հիշում եմ, 1998 թվականն էր: Արցախյան համազգային շարժումից 10 տարի անց: Շարժումն, իհարկե, ազատագրեց ոչ միայն Արցախը, այլև նպաստեց մշակութային կյանքի վերածնունդին: Այլևս անցյալում էր Ադրբեջանի իշխանությունների կողմից թատրոնի կյանքը վերահսկելու դառը փորձը: Ուշագրավ է Ֆելիքս Եղիազարյանի «Նորաթերթ»-ում տպագրած «Թատրոնը՝ դժվար, բայց ապրում է» հոդվածը, որտեղ հանդիպում ենք այսպիսի մտահոգիչ տողերի. «Տարիներ առաջ, երբ մտնում էիր Ստեփանակերտ, հայացքդ այսուայնտեղ հանդիպում էր թատրոն հրավիրող բազմաթիվ ազդագրերի, որոնք մի կողմից ուրախացնում էին, որ հայալեզու թատրոնը կա, ապրում-գործում է, մյուս կողմից տխրեցնում՝ ազդագրերի ծակատին կարդալով առավելապես Վազիֆի, Վուրդունի, Խալիլբեյլիի և թուրքալեզու այլ հեղինակների անունները: Այդպես էր՝ թատրոնն արքանված-խեղդված էր թուրք դրամատուրգների պիեսներով»:

- Անշուշտ, պատվաբեր էին ձեր վարքագիծն ու աշխատանքը: Երկար տարիներ աշխատելով Ստեփանակերտի պետական թատրոնում, երբեք չեք բեմադրել ադրբեջանցի գրողի ստեղծագործություն, քանի որ այն բացարձակապես չէր խոսում մեր ժողովրդի հոգու հետ:

Վերոհիշյալ հոդվածում նշվում է նաև, որ «Թատրոնի ղեկավարությունն ու կոլեկտիվը, ազատվելով պարտադրվող պիեսների բեմադրություններից, ձգտում են պահպանել իրենց դիմագիծը չբեմադրված կամ սակավ հայտնի պիեսների ընտրության միջոցով: Դա նոր հանդիսատեսներ է բերում թատրոն»:

«Այլանդակ Էլզան» ներկայացումը հանդիսատեսն ընդունեց մեծ ոգևորությամբ: Ներկայացման մասին Ս. Խանյանը,

գրել է. «Կատակերգության հեղինակի և բեմադրող ռեժիսորի ջանքերով մի շարք պատկերներում և տեսարաններում Էլզայի միջոցով խարազանվում են մարդկային փոխհարաբերություններում եղած կեղծիքը, շահամոլությունը, խաբեությունը, ստորությունը: Դիտավորյալ խաղերի դիմելով՝ Էլզան պատռում է դիմակն այնպիսի մարդկանց, որոնք խոսում են բարոյական վեհ զգացումների մասին, բայց առաջինն են ոտնահարում դրանք: Պրոֆեսոր Յարյուլան, որը որոշել է ամուսնանալ Էլզայի որբևայրի մոր՝ Վիվիի հետ, ձգտում է արժանանալ իր ապագա դստեր շոյանքներին ու սիրուն և պատրաստ է անգամ խուզել իր միտքը, որովհետև այդ մասին ձեռ առնելու չափ ակնարկել էր Էլզան»:

- Օգտվելով առիթից, ուզում եմ իմ համակրանքն արտահայտել Սոկրատ Խանյան արվեստագետի նկատմամբ: Իրոք, նա մեր թատրոնի հին և նվիրյալ բարեկամն է: Նրա հողվածներն ու ակնարկները թատերարվեստի երախտավորների մասին հուզիչ են և ուշագրավ, ներշնչող ու ոգևորող: Ս. Խանյանը երևույթի խորքերը թափանցող հայացք ունի: «Այլանդակ Էլզան» ներկայացման ծանրությունը,- նշել է նա,- Նարինե Ավետիսյան-Էլզայի ուներին է: Երիտասարդ դերասանուհին ներկայացման սկզբից մինչև վերջը խաղի մեջ է՝ հոգեբանական տարբեր բացահայտումներով, կատարերգության ընձեռած բոլոր միջոցների օգտագործմամբ: Նա մերթ լուրջ է, մերթ՝ կատաղի, մերթ՝ ծիծաղող, մերթ թախծոտ է, մերթ՝ կենսախինդ, և բոլոր դեպքերում էլ՝ այնքան անկաշկանդ ու անմիջական, որ ուրախանում ես, այսօր թատրոնն ունի նման երիտասարդ ուժ՝ ծնված միայն ու միայն բեմի համար»:

- **Բեմի համար ծնված լինելը բախտավորություն է: Ձեր աշխատանքում ես շատ կարևորում եմ համառությունը, տոկունությունը և նպատակասլացությունը: Ձեր ռեժիսորական հայացքից չի վրիպել նաև նպատակի թիրախին հարվածելու**

նպաստավոր ժամը: Ամեն նոր ներկյացում բեմադրելուց առաջ ոգևորության ինչպիսի՞ պահեր եք ապրում:

- Ամեն նոր ներկայացում բեմադրելուց առաջ... անհանգստանում եմ, ինչպես ծննդատան դիմաց սպասող հայր ծնողը, որ աշխարհում նոր աշխարհ է գտնում, երբ հանկարծ լսում է մանկան առաջին ճիճը... Մտածում եմ նաև մտքի նետը ետ բերելու մասին, որպեսզի այն չկորչի խոհ ու մտորումի բավիղներում: Կարևոր է նաև մտքի նետով նպատակի թիրախին անվրեպ հարվածելը, որի արդյունքում հայտնաբերվում է գաղտնիքների բանալին և բացահայտվում նոր ներկայացման առանցքային խորհուրդը: Միշտ իմ աչքի առաջ ունեցել եմ իմ տաղանդաշատ ուսուցչի՝ Գրիգոր Մկրտչյանի կերպարը, որը ոչ միայն հուսադրել և օգնել է ինձ ամենադժվարին պահերին, այլև նոր ելքեր ուրվագծել որոնումների ճանապարհին:

- Դիտելով «Ալլանդակ Էլզան» ներկայացումը բանաստեղծ-գրականագետ Սոկրատ Խանյանը գրել է. «Բեմադրող ռեժիսոր Լեոնիդ Չարությունյանը դերերի բաշխումը կատարել է արտիստների արտաքին և ներքին բարեմասնություններին և դերասանական կարողություններին համապատասխան: Դա անչափ կարևոր է բեմադրության հաջողությունն ապահովելու առումով: Օգտվելով խոսքի և դրության կոմիզմի հնարքներից՝ դերասանները հաջողությամբ բացահայտում են իրենց մարմնավորած կերպարների հոգեբանությունն ու բնավորության գծերը»: Ս. Խանյանի խորաթափանց հայացքն ու պատկերավոր խոսքը կերտել են ներկայացման ոգուն հոգեհարազատ բնութագրումներ. «Սվետա Թովմասյան-Վիվին դեռևս կյանքի հաճույքների ծարավ, սիրո դառնությունն ու քաղցրությունը զգացող մոր կերպար է, Արեգա Պետրոսյանի Պաուլան ընտանիքի սրբագործված սահմաններում սիրո քննությանն հավատացող օրիորդ, Վե-

ներա Ավագյանի Իրման` սիրո մաքրամաքուր նվիրումներին կարոտ անձնավորություն: Արմիդա Գաբրիելյանի Մինին ընտանիքի բոլոր անդամների վստահությունն ու սիրուն արժանացած աշխատակցուհի: Քաջիկ Չարությունյանի մարմնավորած Ուսկո Սամունենը ուսանողական երազանքների ծանրակշիռ կրողն է, Սամվել Վիրաբյանի Էրկկին` իր մասնագիտությանը ինքնամոռաց նվիրված, միաժամանակ սիրո խաղերի հակում ունեցող երիտասարդ է, Բենիկ Օվչյանի պրոֆեսոր Չարյուլան կյանքի խաչմերուկներով անցած, սիրո ջերմությունը դեռևս չմարած, ընտանիք կազմելում նյութականը կարևորող, միաժամանակ սիրո խաղերում ծիծաղ հարուցող անձնավորություն է»:

- Շատ դիպուկ բնութագրումներ են, որոնք սիրտ շոյող և հուսադրող են, թատրոնի աշխատակիցների համար` ծափողջույնների պես թանկ ու անփոխարինելի: Ս. Խանյանն իր հողվածում կարողացավ նաև նրբորեն շոշափել թատրոնի խնդիրները: Անարդար են նրանք, ովքեր ասում են, թե թատրոնը սարսափելի վիճակում է, դիտելու արժանի բան չկա: Ովքեր են տարածում այդպիսի կարծիքները: Նրանք, ովքեր ոչինչ չեն ստեղծում, նրանք, որոնց համար հոգևոր կերակուրը միայն... բամբասանքն է: Ժամանակի ընթացքում իմունիտետ ես ձեռք բերում նման բացիլների հանդեպ, հարմարվում և ընտելանում ես վայրահաչոցներին, բայց երբ այդ ամենը դառնում է տևական, ի վերջո, թատրոնը պաշարված բերդի է նմանվում... Ահա այստեղ է թաքնվում ողբերգության սաղմը: Թատրոնի բախտը տնօրինող պաշտոնյաները պիտի պայքարեին մշակութային արժեքների համար: Նախարար Արմեն Սարգսյանն ամեն ինչ արեց, որպեսզի պայծառ լինի թատրոնի վաղվա օրը: Սակայն թատրոնը շարունակական աշխատանքի գործուն շղթա է, որից ոչ մի օղակ չպիտի դուրս մնա: Այլապես... անխուսափելի է դառնում ներքին փլուզումը, որից հետո... դժվա-

րություններն հաղթահարելը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հերոսություն...

- Տարակուսանքն է դրդել ձեզ գրելու այս տողերը. «Իսկ մենք՝ մանկամիտներս, դեռ այն հույսին ենք, թե մեր պայմաններում Արցախում միակ թատրոնի ամեն մի ներկայացում պատրաստելն ու խաղալը պատերազմի ժամանակ ազատագրված մի տարածքի արժեք ու նշանակություն ունի...»:

- Անկասկած: Կասեմ՝ ավելին: Թատրոնը հասարակության բաց նյւրդն է. ամեն հուզում, ամեն խլրտում անդրադառնում են նրա մեջ և արտահայտվում նրանով: Հիշենք մեծն Թումանյանի խոսքը. «Թատրոնը կյանքի հայելին է, բայց այնպիսի հայելի, որն ունի իր ինքնուրույն լույսը»:

Թատերական կյանքի լույսն ու հմայքը արտացոլելու համար հարկավոր են ստեղծագործող անհատներ, ոչ թե՛ խավարասեր պատեհապաշտներ: Այս սկզբունքով եմ ես առաջնորդվում և աճեցնում երիտասարդ կադրերին, որոնք հետագայում պիտի դառնային թատերական կյանքի ավյունը, ոգին, առաջատար ուժը: Թատրոնում գործող դերասանական ստուդիան, որ երիտասարդ կադրերի պատրաստման համար լավագույն միջոց էր, պատկերավոր խոսքով ասած՝ դարբնոց, նոր ոգի և ավյուն էր հաղորդում թատերական կյանքին: Շուտով ես նամակով դիմեցի ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին, որպեսզի նա հնարավորություն ընձեռնի Երևանի Կինոյի և թատրոնի ինստիտուտն ավարտող դերասանական կուրսի տղաներին՝ ծառայելու Արցախում: Այդ ծանապարհով թատրոնը համալրվեց երիտասարդ տղաներով, որոնք բավականին խոստումնալից էին, առույզ ու նպատակասլաց:

Աշխուժորեն էր գործում նաև ստուդիան, որտեղ ընդգրկված դասախոսները ջանք ու եռանդ չէին խնայում՝ երիտասարդ դերասաններին կրթելու և թատերարվեստի հմտություններին ծանոթացնելու կարևորագույն գործում: Շուտով ստուդիայի սաները սկ-

սեցին խաղալ դրամատիկական ներկայացումներում: Դա նոր շունչ ու ոգևորություն հաղորդեց թատերախմբի փորձերին:

Թատրոնին կից ստեղծվեց նաև «Աստղիկ» տինիկային թատրոն-ստուդիան: Արվեստի վաստակավոր գործիչ, նկարիչ Գրիշա Սահակյանի հեղինակած տիկնիկային շարժական ունիվերսալ բեմում բեմադրվեցին մի շարք ներկայացումներ՝ «Արջուկն ու քոթոթը», «Դե, գայլ սպասիր», «Երրորդ հազարամյակի ոսկե բանալիները», «Գիքորը», «Ծերուկ հրաշագործը», «Վիննի թուխի խրախճանքը», «Յաջողակ որս», «Պոետն ու մուսան» և ուրիշ այլ տպավորիչ գործեր: Ստուդիայի սաները իրենց դերակատարումներով լրջորեն մասնակցեցին նաև «Կսմիթներ», «Սուրբ Շուշանիկ», «Խաթաբալա», «Արտոնված եղեռն» ներկայացումներին, հրաշալի տպավորություն թողնելով հանդիսատեսի վրա: Ստուդիայի 11 սաներն արդեն աշխատում էին մեր պետական թատրոնում: 7 տարվա ընթացքում, պիտի խոստովանեմ, դա լուրջ և նշանակալի ձեռքբերում էր:

Բայց, ինչպես միշտ, այս անգամ էլ լույսի անխափան ու անդուլ ճանապարհը պատվեց խավարով: Դերասանական ստուդիան փակվեց: Աշխատանքից ազատվեցին նաև ստուդիայի 11 սաները, որոնք ձևավորված դերասաններ էին: Փակվեց ստուդիան: Սա Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական թատրոնի ինքնակեղեքումի սահմռկեցուցիչ պատկերներից միայն մեկն է: Նորատունկ այգին, որն առաջին պտուղներն էր տալիս, ոչ թե կարկտահարվեց, այլ միանգամից կացնահարվեց... Նեղ ու անձնական կրքերը կործանեցին հանրօգուտ ինչպիսի՛ արժեքներ...

ԹԱՏՐՈՆՈՒՄ ՍԵՐՆ Է ԱՌԱՋՄԴԻՉ ՈՒԺԸ

- Ձեր հարցազրույցներից մեկում խոստովանել էիք, որ դեպի հանդիսատեսի սիրտը տանող ճանապարհը պետք է լինի սիրո կածան, լույսի մի արահետ և ոչ թե՛ տրորված ճանապարհ: Թատրոնի սերը մշտարթուն է, եռուն: Բայց դուք կուզենայիք, որ այդ սերն ավելի ակտիվ լիներ, ոչ թե պլատոնական՝ հեռվից հեռու: Ինչ տեսակ սիրով որ դերասաններն են սպասում հանդիսատեսին, նույն սիրով էլ կցանկանայիք՝ նա ձեզ սպասեր:

- Այո, այդպես է, սիրո եռանդը հրաշքներ է արարում: Հանդիսատեսի հետ կապը ստեղծագործական թարմ օդ է բերում թատրոն: Թատրոնի նկատմամբ ունեցած անսպառ սերն է մղել շեքսպիրագետ Լուիզա Սամվելյանին՝ նամակով դիմելու «Անդրոմաքե»-ի արցախցի հանդիսատեսին. «Սիրելիդ իմ արցախցի հանդիսական: Մտքով եկեք տեղափոխվենք մեզանից 3200 տարի ետ, դեպի ծովափը Էգեյան: Փոքր ասիական թերակղզու արևմտյան ծայրին՝ դեմքով դեպի Հունաստանի մայրաքաղաքը ոչ մեծ մի երկիր կար՝ անունը Տրովադա: Մայրաքաղաքը կոչվում էր Տրոյա, նաև Իլիոն: Այնտեղ ապրում էր Պրիամոս արքան իր կնոջ և 19 զավակների հետ: Ամենաքաջը նրանցից Հեկտորն էր, ամենափմաստունը՝ Կասանդրան, ամենագեղեցիկը՝ Պարիսը: Երբ Պարիսը հյուրընկալվում էր հունական մի քաղաք պետության՝ Սպարտայի թագավոր Մենելայոսի տանը, նրա կին Հելենն սիրահարվեց տրոյացի արքայազնին և թողած մանկահասակ աղջկան՝ Հերմիոնին, ամուսնուն, փախավ նրա հետ: Հունաստանի բոլոր արքաները Մենելայոսի եղբոր՝ Ագամեմնոնի հրամանատարությամբ շարժվեցին դեպի Տրովադա՝ իրենց գեղեցկուհուն ետ բերելու: Բազմահազար զորքով, խոշոր նավատորմով պաշարեցին Տրո-

յան: 10 տարի պատերազմում էին անընդմեջ»:

- Այդ նամակը թանկ մասունք է, որն արժե պահպանել Թատրոնի թանգարանում: Երեք էջի վրա ծավալվող հրաշունչ նամակում ինձ շատ հուզեցին հատկապես հետևյալ տողերը. «Տասից ավելի տարիներ են անցել Տրոյայի ավերումից հետո, բայց Անդրոմաքեն այդ վիճակում անգամ չի կորցրել ապրելու կամքը, արթուն խելքը, հպարտությունը: Ձեռքերը շղթայակապ՝ ոգին, լեզուն, ձայնն ազատ են: Լսեցե՛ք, տեսե՛ք՝ ինչպես է դիմագրավում ձակատագրի նոր հարվածներին... Եվ աստվածները աջակից են խիզախներին»:

-Եվրիպիդեսի «Անդրոմաքե» ողբերգության բեմադրությունը Ստեփանակերտի թատրոնում կատարվեց մեծ ոգևորությամբ: Լուիզա Սամվելյանի առաջարկությամբ՝ մեր թատրոնն այդ բեմադրությամբ մասնակցեց «Անտիկ թատրոնը և մենք» համահայկական փառատոնին: Լրանում էր Արցախյան շարժման 10-ամյակը: Անդրոմաքեի դերակատարը ՅՅ և ԼՂՅ ժողովրդական արտիստուհի Ժաննա Գալստյանն էր, Արցախյան ժաննա դը Արկը: Ներկայացման խաղարկումը Երևանի Գ.Սունդուկյանի անվան ակադեմիական թոտրոնի բեմում վերածվեց ցնծագին տոնախմբության՝ հանդիսատեսի մեջ արթնացնելով նաև Արցախյան շարժման և ցույցերի տարերքը: Իսկ մինչ այդ՝ Ստեփանակերտի թատրոնի բեմում «Անդրոմաքե»-ի առաջնախաղն էր կայանում:

- Դուք անհանգստացած էիք, լարված, կարծում էիք, թե մեկ ամսվա ընթացքում չեք հասցնի բեմադրել «Անդրոմաքե» ողբերգությունը: Այդ ժամանակ նախարար Արմեն Սարգսյանն ասաց. «Մենք 2-3 օրում ծրագրել և գյուղ ենք ազատագրել, դուք չե՞ք կարողանալու մեկ ամսվա ընթացքում 2 գործողությամբ պիես բեմադրել»:

- Անհանգստանալու պատճառ կար: Լրագրող Միքայել Յաջյանը, որ իմ ընկերն է և թատրոնի բարեկամը, շատ անգամ է նկա-

տել, որ գիշերվա ուշ ժամերին իմ աշխատասենյակի լույսը վառվում է: Մի անգամ նա ինձ հրավիրեց տուն, և մենք մինչև լուսաբաց զրուցեցինք թատրոնի խնդիրների մասին: Առաջինը՝ հենց Մ.Յաջանն էր, որ վստահելով մեր թատրոնի տաղանդավոր ու կարող ուժերին, առաջարկեց ինձ՝ Եվրիպիդեսի «Անդրոմաքե»-ով մասնակցել «Անտիկ աշխարհը և մենք» համահայկական փառատոնին: Այդ առաջարկությունն ինձ համար անիրագործելի էր: Յամենայնդեպս այդ պահին ինձ այդպես էր թվում: Յաջորդ օրը Երևանից զանգահարեց Լուիզա Սամվելյանը և հորդորեց ինձ պատրաստվել ու մասնակցել «2050-ամյա թատերական պատմություն ամփոփող» փառատոնին: Մեկ օր անց՝ զանգահարեց ինձ Յայաստանի թատերական գործիչների միության նախագահ, ՅՅ ժողովրդական արտիստ Երվանդ Ղազանչյանը և հայտնեց, որ Ստեփանակերտի պետական թատրոնի կոլեկտիվը հրավիրվում է մասնակցելու փառատոնին:

Այդ խոսքն էլ ինձ համար դարձավ բեկումնային սկիզբ: Ես սկսեցի լրջորեն պատրաստվել: Իմ մեջ արթնացավ ըմբշամարտիկի վճռականությունը: Որոշեցի, ինչ գնով էլ լինի, անպայման հաղթել:

Պիեսի՝ ռուսերենից թարգմանությունը կատարեց Լուիզա Սամվելյանը, իսկ ես նրա ուղարկած տողացի թարգմանությունը վերածեցի չափածո տեքստի: Թատերախումբն աշխատում էր լարված, առանց ավելորդ ժամանակ վատնելու: Ես տարերքի մեջ էի: Բոլորի ջանքերը միտված էին մի կետի՝ հասնել լավագույն արդյունքի: Բոլորիս մեջ արթնացել էր վերջին ու վճռական մարտի գնացող ազատամարտիկի անկոտրում ոգին: Աշխատանքային այսպիսի հոգևոր վերելք ես ունեցա առաջին անգամ: Դա աստղային ժամ էր: «Ո՞վ է իմ կատարած թարգմանությունը չափածո տեքստի վերածում,- հեռախոսագրույցի ժամանակ մի անգամ հարցրեց Լուիզա Սամվելյանը և տեղեկանալով, որ այդ պատվաբեր աշխատանքը ես եմ կատարել, հիացմունքով հավելեց,- այ տղա, ապրես, քո

մեջ, պարզվում է, բանաստեղծն է արթնացել...»: Ես ոգևորված էի նրա անկեղծ խոսքերով, որոնք ինձ համար գնահատականի ուժ ունեին: Գուցե այդ խոսքերով իմ ուսուցիչը փորձում էր ոգևորել և թևավորել ինձ, որպեսզի ես չհրաժարվեմ այդ պատվաբեր փառատոնին մասնակցելու մտադրությունից: Նա համառ էր ու անզիջում: Ամուր կամք ու խորաթափանց հայացք ունեցող մտավորական կին էր, ում ես շատ բանով էի պարտական: Լուիզա Սամվելյանը քայլող հանրագիտարան էր, երազանքի ակունք, արվեստատենչ հոգի:

Անդրոմաքե-ժաննայի համար կրկնակի դժվարություններ ստեղծվեցին, որոնք, բնականաբար, անդրադառնում էին նաև թատրոնի աշխատանքի վրա:

Կարծես ինչ-որ մեկը մեզ համար անընդհատ խոչընդոտներ էր ստեղծում: Բարդ վիրահատության ենթարկվեց ժաննայի աղջիկը՝ Կարինեն, և ծննդաբերեց հարսը՝ Անահիտը, բայց նա երբեք թատրոնում փորձը չընդհատեց, ոչ մի անգամ չտրտնջաց ու չդժգոհեց: Ես հիանում էի նրա տոկունությամբ ու կամքի ուժով, տեսնում, թե ինչ դրական ազդեցություն էր գործում նրա ամուր պահվածքը և դերասանների, և իմ հոգեաշխարհի վրա:

Աշխատում էինք ինքնամոռաց: Դերասանները ֆանտաստիկ արագությամբ յուրացնում էին պիեսի տեքստն ու միզանսցենը: Թատրոնն ուներ նաև համակիրներ, որոնք նույնպես համակվել էին աշխատանքային տենդով, օգնում էին մեզ, ինչով կարող էին: Արվեստասեր համակիրներից մեկը՝ Վալերի Բալայանը ծանոթ թիթեղագործի մոտ պատվիրեց նկարչի էսքիզով արված կրակարանը, որը պիտի դրվեր բեմի կենտրոնում, իսկ նրա կինը՝ ճարտարապետ Մանուշակը իր տան լուսամուտի վարագույրներից զգեստներ կարեց ժաննա-Անդրոմաքեի համար: Մի օր հետո պիտի կայանա առաջնախաղը: Եկավ նաև բեմական շարժման մասնագետը՝ մնջախաղի դերասան Լևոն Իվանյանը: Նկարիչը՝ Ան-

տոն Քեշիշյանը կտորից ստեղծեց բեմի հարդարանքը և հունական ճարտարապետության բնորոշ՝ հրաշալի սյուներ: Ամենաբարդ թատերական լուծումն ինձ համար՝ դա Յերմիոնի և Օրեստեսի հանդիպման տեսարանն էր, որը (երիտասարդ դերասաններ Նարինե Ավետիսյանի և Մարատ Դավթյանի ջանքերով) կառուցվեց միանգամից և մնաց անփոփոխ: Դա մի հրաշալի տեսարան էր, որը կայացավ ակրոբատիկայի և մնջախաղի զուգորդությամբ:

Եվրիպիդեսի «Անդրոմաքե» ողբերգության բեմադրության առաջնախաղը Ստեփանակերտի պետական թատրոնում կայացավ 1997թ. հոկտեմբերի 25-ին: Լեփ-լեցուն դահլիճն ոգևորող ազդանշան էր մեզ համար: Նախարար Արմեն Սարգսյանի հրավերով՝ ներկայացման առաջնախաղին ներկա էր նաև Ֆրանսիահայ գրականագետ Անահիտ Տասնապետյանը: Զավեշտական մի դեպք անհանգստացրեց բոլորիս: Խոսքը բեմական մի հնարքի մասին է, որն այդ պահին դերասանուհուն չհաջողվեց իրականացնել: Յերմիոնի դերակատարը պիտի մտցներ կրակարանի մեջ (դաշույնի ծայրը փաթաթված էր սպիրտով թաթախված բինտով) և հանելով՝ ցասումնալից հարձակվեր Անդրոմաքե-ժաննայի վրա: Բայց կատարվեց անսպասելին: Վառվող դաշույնից կայծեր թռան և կրակը ոստնեց վարագույրն ի վեր: Նշեմ, որ իմ կողմից հորինված այս հնարքը մի քանի անգամ փորձելով, Յերմիոն-Նարինեն հաջողությամբ իրականացրել էր... Կտրուկ շարժումով այրվող դաշույնը թևի տակ դնելով՝ հանգցրել էր և շարունակել բեմախոսությունը: Բայց այս անգամ կատարվեց անսպասելին: Դերասանուհին դաշույնը կտրուկ շարժումով թևի տակ դնելիս՝ չնկատեց անգամ, որ... վեր թռչող կայծերից սկսեց վառվել վարագույրը: Այս ամենը վատ երազի պես սկսեց ուժեղ ճնշել հոգուս թրթիռների վրա: Անդրոմաքե-ժաննան էգ առյուծի պես ցատկոտելով հանգցրեց այրվող վարագույրը: Կրակը հանգցնելուց հետո, մարտակոչի՝

պես հնչեց նրա խոսքը բեմում: Պարտված Իլիոնի գերված տիրուհին շղթաների մեջ էլ պահպանում էր իր արժանապատվությունն ու անընկճելի ոգին:

Ներկայացումն ընդունվեց ջերմորեն: Մտքիս մեջ անընդհատ աղոթում և փանջ էի տալիս Աստծուն: Գրականագետ Անահիտ Տասնապետյանը մոտեցավ ինձ, ամուր սեղմեց ձեռքս, գրկեց և շնորհավորեց. «Չերոսական գործ եք արել... Ես ներկայացումն ընդունեցի՝ որպես մարտադաշտում տարած հաղթանակ... Ապրեք: Այդ ոգով էլ շարունակեցեք...»: Հիշեցի Հայաստանի ժողովրդական արտիստ, ռեժիսոր Վահե Շահվերդյանի խոսքը. «Պատերազմո՞ղ... մարտնչող թատրոն... Ես էլ քո զինվորն եմ եղել ու կմնամ...»: Ուշագրավ և ազդեցիկ էր նաև լրագրող Սուսաննա Բալայանի խոսքը. «Թատրոնը ստանալով երիտասարդական թարմ ուժեր՝ և նեղված լինելով նրա բացակայությունից, այժմ եռում է նրանց տաք էներգիայով, իսկ երիտասարդությունը թատրոնական՝ փորձի և ավանդույթների համադրմամբ և պրոֆեսիոնալիզմով միայն կարող էր տալ այն որակները, որոնք ստիպում են թափ տալ ծերացող մարմինն ու մղվել թռիչքի: Տա Աստված, հարատևի այդ թռիչքը...»:

ԹԱՏՐՈՆԻ ԱՅՄԲԵՐԳԸ

- Թատրոնը բարդ աշխարհ է: Նա ունի նաև իր չերևացող մասերը: Խոսքս այն աշխատանքների մասին է, որոնք նշանակալի և պահանջված են թատերական աշխատանքի ընթացքում, բայց մնում են ներկայացման հաջողության խորքում, որպես բաղադրիչ մաս:

- Ո՞րն է նախապես եղել՝ համվր, թե ձուն... Թատրոնը, թե ստուդիան: Փոխներթափանցված երկու աշխարհներ, մեկը՝ մյուսով պայմանավորված իրողություններ: Պարզ ճշմարտություն է սա, որ այնքան դժվար է հասկանում մարդ-մեքենան... Ամեն ինչում միայն նյութական շահ փնտրողը տեղ չունի արվեստում: Ստեփանակերտում գործող ստուդիան փակեցին անհոգի, անտարբեր մարդիկ: Իսկ ես դեռ նույն սրտակեղեք հարցն եմ տալիս՝ ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ... Չէ որ ազգային ստեղծագործ մտքի, մշակույթի, կրթության, գիտության արարումները մեր ոգու վավերագրերն են, աշխարհին ներկայանալու անհերքելի և Աստվածատուր քանքարը: Ոգեշնչող ուժ և ճանապարհ է պետք ստեղծագործող մարդուն: Ավանդ, շատ հաճախ ճանապարհի ուղեփակոցը և անցման իրավունքը տնօրինողը եսակենտրոն ու մանր հաշիվներով առաջնորդվող քաղքենի չինովնիկն է, որը փայփայում է մեծ աթոռների կողքին ծվարած իր փոքրիկ ու չերևացող բարձր:

Այո, թատրոնի աշխատանքը չերևացող այսբերգ է: Թատրոնը մի կառույց է, որ հենված է իր հիմքերին: Առանց հիմքի մեջ դրված քարի ու շաղախի չի կարող լինել նաև սրբատաշ պատը, առավել ևս՝ անձեռակերտ քանդակն ու խոյակը. դրանք մի ամբողջություն են: Ներկայացումը թատրոնի ողջ կոլեկտիվի համատեղ ջանքի և ստեղծագործ մտքի վերջնական արդյունքն է: Եթե որևէ օղակ ստեղծագործական շղթայում բացակա կամ թուլացած է, ապա

համոզված կարող ենք ասել, որ թատերական աշխատանքը կաթվածահար է:

**- Աշխարհը կտեսնի մի օր
փակվող և բացվող
դռների թատրոն:**

2008թ. դուք ազատվեցիք աշխատանքից և տեղափոխվեցիք Շուշի: Դա Վ.Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի ճգնաժամային սկիզբն էր: Ներսը և դուրսը համակված էին կործանարար տենդով: Իսկ տարիներ հետո թատրոնի կոլեկտիվը պիտի վերջնականապես լքեր երբեմնի շքեղ ու հարմարավետ, բայց այլևս ցուրտ ու քայքայվող շենքը, ուր երբևէ ստեղծագործել և արարել է տաղանդավոր դերասանների և թատերական գործիչների աստղաբույլը: Այդ երևելիներն են՝ թատրոնի հիմնադիր Կարո Ալվարյանը, Միքայել Կորգանյանը, Նինա Յովսեփյանը, Գուրգեն Յարությունյանը, Գուրգեն Գրիգորյանը, Լևոն Սարգսյանը, Իվան Յովհաննիսյանը, Սուրեն Յամգոյանը, Թագուհի Սահակյանը, Ջինավոր Գևորգյանը, Մարգո Բալասանյանը, Բենիկ Օվչյանը, Մամիկոն Միքայելյանը, Ժաննա Գալստյանը, Նվարդ Ասատրյանը, Շուշանիկ Գրիգորյանը, Միքայել Յարությունյանը, Քաջիկ Յարությունյանը, Իսահակ Ալավերդյանը, Սամվել Վիրաբյանը, Լեոնիդ Յարությունյանը...

- Կյանքս կարծես մի հետգրություն է, որ մեկընդմեջ արթնանում է թերթերից արձակվող ոգեշնչող արձագանքներից: Ահա դրանցից մեկը. «Օրվա հանդիսությունները (սեպտեմբերի 25) ավարտվեցին Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում, որտեղ կայացավ հայ ժամանակակից դրամատուրգ Ռ.Աբրահամյանի պիեսի մոտիվներով

ստեղծված «Սուրբ Շուշանիկ» ներկայացման առաջնախաղը: Հանդիսականները, տոգորվելով հայ հոգևոր սքանչելի երաժշտությանը, հիացած ժամանակի ոգին զարմանալի ճշգրտությամբ հաղորդող բեմահարդարանքով, որսում էին պիեսի ամեն մի բառը, արտահայտությունը: Իսկ եզրափակիչ մասում (ինչպես նաև սկզբում) աղոթք-այբուբենն արտասանող դերասանները իբրև ներկայացման ինքնատիպ շարունակություն, կարծես հանդիսականին մեկ անգամ ևս ի ցույց էին անում ազգի փրկության միակ ուղին՝ հավատքը» (Սուսաննա Բալայան, «Ազատ Արցախ», 28 սեպտեմբերի, 1999թ.):

- Ս.Բալայանի խոսքը հուզիչ է: Ուզում եմ մեջբերել տեքստի շարունակությունը. «Հաջողությունը վիթխարի էր: Հուզված հանդիսականները երկար ժամանակ չէին ուզում բաժանվել սիրված դերասաններ ժաննա Գալստյանից (Շուշանիկ), Միքայել Հարությունյանից (Ջոջիկ իշխան), Ժորա Մովսիսյանից (Եպիսկոպոս), Մամիկոն Միքայելյանից (դայակ) և մյուսներից: Եվ ինչպես առաջնախաղից հետո ասաց Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ հարկավոր է պիեսը դուրս բերել թատրոնի շենքից, հարկավոր է այն ներկայացնել մեր ժողովրդին, զորամասերին, հանդես գալ գյուղերում և, ինչու չէ՝ նաև Երևանում»:

Այո՛, թերթերում տպագրված հոդվածները հուսադրող ու ոգևորիչ էին: Թատրոնի առաջընթացը վիթխարի էր: Բայց տարօրինակն այն էր, որ ձեզ հարվածեցին հենց թռիչքի պահին: Այն պահին, երբ հաջողությունն ակնհայտ էր:

- Այդ մասին ես այսօր չեմ ուզում խոսել: Ես բեմադրիչ ռեժիսոր եմ, որտեղ էլ լինեմ՝ իմ գործն եմ անում: Իմ գործը ստեղծելն է, իմ գործն արարելն է: Այսօր ես ավելի շատ ուզում եմ խոսել թատրոնի այն նվիրյալների մասին, որոնց կատարած կարևոր աշխատանքը աննկատ է մնում:

- Մինչ այդ՝ ես ուզում եմ մեջբերել մի հատված ԼՂՅ վաստակավոր մանկավարժ Բորիս Բաղդյանի հոդվածից. «Մի քանի տարի է, ինչ մեր թատրոնը մասնակցում է Երևանում կազմակերպվող մշակութային փառատոներին,- խոստովանել եք դուք զրույցի ժամանակ: - Միայն այն փաստը, որ այդ միջոցառմանը մասնակցում են բազմաթիվ թատերախմբեր, ցույց է տալիս, թե որքան կարևոր ու խոշոր դեր է կատարում թատրոնը մեր ժողովրդի կյանքում: Սա ստեղծագործական փորձի փոխանակման մի անգնահատելի դպրոց է, որտեղ շատ բան է սովորում ու կատարելագործվում ոչ միայն ամեն մի դերասան, այլև տվյալ թատրոնի ողջ ստեղծագործական խումբը, ղեկավարությունը. չէ որ մեկուսացված մնալը առաջընթաց չի ապահովի: Բարձրանում են յուրաքանչյուրի պատասխանատվության աստիճանը, բարձունքներ նվաճելու վճռականությունը: Մի առանձնահատուկ ուրախությամբ հայտնենք, որ մեր թատրոնը արդեն ստացել է «անձնագիրարտոնագիր», որն իրավունք է ընձեռում մասնակցել միջազգային փառատոներին: Սա արդեն շատ մեծ պատիվ ու վստահություն է, որ ձեռք է բերել մեր վաստակաշատ թատրոնը, և որը մեզ ավելի է պարտավորեցնում» («Ազատ Արցախ», 21 հոկտեմբեր, 2004թ.):

Նմանօրինակ վերելք ապրող և անխոնջ արարող թատրոնի տնօրենն ու գեղարվեստական ղեկավարը՝ Լեոնիդ Յարությունյանը, ով հետպատերազմյան թատրոնի կոլեկտիվին հաղորդեց նոր ուժ ու ոգի, զինեց հույսով ու հավատով, հանկարծ դարձավ «ոչ պիտանի» և «խանգարող բեռ»: Ճակատագրի հեզնամնքն է սա, արսուրդ երևոյթ, թե...կյանքի դաժան օրինաչափություն:

- «Կյանքի խորհուրդը,-սովորեցնում է մեզ Գարեգին Նժդեհը,- կայանում է հոգևոր ու ոչ թե նյութական շինարարության մեջ»:

- Չամաձայն եմ ձեզ հետ և ընդունում եմ մեծ զորավարի և մտավորականի խոսքի արդիական ուժն ու նշանակությունը: Իրոք, հոգևոր հայրենիքն ամենազորեղն է: Մեր լինելիության և անվտանգության գրավականը:

-Սակայն ես ուզում եմ զրույցը շարունակել այլ ուղղությամբ: Ուզում եմ խոսել թատրոնի այն նվիրյալների մասին, որոնց կատարած աշխատանքը քիչ է գնահատվել:

Բոգրան Բաբայան, Սերգեյ Գաբրիելյան... Բեմադրական մասի վարիչներ: Մարդիկ, որոնց տքնաջան աշխատանքի կարևորությունը զգացվել է միայն նրանց կորցնելուց հետո: Ափսոսանք եմ ապրում, երբ մտածում եմ, որ նրանց արհեստը, արվեստական արհեստը, փոխանցվել է պակաս շնորհալի, երբեմն էլ՝ երախտամոռ անձանց: Ավելի ցավալին այն է, երբ մեծագույն արժեք ներկայացնող մարդն իր հետ տանում է ի վերուստ իրեն տրված արհեստի գաղտնիքը:

Մեծ ցավ ու ափսոսանք եմ ապրում և Միքայել Ղազարյանի համար: Տիկնիկագործ այս վարպետը օժտված էր բնական տաղանդով և զանազան շնորհներով: Նա ստեղծում էր աներևակայելի տիկնիկներ, որոնք «գործում էին» նրա հորինած մեխանիզմների օգնությամբ, ստեղծելով հրաշալի և ազդեցիկ էֆեկտներ: Նա անընդհատ ինձ համոզում էր, որ անհրաժեշտ է Շուշիում ստեղծել տիկնիկային թատրոն: Ինձ գերում էր նրա նպատակասլաց գործունեությունը: Ասում էր՝ եթե Արցախից աշխատանքի հրավեր ես ստացել՝ մի հապաղիր, գնա: Միքայելը նաև տաղանդավոր ջութակահար էր և հանդիսանում էր Անդրկովկասյան ջութակահարների մրցույթի դափնեկիր:

Կադրե ՚ր, կադրեր, կադրեր... Մեր միջից պետք է ջնջել միջակության հետքն անգամ: Ինքնագործ խմբերի մատուցած «հոգևոր կերակուրը» մեզ համար չէ: Մեր շրջապատից պետք է դուրս մղել աղանդավորական արվեստի այն ահռելի աղբը, որ գրոհում է

կյանքի շնտ ու շատ հարթակներից:

Դիլետանտը կարող է դառնալ միայն աղետ թատրոն կոչված անընդգրկելի տիրույթում: Աշխատանք և նվիրում: Ահա ամբողջը: Անձի ցանկությունը չէ, որ պիտի որոշի բնագավառի գործառույթը, այլ օրենքն ու կանոնակարգը: Ծրագրված և համակարգված աշխատանքը հաջողության գրավականն է:

- **Ձեր կատարած աշխատանքի արդյունավետությունը բազմիցս գնահատվել և արտացոլվել է «Ազատ Արցախ», «Լուսարար», «Մարտիկ», «Կրթություն», «Ստեփանակերտ» թերթերում: Մեջբերեմ մի հրաշալի հատված լրագրող Անահիտ Յակոբյանի «Սարոյանական շունչը Արցախի թատրոնի բեմում» հոդվածից.**

«Սարոյանական շունչը լիովին առկա էր «Յեյ, ո՛վ կա այդտեղ» ներկայացման առաջնախաղի ընթացքում, որ կայացավ դեկտեմբերի 4-ին՝ Վ.Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմում: Մեկ գործողությամբ ներկայացումը մեծ միտք ու իմաստ էր պարփակում իր խորը բովանդակության մեջ: Կարելի էր ասել, որ արտասահմանյան խրթին կյանքը ներկայացնող քաղաքային անբարո նիստուկացում բռնաբարվում էին մարդու ինքնությունն ու արժանապատվությունը, տիրող սիրո անվայել մթնոլորտի երախում վառվում էին արդարությունն ու զավեշտը (զանգվածային տեսարաններ): Գլխավոր հերոսի միջոցով հեղինակն ու ռեժիսորը կարողացան համատեղ ստեղծել մարդկային հարաբերությունների այնպիսի մոտեցում, որի միջոցով հնարավոր եղավ մերկացնել մութ, քողարկված կողմերը, արտահայտել մենության ու միապաղաղության զազրելի գաղափարը: Բանտախցին գամված զնդանից այն կողմ, կյանքի և մահու լարված պայքարի մեջ հերոսը որոնում էր լույսի անձուկ մի ստվեր՝ իր ճահճացած հոգին լուսավորելու համար: Սակայն

որոնվածը դեռ չգտած, ճակատագրի հարվածով աղձատվում է նրա արձագանքը, «Յեյ , ո՞վ կա այդտեղ»: Այդպես էլ չհամակերպվելով ճակատագրի դաժանությանն ու հարվածներին՝ գլխավոր հերոսներն, ի վերջո, դարձան բռնության ու դաժան կրքերի զոհ» (Անահիտ Չակոբյան, դեկտեմբեր, 2006թ.):

- Լրատվամիջոցների հետ թատերախումբը աշխատել է արդյունավետորեն: Պատահել է, որ Գյումրիից հեռախոսով ես ներկայացրել եմ թատերախմբի ելույթի պատկերը, և արդյունքում «Ազատ Արցախ» թերթում տպագրվել է մի բովանդակալից խոսք. «Ստեփանակերտի թատրոնը գյումրեցիներին ներկայացրել է Ռազմիկ Աբրահամյանի «Սուրբ Շուշանիկ» դրամայի բեմադրությունը (ռեժիսոր՝ Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար Լեոնիդ Չարոբյունյան), որը մի քանի տարբերակով ցուցադրվել էր ԼՂՀ մայրաքաղաքում և հավանության արժանացել: Ինչպես Գյումրիից հեռախոսով հայտնել է բեմադրության հեղինակը, «Սուրբ Շուշանիկը» ջերմությամբ է ընդունվել Գյումրիի թատերասերների կողմից: «Ներկայացման ավարտին բեմը վերածվել էր ծաղիկների ծովի, երկար ժամանակ չէին լքում ծափողջույններն ու «Արցախ» բացականչությունները»:

Արցախի դերասանների մասին սրտի խոսք են ասել Շիրակի մարզպետարանի մշակույթի բաժնի վարիչ Հասմիկ Կիրակոսյանը և թատերագետ Լևոն Մութաֆյանը: Ներկայացման վերջում ԼՂՀ Նախագահի խորհրդական, վաստակավոր արտիստուհի, Շուշանիկի դերակատար ժաննա Գալստյանը «Արիության համար» (հետմահու) մեդալ հանձնեց Արցախյան պատերազմի մասնակից, գյումրեցի Յուրի Ղամբարյանի հարազատներին: Ստեփանակերտից ժամանած թատերախմբի ներկայացուցիչները հանդես են եկել Շիրակի մարզի «Ցայգ» և «Շիրակ» հեռուստաալիքներով» (Ս.Վ. «Ազատ Արցախ» 17 ապրիլի, 2001թ.):



**ՇՈՒՇԻՆ՝
ԲԱՐՁՈՒՆՔԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ...**

**Ստեղծելով պոեզիայի թատրոն, ես դարձրել եմ
պոեզիան հոգևոր սնունդ, որն ընդունելով՝ մարդը
դառնում է հոգով ավելի պինդ, հարուստ ու վեհ,
հաղթահարում է թերաբժեքության զգացողությունը,
ապրում լիարժեք կյանքով:**

Լեոնիդ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇՈՒՇԻԻ ԹԱՏՐՈՆԻ ՈՍԿԵԴԱՐԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԱՏԵՐԱԽՄԲԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

- «Շուշիի թատրոնի ոսկեդարը», - այսպես է վերնագրված ձեր հոդվածը՝ նվիրված թատերարվեստի երախտավոր, Շուշիի թատրոնի հիմնադիր Մկրտիչ Խանդամիրյանին և նրա անցած ստեղծագործական բարդ ու բեղմնավոր ճանապարհին:

- Շուշիի «Խանդամիրյան թատրոնը» եղել և մնում է մեր իրականության մեջ թատրոն՝ բառի ընդգրկուն իմաստով, իր ողջ ընթացքի մեջ կատարելագործվելով և հարստանալով նոր ներկայացումների բեմադրություններով:

1891թ. հուլիսի 7-ին հանդիսավոր բացվում է թատրոնի վարագույրը: Մուրացանի «Ռուզան» դրամայի խաղարկմամբ սկսվում է «Խանդամիրյան թատրոնի» որակապես նոր փուլը, ինչը իրավամբ կարելի է ոսկեդար համարել:

Իսկ մինչ այդ... 1873 թվին հատուկ թատրոնի համար Խանդամիրյանի ջանքերով կառուցվել է քաղաքային ակումբի շենքը փայտից և ի պատիվ կառուցողի կոչվել «Խանդամիրյան թատրոն»:

- 1882 թվականի ամռանը հայ բեմի հանձարը՝ Պետրոս Ադամյանը եկավ Շուշի: Դա Շուշիի բնակչության համար տոնախմբություն էր:

- Այդ մասին Յ.Յովհաննիսյանը գրել է. «Քսանյոթ հեծյալ երիտասարդներ ընդառաջ են գալիս մեծ արտիստին, ուղեկցում հյուրանոց, մեծ խնջույք է սարքվում, մեծարանքի խոսքեր են ասվում, բայց երբ գալիս է ներկայացման երեկոն, Արտիստը դեմ է առնում կիսադատարկ դահլիճին, հետագայում նա հիշել է այս դեպքը ու կատակի տվել՝ «Թող ավանակների հեծած թատրոն գալին»:

Նույն վերաբերմունքին նա հանդիպել է Յամբարձում Յախում-

յանի տան դահլիճում, ինչի մասին Լեոն գրել է. «Չամլետ-Ադամյանը» այնպիսի տպավորություն չթողեց հանդիսականների վրա Չամբարծում աղայի տան դահլիճում, ինչպես թողեց մյուս օրը կլուբի դահլիճում, երբ դուրս եկավ սև սյուրթով հագած և արտասանեց Գամառ Քաթիպայի մի քանի ոտանավորները: Մինչև այժմ էլ թվում է թե պահել եմ ականջներիս մեջ մեծ արվեստագետի շեշտերն ու հնչյունները,-«Ստրուկ գնա արյան դաշտը, վերադարձիր ազատված...»:

- Այդպես Շուշին մագնիսական ձգողությամբ դեպի իրեն էր քաշում ժամանակի կիրթ ու առաջադեմ մտավորականներին:

- Շուշին, որ Ղարաբաղի սիրտն էր համարվում, ավելի ու ավելի աշխուժացավ: Ուսումնատենչ ու ստեղծագործ երիտասարդները մեկնում էին Ռուսաստան և եվրոպական երկրներ կրթվելու, վերադառնում լայն մտահորիզոնով, համարձակ գաղափարներով զինված, պատրաստ ծառայելու հայրենիքին:

- Բանասիրական գիտությունների դոկտոր Ավագյանի հավաստմամբ՝ «Շուշին ավելի շատ բնակչություն ուներ, քան Բաքուն: 1862-1863թթ. մարդահամարի տվյալներով Բաքվում բնակվում էր 14.897 մարդ, Շուշիում՝ 19.765: Յետագայում զարգանալով ու առաջանալով Շուշին դառնում է մշակութային կենտրոն, սկզբնավորում կիրառական արհեստների ու արվեստների ավանդույթներ: Գործում էին դպրոցներ, կինոթատրոններ, գրադարաններ: Կար ամառային փայտաշեն ակումբ: Յայտնի էր Շուշին գրողներով, երաժիշտներով ու երգիչներով»:

- Այս բնականոն զարգացման համապատկերն ամբողջացավ պրոֆեսիոնալ թատրոնի ստեղծումով:

Թատերական կյանքի կազմակերպումն ու ջատագովումը կատարվում էր անհատ մեծահարուստների, ուսանողների, մտավորականների, պրոֆեսիոնալ դերասանների նվիրաբերումների շնորհիվ ու ջանքերով: Խանդամիրյանի անհատապես կառուցած փայտաշեն ակումբը երկու անգամ այրվել էր, ուստի հարկավոր էր

կառուցել ավելի հաստատուն շենք: Եվ դարձյալ այս անխոնջ անհատականության անձնական նախաձեռնությամբ և նախագծով կառուցվում է շենք, որի առաջին հարկն իբրև տուն է ծառայում 14 երեխաներից բաղկացած Խանդամիրյան մեծ գերդաստանի համար, իսկ երկրորդ հարկը՝ թատրոնն է՝ իր բացառիկ հարմարավետությամբ: Ահա Մկրտիչ Խանդամիրյանի 14-րդ երեխայի՝ Բորիսի վկայությունը. «Չարմարավետ բեմ, գեղեցիկ դահլիճ, սրահ տանող՝ լայն ձեմասրահ»:

- Գրիգոր Ավետյանի հավաստմամբ՝ «Նիկիտա (Մկրտիչ) Խանդամիրյանի թատրոնը շնորհիվ իր տիրոջ, աչքի էր ընկնում իր սարք ու կարգով, մաքրությամբ... և մանավանդ դեպի դերասանները ունեցած սիրով ու հարգանքով-այս ամենով Շուշու Խանդամիրյանի թատրոնը մեզ համար դարձել էր մի ուխտատեղի»:

- Թատրոնի խաղացանկում հիմնականում Սունդուկյանի պիեսներն են, Միքայել Տեր-Գրիգորյանի, Էմին Տեր-Գրիգորյանի ողևիլները, ինչպես նաև Մոլիերի, Մուրացանի ստեղծագործությունները:

1880թ. Սաֆրազյան ամուսինները Շուշի են բերում մի քանի հայրենասիրական պիեսներ, ինչպես նաև թուրքերեն մի քանի ողևիլներ: 1882թ. կրկին այցելելով Շուշի՝ Սաֆրազյանները կազմակերպում են թուրքական սիրողական խումբ տեղի ուսանողներից ու երիտասարդներից: Ներկայացնում են Ախունդովի մի քանի պիեսները: Չաջողությունն աննախադեպ էր: Ըստ երևույթին Սաֆրազյանների այս քայլը նպատակ ուներ մեղմելու խանդն ու նախանձը Շուշիի թուրք հասարակության շրջանում, որն անշուշտ կար հայկական թատերական կյանքի հանդեպ:

Շուշիի հանդիսատեսը, որն ըմբռնվել էր Գևորգ Չմշկյանի, Ամերիկյանի, Մանդինյանի, Գևորգ Պետրոսյանի, Պետրոս Աղամյանի, Սիրանույշի, Յովհաննես Աբեյանի, Զարիֆյանի, Արամ Վրույրի և ժամանակի համարյա բոլոր մեծերի խաղը, բացառիկ էր իր ճաշակով և հոգևոր պահանջմունքով:

«Խանդամիրյանի թատրոնում» բեմադրվել են Սունդուկյանի, Պարոնյանի, Մոլիերի, Յյուզոյի, Շեքսպիրի, Չեխովի, Օստրովսկու, Գոգոլի պիեսները: 16 տարի շարունակ թատերաշրջանը բացվել է Արամ Սարգսյանի «Ղարաբաղի աստղագետը» պիեսով, որը գրված էր ըստ Պլատոն Զուբովի վեպի:

1900թ. Յովհաննես Աբեյանն իր թատերախմբով այցելելով Շուշի, նոր շունչ ու ոգի է հաղորդել թատերական կյանքին: Բեմադրվել են 17 ներկայացումներ, այդ թվում՝ «Ասլան Բալասի», «Դոն Զիշոտ», «Ուրվականներ», «Օթելլո», «Պաղտասար աղպար», «Անմեղ մեղավորներ», «Արդյունավոր պաշտոն», «Անսանձի սանձահարումը»...

- Այժմ, երբ անհավանականն իրականություն է այլևս և Շուշին տասնամյակներ ի վեր շնչում և ապրում է հայերեն, մեծ երախտավորի՝ Մկրտիչ Խանդամիրյանի անունը կրող պետական թատրոնը ստեղծագործական ինչպիսի՞ ծրագրեր է իրականացնում:

- Մոխիրներից Փյունիկի պես հառնող Շուշին այսօր ապրում է նոր ժամանակի սրտատրոփով, բեղմնավոր դարձնելով արարչական ոգին մեր նախնիների նվիրումի, մտքի և երազի թռիչքի ծիրով:

Շուշիի Մ.Խանդամիրյանի անվան թատրոնի երիտասարդ կուլտիվը հասցրել է բեմադրել ժանրային առումով տարբեր ներկայացումներ. դրամատիկ, մանկապատանեկան... Նշանակալի է նաև պոեզիայի թատրոնը: Ունենք նաև տիկնիկային թատրոն:

Թատրոնը մասնակցել է համահայկական հինգ փառատոների, նվաճել մեկ «Ոսկե մեդալ», մեկ առաջին մրցանակ, բազում պատվոգրեր, դիպլոմներ, հավաստագրեր: Յուրախաղերով հանդես է եկել ՅՅ մայրաքաղաքում՝ Երևանում և մարզերում, ԱՅ մայրաքաղաք Ստեփանակերտում, շրջաններում և գյուղերում, մշտապես շահելով հանդիսատեսի ջերմ համակրանքն ու սերը:

- «Ազատագրված Շուշին կամաց-կամաց բուժում է վերքերը, և հեռու չէ այդ չքնաղ քաղաքի մշակութային կենտրոն

դառնալու հեռանկարը: Փառք Աստծո, քաղաքում կան ազգանվեր մտավորականներ, որոնք սովորության ուժով անտեսում են բոլոր դժվարություններն ու զբաղվում իրենց գործով՝ Արարումով», - գրել է Երևանի Սլավոնական համալսարանի դասախոս, դոկտոր-պրոֆեսոր Մարգարիտա Խաչատրյանը՝ հույս հայտնելով, որ նկարիչ, դերասան, բեմադրիչ, բանաստեղծ, գրականագետ, լրագրող, ուսուցիչ ունեցող քաղաքը շուտով կվերագտնի իր Ոգու դիմագիծն ու հոգևոր նկարագրով կհարստացնի մշակութային կյանքը:

Ինչ խոսք, առանձնահատուկ և դինամիկ կյանքով է ապրում Շուշիի Մկրտիչ Խանդամիրյանի անվան թատրոնը: Ո՞րն է նրա առաջնդիչ ուժը:

- Շուշիի թատրոնն իր տեսակի մեջ եզակի է, իր մեջ համադրում է թատերական մի քանի ժանրեր՝ դրամատիկ, տիկնիկային, պոեզիայի և մանկապատանեկան թատրոն, և այդ ամենը կատարվում է նույն դերասանական ներուժով, ընդամենը՝ 8 դերասանների առկայությամբ:

Թատրոնի խաղացանկը շատ հարուստ է՝ Վ.Սարոյան, «Ջեյ, ղվ կա այդտեղ», «Չարության ժամանակը» (Ռ.Եսայան), «Ռուզան», «Դաս կանանց», «Գյումրեցի խուլ պառավների զրույցը», «Եղերերգ» (ներկայացում-Էսսե), «Գարուն»՝ գրական-երաժշտական կոմպոզիցիա, տիկնիկային մի քանի ներկայացումներ՝ «Շունն ու կատուն», «Լուսերեսն ու Վարդերեսը», «Թռչուն ընկեցիկը», «Ձմեռ պապն արթնացավ»:

- Կարելի է ասել՝ եռում է կյանքը թատրոնում: Ընդամենը երկու ամսվա ընթացքում Մ.Խանդամիրյանի անվան թատրոնը ելույթներով հանդես եկավ Շուշիում, Ստեփանակերտում, Երևանում, Գորիսում, Արմավիրում, Կապանում:

- Չայաստանյան հյուրախաղերը մեկնարկել են Երևանի Խամաճիկների թատրոնում կայացած «Թռչուն ընկեցիկ» տիկնիկային ներկայացմամբ, որը հիացմունքի արժանացավ հանդիսատեսի կողմից:

Արվեստագետներ՝ Ավ.Իսահակյանի անվան գրադարանի տնօրեն, «Նռան հատիկ» համահայկական փառատոնի կազմկոմիտեի նախագահ Յասմիկ Կարապետյանը, թատերագետ Բախտիար Յովակիմյանը, Երևանի պետական կինոյի և թատրոնի ինստիտուտի դասախոս, ռեժիսոր Մարգարիտա Մնացականյանը, Յրայր Ուլուբաբյանը և ուրիշներ իրենց հիացական խոսքն ուղղեցին թատրոնի անձնակազմին: Դա ոգևորիչ և խթանիչ ուժ է հաղորդում ստեղծագործական խմբին:

- Ձեր կարծիքով՝ փոքր քաղաքի թատրոնը պետք է ունիվերսալ լինի: Յաջողությամբ բեմականացնում եք նաև պոեզիան:

Բանաստեղծուհի Ժաննա Բեգլարյանի հավաստմամբ՝ Շուշիի թատերախումբը հոգի ու ժամանակ է ներդնում պոեզիան թատերականացնելու համար: «Լույսի, խաչքարի, վառվող մոմերի, մեղմ երաժշտության, գեղարվեստական խոսքի ներդաշնակ սիմֆոնիան հոգեպարար մի միջավայր էր, ուր իրար էին հաջորդում մարդկային ներհակ զգացողություններ ու հույզեր, որն ամբողջության մեջ մեր բարդ ժամանակի դիմանկարն է»: Այս կարծիքն է արտահայտել Ժ. Բեգլարյանը «Յարության ժամանակը» ներկայացումը դիտելուց հետո:

- Ստեղծելով պոեզիայի թատրոն, ես դարձրել եմ պոեզիան հասարակության համար հոգևոր սնունդ, որն ընդունելով՝ մարդը դառնում է հոգով ավելի պինդ, հարուստ ու վեհ, հաղթահարում է թերարժեքության զգացողությունը, ապրում լիարժեք կյանքով: Այս է իմ մեծագույն նպատակը, որին ես հասնում եմ տարեցտարի և ժամ առ ժամ: Պոեզիան բեմից հնչեցնելու կարիքը կա և ժամանակահունչ է այդ պահանջը:

- Անդրադառնալով բանաստեղծների և թատրոնի համագործակցությանը՝ ԼՂՅ գրողների միության նախագահ, բանաստեղծ Վարդան Յակոբյանը խոստովանել է. «Բանաստեղծության բեմադրությունը բավականին բարդ և լուրջ գործընթաց է, ինչը ձեռնարկել չեն համարձակվում անգամ աշխար-



Վարդան Չախրյան

հի ճանաչված շատ թատրոններ: Մեր բանաստեղծությունն այսօր նաև բեմից դեպի ընթերցողը գնալու կարիք ունի: Լեոնիդ Չարությունյանի գործունեությունը նկատելի կերպով թարմություն բերեց մեր թատրոնին: Բանաստեղծության բեմադրության կարևորագույն գործում հենց նա է կատարել անդրանիկ քայլեր, որոնք նորություն էին: Դժվար գործ է բանաստեղծության բեմադրությունը: Այն ներքին դեկորացիա է պահանջում, ինչն ամենևին էլ առարկայական չէ: Ու այդ ներքին դեկորների միջոցով կարողանալ դնել միզանսցեններ, բեմական իրողություններ դնել, էֆեկտներ ստեղծել, բավականին դժվար գործ է, ինչը Լեոնիդը լավագույնս է կատարել: Այս առումով նման համագործակցությունը շատ ողջունելի է, ու այն պիտի ավանդույթ դառնա»:

«Մի առիթով ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանի հետ զրույցի ժամանակ հետաքրքրվեցի, թե մերօրյա բանաստեղծները որքանով են ընդգրկված նրա ելույթներով, և ում է նախընտրում ժամանակակիցներից, անվանի ասմունքողն ասաց, որ երբեք բեմից չի փորձել նրանց կարդալ, բայց ռադիոյով մշտապես անդրադառնում է: Իսկ պատճառն այն մտավախությունն է, որ եթե ժողովուրդը չի ճանաչում այդ արվեստագետին, ապա նրա ստեղծագործությունն այնքան ուժեղ և ազդեցիկ պիտի լինի, որ հնչի դասականի կողքին: Բացի այդ, անչափ մեծ է ասմունքողի պատասխանատվությունն այս պարագայում, ով կարող է բանաստեղ-

- Ուշագրավ դիտարկում է արել և լրագրող Մելանյա Միլոնյանը. «Մի առիթով ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանի հետ զրույցի ժամանակ հետաքրքրվեցի, թե մերօրյա բանաստեղծները որքանով են ընդգրկված նրա ելույթներով, և ում է նախընտրում ժամանակակիցներից, անվանի ասմունքողն ասաց, որ երբեք բեմից չի փորձել նրանց կարդալ, բայց ռադիոյով մշտապես անդրադառնում է: Իսկ պատճառն այն մտավախությունն է, որ եթե ժողովուրդը չի ճանաչում այդ արվեստագետին, ապա նրա ստեղծագործությունն այնքան ուժեղ և ազդեցիկ պիտի լինի, որ հնչի դասականի կողքին: Բացի այդ, անչափ մեծ է ասմունքողի պատասխանատվությունն այս պարագայում, ով կարող է բանաստեղ-

ծին կամ հայտնի դարձնել, կամ կործանել: Պատասխանատվության զգացումն ուղեցույց ունենալով, ինչ-որ տեղ և իրենց երիտասարդական ինքնավստահությամբ խանդավառ՝ Շուշիի Մ.Խանդամիրյանի անվան թատրոնը համարձակ քայլ կատարեց՝ բեմադրելով «Յարության ժամանակը» ներկայացումը:

- Ներկայացումներով հաճախակի հանդես գալով զորամասերում, թատրոնը մեծ դեր է կատարում նաև զինվորների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: 2012թ. օգոստոսին Մ.Խանդամիրյանի անվան թատրոնը «Դաս կանանց» ներկայացմամբ հանդես եկավ ԼՂՀ ՊԲ զորամասերում:

- Արդեն ավանդույթ է դարձել, որ յուրաքանչյուր նոր բեմադրություն պիտի իր արձագանքի կենարար մթնոլորտը տարածի նաև հայրենիքի պաշտպանների տեսահորիզոնում: Պետք է նշեմ, որ ավելի լիարժեք և արդյունավետ է դառնում ստեղծագործական խմբի գործունեությունը՝ արժանանալով զինվորների ջերմ ընդունելությանն ու համակրանքով ու բերկրանքով լի ծափողջույններին: Ցանկալի է, որ ԼՂՀ Պաշտպանության բանակի բոլոր զորամասերում անցկացվեն մշակութային օրեր, դրանից կկարևորվեն, իհարկե, ստեղծագործական խմբերը, միաժամանակ համոզված եմ, որ կհարստացվեն նաև հայրենիքի պաշտպանների հոգեաշխարհն ու մտահորիզոնը: Չէ որ մշակույթը գեղեցկացնում է ոչ միայն հայրենի եզերքի մթնոլորտը, այլև վարակում է արվեստասերին ոգու և հույսի կենարար լույսով:

- Միջոցառմանը ներկա սպաների կարծիքով՝ զորամասում միշտ էլ սիրով ու խանդավառությամբ են ընդունում Շուշիի թատերախմբի ներկայացումները, որոնք խթանում են նաև զորամասի զինվորների ստեղծագործական ունակությունները, նպաստում նրանց գեղագիտական դաստիարակության զարգացմանը: ԼՂՀ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ գնդապետ Շահեն Այդինյանը գո-

հունակություն հայտնեց ներկայացման բարձր կատարողականից, հավելելով, որ նմանատիպ միջոցառումները լավագույն ավանդույթ կդառնան՝ սպաների և զինվորների նպատակասլաց ժամանցը կազմակերպելու ուղղությամբ: Նա կարծիք հայտնեց նաև այն մասին, որ թատերախմբի օգտակար ու ջերմառատ ելույթները խթանիչ դերակատարություն են ունենում նաև սերունդների ռազմահայրենասիրական զարգացման կարևորագույն գործում:

Թատերախմբի դերասանների կարծիքով՝ այսպիսի հանդիպումները խթան են հանդիսանում բեմական արվեստի զարգացման և տարածման գործում. չէ որ գնահատողն ու արժեքների պահապանը ժողովուրդն է: Հոգևոր արվեստի մշակները ևս կարիք ունեն ուշադրության և, ամենագլխավորը՝ ձգտում են իրենց կատարած աշխատանքներից փոքր ինչ գոհանալ, հատկապես՝ ոգու ավյունն ու եռանդը ժամանակին ներկայացնել հայրենիքի պաշտպաններին, որոնք ծարավ են բարձրարժեք ստեղծագործությունների:

2012թ. Շուշիի Մ.Խանդամիրյանի անվան թատրոնը գեղարվեստական խորհրդի դատին ներկայացրեց նաև մի նոր ներկայացում՝ անվանի մանկագիր Սուրեն Մուրադյանի «Ծպտված Ձմեռ պապն ու Ձյունանուշը»: Դա, իհարկե, թատրոնի կոլեկտիվի ամանորյա նվերն է ժողովրդին:

- Արվեստի համահայկական դաշտը թարմ ելևեջներ է ստանում նաև Շուշիի թատերարվեստի ակունքներից, և Շուշին այսօր խոստում է աշխարհի տարբեր ծագերում ապրող հայ արվեստասերների սրտերի հետ:

Սիրված մանկագրի այս պիեսը Ոգու տոն է, հոգևոր պահանջված սնունդ, որ թատերարվեստի ժամանակակից միջոցներով հղվում է հանդիսատեսին:

- Արդյունքում՝ ստեղծվում է հաղորդակցության եռուն դաշտ:

- Դեռևս ամռանը, այցելելով բերդաքաղաք Շուշի և մասնակցե-

լով մշակութային միջոցառումներին, անվանի մանկագիրը, ներշնչանքի և ոգևորության բացառիկ պահեր ապրեց: «Ես Շուշին տեսա իր հոգևոր թռիչքում,- ասաց մանուկների ոգու թարգմանը և հավելեց,- երանի՜ թե ես էլ դառնայի ստեղծագործական հյուլեն այս հոգևոր արթնացման»:

- Եվ իրագործվեց անվանի մանկագրի երազանքը, բեմադրվեց նրա պիեսներից մեկը: Նա դարձավ ստեղծագործական հյուլեն հոգևոր նոր արթնացման:

- «Ակտիվ խաղ», - ահա թատերախմբի որդեգրած ստեղծագործական սկզբունքը, որով առաջնորդվում է տարիներ շարունակ:

Ներկայացման կոլորիտային լուծումներին իր նպաստն է բերել նաև թատրոնի նկարիչ-դիզայները՝ Իլոնա Յովհաննիսյանը, որին պարբերաբար օգնել և իր մտահղացումներով հիացրել է Ֆրանսիահայ նկարիչ-ձևավորող Մայիդ Շանդեզը-Ավագյանը:

- Սուրեն Մուրադյան արվեստագետը այս գողտրիկ պիեսով մուտք գործելով Շուշիի մշակութային դաշտ, դարձավ ձանաչողության նոր շեմ և ոգու շնչառություն: Մուրացանի անվան ավագ դպրոցի տնօրեն Վլադիմիր Չարությունյանի կարծիքով՝ «այս ներկայացումը տոնական նվեր է, ծնվել ու մարմնավորվել է ձիշտ ժամանակին: Դերասանների խաղն ակտիվ է, ազդեցիկ, վարակիչ և անկեղծ: Լեոնիդ Չարությունյանն, իրոք ոգեխույզ արվեստագետ է, վարպետ բեմադրիչ: Դերասաններն իրենց ինքնատիպ խաղով և ոգու նկարագրով հիացմունք պատճառեցին մեզ: Կեցցեք»: Իսկ նկարիչ Յովիկ Գասպարյանի հավաստմամբ՝ «Ծպտված Ձմեռ պապն ու Ձյունանուշը» տաղանդավոր մանկագիր Սուրեն Մուրադյանի լավագույն ստեղծագործություններից է: Ռեժիսոր Լ.Չարությունյանի բեմադրությունը նորովի բացահայտեց հեղինակի ոգու կրակն ու խոսքի նկարագիրը: Ստեղծվեց հուզական անանց տարածք, որտեղ բացահայտվեցին դերասանների կարողություններն ու հնարավորությունները»:

- Ողջունելին այստեղ համարձակ խաղն է, կիրթ ու դինամիկ շարժումը, այն ճանապարհը, որ տանում է դեպի նպատակակետ, անցնում է ստեղծագործական տքնաջան աշխատանքի միջոցով:

Այս ներկայացմամբ՝ թատրոնի կոլեկտիվը շնորհավորում է բոլորի Ամանորն ու Սուրբ Ծնունդը... Արվեստի լեզվով... Ստեղծագործական ոգու անկեղծ բռնկումով...

«Այս օրերին Շուշիի թատրոնը,-գրել է Մարգարիտա Խաչատրյանը,- ելույթ է ունենում տարբեր կրթօջախներում՝ գրադարան, դպրոց, մշակույթի ակումբ, և հանդիսատեսը նորից ու նորից համոզվում է՝ Շուշին, արդեն տասնամյակներ ազատագրված Շուշին մեր մշակութային խոշոր կենտրոններից է, թող այսօր ինքնադրսևորման պակաս հնարավորություններով, բայց հզոր ներուժով ու ամենօրյա համառ ջանքերով»:

- Լավ սկիզբը ստեղծագործական կայուն և բեղմնավոր ընթացք է ապահովում նաև: Թատերախումբը ելույթներով հանդես եկավ նաև Բերձորում, Ասկերանում, Մարտակերտում, Մարտունիում՝ ստեղծագործական ուղեծիրը համալրելով թատերարվեստի նոր դրսևորումներով, ոգու նկարագրի նրբերանգներով և ներուժի վարակիչ հմայքով: Իրենց գրավիչ խաղով առանձնանում են երիտասարդ շնորհալի դերասաններ Աշխեն Հարությունյանը, Սվետա Առստամյանը, Անի Կապլանյանը, Նվեր Ղարաբեկյանը, Արմեն Հայրապետյանը, Գայանե Առուշանյանը, Գևորգ Հայրապետյանը, Նունե Ոսկանյանը:

Ներկայացումից-ներկայացում ավելի է փոթորկվում հուզումների ալիքը:

«Շունն ու կատուն» ներկայացումը դիտելուց հետո ռեժիսոր, դրամատուրգ և հեռուստալրագրող Գարիկ Ղազարյանը խոստովանել է. «Լ.Հարությունյանի բեմադրած «Շունն ու կատուն» շատ արդիական է ու հետաքրքիր: Ներկայացումը վառ է և լավ ձևավորված: Երաժշտությունը համահունչ է բեմադրության ոգուն: Դերասանները լավ էին զգում կերպար-

ները: Մակարդակը բարձր է»:

«Մաղթում եմ բազմաթիվ հաջողված ներկայացումներ, - դերասաններին իր ջերմ խոսքով ոգևորել է նաև Արտաշատի Յ.Խարազյանի անվան պետական թատրոնի տնօրեն Գեղանուշ Սայադյանը, -թող թատրոնը ձեզ համար դառնա նվիրյալների բույլ, ուր կարողանաք ասել ձեր սրտի լարերի թրթիռներից հյուսված անկեղծ ու շիտակ խոսքը: Թող հանդիսատեսը հասկանա ու գնահատի ձեզ, քանզի թատերարվեստը ամենակենդանի արվեստն է...»:

- Միշտ կիսատ խոսքին գործն է շարունակում, իսկ կիսատ գործին՝ մտահղացման լույսը: Պարզևները լավ սկիզբ են նախանշում: Ոսկեփայլ մեդալի խորհրդանշական փոխանցումով խմբի յուրաքանչյուր անդամի սրտում կապրեն այն ջերմությունն ու սերը, որ իշխում են հանդիսատեսների հոգու թրթիռներում:

Սրտառուչ խոսքերով և գնահատության ծափողջույններով ոգեշնչված դերասանները՝ ամեն նոր ներկայացման մեջ ինքնահաստատման մի բնագիծ են որսում, արվեստի անակնկալ ոգուն մերձենալու նոր երիզ փնտրում և գտածը՝ ոգու հայտնությունն է, որ փոխանցվում է հանդիսատեսին, հանդիսատեսից՝ դեպի բեմական կյանքի ճառագայթող ակունքները: Եվ ակամայից հիշում ես բեմի մեծ վարպետ Վահրամ Փափազյանի խորիմաստ խոսքերը. «Արվեստում ճշմարիտը արժեքավորվում է, երբ վերածվում է զգացումի, երբ այդ զգացումն իր կարգին վերափոխվում է գործողության, որը իրականություն է, հետևաբար՝ կյանք»:

ԼԵՈՆԻԴ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱ-ԹԱՏԵՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ				
Յեղի նակը		Պիեսի անունը	Տարեթիվը	Նկարիչ-ձևավորող
1.	Վ.Շեքսպիր	«Ռոմեո և Ջուլիետա»	1970թ.	Գ.Սահակյան
2.	Բորխենրտ	«Յագը»	1972թ.	Գ.Սահակյան
3.	Վ.Շեքսպիր	«Մակբեթ»	1974թ.	Լ.Յարոյությունյան
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏԻՎՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ				
4.	Վ.Վարդանյան	«Լուսերեսն ու Վարդերեսը»	1974թ.	Յ.Աղեկյան
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Վ.ՓԱՓԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ				
5.	Վ. Ռոզով	«Երջանկության որոնումներ»	1976թ.	Գ.Ծատուրյան
6.	Չ.Դիկկենս	«Դավիթ Կոպերֆիլդ»	1977թ.	Մ.Քեչոյան
7.	Մ.Գորկի	«Քաղքենիներ»	1978թ.	Վ.Վարդանյան
8.	Ա. Պապայան	«Գնա մեռիր, արի սիրեմ»	1979թ.	Գ.Ծատուրյան
9.	Ա. Կասոնա	«Ծառերը կանգնած են մահանում»	1980թ.	Գ. Ծատուրյան
10.	Ա. Կոնստանտինով	«Ախ այդ ծնողները»	1980թ.	Գ.Ծատուրյան, Բ.Ռացեր
11.	Ա.Օստրովսկի	«Եկամտավոր պաշտոն»	1981թ.	Ա.Միքայելյան
12.	Ն.Դումբաձե	«Մեղադրական եզրակացություն»	1882թ.	Գ.Ծատուրյան
13.	Գ.Մամլին	«Ողջույն դինոզավրերին»	1983թ.	Գ.Ծատուրյան
14.	Գ.Խուզակ	«Անդրոն և Սանդրոն»	1984 թ.	Գ.Ծատուրյան
15.	Ա. Չխեիձե	«Ազատ թեմայով շարադրություն»	1984թ.	Գ.Ծատուրյան
16.	Վ.Պետրոսյան	«Վերջին ուսուցիչը»	1985թ.	Ա.Միքայելյան
17.	Խ.Ավագյան	«Անահիտ»	1986թ.	Գ.Ծատուրյան
18.	Ա.Շահինյան	«Երջանիկ արքայազնը»	1987թ.	Ս.Յովհաննիսյան
19.	Ժ.Յարությունյան	«Բախտավոր մարդիկ»	1987թ.	Գ.Ծատուրյան
20.	Վ.Քոչարյան	«Դարի չարագործը»	1987թ.	Ս.Յովհաննիսյան

Վ.ՓԱՓԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ ԿԻՑ ԱՏՈՒԴԻԱՅՈՒՄ				
21.	Ա.Շահինյան	«Երջանիկ արքայազնը»	1986թ.	Ա.Մելիքսեթյան
22.	Ա.Չեխով	«Առաջարկություն»	1987թ.	Լ.Չարությունյան
23.	Ա.Չեխով	«Կարապի երգը»	1987թ.	Լ.Չարությունյան
24.	Վ.Աճեմյան	«Ռևիզոր»	1987թ.	Լ.Չարությունյան
25.	Վ.Աճեմյան	«Խորոշո»	1987թ.	Լ.Չարությունյան
26.	Վ.Աճեմյան	«Չարևանի երեխան»	1987թ.	Լ.Չարությունյան
27.	Վ.Աճեմյան	«Մնացուկը»	1987թ.	Լ.Չարությունյան
ԼԵՆԻՆԱՎԱՆԻ Ա.ՄՈՍՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ				
28.	Ն.Դումբաձե	«Սպիտակ դրոշներ»	1987թ.	Մ.Չակոբյան
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Վ.ՓԱՓԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ				
29.	Ա.Շիրվանզադե	«Չար ոգի»	1988թ.	Ս.Չովհաննիսյան
30.	Լ.Չարությունյան (հրապարակային ներկայացում)	«Մենք»	1988թ.	Ա.Մելիքսեթյան
ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՎԱՆԱՉՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԻԿԵԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՄ				
31.	Ա. Եգանյան	«Տարեմուտի զանգակներ»	1988թ.	Մ.Վարդանյան
32.	ՎԼ.Օռլով	«Ոսկե ճուտիկը»	1989թ.	Մ.Վարդանյան
33.	Ա. Կուռյանդակի	«Դե՛ գայլ, սպասիր...»	1990թ.	Մ.Վարդանյան
34.	Ա.Եգանյան	«Ձմեռ պապը, Ձյունանուշը, թզուկն ու կախարդը»	1990թ.	Ա. Գրիգորյան
35.	Լ.Չարությունյան	«Գյումրվա Նոր տարի»	1991թ.	Ա. Գրիգորյան
36.	Ալ. Միլն (թարգմ. ռուսերենից՝ Լ.Չարությունյանի)	«Վիննի թուփի խնջույքը»	1992թ.	Ա. Գրիգորյան
37.	Գրիմ եղբայրներ	«Ծերուկ հրաշագործը»	1993թ.	Մ.Սկրտչյան
38.	Ա.հայտ	«Չաջողակ որս»	1993թ.	Մ.Սկրտչյան
39.	Ալ. Միլն (թարգմ. ռուսերենից՝ Լ.Չարությունյանի)	«Վիննի թուփը և հյուսիսային բևեռը»	1993թ.	Ա. Գրիգորյան
40.	Ալ.Միլն (թարգմ. ռուսերենից՝ Լ.Չարությունյանի)	«Վիննի թուփը և բոլորը, բոլորը»	1994թ.	Ա. Գրիգորյան
41.	Ա.հայտ	«Արջն ու ըրթոթը»	1994թ.	Ա.Մելիքյան

42.	Յովի. Թումանյան	«Քեֆ անողի քեֆը չի պակսի»	1994թ.	Ն. Յակոբյան
43.	Վլ. Օռլով	«Ոսկե ճուղիկը»	1994թ.	Մ. Վարդանյան
44.	«Դարբինների գարնը», փաստագրական ֆիլմ, «Շիրակ» հեռու տատետսություն, 1994-95թթ.			
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ				
45.	Լ. Յարությունյան	«Տարեմուտի հրաշքներ»	1995թ.	Ռ. Ասկարյան
46.	Դ. Ռիկարդո	«Առլեկինը արքա»	1995թ.	Ա. Զեչիշյան
47.	Ա. Կասոնա	«Ծառերը կանգնած են մահանում»	1996թ.	Գ. Ծատուրյան
48.	Յովի. Շիրազ	«Սիամանթո և Խջեզարե»	1996թ.	Բ. Օվչյան
49.	Ռ. Աբրահամյան	«Յարսեր ... կեսուրներ...»	1996թ.	Լ. Յարությունյան
50.	Եվ. Չեպովեցկի	«Արջուկն ու քոթոթը»	1996թ.	Ն. Սարգսյան
51.	Է. Ռուլակկի	«Այլանդակ Էզան»	1997թ.	Ա. Զեչիշյան
52.	Եվրիպիդիս	«Անդրոմաքե»	1997թ.	Ա. Զեչիշյան
53.	Խ. Ասատրյան	«Ձկնորս Սանտոն և որսորդ Վանոն»	1998թ.	Լ. Յարությունյան
54.	Ա. Կուռյանդսկի	«Դե՛ գայլ, սպասի՛ր...»	1999թ.	Դ. Մինասյան
55.	Ա. Օստրովսկի	«Ամեն ճեղքվորներ»	1999թ.	Դ. Մինասյան
56.	Է. Լաբիշ	«Միզանտրոպ»	1999թ.	Ռ. Վարդանյան
57.	Ռ. Աբրահամյան	«Սուրբ Շուշանիկ»	1999թ.	Դ. Մինասյան
58.	Լ. Յարությունյան	«Սուրբ Ծնունդ»	2000թ.	Դ. Մինասյան
59.	Լ. Յարությունյան	«Սուրբ Զատիկ»	2000թ.	Դ. Մինասյան
60.	Լ. Յարությունյան	«Երրորդ հազարամյակի ոսկե բանալին»	2001թ.	Ա. Մելիքսեթյան, Լ. Ղարիբյան
61.	Լ. Յարությունյան	«Սուրբ Ծնունդ»	2001թ.	Դ. Մինասյան
62.	Յովի. Թումանյան	«Գիքորը»	2001թ.	Ա. Մելիքսեթյան
63.	Լ. Յարությունյան	«Սուրբ Զատիկ»	2001թ.	Դ. Մինասյան
64.	Լ. Յարությունյան	«Եղել ենք, կանք ու գալու ենք դեռ»	2001թ.	Դ. Մինասյան
65.	Գրիմ եղբայրներ	«Ծերուկ հրաշագործը»	2002թ.	Ս. Բիչախչյան
66.	Բ. Ջախոդեր	«Վիննի թուխի խրախճանքը»	2002թ.	Գ. Աթայան
67.	Ս. Խալաթյան	«Քառասուն օր համբառնալուց առաջ»	2002թ.	Ա. Զեչիշյան

68.	Ե.Չապովեցկի	«Հաջողակ որս»	2002թ.	Գ.Շիրվանյան
69.	Յան Տյատտե	«Փակուղի»	2003թ.	Գ.Սահակյան
70.	Ա.Շիրվանզադե	«Չար ոգի»	2003թ.	Գ.Սահակյան
71.	Հովհ.Թումանյան	«Լուսերեսն ու Վարդերեսը»	2003թ.	Հ.Սահակյան
72.	Գ.Սարգսյան	«Դաս կանանց»	2004թ.	Հ.Սահակյան
73.	Ռ.Աբրահամյան	«Կամիթներ» (ըստ Հ.Պարոնյանի)	2004թ.	Լ.Հարությունյան
74.	Հովհ.Թումանյան	«Շունն ու կատուն»	2004թ.	Հ.Սահակյան
75.	Վ. Շեքսպիր	«Ռոմեո և Ջուլիետա»	2004թ.	Հ.Սահակյան
76.	Ա.Պետրոսյան	«Արտոնված եղեռն»	2005թ.	Ա.Քեչիշյան
77.	Կ.Սանանդյան	«Երջանկության թռչունը»	2005թ.	Հ.Սահակյան
78.	Ս.Խանյան	«Ամարա սի դպրոցը»	2005թ.	Ռ.Ավարյան, Ա.Քեչիշյան
79.	Լ.Հարությունյան	«Նռան ծառը»	2005թ.	Լ.Հարությունյան
80.	Ա.Սարգսյան	«Ձմեռային հեքիաթ»	2005թ.	Ա.Քեչիշյան
81.	Ա.Տոլստոյ	«Ոսկե բանալի կամ Բուրատինոյի արկածները»	2006թ.	Ա.Քեչիշյան
82.	Վ.Սարոյան	«Հեյ, ո՞վ կա այդտեղ»	2006թ.	Ա.Քեչիշյան
ՇՈՒԵՒԻ «ԱՍՏՂԻԿ», ՀԵՏԱԳԱՅՈՒՄ՝ Մ.ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ				
83.	Լ.Հարությունյան	«Գարուն»	2009թ.	Լ.Հարությունյան
84.	Խ.Ասատրյան	«Գյումրեցի խուլ պառավների գրոպցը»	2008թ.	Լ.Հարությունյան
85.	Ա.Շահինյան	«Շունն ու կատուն» (ըստ Հովհ. Թումանյանի)		Գ.Սահակյան
86.	Վ.Սարոյան	«Հեյ, ո՞վ կա այդտեղ»	2008թ.	Ն.Քեչիշյան
87.	Գ.Սարգսյան	«Դաս կանանց»	2009թ.	Հ.Գասպարյան
88.	Վ.Վարդանյան	«Լուսերեսն ու Վարդերեսը»	2009թ.	Գ.Սահակյան
89.	Պ.Սևակ	«Եղերերգ»	2010թ.	Ա.Քեչիշյան
90.	Ա.Եգանյան	«Ձմեռ պապն արթնացավ»	2010թ.	Հ.Գասպարյան
91.	Գ.Սարգսյան	«Անսանձ կանանց սանձահարումը»	2010թ.	(բեմադրվել է Գյումրու Վ.Աճեմյանի անվան պետական թատրոնում)
92.	Հովհ. Թումանյան	«Թռչուն ընկեցիկը»	2011թ.	Դ.Մինասյան

93.	Ա.Եգանյան	«Ձմեռ պապն արթնացավ»	2011թ.	Հ.Գասպարյան
94.	Ռ.Եսայան	«Հարության ժամանակը»	2012թ.	Լ.Հարությունյան
95.	Մուրացան	«Ռուզան» (սեղմ տարբերակ)	2012թ.	Լ.Հարությունյան
96.	Ս.Մուրադյան	«Ծպտված Ձմեռ պապն ու Ձյունանուշը»	2012թ.	Հ.Գասպարյան
97.	Հովիթումանյան	«Սասունցի Դավիթ»	2013թ.	Լ.Հարությունյան
98.	Լ.Հարությունյան	«Պարոյր Սևակ-89»	2013թ.	Լ.Հարությունյան
99.	Ա.Էդար	«Անահիտ» (ըստ Դ.Աղայանի հեքիաթի)	2014թ.	Ա.Քեչիշյան
100.	Ժ.Այվազյան	«Ցեղասպանություն-100»	2014թ.	Լ.Հարությունյան
101.	Վ.Սարոյան	«Հայ մուկը»	2016թ.	(բեմականացումը՝ Լ.Սկրտչյանի)
102.	Հայկ Հրայր	«Աղոթող մեղեդիների վերադարձը»	2016թ.	Լ.Հարությունյան
103.	Վ.Սարոյան	«Հե՛յ, ո՛վ կա այդտեղ»	2016թ.	Ն.Քեչիշյան
104.	Ա.Էդար	«Անահիտ»	2017թ.	Ա.Քեչիշյան

Նամականի**ԲԱՆԱՍՏԵՂԾ ԲԱՐԵՎԱՄԻՍ՝
ՌՈՒԲԵՐՏ ԵՍԱՅԱՆԻՆ***Սիրելի բարեկամ*

Մտորումներիս ընթացքին ուզում եմ մասնակից անել քեզ: Վաճառորում (կամ ինչպես ազդագրում է նշվում՝ Դսեղում), ամեն տարի կազմակերպվող տիկնիկային թատրոնների միջազգային (այս անգամ արդեն 10-րդ) փառատոնին մասնակցել է նաև Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոնը՝ տիկնիկային ներկայացումով: Խաղում ենք նվիրումով ու ոգևորությամբ, հատկապես երբ մեզ ընդունում են ջերմորեն, հանդիպել եմ հին ընկերներին, ովքեր ժամանակին դիտել են իմ բեմադրած ներկայացումները («Գարուն», «Եղերերգ», Սասունցի Դավիթ», «Պարույր Սևակ», «Չարության ժամանակը») և իրենց գնահատանքի խոսքերը թողել «Տպավորությունների» գրքում: Սրանք Շուշիում ստեղծած «Պոեզիայի թատրոնի» «արտադրությունն» են, որոնց մասին հիացմունքով են խոսում թատերասեր ընկերներս և առաջարկում մի նոր ծրագիր, այն է՝ ԼՂՀ գրողների միության կից ստեղծել «Պոեզիայի թատրոն»: Ունենալով այդ յուրահատուկ ժանրի թատրոնը, մենք կաշխուժացնենք պոեզիայի սիրահարների մթնոլորտը՝ նոր եռանդ ու ոգի հաղորդելով ստեղծագործական կյանքին: Ժողովրդի համար դա կդառնա ոգու դարբնոց, գրողների մտահաղացումների և գաղափարների մի նոր ծնարան: Նշեմ, որ ժամանակին Վ. Փափազյանի անվան թատրոնում իմ բեմադրությամբ հնչել են Գուրգեն Գաբրիելյանի, Սուկրատ Խանյանի և Վարդան Չակոբյանի բանաստեղծությունները: Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան

թատրոնի դերասանների համար չափածո խոսքը դարձել է հոգու պահանջ: Սերը պոեզիայի նկատմամբ նրանցից ոմանց մղել է գրիչ վերցնել ու փորձել ուժերը պոեզիայի ասպարեզում: Երբեմն նրանք մասնակցում են անգամ դպրոցականների համար կազմակերպվող զանազան օլիմպիադաներին՝ բեմ դուրս գալու և գեղեցիկ խոսք մատուցելու գերագույն ցանկությամբ:

Անկեղծորեն խոստովանեմ, երբ շատ ջերմ ու բարձր գնահատականներ եմ լսում, զգուշանում եմ... Վանաձորցի նկարիչ ընկերս՝ Օսիկ Մեսրոպյանը, ով նաև պիեսների հեղինակ է և երկար տարիներ եղել է Վանաձորի Յ. Աբելյանի անվան թատրոնի գլխավոր նկարիչը, ասաց. «Եղբայրս, շատ «ծեծված» մարդու հոգեբանությամբ ես մտածում, բաց ու անկեղծ հիացմունքից զգուշանում ես: Լավ է, բայց եկել է ժամանակը, որ լավին լավ ասելուց չվախենանք: Դու հեռվում (Արցախում) քո արածով մեզ այստեղ ոգևորում ես: Վաղը գնում ես, բա չասե՞նք, որ... դու է՛նտեղ նոր ոգևորությամբ աշխատես»:

Եվ շատերի համար Արցախում մեր արած յուրաքանչյուր գործ դառնում է ստեղծագործական առաջ մղող ուժ, ոգևորում է, կոչում նոր քայլերի: Բոլորն ընդունում են այստեղ արվածն՝ իբրև չափանիշ, իբրև ելակետ, իբրև սկզբնաղբյուր: «Արցախից սկսվել է մեր ազգային զարթոնքը, այնտեղից էլ գալու է նոր մտքերի և գաղափարների թարմ հոսանքը», - հավելեց գրուցակիցս:

Շատ զարմանալի բան. շատերի մոտ այն տպավորությունն է, թե Արցախում թերություններ չկան: Իդեալականացված ձևով հիանում են այստեղ կատարվող ամեն ինչով... Դա նաև պարտավորեցնող է...

Գերմանիայի մայրաքաղաքում հազար թատրոն կա գործող...

Հասարակության կյանքի մակարդակի չափանիշը սա է...

Սիրելի բարեկամ, ամբողջ գիշեր այս գրույցն ինձ հետապնդեց քնի և արթնության արանքում: Առավոտյան, երբ շրջում էի «Գրին

հաուզ» կոչվող փոքրիկ հյուրանոցի միջանցքում, զարմանքով նկատեցի, որ պատերը զարդարված են Այվազովսկու ծովանկարների պատկերներով, որոնք, կարծես, իմ գիշերային մտքերի և երազների անդրադարձն էին...

Հետո իմ մեջ սկսեց շարժվել մի միտք: Արցախում մենք ունենք «Նկարիչների միություն», ունենք նաև «Կոմպոզիտորների միություն»: Ժամանակը չէ, որ ունենանք նաև... «Թատերական գործիչների միություն»:

Արցախում երգչախմբեր ունենք, որ մրցում են Եվրոպական ասպարեզներում, ունենք համույթներ, որոնց բեմերը աշխարհի քարտեզի վրա լայն շառավիղներ է ակոսում:

Ժամանակը չէ, արդյոք, ուշադրություն ու սրտացավություն ցուցաբերենք նաև թատրոնի նկատմամբ: Չէ որ... Թատրոնը հասարակության զարգացման մակարդակի բարձրակետն է:

*Բարեմաղթանքներով՝
Լեոնիդ Հարությունյան
05.09.2015թ., ք. Վանաձոր*

ՌԵԺԻՍՈՐ ԲԱՐԵԿԱՄԻՍ՝ ԼԵՈՆՆԻԴ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Սիրելի բարեկամ

Նամակդ իմ մեջ մտորումներ արթնացրեց, որոնք արտահայտելու համար՝ գտա հարմարավետ լռության պահը և բացեցի հիշողության փեղկը...

Բեմադրությունը դժվար կազմակերպվող կյանք է: Երբ ես քեզ տեսա ռեժիսորական աշխատանք կատարելիս, իմ մեջ բացվեց հետաքրքրությունների մի նոր դուռ: Ես հասկացա, որ քո ձեռքերի շարժումները արարում են կերպարային գծեր և հյուսում գործողության նորանոր կտավներ: Չետո իմ բանաստեղծությունները մուտք գործեցին թատրոնի շեմից ներս և այնտեղից՝ դերասանների և ասմունքողների ձայնի ելևէջներով լցվեցին հանդիսատեսի սիրտը: Բանաստեղծությունը ձեռք բերեց գործառնական նշանակություն: «Չարության ժամանակը» ներկայացումը դիտելուց հետո ԼՂՀ Գրողների միության նախագահ, բանաստեղծ Վարդան Չակոբյանը այն կարծիքը հայտնեց, որ «մեր բանաստեղծությունն այսօր նաև բեմից դեպի ընթերցողը գնալու կարիքն ունի»:

Դու ասում ես, որ անհրաժեշտ է այսօր Գրողների միության կից ստեղծել Պոեզիայի թատրոն: Իհարկե, դա արվեստի աշխարհում նորություն կլիներ: Այդ դեպքում բանաստեղծությունը ոչ թե կյանքի միջանցքից կնայեր (ինչպես՝ հիմա) հասարակության ոգու փոթորկումներին, այլ հենց կդառնար կյանքի դուռ, որով ներս մտնողը իրեն կգտներ վերափոխված ու վերածնված: Սա, իհարկե, ապահովում է նաև «բանաստեղծ-ընթերցող» կապի նոր որակը: Ընթերցողը, ինչպես և դերասանը, ստեղծագործող էություններ են: Նրանք մասնակից են Լռության արարումի խորհրդավոր շնչին: Բայց բացահայտել Անկշռելին և կատարել Անհնարինը՝ կա-

րո՞ղ է միայն ներշնչվող Այրը: Շուշիում դու արդեն ստեղծել ես Պոեզիայի թատրոն, որի ներկայացումները բազմաթիվ անգամ հիացրել ու շարունակում են հիացնել Հայաստանի և Արցախի հանդիսատեսին:

Այո, անհրաժեշտ է ստեղծել «Արցախի թատերական գործիչների միություն» հասարակական կազմակերպություն, որը համախմբելով թատերական աշխարհի նվիրյալներին՝ ի վիճակի կլինի արդյունավետորեն օգտագործել դերասանների և թատերագետների մտքի և ոգու ներուժը: Թատերական կյանքի հեռանկարը Արցախում տագնապի ու հոգեվարքի մեջ է: Այն փրկել է պետք հենց այսօր: Վաղը ու՛շ կլինի:

Եվ այդ գործում քո նախաձեռնողական և ստեղծագործական որոնումներն ու ոգորումները կարող են արգասաբեր լինել: Ջանք ու եռանդ քեզ, թատերական կյանքի անխոնջ նվիրյալ:

Թույլ տուր նամակս ավարտել քեզ նվիրած իմ բանաստեղծության տողերով.

Տիեզերքը փնտրում է իր շնչառության ելքը

խոսքով կենդանի:

Ահա քո ոգին: Տիեզերքի

շնչառության բեմը...

Նոր արահի ես բացում

շնչով ճառագայթի,

և մատներիդ արանքով

հոսում է հավերժությունը...

Բարեմաղթանքներով՝

Ռոբերտ Եսայան

10.09.2015թ., ք. Շուշի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Ռեժիսորը ձգտում է բացահայտել ոգու նոր գյուտը 5

Ստեղծագործել՝ նշանակում է փնտրել ելքը 28

Բացվող հորիզոնի լույսը 35

ԲԱՅՎՈՂ ԱՌԱԳԱՍՏՆԵՐ ՓՈԹՈՐԿՎԱԾ ԾՈՎՈՒՄ

Թատրոն, որ կյանք է ինձ համար 45

Անվարագույր բեմ 54

ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՓՈՐՁԵՐԸ ԵՎ ԱՊԱԳԱ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ

Յոզեֆ Կապ 73

Եվ Գյուներին դարձավ ձեր արվեստի հին ու նոր հայրենիքը

Բեմը և արցախյան շարժման արձագանքները 86

Դիվային ոգու հողմապտույտում 95

Աղետյալ հույսեր և հառնող երազներ 103

ԲԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՏԵՍԱԴԱՇՏԸ

Մանկապատանեկան թատրոն 117

ՆՎԻՐՅԱԼ ՌԵԺԻՍՈՐԸ ԵՎ ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՕՐԸ

Կրկին դռները բացվում են դեպի

ինքնահաստատման առավոտները 139

Ուշագրավ բեմադրություններ հետպատերազմյան բեմում 153

Թատրոնում սերն է առաջնդիչ ուժը 170

Թատրոնի այսբերգը 176

ՇՈՒՇԻՆ՝ ԲԱՐՁՈՒՆՔԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ...

Շուշիի թատրոնի ոսկեդարը և երիտասարդ թատերախմբի

ստեղծագործական հեռանկարը 185

Լեոնիդ Չարությունյանի բեմադրությունները 197

Բանաստեղծ բարեկամիս՝ Ռոբերտ Եսայանին 202

Ռեժիսոր բարեկամիս՝ Լեոնիդ Չարությունյանին 205

ՌՈՒԲԵՐՏ ԱՐԱՄԻ ԵՍԱՅԱՆ

Հատոր յոթերորդ

**ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏԻ
ԵՐԱԽՏԱՎՈՐԸ**

Հարցազրույց՝ միջանկյալ դրվագներով

Սրբագրիչ՝
Համակարգչային շարվածքը՝
Էջադրումը՝
Կազմի ձևավորումը՝

Անահիտ Եսայան
Բելլա Մինասյանի
Թամար Հարությունյանի
Ալբերտ Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափերը՝ 60x84^{1/16},
ծավալը՝ 15 տպ. մամուլ, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2018